Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1102

82
U-58

GP

2011

ԻՎԱՆՕԷ

ՀԵՂԻՆԱԿ

ՎՕԼԹԵՐ ՍԿՕԹ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԱՆԳԼԻԱԿԱՆԷ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ

ARMENIAN LIBRARY
1890
Chicago, Ill.

ՀԱՏՈՐ Գ. և Վ.

ՏԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏՊԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

Զմիւռնիա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1874

Սակայն՝ ահաւասիկ ձեռքս բռնէ՝ իբրև նշան որ այսուհետև քեզի հետ կափանարանելու փափաք չունիմ, քանի որ դրաւս կորուսի։ Վերջ տանք ամէն թշնամութեան. հիմակ հրէային փրկանքի դատապարտեանք, քանի որ ինձն իր մորթը չփոխեր և հրէայ մնալու կ'յամառի։

— Քահանան — ըսաւ Գլէմէնդ — հրէին վերադարձին նկատմամբ իր վստահութիւնը կիսովին կորոյս՝ ականջին լաւ հարուած մ'ընդունելէն վեր։

— Կորի՛ր, անզգամ, ինչ կ'վայրաբանես վերադարձի վրայ — ըսաւ Ճղնաւորը — միթէ յարդանքը վերցաւ այս վայրէս. միթէ ամէնքը տէրը՛ն են և սպասաւորներ չմնացին։ Գիտցի՛ր, անպիտան, որ փոքր ինչ յոդնած էի երբ բարի սպասին հարուածն ընդունեցի, ասկա թէ ոչ անոսան սիրտ կենայի իմ տեղս։ Բայց եթէ այս կիսովին վրայ առնելէ այպանես՝ այն ատեն սիրտ հասկընաս որ միշտ ընդունածիս չափովը կ'հատուցանեմ։

— Ամէնքնիդ ալ լռեցէք — ըսաւ հրամանատարը — և դու, հրէայ, քու փրկանքիդ ձարը նայէ. սէտը չունիս խմնալու որ քու ցեղդ բոլոր քրիստոնեայ հասարակութեանց մէջ անիծեալ ցեղ մը կ'համարուի, և վտանգ եղիր որ չենք կարող քու ներկայութեանդ հանդուրժել այս տեղ։ Ուստի ընելիք պարկեղդ վրայ մտածէ, մինչդեռ ես ուրիշ տեսակ գերի մը հարց ու փորձ ընելու սիրտ երթամ։

— Արդեօք Գրօն-լը-Պէօյի ղեկուրներէն շատերը գերի ընկա՞ն — հարցուց Սև ասպետը։

— Փրկանք տալու կարող նշանաւոր գերի մը չկայ — պատասխանեց հրամանատարը։ — Ստորին կարգէ խել մը գերիներ կային և անոնց ձամբայ տալնիք որ երթան նոր տէրեր փնտռեն, վրէժխնդրութեան և շահու համար արդէն բաւական գործ տեսանք. բոլոր խումբը սկոտէ քառորդն իսկ չէր արժեր։ Իմ ակնարկած գերիս լաւագոյն ասար մ'է։ Ջուարթերես կրօնաւոր մ'է որ իր սիրուհւոյն այցի երթեր էր ձիով, ինչպէս որ կարող եմ դատել իր արդ ու զարդէն և երիվարին ձևէն թամբէն։ Ահա կ'պայ արժանըսիր եպիսկոպոսը՝ պալաստականի պէս կայտառ։

Եւ նոյն պահուն՝ վտարակ հրամանատարին դալարաձէտ աթոռին առջև երևցաւ մեր բարեկամը՝ Ժօրվալի վանահայր, էյմերը։



ԳԼՈՒԽ ԼԳ

— Մարտիկներու ծաղկէդ,
Ի՞նչ ջրի մէջ է Յիսուս Լարտիոս։
Մարթոն· կ'նմանի վճիռներով դրաշած մարդու,
Որ այս՝ ի մահ, այն՝ յաքսոր կ'դատապարտէ,
Ոսոր փրկանք կ'տայ կամ դուէ, միւսին սպառնալիք։
ԴօքթօլաՆոս։

Դերի վանահօր կերպարանն ու կերպերը վիրաւոր դառնութեան հետ խառն այլակերպ մնախառնութիւն և մարմնական սարսափ կը յայտնէին այլանդակ կերպով մը։

— Լաւ ուրեմն, ինչ կ'ուզէք, իմ տէրերս — ըսաւ նա այնպիսի ձայնով մ'որմէ այն երեք այլայլութիւնը կ'տեսնուէին։ — Ինչ կ'նշանակէ ձեր ընթացքը։ Թիւրք էք թէ քրիստոնեայ որ այսպէս կ'վարուիք եկեղեցւոյ պաշտօնէի մը հետ։ Միթէ դիտէք թէ ինչ ըսել է manus imponere in servos domini (Աստուծոյ ծառաներուն վրայ ձեռք երկընդրկել)։ Իմ բոլոր արկղներս թալէցիք, իմ դեղեցկահիւս նախօրդս՝ որ կարտինալի մ'արժանի էր, պատառ պատառ ըրիք· իմ տեղս ուրիշ մը չեղ կ'քննաղբեմ սպառնալեաց սիտի դիմէր, բայց ես ներող եմ, և եթէ իմ նժոյգներս ինձ դարձընէք, թէ որ իմ եղբայրներս արձակէք, իմ արկղներս ետ տաք, եթէ շուտ մը հարիւր սպակ (6 ֆրանք) վճարէք որպէս զի Ծօրվօյի մայր խորանին առջև պատարագ մատուցանեմ, և եթէ ուխտ ընէք մինչև գալ Հոգեգալստին հրեի միս չուտել, այն ատեն թերևս այս յիմարական դործին վրայ բերանս չեմ բանար։

— Հայր սուրբ — ըսաւ վտարականներու պարագլուխը — ցաւօք սրտի կ'իմանամ որ իմ գինւորներուս կողմէ այդպիսի ընթացք մը կրած լինիս, որ քու Հայրական յանդիմանութեան արժանի է։

— Ընթացք — կրկնեց քահանան՝ անտատրդ պարագլխին անուշ ձայնէն սիրտ առնլով — այնպիսի ընթացք քաջազգի շան մ'անգամ չէը վայլեր ցուցընել, ուր մնաց քրիստոնէի մը, և առաւել քահանայի մը, և ի վեր քան ամենայն Ծօրվօյի սրբակրօն միաբանութեան վանահօր։ Ահա աստ է դինարքու և պերճ վիպասան մ'որուն անունն է Ալէն–է

–Տէլ, որ մարմնական պատիժ տալու սպառնայ ինձ, միևնոյն անգամ մահացընել, եթէ իրեն չվճարեմ չորս հարիւր պսակ փրկանք՝ այն դանձերէն զատ՝ զոր իրեն արդէն դողցած էր, նոյնպէս ոսկի շղթաներ և մեծագին մատանիները, չեմ յիշեր այն ամէն բաներն որ կոշտ ձեռքեր խորտակեցին, ինչպէս իմ փոշիի տուփս և գանդուր շինելու համար իմ արծթէ ունելիներս։

— Անկարելի է որ Ալէն–է–Տէլ քեզի պէս բարձրադիր անձի մը հետ այդպէս վարուած լինի — պատասխանեց Հրամանատարը։

— Եւ սակայն Սիկոդիմոսի Աւետարանին չափ ստոյգ է այս ըսածս — յարեց վանահայրը։ — Ձեր հիւսիսային աշխարհին յատուկ սոսկալի երդումներով պնդեց որ անտուին ամենէն բարձր ծառէն գիս պիտի կախէ։

— Միթէ այդպէս իրօք ըսաւ — հարցուց Լօքսլէյ։ — Ուրեմն, իմ վերապատուելի հայրս, կ'յորդորեմ քեզ անոր հրամանին հնազանդիլ· վասն զի Ալէն–է–Տէլ այսպէս անգամ մը խօսք տալէն ետև, իր խօսքը կ'պահէ անվրէպ։

— Կատակ ընել կ'ուզես — ըսաւ վանահայրը զարմացած և բռնադբօսիկ ծիծաղով մը — և ես բոլոր սրտով կ'սիրեմ աղօր կատակ մը . . . Հա . . . հա . . . հա· բայց երբ խնդութիւնն բոլոր գիշեր տևէ, պէտք է առտու ծանրագլուխ լինիլ։

— Ես ալ խոստովանահօր մը պէս ծանրագլուխ եմ — պատասխանեց վտարականը — պէտք է որ կլորիկ փրկանք մը վճարես, սուրբ Հայր, ուրիշ մեծ ոչ հաւանական է որ վանական միաբանութիւնը պիտի հրաւիրուի նոր ընտրութիւն մ'ընելու, վասն զի աթոռդ նորէն չպիտի նստիս։

— Միթէ քրիստոնեայ էք — ըսաւ վանահայրը — դուք որ այդ լեզուն կ'գործածէք եկեղեցականի մը հետ։

— Քրիստոնեայ ենք անշուշտ, և այս բաւական չէ, քահանայ մը աղունիք մեր մէջ — պատասխանեց Լօքսլէյ։ — Թող մեր զուարթ երեցն առաջ անցնի, և Հայր սուրբին բացատրէ Ս. Գրոց այն մասերն որ այս պարագային կ'վերաբերին։

Ճգնաւորն՝ կէս դինով կէս արձուն՝ իր կանաչ ղեստին վրայէն կրօնաւորի մաշած պատմուճանը կէս մը հագած՝ իր մանկութեան ատեն ինչ որ կիսատուր սորվեր էր միտքը բերաւ և ըսաւ.

— Հայր սուրբ· Deus faciat salvam benignitatem vestram. բարի առաքեցար այս անտառիս մէջ։

— Ա՛յս ինչ սրբապիղծ միմոսութիւն է — գոչեց վանահայրը։ —

Բարեկամ, եթէ իրօք եկեղեցւոյ պաշտօնեայ մ'ես, լաւագոյն գործ մ'ըրած կ'լինիս եթէ օգնես ինձ այս մարդոյ ձեռքէն ազատելու, քան թէ պարանոյկի պէս այս տեղ ծեքծեքելու և ծռմրկելու:

— Իրաւ որ, վերապատուելի Հայր — ըսաւ Ճղնաւորը — քեզի համար ազատումի Ճար մը միայն կ'տեսնեմ. մեզի համար այսօր Ս. Անդրէի տօնն է, և մեր տասանորդը կ'հաւաքենք:

— Բայց յուսամ որ եկեղեցիէն ալ տասանորդ չէք առնուր, իմ բարեսիրտ եղբայրս — ըսաւ վանահայրը:

— Թէ եկեղեցական թէ աշխարհական դասէն կ'առնունք — ըսաւ Ճղնաւորը — ուստի, Հայր սուրբ, facite vobis amicos de momone iniquitatis, անօրէնութեան Մամոնի բարեկամներու հետ հաշտ եղիր, այս բարեկամութիւնը միայն կարող է քեզ դժուարութենէ ազատել:

— Սրտովին կ'սիրեմ վառվռուն անտառորդը — ըսաւ վանահայրն՝ իր ձայնը մեղմելով — ծո, պէտք չէ որ ինձի հետ այդչափ խստիւ վարուիք, ես ալ որսորդութեան հրահանգայ վարժ եմ և կարող եմ յստակ և արիապէս փողհնչել և այնպէս գոչել որ ամէն կաղնի թնտայ: Ա՛ղէ, պէտք չէ որ ինձի հետ խստիւ վարուիք:

— Շիփոր մը տուէք անոր — ըսաւ Լօքսլէյ — սիւտի դատենք ա՛նոր Ճարպիկութիւնն որու վրայ այնքան կ'պարծի:

Էյմէր վանահայրը շիփոր մ'առաւ և հնչիւն մը հանեց: Հրամանատարը գլուխն օրեց:

— Ս. վանահայր — ըսաւ — զուարթագին հնչիւն մը կ'հանես, բայց այն չիրկեր քեզ: Ձենք կարող հաւանիլ, ինչպէս որ քաջ ասպետի մը վահանին վիսլասանը կ'ըսէ, արձակել քեզ լոկ փողի մը հնչիւնը լսելով. դու այն տեսակ նուագածուներէն ես որ զաղղիական նոր շնորհներով և դրա-լա-լաներով՝ անկլիական հին շիփորի ձայնագրերը կ'այլայլեն: Վանահայր, այդ քու շիփորիդ վերջին շրնդուն քու փրկանքիդ չիսուն պսակ ես աւելցուց, վասն զի որսորդութեան հին ձայներու այժն ու պարզութիւնը խանգարեցիր:

— Շատ լաւ, բարեկամ՝ — ըսաւ վանահայրը գժկամակութեամբ — որսորդութեան մասին շատ բծախնդիր ես, բայց կ'աղաչեմ փրկանքիս մասին աւելի իրաւասէր եղիր: Մէկ խօսքով, քանի որ միանգամ և եթէ՝ պարտաւոր եմ սատանային Ճրագը վառել, ինչ փրկանք կ'պահանջէք որպէս զի վօլտին փողոցը՝ առանց ետևէս քաւասուն մարդ ունենալու՝ ազատօրէն պարտիմ:

— Միթէ աւելի չարմար չէ՞ինիր — ըսաւ դնդին տեղապահը հրա-

մանատարին ականջին վար — որ վանահայրը հրէին փրկանքն որոշէ և հրէայն ալ վանականին:

— Դու անզգամ չիմար մ'ես — ըսաւ հրամանատարը — բայց խորհուրդդ սքանչելի է: Նայինք, հրէայ, առաջ անցիր, դիտէ անգամ մը սա հայր Էյմէրը, ծօրէօյի հարուստ մենաստանին վանահայրը, և ըսէ մեզ թէ ինչ փրկանք դնենք անոր վրայ: Դու անոր մենաստանին եկամուտը դիտես, և այս մասին տարակոյս չունիմ:

— Ա՛հ, անշուշտ գիտեմ — ըսաւ Իսահակ — ես առտուսուր ըրած եմ այս վանականներուն հետ, ալիւր, դարի, պտուղ և շատ բուրդ գնած եմ անոնցմէ: Ա՛հ, Ճոխ մենաստան մ'է, կեր ու խումը սքանչելի է, ամենէն պատուական դինին կ'խմեն, ծօրէօյի այս բարեմիտ վանակաները: Ա՛հ, եթէ ինձի պէս հէք տարագիր մ'այնպիսի տան մը տէր լիներ և այնչափ տարեկան և տնական հասոյթներ ունենար, շատ ոսկի և արծաթ պիտի տայի իմ դերութենէս ազատելու համար:

— Շնորհես հրէայ — գոչեց վանահայրը — ինչ որ քու անիծեալ անձէդ լաւ ևս տեղեակ է որ մեր Աստուծոյ սուրբ տունը՝ դպիրներու դասը շինելու համար պարտքի տակ ընկաւ . . . :

— Եւ ձեր շահեմարանները համբարելու համար՝ անյագ տարի՝ Կասթօրի գինիով — ընդհատեց հրէայն — բայց այս, այս թեթև մէկ պարագայ մ'է:

— Կ'նայի՛ս սա անհաւատարիմ շունը — գոչեց վանահայրը — կ'զօզանէ իբր թէ մեր սրբակրօն միաբանութիւնը պարտքի տակ ընկաւ այն գինիին համար զոր խմելու արժանութիւն ունինք, propter necessitatem, et at frigus depellendum, այս հարկի և ցուրտը փարատելու համար: Թվիտաեալ անգամը մեր սուրբ եկեղեցւոյն դէմ կ'հայհոյէ, և քրիստոնեայ մարդիկ անոր խօսքը մտիկ կ'ընեն առանց պատժելու:

— Այս ամէնը մեր գործին օգուտ մը չունի — ըսաւ հրամանատարը: — Իսահակ, ըսէ մեզ թէ ինչ գումար կարող է նա վճարել առանց անոր մորթին և մազին դպչելու:

— Վեց հարիւր պսակի դուռնար մը — ըսաւ Իսահակ — և դարձեալ բարեսիրտ վանահայրն իր կակուղ աթոռին վրայ կրնայ նստիլ:

— Վեց հարիւր պսակ միայն — ըսաւ հրամանատարը ծանրօրէն — անով գոհ կ'լինիմ, քանի որ ծանուցում մ'ըրեր ես, Իսահակ, վեց հարիւր պսակ, այս է մեր վճիռը, պատուական վանահայր:

— Վճի՛ռ մը, վճի՛ռ մը — գոչեցին վտարականները: — Նոյն իսկ Սողոմոն ասկից աւելի յարմար գումար մը չէր կրնար որոշել:

— Դատապարտութիւնդ լսեցիր, վանահայր — ըսաւ Լօքսլէյ։

— Դուք խենդ էք, տեարք իմ — ըսաւ վանահայրը։ — Այդչափ դումար մ'ունիմ պիտի դանեմ։ Եթէ ծօրվօյի խորանին սկիհն և աշտանակներն իսկ ծախեմ հարկ պիտի լինի ինձ անձամբ երթալ 'ի ծօրվօ։ Իմ երկու քահանաներս իրենց պատմուդ պահեցէք։

— Ցնորական պատմուդներ են առաջարկած քահանաներդ — ըսաւ Լօքսլէյ — մենք քեզ պիտի պահենք, վանահայր, և անոնք պիտի ձամբայ հանենք որ երթան քու փրկանքդ բերեն։ Նոյն միջոցին պիտի մեծարենք քեզ բաժակ մը գինի և երկի սլատառ մը. իսկ եթէ որսորդութիւն կ'սիրես, հանդիսատես պիտի լինիս այնպիսի որսի մը զոր քու հիւսիսային բնիկներդ երբէք տեսած չեն։

— Կամ եթէ կ'հաճիք — ըսաւ Իսահակ՝ վտարականերու շնորհը շահելու միտք — վեց հարիւր սլսակը բերելու համար մարդ կրնամ ղրկել, որպէս զի քովս առնդ կեցած դումարէ մ'առնուն բերեն, բաւական է որ վերապատուելի վանականն ինձ պարտամուրհակ մը տալու բարեհաճի։

— Ուզածդ քեզի տալու պատրաստ է, Իսահակ — ըսաւ հրամանատարը — և դու՝ վանականին փրկանքին հետ քուկդ ալ պիտի վճարես։

— Ի'մս ալ — ըսաւ հրէային։ — Ո' արիասիրտ որսորդներ, եսյուսահատ և ողբմելի մարդ մ'եմ, եթէ յիսուն սլսակ միայն վճարեմ, ինձ մնալիքը մուրացկանի մը դառաղանը պիտի լինի։

— Վանականն այդ կէսը պիտի վճռէ — պատասխանեց հրամանատարը։ — Դու ինչ կ'ըսես այս մասին, հայր Էյմեր։ Միթէ հրէային մեծկակ փրկանք մը կարող է հատուցանել։

— Եթէ կարող է հատուցանել — պատասխանեց վանականը։ — Միթէ նա Եօրքցի Իսահակը չէ, Իսահակն՝ որ բաւական հարուստ էր Իսրայէլի տասն ցեղերն՝ որ Ասորեստան իրենց դերի դացին, կարող է փրկել։ Ես գինքը շատ լաւ չեմ ճանչեր, բայց մեր մատանասլետն ու դանձապետը շատ դործեր ըրած են անոր հետ, և համբաւը կ'ըսէ թէ իր Եօրքի տունն այնքան ոսկի և արծաթ ունի որ ամօթ է քրիստոնեայ երկրի մը համար այսպիսի բան մը։ Բոլոր քրիստոնեայ սիրտեր կ'զարմանան որ այսպիսի կրծան խժեր ներուին պետութեան և նոյն իսկ առքը եկեղեցւոյ ծուծը քամելու, տարապայման վաշխերով և զջշաքաղութեամբ։

— Տէր հայր — ըսաւ հրէային — քիչ մը բարկութիւնդ մեղմէ և հանդարտէ։ Ա'աղաչեմ ձեր վերապատուութիւնը յիշելու որ մարդ մը չեմ բռնադատեր իմ ստակս փոխ առնելու։ Բայց երբ եկեղեցական և աշխարհական, իշխան և վանական, ասպետ և քահանայ Իսահակին տան դուռը զարնելու կ'գան՝ այդպիսի անմարդավար ոճով իրեն ստակը փոխ չեն առնուր։ Ան ժամանակ — բարեկամ Իսահակ կ'ըսեն, միթէ կ'հաճիս պարտատուրէ մեզ այս պարագային մէջ, վճարման պայմանաժամին ստակը կ'ընդունիս։ Թող Աստուած վկայ լինի խոստմանս։ Կամ այսպէս կ'ըսեն, բարեսիրտ Իսահակ, եթէ երբէք մարդու ծառայելու տրամադիր ես, ինքզինքդ այս տեղիս բարեկամ ցոյսր։ Իսկ երբ պայմանաժամը կ'լրանայ, և իմ ստակս կ'պահանջեմ, ինչ կ'լսեմ, եթէ ոչ — պարշելի հրէայ, Թող Եղիսպետի անէծքը քու ցեղիդ վրայ լլկնէ, և վերջապէս ամէն ինչ որ անօրէն և կոշտ խուժան մը կարող է դրդռել հէք օտարներու դէմ։

— Հայր սուրբ — ըսաւ հրամանատարը — որչափ որ հրէայ է, ըստածը քիչ շատ ճշմարիտ է։ Ուստի, դու ալ իր փրկանքն որոշէ, ինչպէս նա քուկդ որոշեց՝ առանց ծանր խօսքեր ըսելու։

— Ո'չ ոք, այլ միայն մէկ latro famosus,* և այս խօսքին մեկնութիւնն ուրիշ անդամ պիտի տամ — ըսաւ վանահայրը — ո'չ ոք՝ քրիստոնեայ եպիսկոպոս մ'անմկրտեալ հրէի մը հետ հաւասար կ'դասէ։ Բայց որովհետև կ'պահանջես որ այս թշուառականին փրկանքն ես որոշեմ, ահա կ'ըսեմ որ մեծ ճշտով պիտի եղնէք եթէ անօրէն հազար սլսակէ բէննի մը պակաս առնուք։

— Ահա վճիռ մը, վճիռ մը — ըսաւ հրամանատարը։

— Վճիռ, ընտիր վճիռ մ'է — պոչեղէն աղեղնաւորները — քրիստոնեայն իր կենդանագրութիւնը յայտնեց, և մեզի հետ աւելի վեհանձնութեամբ վարուեցաւ քան հրէայն։

— Նախահարցս Աստուած, ինձ օդնութեան հասիր — ըսաւ հրէային — միթէ կործանեալ արարած մը ձգմիլ կ'ուզես։ Այսօր անզաւակ եմ, և միթէ իմ ապրուստէս ալ պիտի պրկես։

— Հրէայ, որչափ քիչ զաւակ ունենաս, այնչափ ծախսդ քիչ կ'լինի — ըսաւ Էյմեր։

— Աւաղ, տէր իմ — ըսաւ Իսահակ — ձեր օրէնքը չներեր դիտնալու թէ որչափ մեր Տոդեծէին զաւակը կասլաւած է մեր սրտին չիղեւրան հետ։ Ո' Ռեպեկա, իմ սիրական Ռաքէլիս դուստրը, եթէ այս

*Երեելի աւազակ։

Ծառին մէն մի տերևն ոսկի լինէր, և մէն մի ոսկին լոմ, այս բոլոր հարստութիւնը պիտի տայի իմանալու համար թէ արդեօք կենդանի՞ ես և նազովրեցիին ձեռքէն ազատո՞ր ես:

— Միթէ աղջիկը սև մազեր չունէ՞ր — հարցուց վտարականերէն մին — և միթէ նուրբ և արծաթահիւս շղարշով մը ծածկած չէր իր երեսը:

— Այո՛, այո՛ — ըսաւ ծերունին, անհամբերութենէ դողդողալով լինչպէս երբեմն երկիւղէն: — Յակոբայ օրհնութիւնը քու վրադ լինի. միթէ կրնաս ըսել մը տալ լինձ անոր վրայ:

— Ուրեմն քու աղջիկդ էր այն — ըսաւ վտարականն որ դուռը տա-ճարականին ձանկին նեղքև ընկեր էր, երբ երէկ իրիկուն մեր ղօրաց կարդերէն անցաւ: Աղեղը լարեր էի անոր նետ մ'ուղղելու համար, բայց անոր խնայեցի օրիորդին պատճառաւ, որ թերևս իրեն ինաւէր:

— Ո՛հ, պատասխանեց Հրէայն — երանի՛ թէ նետդ նետէիր, եթէ նետդ աղջկանս սիրտն իսկ ծակէր: Լաւագոյն է իր հարց գերեզմանը քան թէ վատաշուք և վայրենի տաճարականին անկողինը: Ո՛ Եղիսաբեթ, Եղիսաբեթ, իմ տանս փառքը մարեցար:

— Բարեկամներս — ըսաւ Հրամանատարն իր շորս կողմը նայելով — այս ծերունին Հրեայ մ'է, սակայն իր վիշտը սիրտս կ'շարժէ: Մեզի հետ անկեղծօրէն վարուէ, Իսահակ, ըսէ լինձ, միթէ հազար պսակ վճարելովդ բոլորովին անարծաթ կ'մնա՞ս:

Իսահակ յանկարծ իր երկրային դանձերը յիշելով՝ որոց սէրը՝ անբաւ ժլատութեան մ'ուժով, իր Հայրական սիրոյն անգամ կ'յաղթէր, գոյնը նետուց, կնկմայ և չկրցաւ ուրանալ որ դարձեալ աւելորդ դատմամբ մ'իրեն պիտի մնայ փրկանքը վճարելէն ետև:

— Լա՛ւ, թող այդպէս լինի, եթէ աւելի տակ ես ունենաս — ըսաւ Հրամանատարը — դարձեալ անոր աչք չունինք: Առանց ստակի՝ որչափ հնարին է Պրայն տը Պուա—Կիլբերի Ձիրանէն զաւակդ ազատել, նոյնքան կարելի է եղջերու մը գարնել անծայր նետով մը: Մենք Էյմէր վանահօր վրայ դրուած փրկանքի չափ պիտի պահանջնինք քեզնէ, կամ լաւ ևս, հարիւր պսակի չափ պակաս, և այս հարիւր պսակի կորուստն ես պիտի կրեմ մանաւորապէս և ասով իմ պարկեշտ ղինակիցներուս վնաս մը չպիտի հասցընեմ. և այսպէս պիտի աղատինք այն քինախնդիր Թշնամանքէն թէ մի և նոյն փրկանքի կ'պատապարտինք Հրեայ վաճառական մը և քրիստոնեայ եպիսկոպոս մը. իսկ քեզի վեց հարիւր պսակ պիտի մնայ որպէս դի պէտք եղած փրկանքը վճարես

աղջկանդ ազատութեան համար: Տաճարականները կ'սիրեն արծաթէ դրամներու փայլն որչափ որ կ'սիրեն երկու գեղեցիկ սև աչաց փայլը: Ուստի շուտով քու ոսկիներդ գնա հնչեցուր Պուա—Կիլբերի ականջին՝ մեծապոյն աղէտից առաջն առնելու համար: Ինչպէս որ իմ ուհահարդներս իմացուցին լինձ, տաճարականը պիտի գտնես իր Ուխտին Ազարան: Միթէ կ'հաւանի՞ք ըսածիս, իմ՝ արի ընկերներս:

Գեղամարտիկներն՝ ըստ սովորութեան՝ հաւանեցան Հրամանատարին խորհրդին, և Իսահակ՝ իմանալով որ իր աղջիկը տակաւին կենդանի է և կրնայ անոր ազատութիւնը ձեռք ձգել իրիկանքով, իր երկիւղներուն կէսը փարատեց, վերհանձն Ազբալէյի ոսքն ընկաւ և իր մօրուսն անոր կօշիկներուն շփելով անոր կանաչ վարագանակին քղանցքը համբուրելու կ'ջանար: Հրամանատարն ետ քաշուեցաւ, և հրէին ձեռքէն ինքզինքը պրծեց՝ արհամարհութեան նշաններ յայտնելով:

— Օ՛ն, ժլատոտ մարդ, ոսք ելիր. ես բնիկ անկլիացի եմ և այդպիսի թուելեան երկրպագութիւններ չեմ սիրեր: Աստուծոյ առջև ծունր դիր և չէ թէ լինձի պէս հէք մեղաւորի մ'առջև:

— Այո՛, հրեայ — ըսաւ վանահայրը — Աստուծոյ երկիրպագէ, որուն ներկայացուցչն է իր խորանին սպասաւորը. և ո՞ գիտէ, եթէ անկեղծօրէն ապաշաւես և սուրբ Ռօսլերդի մասունքին պարգևներ մատուցանես, թերևս շնորհ գտնես քու անձիդ և քու Ռեբեկա աղջկանդ համար: Այսուհետև այն նորարոյս օրիորդին վրայ, վասն զի գեղանի և վայելուչ գէմք մ'ունի. զինքն Էշլպի գուսպարին տեսայ: Պուա—Կիլբերը մարդ մ'է որուն վրայ ազդեցութիւն ունիմ, ուստի ջանամ իմ բարեխօսութիւնս ստանալ անոր մօտ:

— Աւաղ, աւաղ — գոչեց հրէայն — ամէն կողմէ լինձի գէմ աւազասուններ կ'ելնեն. իբրև ձարակ կ'ընծայիմ Ասորեստանի կեղեքիչ աղդին:

— Եւ քու անիծեալ ազդդ ուրիշ ի՞նչ ձակատագիր ժառանգեց — հարցուց վանահայրը: — Ո՞նչ կ'ըսէ այս մասին Ս. Գիրքը. verbum Domini projecerunt, et sapientia est nulla in eis — ՝ի քաց ձգեցին զբանն Աստուծոյ, և իմաստութիւն ոչ ընկալ ընդ նոսա. propterea dabo mulieres eorum exteris — Տացից զկանայս նոցա օտարաց, այսինքն՝ այս պարագային մէջ՝ տաճարականին. et thesauros eorum hæreditibus alienis — և զգանձս նոցա այլոց — ինչպէս այժմ այս բարեկիր որսորդներուն:

Իսահակ խորունկ հառաչ մը հանեց, ձեռներն սկսաւ ոլորել և

վերստին իր սլաքմունքեան և յուսահատութեան մէջ ընկաւ։ Բայց վտան-
րակաց պարագլուխը զանի մեկուսի կոչեց և անոր ըսաւ.

— Քանջ խորհէ, Խսահակ, թէ ինչպէս պէտք է վարուիլ այս կրօ-
նաւորին հետ. կ'խրատեմ քեզ որ անոր բարեկամութիւնը շահելու
հնարը փնտռես. մնափառ ու միանպատակ ընչասէր է նա, Խսա-
հակ. շատ ստակի պէտք ունի իր շռայլութեանց հատնելու համար։
Կարող ես անոր ժլատութիւնը հեշտիւ գոհ ընել, վասն զի մի կարծեր
թէ կ'հաւատամ որ իրօք չքաւոր ես։ Ես քաջ գիտեմ, Խսահակ, մինչև
անցամայն երկաթէ արկղդ որու մէջ ստակի ծրարներ կ'պահես։ Ի՞նչ,
միթէ կարծես թէ չգիտեմ այն մեծ քարն որ ինձորենիին ներքև է՝
Եօրքի պարտիզիդ մէջ, և որ կ'ծածկէ փոքրիկ սանդուղ մ'ուսկից կա-
մարաձև նկուղ մը կ'լինես։

Հրէային մեռելի պէս դեղնեցաւ։ — Բայց իղնէ մի վախնար բնաւ
— յարեց վաճառականը — վասն զի մենք հին բարեկամներ ենք։ Միթէ
չես յիշեր այն հիւանդ մարտիկն զոր քու սիրուն աղջիկդ Ռեպեկա
գերութենէ ազատեց փրկանք տալով, և տունդ պահեց մինչև որ ա-
ռողջութիւնը գտաւ. յետոյ դու ձամբեցիր զանի ձեռքն արծաթի մը
տալով։ Թէև վաշխառու ես, երբէք ստակդ այնչափ լաւ տեղ շահու
գրած չես որչափ որ գրիր այն փոքրիկ արծաթէ մարդը, վասն զի այս-
օր քեզի հինգ հարիւր սլաքակ շահեցուց։

— Ուրեմն դու այն մարդն ես զոր Աղեղնաւոր Տիքըն կ'կոչենք —
ըսաւ Խսահակ — ես ալ կ'մտածէի որ քու ձայնդ ինձի անծանօթ չպի-
տի լինի։

— Այո՛, ես Աղեղնաւորն եմ — ըսաւ հրամանատարը — ես Լօքս-
լէյն եմ, և ուրիշ անուն մ'ալ ունիմ։

— Բայց դու կ'սխալիս, իմ քաջ Աղեղնաւոս — ըսաւ Խսահակ —
այն կամաւորական նկղին նկատմամբ։ Երկիրն վկայ՝ որ անոր մէջ ուրիշ
բան չկայ բայց եթէ քանի մ'ապրանք զոր քեզի տալու յօժար եմ.
Լինքօլնի հարիւր կանդուն կանաչ չուխայ՝ որմէ վերարկուներ կրնաս
շինել վինակիչներուդ, հարիւր հատ Սպանիոյ դեղձի փայտեր աղեղ-
ներ շինելու և հարիւր հատ ալ մետաքսե լարեր՝ որ ամուր, կլոր և
անվթար են. բարեկիր Աղեղնաւոր, այս բաները քու բարեկամու-
թեանդ համար քեզի պիտի գրկեմ, եթէ նկղին վրայ ուրիշի խօսք
չբանաս, իմ քաջ որսորդս։

— Առնէտի սէս Լուսթիւն պիտի պահեմ այդ մասին — ըսաւ հրա-
մանատարը — և հաւատի եղիր որ կ'վշտակցիմ քեզ աղջկանդ հա-

մար. բայց ձեռքէս բան մը չգար, բաց դաշտի վրայ տաճարականնե-
րուն նիզակիները շատ զօրաւոր են իմ աղեղնաւոր զօրականացս համար,
և մեզ կրնան ցրուել փոշիի պէս։ Եթէ դիմնայի միայն որ Ռեպեկան էր
յափշտակուած օրիորդը՝ թերևս ձար մը գտնէի, բայց այժմ պէտք է
որ վարպետութիւն բանեցընես։ Ըսէ նայիմ, կ'ուզես որ այս մասին
վանահօր հետ բանակցիմ։

— Ցանուն Աստուծոյ, եթէ կարող ես, իմ քաջ Աղեղնաւոս, օգնէ
ինձ սիրասուն զաւակս գտնելու։

— Քու անպատեհ ժլատութեամբդ իմ ձգունքս ի դերև մի հաներ
— ըսաւ հրամանատարը — և պիտի աշխատիմ անոր հետ խօսելով
քեզի համար նպաստաւոր պայմաններ ստանալ։

Այն ատեն հրէին քովէն հեռացաւ, որ դարձեալ Լօքսլէյի հետե-
ւեցաւ իբրև իր ստուերը։

— Էյմէր վանահայր — ըսաւ հրամանատարը — երթանք միասին
սա ծառին ներքև։ Կ'ըսեն թէ դու գլխի կ'սիրես, նոյնպէս կնկան
ժպիտը՝ քու ուխտիդ հակառակ։ Բայց այս կէտն ինձի չվերաբերիր։
Լսած եմ նաև որ զոյգ մը լաւ շուներ և քաջարշաւ երիվար մը կ'սի-
րես, և կարելի է որ այսպիսի մեծագին բաներ սիրելովդ՝ ոսկի քսակ
մը չես մերժեր։ Բայց երբէք լսած չեմ որ դու հարստահարութիւն և
անգթութիւն կ'սիրես։ Արդ՝ ահաւասիկ Խսահակն որ կ'հաւանի քեզի
տալ քու գթասանքդ շարունակելու միջոցներ, որ հարիւր արծաթի մարդ
պարունակող պարկի մը մէջ կ'գտնուին, եթէ միայն քու միջնորդու-
թեամբդ Տաճարական դաշնակիցդ հաճի հրէին դուստրն ազատ թող-
լու։

— Ազատ և միանպատակ անարատ, ինչպէս որ ձեռքէս յափշտակեց
— ըսաւ հրէայն — թէ ոչ այդ սակարկութիւնը չեմ ընդունիր։

— Լռութիւն, Խսահակ — վրայ բերաւ վաճառականը — թէ ոչ գատդ
կ'թողում մեկդի։ Ի՞նչ ունիս ըսելու այս առաջարկութեանս վրայ,
Էյմէր վանահայր։

— Այս խնդիրը բաւական կնճռոտ է — ըսաւ վանահայրը — վասն
զի եթէ մեկ կողմէն բարի դործ մ'ընեմ, միւս կողմէ հրէի մը նպաս-
տաւոր պիտի դառնայ, և այս բանս ալ իմ խղճիս կ'դպի. սակայն եթէ
Իսրայէլացին կ'ուզէ եկեղեցւոյն ծառայել գումար մ'ևս տալով մեր
հնձարանին շինութեան համար՝ ես ալ յանձն կ'առնում անոր աղջկան
դործին խղճի մտօք օգնել։

— Հնձարանը շինել տալու համար միայն քսան մարկ — ըսաւ վտա-

բակը . . . Հանդարտ կեցիր , Իսահակ . . . կամ արծաթէ աշտանակ-
ներ խորանին համար մեր սակարկութիւնը չեն կրնար արդիլել :

— Բայց , իմ քաջ Աղեղալարս . . . — գոչեց Իսահակ միջամտելու
փորձ փորձելով :

— Խելօք հրէայ , խելօք կենդանի , խելօք որդ — ըսաւ վտարանին իր
համբերութիւնը հատնելով — եթէ այդպէս շարունակես քու ժլատ
առարկութիւններդ դնել կշռին մէջ՝ աղջկանդ կենաց և պատուոյն
դէմ , երկինն վկայ , երեք օրէն առաջ՝ երկրիս վրայ ունեցած դոյիդ
յետին քէննէն իսկ սիտի կողոպտեմ :

Իսահակ դողդողալց և լուռ կեցաւ :

— Եւ ինչ երաշխաւորութիւն սիտի տաք ինձ այդ խոստումներու
կատարման համար — հարցուց վանահայրը :

— Երբ Իսահակ քու միջնորդութեամբդ յաջողի և դառնայ — ը-
սաւ Աղեղալարը — կ'երթնամ տուրք Հիւսէրդի վրայ , որ եթէ խոս-
տացած արծաթը չհամրէ , այնպիսի հաշիւ մը սիտի ունենայ ինձի
հետ , որ քանի անգամ նոյն դումարը վճարելը նախապատիւ սիտի
համարի :

— Լաւ ուրեմն , հրէայ — ըսաւ Էյմէր — քանի որ այս գործին
սիտի միջամտեմ , տուր ինձի քու թղթակալդ : Բայց ո՛չ . . . լաւ ևս
ունիմ քսանչորս ժամ ծոմ պահել քան թէ քու դրիչդ գործածել . բայց
ուրիշ թուղթ ու գրիչ հոսկից դոնել պէտք է :

— Եթէ քու սրբազին խիղճդ կ'ներէ քեզ հրէի մը թղթակալը
գործածել , կրնամ դրչին ճարը դանել — ըսաւ հրամանատարը , և ա-
ղեղը լարելով՝ իր նետով վայրի սագի մը նշան առաւ , որ իրենց դլխին
վերևը կ'սաւառնէր , երբև առաջնորդ իր ընկերներուն երանին որ Հօր-
տէրնէի հեռաւոր և թափուր ճահիճները կ'դիմեին : Թուչունը շրջե-
լով վար ընկաւ նետահար :

— Ահաւասիկ , հայր տուրք — դոչեց հրամանատարը — քեզի շատ
մը փետուրներ ծօրվօյի վանականներուն հարիւր տարի գրիչ մատակա-
րարելու , միայն թէ տարեդիրներ դրելու չսլարասլին :

Վանահայրը նստաւ և հանդիստ շարադրեց նամակ մ'առ Պրայն տը
Պուա–Կիլպէր , և թուղթն ուշի ուշով կնքելէն ետև , հրէին տուաւ
անոր ըսելով .

— Այս սիտի լինի անցագիր մը քեզի համար Դեմբլդովլի տաճա-
րանոյը , և ինչպէս որ կ'յուսամ , անով քու աղջկանդ ազատութիւնը
հաւանականօրէն սիտի ստանաս , եթէ դու ալ քու կողմդ շահաւէտ

և վայելուչ առաջարկութիւններ ընես , վասն զի , հաւատի եղիր , որ
Պուա–Կիլպէր քարի ասպետն այնպիսի մարտանութեան մ'անդամէ որ
առանց վոխարէնի բան մը չհատուցաներ :

— Լաւ , վանահայր — ըսաւ հրամանատարը — քեզ աւելի ևս
չսիտի պահեմ այս տեղ , միայն անդորրագիր մը տուր անոր հինդ հա-
րիւր սլսակ փրկանքի դումարին համար , երբև իմ սեղանատուրս կ'ընդու-
նիմ զանի , բայց եթէ իմանամ որ անոր կողմէ ճարուած այս դումարին
փոխարէնը հատուցանելու մասին դժուարութիւններ կ'յարուցանես ,
ստուրբ Կոսմ իմ հոդիս առնու եթէ մենատանդ չպրեմ , եթէ ասոր
համար տաս տարի աւելի կանուխ կախուելու իսկ դատապարտիմ :

Վանահայրն՝ Պուա–Կիլպէրին դրած նամակէն նուազ յօժարա-
մտութեամբ անդորրագիր մը տուաւ իր փրկանքին համար Եօրքցի Իսա-
հակին վճարած հինդ հարիւր սլսակի մասին և հաւատարմօրէն խոս-
տացաւ այս դումարին փոխարէնը վճարել :

— Իսկ հիմակ — ըսաւ Էյմէր վանահայրը — սլիտի խնդրեմ որ ետ
դարձընես իմ ջորիներս և երիվարներս , նոյնպէս ազատ թողուս ինձ ու-
ղեկից զմնուող կրօնաւորները , իմ թալլուած մատանիներս , դոհար-
ներս և ճոխ զգեստներս վերադարձընես , քանի որ իմ փրկանքս վճա-
րուած է :

— Քու եղբայրներդ , վանահայր — պատասխանեց Լօքսլէյ — իս-
կոյն ազատ սլիտի թողուին , ըստ որում անիրաւութիւն սլիտի լինի զա-
նոնք պահելը . իսկ ձիերուդ և ջորիներուդ գալով նոյնպէս քեզի սլի-
տի յանձնուին , միանգամայն բաւական դումար մը տալով որպէս զի
կարող լինիս Եօրք հասնելու , վասն զի անդթութիւն է զրկել քեզ ու-
ղևորութեան միջոցներէն : Իսկ մատանիներուն և դոհարներուն , ոսկի
շղթաներուն և ուրիշ ասոնց նման առարկաներուն գալով պէտք է
քաջ իմանաս որ փափուկ խղճմտանքի տէր մարդիկ ենք , և չսիտի թու-
ղնունք քեզի պէս մի պատկառելի անձի՝ որ պարտաւոր էր աշխարհիս
ունայնութեանց անտարբեր ճոսլ , իր Ուխտին կանոնները դրժելու զօ-
բաւոր փորձութեան հանդիպիլ՝ մատանիներ , շղթաներ և ասոնց նման
բաներ կրելով :

— Ձեր ըրածին վրայ մտածեցեք , տեարք իմ՝ — պատասխանեց վա-
նահայրը — եկեղեցւոյ կալուածոց ձեռք երկրնցընելէն առաջ . այս
բաներն են՝ inter res sacras 'է ըլլ՝ Նոսլեալան էրէրս , և չկրնամ թէ
ինչ հետևանք կրնայ տեղի ունենալ սլիտի ձեռքեր անոնց դպչելով :

— Ես անոնց հոգը սլիտի տանիմ , վերապատուելի հայր — ըսաւ

Ծօբամէնհըրսդի Ճդնաւորը — վասն զի ես ինքս պիտի կրեմ զանոնք ։

— Բարեկամ կամ եղբայր — ըսաւ վանահայրն՝ իբրև պատասխան իր կասկածներու տրուած մեկնութեան — եթէ դու իրօք քահանայական կարգ ունիս , կ՚աղաչեմ քեզ խորհիլ թէ ինչ համար պիտի տաս քու մեծաւորիդ այսօրուան դէպքին մասնակից դառնալովդ ։

— Բարեկամդ իմ վանահայր — պատասխանեց Ճդնաւորը — պէտք է դիտնաս որ փոքրիկ թեմի մը կ՚վերաբերիմ , որուն միանգամայն թեմականն եմ , և առնելիք տալիք չունիմ ոչ Եօրքի եպիսկոպոսին և ոչ ծօրվօյի աբբային և իր վանքին հետ ։

— Դու բոլորովին ուղիղ շաւղէն դուրս կ՚դտնուիս — ըսաւ վանահայրը — դու այն խառնակ անձերէն մին ես՝ որ առանց հրամանի եկեղեցական պաշտօն վարելով ծէսերը կ՚վատթարեն և իրենց վստահացող հոգիները վտանգի մէջ կ՚ձգեն , lapides pro pane condonantes eis, ֆոխանակ հացի տալին պուլճնոց , ինչպէս որ կ՚ըսէ Աստուածաշունչը ։

— Ո՛չ — ըսաւ երէցը — եթէ իմ ըղեղս լատիներէն լեզուով շաղած լինէի , այսչափ երկար ժամանակ չէր դիմանար ։ Ես կ՚պնդեմ թէ եւ դիպտական օրինաւոր աւարտութիւն մ՚ալ ձեզի պէս գոռոզ քահանաներն իրենց դոհարներէն և զարդերէն թեթևցընելը ։

— Դու վաթափոմնի տանայ մ՚ես — ըսաւ վանահայրը բարկութեամբ . excommunicabo vos. քեզ բանադրելով պիտի պատժեմ ։

— Դու իզնէ աւելի գողի և հերետիկոսի կ՚նմանիս — ըսաւ կրօնաւորը նոյնպէս զայրանալով — չեմ ուզեր որ գիս իմ հօտիս առջև նախատեն , ինչպէս որ անամօթաբար կ՚նախատես , թէև ես ալ վերապատուելի եղբայր մը պարտիմ լինել քեզի համար ։ ossa ejus perfringam, խոթպաֆէղնէ ղոֆէբ տ , ինչպէս որ կ՚ըսէ Ս . Գիրքը ։

— Էյ — դոչեց հրամանատարը — մինչ վերապատուելի հայրեր այսպէս զիրար կ՚թշնամանեն ։ Հանդարտ կեցիր , յիմար կրօնաւոր ։ Իսկ դու տէր վանահայր , եթէ Աստուծոյ հետ տակաւին չհաղորդեցար , աւելի ևս մի դրդուեր մեր երէցը . դու ևս Ճդնաւոր , թոյլ տուր որ վերապատուելի հայրը խաղաղութեամբ իր Ճամբան շարունակէ , քանի որ իր փրկանքը վճարած է ։

Զօրականները զայրացած կրօնաւորներն իրարմէ զատեցին՝ որ դարձեալ բարձրաձայն զիրար կ՚սաստէին անշահ լատիներէն լեզուաւ , զոր վանահայրն արագութեամբ կ՚խօսէր , իսկ Ճդնաւորը զօրութեամբ ։ Ի վերջէ վանականն ըստ բաւականին ինքզինքին գալով հասկցաւ որ իր արժանապատուութեան արատ կ՚բերէ վտարականերուն երէցի պէս քա-

հանային հետ կռուելով , և երբ իր հետևորդներն եկան իրեն միացան՝ Ճամբայ ելաւ նուաղ շքեղութեամբ և աւելի առաքելական պարզութեամբ , արտաքին աշխարհային ցոյցերու մասին , քան թէ երբ այն կողմերը հասաւ ։

Կ՚ուզեր միայն վանահօր և իր հաշուին համար հրէից վճարելիք գումարին հատուցման երաշխաւորութիւն մը պահանջել ։ Հետևապէս՝ իր կնքովը վաւերացած պարտադիր մը տուաւ՝ ուղղեալ Եօրքի մէջ իր ցեղակից մէկ եղբօր , խնդրելով որ դրաբերին վճարէ հազար պսակ և անոր յանձնէ թղթին մէջ նշանակուած մէկ քանի ապրանքներ ։

— Իմ քէվա եղբօրս քոմիք են — ըսաւ նա խորունկ հեծեծելով — իմ մեթերանոցիս բանալիները ։

— Հապա կամարաձև նկղին բանալի՞ն — փսփսաց Լազարէյ անոր ականջին ։

— Ո՛չ , ո՛չ , Աստուած չընէ — պոչեց Խսահակ — անիծեալ լինի այն ժամն երբ քեզ որ և է մէկու այս գաղտնիքը յայտնեց ։

— Իմ պահպանութեանս տակն է այն — պատասխանեց հրամանատարը — և այնքան ստոյգ է ըսածս որչափ որ սա թղթի կտորն յիշատակած գումարը կ՚արժէ ։ Բայց ինչ կայ , Խսահակ , մեռած , ապրեցար , միթէ հազար պսակի վճարումն աղջկանդ վտանգը մոռցուց քեզ ։

Հրէայն իր ոտից վրայ կանգ առաւ և ըսաւ . — Ո՛չ , հրամանատար , ո՛չ , իսկոյն պիտի մեկնիմ , միայն բարև դու , զոր չեմ կարող բարեկիր անուանել , և որմէ սակայն չեմ համարձակիր և չեմ ուզեր գէշ խօսիլ ։

Բայց Խսահակի մեկնելէն առաջ՝ վտարակաց պարագլուխն այս վերջին խրատը տուաւ անոր . — Առաւտաձեռն եղիր պարզևներուդ մասին , Խսահակ , և աղջկանդ ապահովութեան համար քսակդ մի խնայեր ։ Հաւատա ինձ՝ որ անոր օգտին հակառակ ժլատութեամբ պահելիք ոսկիդ , այսուհետև այնքան վիշտ և նեղութիւն պիտի պատճառէ քեզ որպէս թէ կոկորդէդ վար զայն հալած թափէին ։

Խսահակ խորունկ հառաչելով հաւանութիւն ցոյց և Ճամբայ ելաւ , երկու բարձրահասակ անտառորդներ՝ իբրև առաջնորդ և պաշտպան՝ իր հետն առնելով անտառէն դուրս եկնելու համար ։

Սև ասպետն՝ որ այս զանազան դէպքերն հետաքրքրութեամբ նկատեր էր՝ այն ատեն վտարականերուն իր հրաժարական բարևը տուաւ , միանգամայն իր զարմանքը չկրցաւ զսպել այնքան վարչային կանոններ

ետեւնելով այն մարդոց մէջ որ օրինաց սովորական պաշտպանութեան և ներգործութեան լուծը թօթափեր էին։

— Լաւ պատուէն, աղնիւ ասպետ — ըսաւ Լօքսլէյ — երբեմն վատ ծառի մը վրայ կ'աճի, և վատ ժամանակներ միշտ անխուսն չարիք չեն արտադրեր միայն։ Այս ապօրէն վիճակին մէջ ապրելու ստիպեալ մարդոց մէջ կ'գտնուին անշուշտ այնպիսիներ որ ապերասանութիւնը չափաւորութեամբ գործածել կ'ուզեն, և այլք թերևս կ'վշտանան որ այսպիսի արհեստի մը հետևելու ստիպեալ են։

— Եւ եթէ չեմ սխալիր — ըսաւ Սև ասպետը — այժմ այն վերջինները մեզ հետ կ'խօսիմ։

— Աղնիւ ասպետ — պատասխանեց վտարակը — մեղմէ իւրաքանչիւրն իր պաղտնիքն ունի։ Դու իմ վրայ կարծիք մ'ունենալու ազատ ես, և ես ալ քու վրայ կրնամ զանազան ենթադրութիւններ ընել, թէև մեր նետերն և ոչ միւս նպատակին կրնայ չհասնիլ։ Բայց որովհետև չեմ աղաչեր որ դու քու գաղտնիքդ յայտնես ինձ, մի դժկամակիր եթէ ես ալ իմս թաղուն կ'սահեմ։

— Ներողութիւն կ'խնդրեմ, քաջդ վտարակ — պատասխանեց ասպետը — քու յանդիմանութիւդ արդարացի է։ Բայց թերևս վերջէն աւելի ակն յայտնի իրարու պիտի երևինք։ Ա՛ռ այժմ, իրարմէ իբրև բարեկամ կ'բաժնուինք, այնպէս չէ։

— Անտարակոյս իմ ձեռքս — դոչեց Լօքսլէյ — և կ'իշխեմ ըսել որ ձշմարիտ անկիւսցոյ մը ձեռքն է, թէև առ այժմ վտարակ կ'սեպուի։

— Անտարակոյս և իմս — պատասխանեց ասպետը — և պատիւ կ'սեպեմ անձիս քովդ սեղմելով, վասն զի՝ այն որ՝ չարիք գործելու անսահման իշխանութիւն ունենալովն, բարիք կ'գործէ, արժանի է գովեստից ոչ միայն ըրած բարեաց համար, այլև չարիք գործելէն խորշելուն համար։ Մնամ բարև, քաջդ վտարակ։

Այսպէս իրարմէ բաժնուեցան այս երկու անկեղծ ընկերները, և փոխանակաբար ասպետն իր պատերազմի մեծ նժոյգն աշտանակելով՝ անտառին մէջէն յառաջ գնաց։

ԱՄԵՐԻԿԱՆ ... ԱԳԳ
1900
Chicago, - Ill.

ԳԼՈՒԽ ԼԴ

ՃօՀՆ ԲԱՓՏԱՍՏ. Բարեկամդ իմ, ըսեմ պիտի քեզ,
Թէ ինչպէս շատվս վրայ իրաւք օձ մ'է նա.
Եւ թէ իմ քոյրը ո՛ր կողմը տանիմ,
Իմ առջևս կ'ելնէ։ — Մինթէ կ'խմանաս խօսքս։
ՃօՀՆ ԲԱՓՏԱՍՏ։

Եօրքի դղեկին մէջ մեծ խնջոյք կար. ՃօՀՆ իշխանին՝ այս խնջոյքին հրաւիրեր էր աւազանին, եպիսկոպոսներն և կաւսակցութեան պարագլուխները՝ օրոց օգնութեամբն իր փառասէր խորհուրդներն՝ ի գործ դնել և իր եղբօրն աթոռն երթալու կ'յուսար։ Վօլտմար Փիցուրս, իր ճարտար և քաղաքագէտ գործակատարը, դաղտնի կ'գործէր և կ'ջանար զինել զանոնք այն ասպետին քաջութեամբ որ կարևոր էր իրենց ղպացումները յայտնապէս երևան հանելու համար։ Սակայն դաշնակցութեան մէկ քանի գլխաւոր անդամներու տարակայութեամբն իրենց ձեռնարկութիւնն ետ կ'մնար։ Փրօն—տը—Պէօյֆ՝ թէև կոշտ՝ այլ անդրդուելի և ժպիրհ արիութիւնը, տը Պրէսիի վաւաշոտն բնաւորութիւնն և անվեհեր վարմունքը, Պրայն տը Պուա—Կիլպէրի խորագիտութիւնը, գինւորական փորձառութիւնն և համբաւատար քաջասրտութիւնը պիտանի էին իրենց դաւադրութեան յաջողութեան համար, և միևդեռ դաղտնի կ'անիծէին անոնց տարակայութիւնն որուն դրդիռը չէին կարող ըմբռնել, ոչ ՃօՀՆ և ոչ իր պաշտօնեայն չէին իշխեր քայլ մ'առնուլ առանց անոնց օժանդակութեան։ Նոյնպէս Խահակ հրէայն անհետ եղած կ'երևէր, և անոր հետ իրրև փոխառնուելիք ստակի մը պատմաբիւրն, որ ՃօՀՆ իշխանին արգէն նոյն հրէին կրօնակիցներուն հետ րրած պայմանագրութեան համեմատ պիտի վճարուէր։ Այսպիսի փափուկ պարագայի մը մէջ դրամի պակասութիւնը կրնար վտանգաւոր դառնալ։

Դօրվիլպգծի անկման հետևեալ առտուն էր որ Եօրք քաղքին մէջ շփոթ ձայն մը տարածուիլ սկսաւ՝ թէ տը Պրէսի և Պուա—Կիլպէր, իրենց Փրօն—տը—Պէօ դաշնակցին հետ գերի բռնուեր կամ սպանուեր են։ Վօլտմար այս տարաձայնութիւնն ՃօՀՆ իշխանին իմացուց, դիտելով որ կ'երևնէր թէ այն լուրը ձշմարիտ չէնի, նա մնաւանդ անոր համար որ երեք ասպետները ձամբայ ելեր էին քանի մը

զինակիցներով՝ սաքսոն Սէտրիկին և անոր մարդոց վրայ յարձակում մը ընելու մտօք։ Ուրիշ պարագայի մէջ՝ իշխանն այս բունաբարութեան գործն իրեն աղուոր կատակ մը պիտի համարէր, բայց հիմակ՝ որ իր խորհուրդները կ'վրդովէր և կ'արգիլէր, յանգաւորներու դէմ սաստիկ զայրացաւ, գժտեալ օրինայ, հասարակայ անդորրութեան և մասնաւոր սեպհականութեան դէմ եղած ոճրին դէմ խօսեցաւ, այնպիսի կերպով մ'որ Ալֆրէտ թագաւորին կրնար վայլել։

— Ա'նօրէն եղուղակներ — գոչեց նա — եթէ երբէք Անգլիոյ գահն ելնեմ, այն աւազակներն իրենց յաստուկ դղեակներու շարժական կամուրջէն պիտի կախեմ։

— Բայց Անգլիոյ թագաւոր լինելու համար — ըսաւ պաղատութեամբ իր Ահիտոֆէլն, կարևոր է, ոչ միայն այն անօրէն եղուղակներուն ապարատութեան հանդուրժել, այլ նաև ձեր պաշտպանութիւնն անոնց շնորհել, թէև սովորաբար անոնց դրժած օրինայ պահպանութեան համար մեծ եռանդ մը կ'յայտնէք։ Արդարև շատ աղուոր օգնութիւն մը գտած պիտի լինէիք՝ եթէ այն դեղջուկ սաքսոնները Ձեր շնորհապայլութեան խորհուրդն ի գործ դնէին՝ իրենց աւատական կամուրջները կախաղաններու դարձընելով. և այն յանդուգն Սէտրիկն այնպիսի մարդ մը կ'երևի լինի որ այդ կարծիքը կրնայ ունենալ։ Ձեր շնորհապայլութիւնը քաջ գիտէ թէ առանց Փրօն–սը–Պէօյի, սը Պրէսիի և Ցաճարականին դործել վտանգալի բան է, և սակայն բաւական առաջ գացինք և ընկրկիլը վտանգ կ'սպառնայ։

Ճօհն իշխանն իր Ճակատը զարկաւ անհամբեր, և յետոյ սկսաւ սենեկին մէջ վեր վար քալել։

— Մատնիչներն — ըսաւ — անպա՛մ մատնիչներ, որ այսպիսի փափուկ Ճգնաժամի մը մէջ զիս երեսէս վրայ կ'թողուն։

— Ո՛չ, լաւ ևս է որ ըսէիք անընդեղ լիմարներ — գոչեց Վ.օլտմար — վասն զի մեր կռնակին այսպիսի ծանր գործ մ'եղած ատեն անտարակոյս լիմարութիւններ կ'գործեն։

— Ի՞նչ պիտի ընենք — ըսաւ Ճօհն իշխանը, յանկարծ Վ.օլտմարի առջև կանգ առնելով։

— Ձգիտեմ թէ ի՞նչ ընել պէտք է — պատասխանեց խորհրդատուն — եթէ ոչինչ արդէն պատուիրեցի որ ընեն։ Այս դժբաղդութեան վրայ քեզի հետ վշտանալու զալէն առաջ՝ անոր դարմանը գտնելու մտածեցի։

— Դու միշտ իմ բարի հրեշտակս ես, Վ.օլտմար — գոչեց իշխանը

— և քանի որ քեզի պէս դիւանապետ մ'ունիմ ինձ խորհրդակից՝ Ճօհն իշխանիս թագաւորութիւնը մեր տարեդարձութեանց մէջ երևելի պիտի հանդիսանայ։ Բայց ի՞նչ հրամաններ տուիր։

— Ցը Պրէսիի տեղապահ՝ Լուի Վ.ինթերլոյրէնտի պատուիրեցի որ ձի հեծնէ, փող հնչել տայ և դրօշակը պարզելով՝ շուտակ Փրօն–սը–Պէօյի դղեակը դիմէ, որպէս զի մեր բարեկամներու օգնութեան համար ամէն ձեռքէն եկածն ի գործ դնէ։

Ճօհն իշխանին դէմքը բարկութենէ կարմրեցաւ կամաչաշատ տղեկի մը հպարտութեամբ, որ կարծէ թէ նախատինք մ'ընդունած է։

— Աստուծոյ պատկերը վկայ — ըսաւ նա — դու մեծ պատասխանատուութիւն մ'առեր ես վրադ, Վ.օլտմար, և չափազանց անձնասպաստան ես որ փող հնչել կամ դրօշակ պարզել տուեր ես, այնպիսի քաղքի մը մէջ ուր ներկայ ենք, առանց յաստուկ հրամանատար մ'ուղնեղնալու։

— Ձեր ներողութիւնը կ'խնդրեմ, Ընորհափայլ տէր իմ — ըսաւ Փիցուրս, ներքնապէս իր տիրոջ անհեթեթ անպատրաստութիւնն անիծելով — բայց որովհետև ժամանակը ստիպողական էր և քանի մը վայրկենի կորուստն անպատ մեզի աղէտաբեր կրնար դառնալ, մտածեցի որ պատասխանատուութիւնը կարող եմ վրաս առնուլ՝ այսպիսի ծանր պարագայի մը մէջ որ Ձեր ընորհափայլութեան շահուց կ'վերաբերի։

— Ա'ներեմ քեզ, Փիցուրս — պատասխանեց իշխանը ծանրօրէն։ — Դիտաւորութիւնդ անբասիր կ'հանէ քու յանդուգն շտապդ։ Բայց ըսէ այս կողմն եկողը։ Խա՞չ վկայ, Պրէսին է, և ի՞նչ այլանդակ վիճակի մէջ կ'երևի նա մեզի։

Արդարև Պրէսին էր նա «մեռակէլէն արիւնլուայ, և արագաշարժութենէն կրակ ու բոց դարձած։» Իր զէնն ու զարդը նոր կատաղի պայքարի մը նշանները կ'կրէին, վասն զի խորտակեր, տեղ տեղ աղյատուեր և արիւնով արատեր էր, և դագաթէն մինչև մեռակը փոշիով և տղմով ծածկուեր էր։ Ցը Պրէսի սաղաւարտը հանելով սեղանին վրա դրաւ և պահ մը կանգ առաւ որպէս թէ շունչ առնուլ կ'ուզէր խօսելէն առաջ։

— Ցը Պրէսի — ըսաւ Ճօհն իշխանը — ի՞նչ կ'նշանակէ այդ. խօսէ, կ'հրամայեմ քեզ, միթէ սաքսոնները ապստամբեցա՞ն։

— Խօսէ, սը Պրէսի՛ — ըսաւ Փիցուրս՝ պրեթէ իր տիրոջ հետ միաձայն։ — Դու սովոր էիր մարդ լինելու, ուր է տաճարականը, ուր է Փրօն–սը–պէօ։

— Տաճարականը վախուստ առաւ — պատասխանեց տը Պրէսի — իսկ Ֆրօն–տը–Պէօն այլևս չպիտի տեւնէք։ Իր յաւտուկ դղեկին հրաւառ դերանները ներքեւ կարմրագոյն դերեզման մը դտաւ, և ես միայն պրծայ այս լուրը բերելու համար։

— Սառնապին լուրեր են ասոնք մեզի համար — ըսաւ Վ.օլտմար — թէև կրակի և հրդեհի վրայ կ'խօսիս մեզի։

— Սակայն դեռ չկայտնեցի վատագոյն լուրը — պատասխանեց տը Պրէսի և իշխանին մօտ երթալով ծանր և հանդիսաւոր ձայնով մը շարունակեց.

— Բիչարտ Անկլիա կ'դանուի, ես զանի տեսայ և հետը խօսեցայ։

Ճօհն իշխանին դոյնը դարձաւ, երերայ և վար չընկնելու համար կաղնիէ նստարանի մը կռնակը բռնեց, իբրև մարդ մ'որ սրտին յանկարծ նետ մը կ'ընդունի։

— Դուն կ'զառանցես, տը Պրէսի — ըսաւ Ֆիցուբս — ըսածդ կարելի բան չէ։

— Եւ սակայն Ճշմարտութեան պէս Ճշմարիտ է — պատասխանեց տը Պրէսի — ես ինքս անոր գերին էի և հետը խօսեցայ։

— Դուն խօսեցար, ըսիր, Բլանդաժնէդ Բիչարտի հետ — վրայ բերաւ Ֆիցուբս։

— Նոյն իսկ Բլանդաժնէդ Բիչարտի հետ — պատասխանեց տը Պրէսի — Առիւծասիրտ Բիչարտի հետ, Անկլիոյ Բիչարտի հետ։

— Դուն անոր ձեռքը գերի ընկար — շարայարեց Վ.օլտմար — ուրեմն բանակի մը դլուխը կ'գտնուի։

— Ո՛չ, միմակ քանի մը վատրակներ բոլորտիքը կ'գանուէին, և ասոնք ալ զինքը չէին Ճանչեր։ Իր բերնէն լսեցի որ անմիջապէս կ'պատրաստուի։ Բիչարտ այն վատրակներուն միացաւ որպէս զի Դօրդիլսդընի պաշարման մէջ անոնց օգնէ։

— Այո — ըսաւ Ֆիցուբս — արդարև Բիչարտ այդ սովորութիւնն ունի, Ճշմարիտ Թափառական ասպետ մ'է, յանդուգն արկածներու մէջ կ'նետուի, իր բազկին զօրութեան վստահելով իբրև նոր Ալի կամ Ցէվիս մը, մինչդեռ իր տէրութեան դործերն երեսի վրայ կ'թողու և իր անձին ապահովութիւնը վտանգի մէջ կ'գանուի։ Տը Պրէսի, դուն ինչ ընելու պիտաւորութիւն ունիս։

— Ես — պատասխանեց Նօրման ասպետը — ես առաջարկեցի Առիւծասրտին օդնել իրեն իմ նիզակաւորներս, բայց նա մերժեց։ Ուստի Հիւլ պիտի առաջնորդեմ նիզակաւորներս, նաև մը պիտի դրաւեմ և

Ֆլանտր պիտի գնամ. այս վերջվերջի ժամանակներս ընարհիւ, դործօն մարդ մը կրնայ միշտ պաշտօն մը դտնել։ Իսկ դուն Վ.օլտմար, միթէ կ'ուղես վտհան ու նիզակ առնուլ, քաղաքապետական դաւեր մէկդի ձդել և ինձի միանալով Առաւծոյ մեղի ըրկնչիք բազդին մասնակից լինիլ։

— Ես շատ ծեր եմ, Ս'օրիս, և ալջիկ մ'ունիմ — պատասխանեց Վ.օլտմար։

— Տուր աղջիկդ ինձի, Վ.օլտմար, իմ նիզակիս և մորաքիս ընարհիւն անոր արժանի վիճակ մը կրնամ դտնել — ըսաւ տը Պրէսի։

— Ո՛չ — պատասխանեց Վ.օլտմար — ես Ս. Պետրոս եկեղեցւոյն սրբավայրն ասպաւէն մը պիտի վնտռեմ. արքեպիսկոպոսն իմ երդուեալ եղբայրս է։

Այս խօսակցութեան ժամանակ՝ Ճօհն իշխանը փոքը առ փոքը ուշաբերեցաւ և փարատեց այն թմրութիւնն որուն մէջ նետեր էր զինքն անակնկալելի լուրը, և իր երկու կատաղիներուն խօսքն մտիկ ըրեր էր ուշադիր։

— Իմնիկ կ'հետևանան — ըսաւ իւրովի — ինձի հետ այնպէս կատաղած են այսուհետև ինչպէս չոր տերև մ'իր ճիւղին երբ քամին անոր վրայ կ'փչէ։ Դժնիկը և սատանաներ, միթէ ես չեմ կարող իմովանան հնազդ դտնել՝ երբ այս վատերը դիս կ'լքանին։ — Նոյն պահուն Ճօհն իշխանը կանգ առաւ, և դիւական բացատրութիւն մը կար այն բռնադբօսիկ ծիծաղին մէջ, որով՝ ի վերջէ անոնց խօսակցութիւնն ընդհատեց։

— Հա, հա, հա, իմ լաւ ասպետներս — ըսաւ նա — մեր Տիրամօր լուսապսակը վկայ, ես կարծէի թէ խմնատուն մարդիկ էք, յանդուգն մարդիկ, պատրաստակամ մարդիկ էք, և սակայն ահա հարստութիւն, պատիւ, զուարճութիւն՝ ի բայ կ'մերժէք և ձեր սատանձնած աղնիւ խաղը կ'թողուք՝ Ճիշտ այն միջոցին որ յանդուգն հարուածով մը կրնաք զայն վերատին շահիլ։

— Ես միտք չեմ հասկընար — ըսաւ տը Պրէսի։ — Երբ միանդամ Առիւծասիրտ Բիչարտի վերադարձը դուրսը հռչակուի, իսկոյն մեծ բանակի մը գլուխը պիտի տեւնէ ինքզինքն և այն ատեն մեր բանը պիտի բանայ։ Ես պիտի յորդորեմ քեղ, տէր իմ, կամ Ֆրանսա խոյս տալ, կամ մայր Թագուհւոյն պաշտպանութեան դիմել։

— Ես իմ ապահովութիւնս չեմ մտածեր — ըսաւ Ճօհն իշխանը դոռոզութեամբ — իմ եղբօրս բառ մը միայն ըսելով կարող եմ զայն ստա-

նալ : Սակայն որչափ որ դու , տը Պրէսի , և դու , Վօլտմար , կ'շտապիք դիս Թողլու , զարձեալ սիտի վշտանամ տեսնելով ձեր դէմքերը Եօրքի Քլինֆֆօրտ դրան վրայ կախուած : Մինչ կարծիս դու , Վօլտմար , որ նենգամիտ արքեպիսկոպոսը նոյն իսկ խորանին աստիճաններէն քեզ բռնել տալու սիտի արդիլէ , եթէ քեզ ներքակալ ընել տալով Բիչարտի հետ հաշտուի : Իսկ դու , տը Պրէսի , կ'մուննաս որ Ռօսլէրդ տ'Էսդուդվիլ քու և Հիւլի մէջ կ'գտնուի բոլոր իր զօրքովը , և թէ Էսէքսի կոմսն իր կուսակիցները կ'ժողովէ : Եթէ Բիչարտի դաչէն առաջ իսկ այս զօրաժողովներէն երկնչելու պատճառ մ'ունէինք , մինչ այժմ կրնաս կասկած մ'ունենալ թէ անոնց պարագլուխներն ո՞րուն կողմը պիտի բռնեն : Հաւատսի եղիր որ Էսդուդվիլ բաւական զօրաւոր է բոլոր քու ազատ նիզակաւորներդ Հունտէրի մէջ հալածականն վռնտելու : — Վօլտմար և տը Պրէսի իրարու երես նայեցան գունատ և ահաբեկ : — Մինչդոյ մը կայ միայն ապահովութեան — շարունակեց իշխանը , և իր ձախատը սեղաւին երեսէն մ'առաւ — մեզի սարսափ ազդող մարդն միանակ կ'ուղեւորի , սէտք է որ անոր վրայ քալենք :

— Այդ բանն ես չպիտի ընեմ — ըսաւ տը Պրէսի արտորնօք : — Ես անոր դերին էի , իմ վրայ դուէթ ունենայաս , իր սաղաւարտին մէկ փետուրին անգամ չպիտի դպիմ :

— Ո՛վ ըսաւ քեզի որ անոր դալիս — պատասխանեց ճօհն իշխանը չարաշուք ժպիտով մը : — Թերևս հինգ ալ կ'երթես կ'ըսես թէ հրամանն տուի քեզի եղբայրս սպանելու : Ո՛չ , բանտը լաւագոյն է , փոյթ չէ , թէ Բրիտանիա , թէ Աւստրիա դտնուի այն բանտը : Մինակ դորձերն պիտի ճան այն վէճակին մէջերը մեր ձեռնարկութիւնն սկսանք : Ո՞յսայինք որ Բիչարտ Դերմանիա պիտի ճայ երբեւ դերի . լաւ , միթէ մեր հօրեղբայրը Ռօսլէրդ Գարտիֆի դղեկին մէջ բանտաւոր չէ՞ ուր :

— Իրաւ է — ըսաւ Վօլտմար — բայց ձեր Հէնրի հաւն իր աթոռին վրայ փոքր ինչ աւելի ամուր նստեր էր քան Ձեր հնարհաւայլութիւնը : Ես կ'ըսեմ թէ դիւաթաղին փորածն է ամենէ լաւ բանտը . չկայ ղնդան մ'որ եկեղեցւոյ մը նկուղին հաւասարի : Այս է ահա իմ կարծիքս :

— Թէ բանտ լինի և թէ գերեզման — պատասխանեց տը Պրէսի — ես այդ գործին մէջ մատ ունենալ չեմ ուզեր :

— Վա՛տ — գոչեց իշխանը զայրագին — միթէ մեզ մատնելու միտք ունիս :

— Ես երբէք անձ մը չեմ մատնած — ըսաւ տը Պրէսի վեսօրէն — դիս վատ անուանելու իրաւունք չունիք :

— Հանդարտէ , ասպետ — ըսաւ Վօլտմար — և դուք , աէր իմ , ներեցէք արիասիրտ տը Պրէսիի խոշհարութեան , յուսամ թէ քիչ առենէն խիղճը պիտի նուաճէ :

— Այդ բանը քու ձարտասանութենէդ շատ վեր է , Վօլտմար — պատասխանեց ասպետը :

— Բարեսիրտ Ո՛օրիս , խնդրեմ ահաբեկ ձիու մը պէս մի խրտչիր — ըսաւ նենգամիտ քաղաքագէտը — և նախ քնէ քու ահ ու դողիդ պատճառը : Դեռ երէկ քու միակ փափաքդ էր ձակատ առ ձակատ մնաքառիլ Բիչարտի հետ , և այս փափաքդ հարիւր անգամ բերնէդ լսեցի :

— Այո՛ — ըսաւ տը Պրէսի — բայց ինչպէս որ ըսիր , դէմ առ դէմ ձակատամարտիլ էր փափաքս : Երբէք լսած չես իմ բերնէս անոր դէմ յանկարծուստ և անտառի մը մէջ միայնակ յարձակելու միտումս :

— Դու քաջ ասպետ մը չես եթէ այդ մասին խիղճդ կ'տագնապէ քեզ — ըսաւ Վօլտմար : — Մինչ Լանսլօ տը Լաք և Դրիսբէմ Ճաւկատամարտի մէջ համբաւ ստացան , ոչ ասպաբէն երեւելի հանդիսացան՝ մութ և անծանօթ անտառներու մէջ հսկայ ասպետներու դէմ մնաքառեցալ :

— Այո՛ , բայց կ'հաւատամ քեզ — վրայ բերաւ տը Պրէսի — որ ոչ Դրիսբէմ և ոչ Լանսլօ զատ զատ չպիտի համարձակէին Բիչարտ Բլանդաժնէդի դէմ մենամարտիլ , և կարծեմ թէ սակաւ չէին գնդի մը գլուխն անցնիլ լոկ մարդու մը վրայ յարձակելու համար :

— Դու յիմար ես , տը Պրէսի — ըսաւ Վօլտմար : — Մենք քեզի ինչ կ'աւաջարկենք , դու որ Անգլոս Գունդերուն վարձեալ մէկ հրամանատարն ես և որուն սուրն ճօհն իշխանին ծառայութեան յատկացած է : Քեզ թշնամին ցոյց կ'տան , և դու խոշհարութեամբ աւարկութիւններ կ'ընես՝ մինչդեռ քու սիրոջդ նոյնպէս բարեկամներուդ , և քու բաղդդ , նոյնպէս մեր ամենուն կեանքն ու պատիւը վտանգի մէջ կ'գտնուին :

— Ես քեզի կ'ըսեմ — պատասխանեց տը Պրէսի անյողդողդ — որ նա իմ կեանքս լինի բաշխեց : Արդարև դիս իր ներկայութենէ հեռացուց և իմ նուէրս մերժեց , և հետևապէս ոչնպաստ և ոչ հաւատարմութիւն պարտաւոր եմ անոր , սակայն անոր դէմ իմ ձեռքս չպիտի վերչընեմ :

— Հարկ չկայ որ վերջընես — ըսաւ Վօլտաիր — մինակ Լուի Վ֊ինքէլպերնան և քանի չափ նիշակաւորներէդ ղրկէ ։

— Դու քու հրամանիդ նէրքև բանական ապիրատներ ունիս այդ շահատակութիւնը գործելու — ըսաւ տը Պրէսի — այդպիսի գործ մը իմ ղօրականներէս և ոչ մին պիտի կատարէ ։

— Դու շատ կամակոր ես , տը Պրէսի — ըսաւ Ճօհն իշխանը ։ — Միթէ եռանդուն հաւատարմութեան և անձնուիրութեան այնքան ցոյցեր տալէն ետև՝ դիս ծողմել կ՚ուզես ։

— Ես այդպիսի դիտաւորութիւն մը չունիմ — պատասխանեց ասպետը ։ — Ասպետի մը վայել կերպով քեզ ամէն տեսն պաշտպանելու պատրաստ եմ , թէ կրկիսի , թէ Ճակատամարտի մէջ . սակայն իմ պարտաւորութենէս դուրս են հուդիհարի նախճիրները ։

— Մօտեցիր , Վօլտաիր — ըսաւ Ճօհն իշխանը — քանի՛ ապերջանիկ իշխան մ՚եմ ։ Իմ հայրս , Էդնրի Թագաւորը , հաւատարիմ պաշտօնեաներ ունէր . ըսելով միայն թէ ըմբոստ քահանայէ մ՚ազատիլ կը փափաքի , և իսկոյն Թոմաս Պէքէտի արիւնն , թէև սուրբ մարդ մ՚էր նա , իր յաւուրկ խորանին աստիճանները ներկեց ։ Պրէսի , Մօրվիլ , Պրիդօ , դուք անենդ և ժոլիրհ հպատակներ , դիտցիք որ ձեր սնուցանը , ձեր ոգին մարած են , և թէև Ռէժինալտ Գիցուրս որդի մը ձգած է , այս որդին իր հօրը հաւատարմութիւնն ու արիութիւնը չժառանգեց ։

— Թէ մին և թէ միւսը ժառանգեց — ըսաւ Վօլտաիր Գիցուրս — և քանի որ ուրիշ ճար մը չկայ , ես իմ վրայ պիտի առնում այս վտանգալի ձեռնարկութեան հոգը ։ Սակայն իմ հայրս սուղ գնով եռանդուն բարեկամի մը դարձաւ , և Էդնրիին ցոյց տուած հաւատարմութեան նշանը չհաւասարիր բնաւ իմ ձեռնարկելիք գործիս , վասն զի լաւ ես ունիմ տօնապետին բոլոր սրբոց դէմ մաքառիլ քան թէ Առիւծասրտին դէմ իմ նիզակս վերցընել ։ Ցը Պրէսի , քեզի կ՚ընծայեմ երեսուն ոզնեները հրահրելու պաշտօնը և Ճօհն իշխանին անձը պահպանելու հոգը ։ Եթէ իմ ակնակալած լուրերս քեզի հաղորդեմ , մեր ձեռնարկութիւնն այս կասկածելի կերպարանքը պիտի փոխէ ։ Պայիկ — յարեց նա — իմ տունս վազէ դնա , և ըսէ իմ զինապանիս որ իմ զէն ու զարդս պատրաստէ ։ Ձայն տուր նաև Սաեֆան Վէտհրալի , Պրծա Թորղպէյի և Սբրինկլոյի երեք նիզակաւորներուն որ իսկոյն պատրաստ դտնուին ինծի հրամաններս ընդունելու ։ Ինձ բարև , իշխանդ իմ , մինչև լաւագոյն ժամանակ ։

Այս ըսելով Վօլտաիր սենեկէն դուրս եկաւ ։

— Իմ՚եղբայրս ձերբակալ ընելու կ՚երթայ — ըսաւ Ճօհն իշխանը Պրէսիին , այնպէս անհոգհաճար կերպով որպէս թէ սպաշտօն մ՚էր ձերբակալ ընելիքը ։ — Վատահ եմ որ իմ հրամաններս պիտի պահէ , և մեր սիրական Բիչարտի անձին հետ պատշաճ անհնազանդութեամբ պիտի վարուի ։

Ցը Պրէսի ժպտելով միայն պատասխանեց ։

— Մեր Տիրամօր լուսափայլ պսակը վկայ — ըսաւ Ճօհն իշխանը — մեր հրամաններն այս մասին բացորոշ էին , թէև կարելի է որ դու չլսեցիր , քանի որ պատուհանին որմնածակին մէջ մնիս Հաղորդեցիր անոր ։ Բիչարտի անձն անվնաս պահելու համար մեր կողմէ տրուած պատուէրներն ճշդիւ և վճռական էին , և վայ Վօլտաիրի դլխին եթէ անոնց դէմ շարժի ։

— Ուրեմն դէշ չեմ լսեր եթէ անոր բնակարանն երթամ — ըսաւ տը Պրէսի — և Ձեր շնորհափայլութեան կանչն անոր կրկնեմ , վասն զի Ձեր հրահանգն ականջիս բնաւ չհասնելուն , հաւանական է որ Վօլտաիր ալ լսած չլինի ։

— Ո՛չ , ո՛չ — ըսաւ Ճօհն իշխանն անհամբեր — ստոյգ եղիր որ հրահանգս լսեց նա , և ասիկ գաս՝ ուրիշ զրաղմունք մը պիտի տամ քեզի ։ Մօրիս , արի մօս եկուր , Թող որ ուսիդ կոթնիմ ։

Այս ընտանեկան դիրքով սրահին մէջ շրջան մ՚ընին , և Ճօհն իշխանը՝ խիստ մտերմական երևոյթ մ՚իր խօսքը շարունակեց այսպէս . — Սիրելիդ իմ տը Պրէսի , ինչ կարծիք ունիս այս Վօլտաիր Գիցուրսի վրայ ։ Իմ դիւանապետս լինել կ՚ուզայ . ի՞նչ հարկէ պիտի մտածեմ այսպիսի բարձր պաշտօն մը տալէն առաջ՝ այնպիսի մարդու մ՚որ կ՚ըսէ նէ թէ երբեմն քիչ կ՚արդէ մեր արիւնն՝ այսպէս շուտ մը Բիչարտի դէմ դիմելովը ։ Ստոյգ եմ որ այժմ դու կ՚խորհիս թէ իմ հանճարութիւս կորսուիր այս անախորժ պաշտօնը մերժելովդ ։ Բայց աննեղին , Մօրիս . ընդհակառակն՝ քու առաքինական հաստատամտութիւնդ կ՚պահվի ։ Կան բաներ որոց կատարումը կ՚փափաքիմք , սակայն պէտք կատարումն ոչ կ՚սիրենք և ոչ կ՚յարմարինք . և երբեմն անոնք որ մեր խնդիրը կատարել կ՚մերժեն , աւելի մեծ յարդ կ՚ստանան մեր առջև այս դիմադրութեան համար ։ Իմ տարաբաղդ եղբօրս ձերբակալութեան դործն այնքան մեծ իրաւունք մը կ՚տայ դիւանապետութեան բարձր պաշտօնին հասնելու որչափ քու ասպետական և անվեհեր մերժումդ իրաւունք կը տայ քեզ մեծ մարշալի պատուանը ստանալու ։ Այս բանիս վրայ մնաձէ , տը Պրէսի , և այժմէն այս պաշտօնը վարելու սկսէ ։

— Անհաստատ բռնաւոր — մրմռաց տը Պրէսի իշխանին քովէն հեռանալով — վայ անոնց որ քեզի կ'վստահին : Արդարև , քու դիւանագիտդ , քու խղճիդ պահպանութիւնն ունեցողը , կարծեմ թէ դժուարին պաշտօն մը չպիտի ունենայ : Բայց Անկլիոյ մեծ մարեշալ մը , այս պաշտօնը — յարեց նա իր թևը կարկառելով որպէս թէ սոյն իշխանութեան դաւազանը սլիտի բռնէր , և սրահին մէջ առելի դուռ քալուած մ'առնելով — այս պաշտօնն արդարև կ'արժէ որ մարդ ի պայքար ելնէ շահելու համար :

Ան ինչ տը Պրէսի սենեկէն դուրս ելաւ որ Ճօհն իշխանը սպասաւոր մը կոչեց .

«Գնա ըսէ Հիւկ Պարտօնին , մեր լրտեսապետին , որ ատ գայ , Վօլտմար Գիցուրսի հետ խօսելէն անմիջապէս ետք :

Լրտեսապետան պահակէ մը ներս մտաւ , մինչդեռ Ճօհն իշխանն մնայուղ՝ սրահը վեր վար կ'չափէր քայլամոլար :

— Պարտօն — ըսաւ Ճօհն — Վօլտմար ինչ խնդրեց քեզնէ :

— Երկու հատ անվնհեր , հիւսիսային անտառներու տեղեակ և մարդու և ձիու հետքն որոնելու Ճարպիկ մարդիկ :

— Եւ միթէ այն մարդիկը տուիր անոր :

— Ձեր շնորհափայլութիւնն իմ վրայ թող վստահի — պատասխանեց լրտեսապետը : — Ան մարդերէն մին Հէբսեմշայրի բնիկ է , Դայմսէլի և Տէվիօդէլի աւազակներու հետքն հետևելու սովոր են , ինչպէս որ բարակը կ'հետևի վիրաւոր եղջերուին հետքին : Միւսը՝ որ Եօրքշայր ծնած է , Շէրվուտի հրձուելի անտառին մէջ սակաւ իր աղեղին լարը հնչած է , ամէն ցանցառուտ և ձորուտ վայրեր կ'ճանչէ , Եօրքի և Ռիչմընտի մէջ գտնուած բոլոր պուրակներն ու մեծ անտառները գիտէ :

— Քաջ է — ըսաւ իշխանը — միթէ Վօլտմար ասոնց հետ կ'մեկնի :

— Անմիջապէս — ըսաւ Պարտօն :

— Ինչ հետևորդներ կ'առնու իրեն հետ — հարցուց Ճօհն անհոգութեամբ :

— Կարճահասակ Թօրսթայ կ'ուղեկցի իրեն , նոյնպէս Վէտհրալ , զոր իր անվթութեան համար Պողպատասիրտ կ'անուանեն , և երեք հատ հիւսիսային մարտիկներ որ Ռալֆ Միտլդմօրի խմբին կ'վերաբերեին , և ասոնք ալ Սբաֆնկոյի Նիլսկիները կ'կոչուին :

— Շատ լաւ — պատասխանեց Ճօհն իշխանը :

Ապա՝ պահ մը լուռ կենալէն ետև՝ յարեց .

— Պարտօն , մեր ձեռնարկութեան համար կարևոր է որ Մօրիս տը Պրէսիի վրայ չի մտածես , բայց այնպէս որ ինք չհասկընայ . ատեն ատեն իմացուր ինձ թէ ինչ կ'ընէ , որմէ հետ կ'խօսակցի , և ինչ ընել կ'մտադրէ : Այս մասին անհոգ մի լինիր , թէ ոչ պատասխանատու կ'մնաս :

Հիւկ Պարտօն յարգական ողջոյն մը տուաւ և քաշուեցաւ դնաց :

— Եթէ Մօրիս գիս մատնէ — ըսաւ Ճօհն իշխանը — եթէ մատնէ գիս , ինչպէս որ իր վարմունքէն կ'կասկածիմ , դլուխը պիտի կորնչտամ , եթէ երբեք Բիչարտ Եօրքի դուռն իսկ հասած լինի :

ԳԼՈՒԽ Լ Ե

Հերկանեան անապատի վագր գրգռել ,
Սովալլուկ առիւծի հետ չի կազ եղնել ,
Ջէ այնչափ վտանգաւոր քան արծաթել ,
Մարած հուրն վսյրագ կրօնամոլութեան ,
Անոնոս .

Այժմ մեր պատմութիւնն Եօրքցի Խսահակին կ'դառնայ : Ջորիի մը վրայ հեծած , որ վտարակից պարզևն էր , Հրէային՝ իրեն իբրև ուղեցոյց և պաշտպան ընկերացող զօրականներուն հետ Ճամբայ ելեր էր դէպ'ի Դէնբլստովի ապարանն , որպէս զի իր աղջկան փրկանքին վերայ բանակցի : Այս ապարանն Դօրղիլսթօնի կիսակործան դղեկէն օրուան մը Ճամբով հեռի էր , և Հրէային կ'յուսար մութը չկոխած անդ հասնիլ : Հետևապէս իր ուղեկիցներն անտառէն եկնելէն ետև՝ Ճամբեց արծաթէ դրամ մ'անոնց վարձ տալով , և յոդնութիւնը տարածին չափ արագ արագ ընթանալ սկսաւ . սակայն Տաճարանէն չորս մղոն հեռի բոլորովին ուժաթափ ծնաց , սուր ցաւեր կ'զգար իր կռնակին և անդամներուն մէջ , և սրտովին կրած կսկիծներն մարմնական վիշտերէն սաստկանալով լիովին անկարող եղաւ առելի առաջ քալել և փոքրիկ ածանի մը մէջ օթևան առաւ , ուր իր ցեղէն Հրէայ ուսքի մը կ'բնակէր՝ բժշկական արհեստին մէջ նշանաւոր , և որուն Խսահակ շատ ծանօթ էր : Նաթան պէն Իսրայէլ իր վշտահար հայրենակիցին ընդունեց օրինեաց հրամայած մարդասիրութեամբ , որով Հրէայք իրարու հետ կ'վարուէին : Խնդրեց որ Խսահակ հանգիստ առնու և ամենէն ազդու դեղե-

րը գործածեց որպէս զի սարսափէն, յուղուելենէ, չարչարանքէն և ցաւերէն հեռ հրեին վրայ եկած տենդը բժշկէ։

Հետևեալ օրն երբ Խահակ կ'մտադրէր երթալ և իր ուղին շարունակել՝ Նաթան անոր դիտաւորութեան դէմ կեցաւ, ոչ միայն իրեն իր հիւրընկալն այլև իրեն բժիշկը։ Եթէ ճամբայ ելնես՝ կարելի է կեանքդ կորուսես, կ'ըսէր անոր։ Բայց Խահակ պատասխանեց թէ կենայ և մահու խնդիր էր իրեն համար նոյն առտու Դէնիլսոնով դնալու։

— Դէնիլսոնով — գոչեց իր հիւրընկալը զարմանօք. և նորէն առնոր երակը ընկնց և լուռ մրմնջեց։ — Իր տենդը գադրած է, սակայն իր միտքը փոքր մ'ըչ շփոթ և խանդաղեալ վիճակի մէջ կ'երևի։

— Եւ ինչպատճառաւ Դէնիլսոնով չպիտի երթայ — պատասխանեց հիւանդը։ — Քեզի հետ կ'խոստանամ, Նաթան, որ այն տեղը բնակին մարդիկ որոց համար Աւետեաց երկրին արհամարհելը որքան նախատանաց և դարշանաց առարկայ մ'են, սակայն դու արդէն գիտես թէ երբեմն տաբևաւոր սիրելոյական գործեր մեզ այն արիւնակից նաւվրեցի վիճուորներուն մէջ կ'մղեն, և մենք Տաճարականաց նոյնպէս Հիւրասէր ասպետներու ապարանները այցելութեան երթալու կ'սիրուինք։

— Քաջ գիտեմ այդ բանը — ըսաւ Նաթան — բայց դու միթէ կ'անգիտանաս որ Լուկաս տը Պօմմոնաւար, անոնց Ուխտին գլխաւորը, որուն Մեծ Վարպետ անունը կ'տան, այս միջոցիս Դէնիլսոնով կ'գտնուի։

— Զգիտեի — ըսաւ Խահակ — մեր Բարիզի եղբայրներէն հասած գիրերը կ'իմացընէին որ Պօմմոնաւար նոյն քաղաքն է, որպէս զի Ֆիլիպոս Թագաւորին օգնութիւնը խնդրէ սուլթան Սալահէնի դէմ։

— Անկից դարձաւ նա մինչդեռ իր եղբայրներն իրեն չէին սպասեր — ըսաւ պէն Եսրայէլ, և կ'գառնայ տաճարականաց կողմէն և պնեակալ բազուկով մ'որպէս զի զանոնք ուղէ և պատժէ։ Բարկութեամբ բորբոքած է այն ասպետներուն դէմ որ իրենց ուխտին հակառակ կ'շարժին և Բէլիարայ որդիք մեծ ահ ու դողի մէջ կ'գտնուին։ Անշուշտ անոր անունը լսած պիտի լինիս։

— Քաջ ծանօթ է լինել — ըսաւ Խահակ — հեթանոսներն այս Լուկաս Պօմմոնաւարը՝ նաղվրեցիին օրինաց անթերի գործադրութեան համար իրը արիւնարբու մարդ մը կ'նկարագրեն, և մեր եղբարքը տապանիկոցոց վայրագ կործանիչը և Աւետեաց զաւակներուն անողորմ բռնաւորը կ'անուանեն զանի։

— Եւ շատ յարմար անուն մը տուեր են անոր — ըսաւ Նաթան քմծիծաղը։ — Ուրիշ տաճարականներ Թեոբևս զուարճութեան պատճառաւ իրենց պարարքը չիստանեն, և տակին ու տրծաթի սիրոյն համար իրենց ուխտը մոռնան, բայց Պօմմոնաւար ուրիշ տեսակ բնաւորութեան տէր մարդ է։ Հեշտասիրութիւնը կ'տեսէ, հարստութիւնը կ'անգոնէ, և յատաջ կ'նետուի որպէս զի մարտիրոսութեան պսակ ըստացը շտկի։ Երանի՛ թէ Յակոբայ Աստուածն այս մարտիրոսութեան արժանի ընէ զինքն և իրեններըը։ Այս վէս մարդն իր ձեռքը տաստիկ ծանրացուց Յուդայի զաւակաց վրայ, ինչպէս որ Դաւիթ իրեն եղբոր որդւոց վրայ ծանրացուցեր էր, և հրեի մը սպանութիւնն տարաիմնացիի մը մահուան չափ Աստուծոյ հաճելի ոգեկոչում մը կ'տեսէ։ Մերցեղերու զոհութեան վրայ՝ անօրէն տուիմիններ կ'մտածէ՝ որպէս թէ Սատանի հնարք լինելին։ Երանի՛ թէ Աստուծոյ դատաստանին հանդիպէ։

— Ինչ և է — գոչեց Խահակ — պէտք է որ Դէնիլսոնով երթամ, եթէ իր կերպարանն հնոյի պէս եօթնատարիկ բորբոքած անպատ լինի մեղի դէմ։

Այն տուն Նաթանի պատմեց Խահակ իր ուղեւորութեան պատճառը։ Ոսբրին մանկ ըրատ ուշադիր, և իր ժողովրդեան տվայրութեան համակրատ՝ իր հանգրստութիւնը յայտնեց զնացողները պատուելով և գոհ ընելով։ — Ա՛հ, իմ աղջիկս, ահ, իմ աղջիկս, վայ, ինչ եղաւ Սիոնի գեղեցկութիւնն, վայ, Խորայէլ գերութեամբ կ'տառապի։

— Կ'նայիս — յարեց Խահակ — ինչպատճառ վիճակի մէջ եմ և հետևապէս չեմ կարող մնալ։ Կարելի է Լուկաս Պօմմոնաւարի ներկայութիւնն, քանի որ տաճարականաց պարագլուխն է, Պրայն սը Պուա-Գիլբերի մտադրած չար խորհուրդն արգիլէ, և կարելի է պատճառ լինի իմ սիրական Ռեբեկա գտնուրս ձեռք ձգելու։

— Ուրեմն մեղմէ դնա — ըսաւ Նաթան պէն Եսրայէլ — և իմաստուն եղիր, վասն զի իմաստութիւնն անգնաս պահեց Դանիէլին առիւծներու գուբին մէջ, և Թեոբևս քեզի ալ օգնէ սրտիդ փափաքներն ի կատար հանելու։ Սակայն, եթէ կարդաս, Մեծ Վարպետին ներկայութենէն խոյս տուր, վասն զի օրն ի բուն իր միակ բերկրանքն է արհամարհանօք վարուիլ մեր ժողովրդեան հետ։ Կարելի է որ՝ եթէ Պուա-Գիլբերի հետ առանձնական խօսիս, առնչի հեշտիս յաջողիս, վասն զի կ'ըսեն թէ այն անիծեալ նաղվրեցիները միաբան չեն իրենց Տաճարանին մէջ։ Երանի՛ թէ Աստուած անոնց խորհուրդները խառնէ և յաղթահարէ աստիճահար։ Բայց կ'պատրաստիմ քեզ, եղբայր,

նորէն դարձիր այս կողմն իրրև քու հօրդ տունը, և քալայոյս եմ որ Ռեպեկան միասին պիտի բերես, իմաստուն Միրիամի այս արժանի աշակերտուհին, որուն դեղերն իրրև հմայութեան գործ անբաստանեցին հեթանոսները:

Հետեւապէս Խահակ հրաժարական բարև տուաւ իր բարեկամին, և ժամ մը ձիավարեցին եւս՝ Դէնիլստովի ապարանը հասան:

Ցաճարականաց այս բնակարանը դեղեցիկ մարգերու և արօտներու մէջ շինուած էր՝ զոր վերջին հրամանատարը բարեպաշտութենէ պարգեւ ըրած էր Ուխտին: Ընդարձակ և ամուր է այս շէնքը, զուրշութիւն մ'որ երբէք ասպետներու ուշադրութենէ չէր վրիպած և Անկլոյ վրդովեալ վիճակին պատճառաւ մանաւորապէս կարեւոր կ'համարուէր: Աևազդեսա երիս նիզակաւորներ շարժական կամուրջը կ'պահպանէին, մինչդեռ ուրիշ պահնորդներ՝ որ մի և նոյն մթագոյն հագուստն ունէին, պարիսպներու վրայ կ'սահէին սղալի քայլով և որոնք ստուերներու կ'նմանէին քան թէ զինուորներու: Ուխտին ստորին սպաներն ալ նոյնպէս սեւեր հագած էին այն առնէ վեր որ սպիտակ հագուստներու սովորութիւնն՝ ասպետներու և ձիապաններու հագածին նման, Պալէստինի լեռներէն առնուած էր՝ սուտ եղբայրներու միաբանութեան մը կողմէն՝ որ ինքզինքնին տաճարական կ'անուանէին և Ուխտին մեծ անպատուութիւն կ'բերէին: Առէն առէն՝ ասպետ մը բակէն կ'անցնէր՝ իր սպիտակ վերարկուովը պլլուած, գլուխը կրծքին վրայ ծռած և թևերը խաչաձև բռնած կ'երևէր: Եթէ դիպուածով իրարու հանդիպէին պատին մէջ՝ իրարու առջև կ'անցնէին, ծանր, հանդիսաւոր և անձայն բարև մը տալով, վասն զի այս էր Ուխտին կանոնը, Սուրբ Գրոց սա տուածին համեմատ. «Ըստ խօսելով մեզքէ չես կրնար ազատիլ» և «կեանքն ու մահը լեզուին իշխանութեան ներքև են:» Մէկ խօսքով տաճարին հոգևորական մարդանաց խստութիւնը՝ որ երկար ժամանակէ վեր յոտիութեան և անառակութեան փոխուեր էր, կ'երևէր թէ յանկարծ Դէնիլստովի մէջ վերածներ էր՝ Լուկաս Գօմինուարի անապատ ակնարկին ներքև:

Խահակ դրան առջև կանգ առաւ, որպէս զի մտածէ թէ ինչ կերպով պիտի յաջողի դէպակը մտնել և կարելի եղածին չափ նպաստաւոր ունկնդրութիւն մը ստանալ, վասն զի քաջ գիտէր որ իր անբաղդ ազգին համար տաճարականաց Ուխտին կրօնամոլութիւնն ընդհատ վտանգաւոր չէր քան իրենց անօրէն պագշտութիւնը, և թէ մէկ կողմէ իր կրօնն ատելութեան և հալածանաց դրդիւ պիտի լինէր՝ միւս կողմէ

իր հարստութիւնն անողորթելի բռնութեան և հարստահարութեան զինքը պիտի ենթարկէր:

Նոյն պահուն՝ Պօմանուար՝ Ցաճարանին արտաքին ամրոցներուն սահմանակից մէկ փոքրիկ պարտիզին մէջ ժուռ կ'գար և տրտում ու մտերմական կերպով կ'խօսակցէր Ուխտին մէկ անդամին հետ որ իրեն ընկերանալով պալէստինէն եկեր էր:

Մեծ վարպետը տարեւոր մարդ մ'էր, ինչպէս որ իր երկար ճերմակ մօրուքն ու ալեբեկ ունքը կ'յայտնէին: Իր յօնքը կ'հովանաւորէին այնպիսի աչեր որոց կրակը չէին կրցած մարել տարիները: Ասհարիս պատերազմական, ներանձն (ascetic) պաշտօնեաէր, իր վախճան գիմաց գծերը զօրականի վայրագութիւնը կ'պահէր, և նշանաւոր էր նաև նիհարութեան կողմէ, որ ճգնութեան արդիւնքն էր, և ինքնահաւան բարեպաշտի կրօնական գուշողութեան կողմէ: Սակայն Պօմանուար այս դժնեայ պիմքն հանդերձ ունէր նաև հմայալի և աղնիւ բան մ'որ անշուշտ պարտաւորէր Թագաւորներու և իշխաններու մէջ իր պաշտօնին բերմամբ վարած բարձր պաշտօնին, և Ուխտին կանոնաց հլու արիական և քաջատոհմիկ ասպետներու մէջ սովորաբար 'ի գործ դրած ծայրագոյն իշխանութեան: Իր հասակն էր բարձր, և իր դնացքը տարիքէն և վաստակէ անկուն՝ կանգուն էր և ւիղպատանի: Իր սպիտակ վերարկուին ձևը Ճշդիլա էր և կանոնաւոր, նոյն իսկ Ս. Պերնարդի կանոնին համեմատ շինուած լինելով այսինքն հաստ ասուէ, և ամրապէս կ'փակէր հաղնողին մարմինն, իսկ ձախ ուսին վրայ կ'կրէր Ուխտին յատուկ ութանկիւն խաչը՝ կարմիր չուխայէ յօրինուած: Ո'չ մաշլիակ և ոչ արիսեոնի զարդարեր էին այս պզեստը. 'ի հնորհս իր տիրոջ՝ Մեծ վարպետին կրնկացը գառնուկի խիստ փափուկ մորթէ պատառ ունէր կանոնին ներածին չափ, շուրջանակի անոր բրդովը զարդարուած, և ըստ օրինի այսչափով միայն կարող էր մուշտակի նման բան մը հագնիլ, քանի որ այն առէն մուշտակը մեծ ճոխութիւն մ'էր: Իր ձեռքն ունէր այն զարմանալի abacus կամ հրամանատարութեան գաւազանն որով ստէպ տաճարականները կ'ներկայէին: Այս գաւազանին վերի ծայրն Ուխտին մէկ խաչը փորագրուած է բոլորակի մը վրայ: Այս բարձրագիր անձին խօսակից ասպետը գրեթէ ըստ ամենայնի նոյն պզեստը հագեր էր, սակայն իր մեծաւորին ցոյց տուած ակնածութենէն կ'երևէր որ ուրիշ կողմէ հաւասարութիւն մը չկար անոնց մէջ: Հրամանատարը՝ վասն զի այս էր իր աստիճանը, Մեծ Վարպետին հետ նոյն գծին վրայ չէր քալեր, այլ այնչափ ետև կ'կենար որչափ որ

պէտք էր՝ որպէս զի Պօնիֆատիոս՝ խօսելու առնէն իր դլուխն անոր կողմը դարձնելու չսիրար։

— Գօնրատ — կ՚ըսէր Մեծ Վարպետը — իմ մարտերուս և վաստահներուս սիրական ընկերը, քու սրտիդ մէջ միայն կրնամ թաղել իմ վիշտերս։ Քեզի միայն կարող եմ ըսել թէ քանի՛ քանի անդամ, այս աէրութեան երկիրը դալչին հետէ, փախաքեցայ մեռնիլ և արդարեցուն մօտ գնալ։ Բոլոր Անկլիոյ մէջ չկայ առարկայ մ՚որուն վրայ իմ աչքս հրճուանօք դադարի, բայց՝ի մեր եղբարց շրխլիններէն որ կը դանուին այն ամբարտաւան մայրաքաղքին Տէմըլ եկեղեցւոյն մեծաշէն կամարներուն ներքև։ «Ո՛ արիասիրտ Ռօպէրտ սը Ռօս, դոչեցի ներքնապէս՝ մինչդեռ կ՚դիտէի խաչին այն ընտիր դինուորները, որ իրենց շիրմին վրայ քանդակեալ կ՚հանդչէին, ո՛ ընտիր Վիլյէմ սը Մարշալ, բայէք ձեր մարմարեայ խղճկներն և Թոյլ տուէք որ վաստակաբեկ եղբայր մը ձեր հանդստեան մտնակցի, քանի որ լաւ և ունի Հարիւր հազար հեթանոսաց դէմ մաքառիլ քան թէ մեր նուիրական Ուխտին անկման ականատես վկայ լինիլ։»

— Շատ իրաւ է պատասխանեց Գօնրատ Մօնտ—Ֆիշէդ — արդարև շատ իրաւ է ըսածդ, և մեր Անկլիոյ եղբարց անկանոն ընթացքն ապագայ ծանր են մեր Ֆրանսայի եղբարց ընթացքէն։

— Ա՛ւաղ դի շատ հարուստ են — պատասխանեց Մեծ Վարպետը։ — Ներէ ինձ, եղբայր, եթէ վիրդ ինչ դովեմ ինքզինքս։ Դու արդէն դիտես թէ ինչ կեանք վարած եմ, իմ Ուխտիս ամէն կանոնները պահելով, տեսանելի և անտեսանելի սաղանները դէմ կռուելով, մինչդեռ տարիքը տապալելով, որ չորս դին կ՚շրջէր որպէս դի մէկը գտնէ պատառելու, և այս պաշտօնս իրրև բարի ստացող և բարեպաշտ քահանայ կատարելի ու որ տարիքդ գայ, ինչպէս որ մեր կանոնադրին Ներ յօդուածին մէջ մեր երջանկայիշատակ Պերնար արամադրած է, ut leo semper feriatur։ Բայց սուրբ Տաճարին վրայ, իմ մարմինս ու կեանքս մաշող և իմ ոսկրներուս չիլչլէ ու ծուծը լափող եռանդիս վրայ կ՚երդնում որ քենդ և մեր Ուխտին հին խստակրօնութիւնը պահող սակաւաթիւ ասպետներէ զատ՝ չեմ տեսներ ուրիշ մ՚որ տաճարականի անուան արժանի լինի։ Ի՞նչ կ՚ըսեն մեր կանոնները, և մեր եղբարք ինչպէս զանոնք կ՚պահեն։ Պէտք չէ որ մեռոտի կամ աշխարհիկ զարդ մը կրեն, ոչ կատար իրենց տաղտարանին վրայ, ոչ ոսկի մորակ, ոչ ոսկեզօծ սանձ, և սակայն այս Տաճարի խեղճ դինուորներէն ասելի շքեղութեամբ և մեծամտութեամբ ոմ կ՚հագուի։

Մեր կանոնները կ՚պատուիրեն որ տաճարականները թուչուն մը չդործածեն ուրիշ թուչուն մ՚որսալու համար, աղեղ կամ նետակալ՚ի ձեռին կենդանիները չորսան, շներ չիչեն կամ երբէք ետևէն ձիարշաւ չվազեն։ Բայց այսօր թէ երէկօրսի, թէ հատօրսի, թէ ձկնորսութեան և ուրիշ այսպիսի մեռոտի խաղերու մէջ մեր ասելի Ճարտար են քան տաճարականները։ Կարդալու հրաման ունին միայն ինչ որ իրենց Գլխաւորը կ՚ցուցընէ, և լսելու՝ միայն ինչ որ Ճաշի ժամանակ բարձրաձայն կ՚ընթեռնուն Սուրբ Գիրքէն, բայց ահա որ իրենց ականջները կ՚բանան ամէն թափառաշրջիկ վիպասաններուն, և իրենց աչերն անոնց ունայն վէպերը կ՚սերտեն։ Պատուէր ունին մոռութիւնն ու հերետութիւնը ջնջել, և ահա կ՚ամբաստանուին անոնք՝ որպէս թէ Հրէից Համայական դաղանիքը կ՚սորվին և կռապաշտ Սարակինոսաց մոռութիւնը։ Կերակուրի ժուժկալութիւն պատուիրեցին իրենց, ինչպէս արմատներ, թան, փոխինդ, և շաբաթն երեք անդամ միայն մսեղէն, վասն դի մսեղէնի սոլորութիւնը սարսռնոյ եպերելի ապականութիւն կ՚պատճառէ, և ահա տես միանդամ որ իրենց սեղաններուն փափկասուն մռնդներու ներքև կ՚Ճնշուին։ Իրենց միակ ըմպելին ջուր պիտի լինէր, և այժմ տաճարականի մը պէս ըմպելն՝ ամէն զուարթասէր մարդու պարծանքն է։ Ա՛յս պարտէզն իսկ՝ որ Արևելեան աշխարհներէ եկած ընտիր բոյսերով և ծառերով լի է, անհատ էմիրի մը կանանոցին աւելի կ՚յարմարի քան թէ արտի զոր Քրիստոնեայ Ճգնաւորներ պարտաւոր էին միայն տնային բանջարներ մշակելու յատկացընել։ Բայց, երանի՛ թէ, սիրելիդ իմ Գօնրատ, կանոնադանդութիւնը միայն այսչափ լինէր։ Քաջ դիտես որ արդիլեալ էր մեզ ընդունիլ այն բարեպաշտ կիներն, որ՚ի սկզբան մեր Ուխտին կապուած էին իրրև քոյրեր, վասն դի Խաչ դլուխը կ՚ըսէ. «Հին Թշնամին, կնոջ ընկերակցութեամբ, շատ մը հոդիներ արքայութեան ուղիղ շաւդէն դարձուց։» Մանաւանդ՝ վերջին դլուխն՝ որ կերպով մը մեր օրհնեալ Հիմնադրին հաստատած մաքուր և անարատ վարդապետութեան կամարակապն է, կ՚արդիլէ մեզ սիրոյ համբոյրն տալ նոյն իսկ մեր քոյրերուն և մայրերուն — ut omnium mulierum fugiantur oscula — կ՚պատկառիմ ըսելու, կ՚պատկառիմ մտածելու որ ապականութիւնն իրրև չըհեղեղ մեզ ողողէց։ Մեր մարքիզօն հիմնադիրներուն հոդիները, Հիւկ սը Բեյէնի և պօաֆրէյ սը Սէնդ Օմերի, նոյնպէս եօթն սուրբերուն ոդիներն, որ ամենէն առաջ իրենց կեանքը տաճարին սպասաւորութեան նուիրեցին, վրդոված են անշուշտ արքայութեան երկնային խնդութեան մէջ անդամ։

զանոնք, Գօնթրան, իմ դիշերային տեսիլներուս մէջ. իրենց նուիրական աչերն արտասուք կ'թափէին իրենց եղբարց մեղայ և յիմարութեանց վրայ, նոյնպէս այն ցնորական և ամբիծալի ցոփութեան վրայ որու մէջ կ'թաւալին:

«— Պօմանուար — ըսին ինձ — դու կ'նկրհես, արքընկիր. տաճարին խորանին մէջ արատ մը կայ, խորունկ և վատթար արատ մը՝ նման անոր զոր բորոտութեան հետքը կ'թողուն Եգիպտոսի որդւոց ժահահոտ տանց պատերուն վրայ:* Խաչին զինուորներն՝ որ պարտաւոր էին ինձի մ'անիսարիէն խորշիլ՝ ինչպէս կ'խորշին բասիլիսկոսի մ'անիսարիէն, բայց՝ ի բաց մեղքի մէջ կ'ապրին, ոչ միայն իրենց յատուկ տհմմանից աղջիկներու հետ, այլ անիծեալ հեթանոսաց աղջիկներու հետ, և աւելի անիծեալ Հրէին հետ: Պօմանուար, դու կ'ննջես, զարթիր, և մեր գաղին վրէժխնդիր եղիր: Սպաննէ մեղաւորները, թէ այր և թէ կին: Փետնէէսի շանթը հետդ առ:» Տեսիլն անհետացաւ եղաւ, Գօնթրան, բայց արթընանալու ատենս՝ կ'լսէի դեռ ևս զրահներու շաչիւնը, և իրենց սպիտակ վերարկուներուն ծփալը: Անշուշտ անոնց հրամանին համեմատ պիտի վարուիմ, պիտի մաքրեմ տաճարին խորանը, և ախտաժէտ աղտեղի քարերը պիտի քակեմ և շինքէն դուրս պիտի նետեմ:

— Սակայն լաւ խորհէ, վերապատուելի հայր — ըսաւ Մօնֆիշէ — ժամանակին և առիթին ուժովն ախտն արմատ բռներ է, և պէտք է որ բարեկարգութիւնդ խոհական լինի, ինչպէս որ արդար և իմաստուն է:

— Ո՛չ, Մօնֆիշէ — պատասխանեց խստակրօն ծերունին — պէտք է որ արագ և արմատական լինի: Մեր ուխտը դժնդակ ձղնաժամի մը կը մօտի: Մեր նախորդներուն ժուժկալութիւնն, անձնուիրութիւնն և բարեպաշտութիւնը մեզ հզօր բարեկամներ շահեցուցին, մեր անձնապատանութիւնը, մեր հարստութիւնը, մեր ճոխութիւնը մեղի դէմ ահագին թշնամիներ դրդռեցին: Պէտք է որ այս հարստութիւններէն մերկանանք, որ իշխաններուն փորձութիւն չ'պատճառեն, պէտք է որ այս գոռոզութիւնը վար գնենք որ անոնց թշնամանք մ'է, պէտք է որ ջնջենք մեր բարուց շռայլութիւնը՝ որ համայն քրիստոնէական աշխարհի գայթակղութիւն մ'է, ասպա թէ ոչ, նշանակէ սա խօսքս, տաճարին Ուխտը հիմնովին պիտի կործանի, և անոր բռնած վայրն իսկ ազգերուն անյայտ պիտի մնայ:

*Տե՛ս Ղեւտականին ԺԳ գլուխ:

— Առաւած այսպիսի մեծ աղէտ մը մեր դլխէն հեռու պահէ — ըսաւ հրամանատարը:

— Ամէն — պատասխանեց Մեծ Վարպետը հանդիսաւոր կերպով մը — բայց պէտք է դուն գործել Անոր օգնութեան արժանի լինելու: Ահա կ'ըսեմ քեզ, Գօնթրան, ոչ երկինքը զօրութիւններն, ոչ երկրի զօրութիւնները չպիտի կարենան հանդուրժել այս սերնդին անօրէնութեանց: Իմ տեղեկութիւններս ստոյգ են, արդէն այն հողն որու վրայ շինուած է մեր շէնքը խախտած է, և մեր մեծութեան յիշակերտին աւելցուցած մեր ամէն մէկ քարն աւելի շուտով անդունդը գահավիժելու պիտի ծառայէ: Պարտ է մեզ մեր նախորդ շաւղին դառնալ, և ինքզինքնիս խաչին հաւատարիմ ախոյեաններըդյուրնել, մեր կոչմանէ զօհելով ոչ միայն մեր արիւնն ու մեր կեանքը, ոչ միայն մեր պազշոտութիւններն ու մոլութիւնները, այլ մեր բարօրութիւնը, մեր հանգիստն և մեր բնական համակրութիւնները. ի վերջի պէտք է վարուիլ իբրև մարդիկ որ համոզուած են թէ շատ բերկրութիւններ, որ այլոց օրինաւոր, տաճարին ուխտակալ զինուորին համար դատապարտելի են:

Նոյն պահուն՝ զինակիր մ'որ սև կիսմաշ վերարկու մը հագեր էր (վասն զի այս սուրբ Ուխտին հետամուտներն իրենց նորընծայութեան ժամանակ ասպետներուն հինուածին հագուստները կ'հագնէին) պարտէզը մտաւ, և՝ Մեծ Վարպետին առջև խոնարհութիւն մ'ընելով լուռ կեցաւ, և սպասեց որ իր պատգամաւորութիւնը յայտնելէն առաջ, հրաման առնու:

— Միթէ աւելի վայելուչ չէ — ըսաւ Մեծ Վարպետը — տեսնել այս Տաճիկը քրիստոնէավայել խոնարհութեան զգեստով հագուած՝ որ այսպէս իր մեծաւորին առջևն ակնածու լռութեամբ երևի, քան թէ տեսնել զանի քանի մ'օր առաջ հագած զգեստովը, երբ մտիտաւոր գունաւոր լաթեր հագեր էր և խմաստակի պէս լրբութեամբ և գոռոզութեամբ կ'շաղակրատէր: Խօսէ, Տաճիկն, հրաման կ'տամ քեզի, ինչ է պատգամաւորութիւնդ:

— Հրէայ մը գտնէն գուրս կ'սպասէ, ազնիւ և վերապատուելի հայր — ըսաւ զինակիրը — և կ'ինդրէ Պրայն-տը-Պուա Կիլբերի եղբօր հետ խօսիլ:

— Լաւ ըրիր այդ բանն ինձ իմացընելով — ըսաւ Մեծ Վարպետը: — Մեր առջև հրամանատար մը մեր ուխտին լուկ մէկ պարզ անդամն է, որ պարտաւոր է դործելու չէ թէ իր այլ իր վարպետին կամաց համեմատ, ինչպէս որ նահոնագիրը կ'պատուիրէ. «Ականջօք լսելոյն

ինձ հնազանդեցաւ։» Մեզ կ՚վերաբերի յատկապէս այս Պուա–Կիլգէրի վարմունքը քննել — ըսաւ նա՝ իր ընկերին կողմը դառնալով։

— Համբաւն իրրև քաջասիրտ և արի կ՚հռչակէ զանի — ըսաւ Գօնբատ։

— Անդարձ համբաւն այս մասին ստոյգ է — ըսաւ Մեծ Վարպետը — արիութեան կողմէ միայն մեր նախորդներէ, Խաչին դիւցազուններէն վար չենք մնար։ Բայց Պրայն եղբայրն իրրև դժգոհ և յուսահատուր մարդ մը մտաւ մեր միաբանութեան մէջ, և տարակոյս չունիմ որ մեր ուխտն ընդունելու և աշխարհէ հրաժեշտ տալու մղումեցաւ՝ չէ թէ անկեղծ կոչումով, այլ իրրև անձ մ՚որ թեթեւ դժգոհութեան մ՚առթիւ ապաշխարելու յորդորուած է։ Ա՛յնուհետեւ գործունեայ և անձնձիր խուովարար, բանսարկու դաւադիր և պարապլուխ դարձաւ այն դասուն որ մեր իշխանութեան դէմ կ՚ոտահակին, մոռնալով որ Մեծ Վարպետին բռնելիք շաւիղը գծուած է դաւազանին և ցուցին նշանակովը. դաւազանը ակարին օգնելու, և ցուցը պարտազանցը պատժելու համար։ Տամիէն — շարունակեց Մեծ Վարպետը — Հրէային մեր առջևը հանէ։

Ձինակիրը դնաց խորին խոնարհութիւն մ՚ընելով, և քանի մը վայրկենէ դարձաւ՝ Եօրքցի Խահակն առաջնորդելով։ Երրէք մերկ դէմքի հզօր իշխանի մ՚առջև ներկայանալուն այնքան խորին պատկառանօք և սարսափահար մօտիկցած չէ անոր աթոռին՝ որչափ որ ահ և երկիւղ ղգաց Հրէային Մեծ Վարպետին առջևն ելնելուն։ Երբ երեք կանգուն հեռաւորութեամբ մօտեցաւ, Պօմանուար իր դաւազանով նշան մ՚ըրաւ որ աւելի մօտ չգայ։ Հրէային ծունր դրաւ դետինը, զոր պագաւ ի նշան ակնածութեան, ապա ոտք ելնելով առաջև կեցաւ, ձեռքը կուրծքին վրայ ծալլած, գլուխը ծռելն վրայ ծռած՝ աչելեան սարուկի մ՚ամէն հլութեամբ։

— Տամիէն — ըսաւ Մեծ Վարպետը — դնա, թող քանի մը պահապանները դուրսը սպասեն որ երբ կոչեմ պատրաստ գտնուին, և թոյլ մի տար որ մէկը պարտէզը մտնէ մեր մենութեան առաջ։ Ձինակիրը ծռեցաւ և ձգեց դնաց։

— Հրէայ — շարունակեց վէս ծերունին — մեր արժանապատուութեան չվայլեր քեզի հետ երկար խօսակցութիւն մ՚ունենալ, և մեր խօսքը կամ ժամանակն ուրիշին չենք վաներ. ուստի իմ ընելիք հարցումներուս հակիրճ պատասխաններ տուր և նայէ որ ճշմարիտը խօսիս, վասն զի թէ որ լեղզդ գիս խաբէ, զայն սիրտ կորզելուտամ այդ ապայօդ ծնօտներէն։

Հրէային պատասխան տալու կ՚պարապատուէր, բայց Մեծ Վարպետը շարունակեց.

— Լռէ, անհատատ, և ոչ բառ մ՚արտասանէ մեր առջև, և միայն հարցուածներուս պատասխանէ։ Ի՞նչ դործ ունիս մեր Պրայն սբ Պուա Կիլգէր եղբօր հետ։

Խահակ հառաչեց սարսափահար և անստուգութեամբ. եթէ իր պատմութիւնը պատմէր միթէ ուխտին գայթակղութեան առիթ մը չըլլիսի լինէր, սակայն եթէ չպատմէր իր դատեր աղատութեան համար ի՞նչ յոյս կրնար ունենալ։ Պօմանուար անոր մահաբեր երկիւղը դիտեց և հաճեցաւ զանի խաղաղել։

— Հրէայ, մի վախնար — ըսաւ անոր — քու ողբմալի անձիդ համար, միայն թէ ուղղութեամբ վարուէ մեզի հետ։ Ուստի վերստին կը հարցնեմ թէ ի՞նչ գործի առթիւ Պրայն սբ Պուա Կիլգէրի հետ յարաբերութիւն ունեցեր ես։

— Գրաքեր մ՚եմ — թոթովեց Հրէային — Ձեր Վերապատուելի արիութեան հրամանաւ, և գիրս ծօրվօլի մենաստանին վանահայր Էյմէրի կողմէ այն բարի ասպետին սիրտ յանձնեմ։

— Քիչ մ՚առաջ չէի՞ ըսեր, Գօնբատ — ըսաւ Վարպետը — որ յոռի ժամանակներս մէջ կ՚ապրինք։ Սիոդերնեան միաբանութեան մէկ վանահայրը տաճարի մէկ զինուորին դիր մը կ՚առաքէ և յարմարապոյն պատգամաւոր մը չկրնար գտնել քան անհատատ Հրէայ մը։ Ցուր լինձ այդ նամակը, Հրէայ։

Խահակ դողահար ձեռօք իր հայական խոյրին ծալքը բացաւ, ուրոյ մէջ մեծագոյն ապահովութեան համար Էյմէրի թուղթը պահեր էր. այն ինչ սիրտ մօտենար, ձեռքը կարկառած և մարմինը ծռած՝ որպէս զի նամակը չարագուշակ հարցանողին հասցընէ, երբ Մեծ Վարպետը դոչեց,

— Հեռու, շուն, միայն սրտիս կ՚դպիմ անհատատներուն։ Գօնբատ, առ սա նամակը Հրէին ձեռքէն և լինձի տուր։

Պօմանուար դիրն առնելով ուշի ուշով արտաքին կողմը քննեց և ապա սկսաւ անոր բոլորտիքը կապուած դերձանը քակել։

— Վերապատուելի Հայր — ըսաւ Գօնբատ՝ զանի կեցընելով, թէև մեծ ակնածութեամբ — միթէ կնիքը սիրտ բանմա՞մ։

— Եւ ինչո՞ւ չէ — ըսաւ Պօմանուար դժգոհելով։ — Միթէ գրուած չէ Խ գլխին մէջ, De lectione literarum, թէ տաճարական մը չպիտի ընդունի նամակ մ՚իր հօրը կողմէն իսկ, մինչև որ զայն Մեծ Վարպետին չհաղորդէ և իր ներկայութեան չկարդայ։

Ա՛յն առեն արտրնօք դիրն աչքէ անցուց՝ զարմանք և սարսափ յայտնելով. յետոյ վերստին կարդաց աւելի ծանր, ապա զայն մէկ ձեռնով Գօնբատին տալով, և թեթև մը միւսովը զարնելով դոչեց.

— Ահա զարմանալի բաներ ըզր քրիստոնեայ մ՚ուրիշ քրիստոնէի մը կ՚գրէ. և երկուքն ալ անգամ են, և նշանաւոր անգամ կրօնական միաբանութեանց. Երբ սիւսի դաս, ւ Քրիստոս — ըսաւ նա հանդիսապէս և իր աչերը դէպ ՚ի երկին ածելով — Երբ սիւսի դաս քու խարբալիչներովդ որպէս դի որոմը չտարուիս զատես:

Գօնբատ Մօնֆիշէ իր մեծաւորին ձեռքէն նամակն առնելով սիւսի կարգար երբ Մեծ վարպետն ըսաւ. — Բարձր ձայնով կարդա, Գօնբատ, և դու, Հրէայ, մտադիր եղիր, վասն դի այս նամակին վրայ քեզի հարցումներ ունիմ ուղղելու:

Գօնբատ նամակը կարդայ, որ սա ոճով գրուած էր.

«Երկնային Հնօրհիւ՝ Էյմէր՝ Ժօրվօի Ս. Կուսի Կիպէրեան միաբանութեան առաջնորդ, առ ամէն Պրայն որ Պուա Կիլլէր, ասպետ Տաճարի սուրբ ուխտին՝ առաջնութիւն և խնդութիւն ի՚մաղթէ, նոյնպէս Պաքոս Թագաւորին և Աստղիկ սիմնոլբոլոր շնորհքն ու պարգևները: Իսկ մեր արդի վիճակին դալով, սիրելի եղբայր, դերի ընկած ենք դաս մ՚անօրէն և ամբարիշտ մարդոց ձեռքը, որ ժպրհեցան մեր անձը ձերբակալել և մեզ փրկանքի դառապարտել. ասոնց միջոցաւ իմացանք նաև Գրօն–սը–Պէօի դժնդակ վախճանը և քու փախուստդ այն գեղանի վհուկ հրէուհիին հետ, որու սև աչերը քեզ թովեցին: Սրտագին ուրախ ենք որ անվտանգ ազատեր ես, սակայն կ՚աղաչենք քեզ զգոյշ մնալ այն Էնդօրի նոր վհուկի մասին. վասն զի մենք դաղտնի լսեցանք որ Մեծ Վարպետը՝ որ ատակ մը չտար աշխարհիս բոլոր վարդապետներուն և սև աչերու համար, Նօրմանտիայէն կ՚դառնայ ձեր խնդալին կենակցութեան սահման դնելու և ձեր պարտաղանցութիւնը պատժելու: Ուստի կ՚աղաչենք քեզ մտերմօրէն զգուշանալ և հսկել, ինչպէս որ կ՚ըսէ Սուրբ Գիրքը. Invenientur vigilantes: Եւ Ռեբեկայի Ճոխ Հայրը՝ Եօրքցի Իսահակ՝ իզնէ յանձնարարական գիր մը խնդրելուն սոյն նամակս տուի անոր, ուժգին յորդորելով և պատուիրելով քեզը իր աղջկան համար քեզ առաջարկելիք փրկանքն ընդունելս, վասն զի իր քսակէն պիտի գիշանի վճարել քեզ անշուշտ դումար մ՚որով պիտի կարենաս աւելի նպաստաւոր պայմաններով յիշուն հատ օրիորդ դանել. և ես ալ անկից իմ բաժինս առանալ կ՚ուսամ երբ միացին ոճնախմբենք, իբրև Ճշմարիտ եղբայրներ, առանց բաժակը մուռ

նալու. վասն զի միթէ գիրքը չըսեր. vinum lætificat cor hominis, (գինի կազդուրէ մարդու մարմինը) և դարձեալ Rex delectabitur pulchritutine tua.

Մինչև այս խնդագին միտքեան, քեզի շատ ողջոյններ: Տուեալ աւազակներու այս քարայրէն, առաւօտեան ժամը ըզ ութեան միջոցները:

«ԷՅՄԷՐ, ԱՌԱՋ. Ս. Կ. ԺՕՐՎՕՒ

«Յ. Գ. Իրաւի, քու ոսկի շղթայդ երկար ատեն չմնաց իմ քովս, այժմ եղջերուի դող վստակի մը վզէն սուլիչը կապելու պիտի ծառայէ, որով իր շուները կ՚կոչէ:»

— Ի՞նչ կ՚ըսես ասոր, Գօնբատ — հարցուց Մեծ Վարպետը: — Գողերու քարայր մը շատ յարմար բնակարան մ՚է այսպիսի քահանայի մը համար: Զարմանք չեն ուրեմն եթէ Աստուծոյ ձեռքը մեր վրայ կը ծանրանայ, և եթէ Սուրբ Տեղիայ մէջ քաղաք քաղքի վրայ, քայլ առ քայլ կ՚կորսընցընենք անհաւատներուն առջև, երբ Էյմէր առաջնորդին պէս եկեղեցականներ ունինք: Բայց ի՞նչ ըսել կ՚ուզէ այն Էնդօրի նոր վհուկը — հարցուց նա իր խորհրդակցին՝ փոքր ինչ ձայնը մեղմելով:

Գօնբատ (Թերևս ՚ի փոքճ) լաւ ևս հմուտ էր կնասիրական դաւերիկ լեզուին քան թէ իր մեծաւորը, ուստի բացատրեց այն առումն որ Մեծ Վարպետին միտքը կ՚շփոթէր, ըսաւ անոր որ աշխարհային մարդոց դործածած մէկ ոճն էր այն որով իրենց սիրած կնոջ կ՚ակնարկէին, բայց այս մեկնութիւնը դոհ չըրաւ խստակրօն Պօմանուարը:

— Այն բառը քու կարծածէդ աւելի խնամոտ կ՚պարունակէ, Գօնբատ — վրայ բերաւ Մեծ Վարպետը — պարզմտութիւնդ չէ կարող թափանցել այս անղթամտութեանց վիհը: Այս Եօրքցի Ռեբեկան Միրիամի սանուհին է որուն անունն արդէն լսած ես: Հիմակ պիտի ըսես որ հրէայն իսկ պիտի խոստովանի այս բանս: — Ցետոյ Իսահակին կողմը դառնալով՝ բարձրաձայն ըսաւ անոր.

— Ուրեմն քու աղջիկդ Պրայն որ Պուա Կիլլէրի կալանուհին է:

— Այո, վերապատուելի հայր — Թովմովեց անբաղդ Իսահակ — և աղքատ մարդ մ՚ինչ փրկանք որ կարենայ տալ . . . :

— Լուէ — ընդմիջեց Մեծ Վարպետը: — Միթէ դատարդ բժշկութիւն ըրած չէ:

— Այո, հնօրհաշարդ տէր — պատասխանեց հրէայն աւելի վստահութեամբ, և ասպետ ու դեղացի, աղնուական աւատատէր ան-

շուշա կ'օրհնեն այն ընակիր ձիրքն զոր Երկին իրեն շնորհած է։ Շատ մարդիկ կրնան վկայել որ գիրենք իր արհեստին շնորհիւ բուժեց, երբ ուրիշ որ և է մարդկային դարման անարդիւն մնացեր էր, բայց Յակոբայ Աստուծոյ օրհնութիւն անոր վրայ էր։

Պօմանուար Մօնֆիշէի կողմը դարձաւ դառն ժպիտով մը։ — Նայէ՛, եղբայր — ըսաւ նա — մեզ լափող Թշնամւոյն նենգը. տես միանգամայն խայծերն որով հոգիները կ'որսայ, յաւիտենական երանութեան փոխարէն՝ երկրիս վրայ քանի մը թշուառ օրեր տալով։ Մեր սուրբ կանոնը քաջ կ'ըսէ. Semper perculiatur leo vorans. զարնենք առիւծը, խորտակենք կործանիչը — դոչեց նա իր խորհրդաւոր աբեկոծը տատանելով, որպէս թէ խաւարի զօրութեանց դիմադրաւ կենալ կ'ուզէր։ Տարակոյս չունիմ որ աղջիկը շատեր կ'բժշկէ — յարեց նա խօսքը հրէին ուղղելով, մտազան խօսքով, համակիներով և ուրիշ կախարդական հնարքով։

— Ո՛չ, վերապատուելի և արի ասպետ — պատասխանեց Իսահակ — կ'բուժէ նա յատկապէս սպեղանիի մը հրաշալի ներգործութեամբը։

— Այս գաղանիքն ինծի տրված է — հարցուց Պօմանուար։

— Միրիամ, մեր ցեղին մէկ յարգելի տիկինն աւանդեց զայն անոր — պատասխան տուաւ հրէայն դժկամակութեամբ։

— Ա՛հ, խաբեբայ հրէայ — դոչեց Մեծ Վարպետը խաչ հանելով — միթէ Միրիամ վհուկը չէ այն որուն դարձելի հմայքը բոլոր քրիստոնէից ծանօթ են։ Իր մարմինը փայտակուտին վրայ այրեցին և իր մոխիրն հովին տուին։ Նոյն կրակը թափի իմ և միաբանութեանս գլխուն եթէ նոյն և աւելի խստութեամբ չպատժեմ անոր աշակերտուհին։ Պիտի տեսնեմ անոր թէ ինչպէս կ'հմայեն Տաճարին վհուրները։ Քեզի կ'ըսեմ, Տամիէն, այս հրէայ տունէն դուրս նետէ, սպանանէ զանի եթէ դիմադրէ կամ վերստին դառնայ։ Իսկ իր դստեր նկատմամբ պիտի վարուինք ինչպէս որ քրիստոնէական օրէնքն ու մեր յատուկ պաշտօնը կ'պահանջեն։

Ուստի հէք Իսահակը տաճարատունէն դուրս վանեցին, իր բոլոր պաղատանքը, նոյն իսկ դրամական առաջարկութիւնները մնիկ ընդունելու։ Տեսաւ որ ուրիշ ճար չկար բայց եթէ ոսքերին տունը դառնալ, և անոր խորհրդով աղջիկն ազատելու հնար մը գտնելու ջանալ։ Մինչև յարդ անոր պատուոյն համար հոգի մէջ էր, այժմ անոր կենաց վտանգը տեսնելով կ'դողար։ Նոյն պահուն Մեծ Վարպետը հրամայեց որ Դէնբլդովի Հրամանատարն իր առջև կոչեն։

ԳԼՈՒԽ ԼԶ

Աբուհասան նենգ է մի ըսեր — ամէնք կ'ապրին երևոյթով։
Տնանկն անով կ'մուրայ, և զուարթերես միջնորդն
Կ'շահի հող, տիտղոս, կարգ և իշխանութիւն երևոյթով.
Կղերը չանգոններ զոյն, և արխասիրտ զինուորն
Պաշտօնն անով կ'մեծցնէ։ Ամէնքը զոյն կ'ընդունին,
Ամէնքը կ'գործադրեն զոյն. և այն որ կ'շատանայ
Ցոյց տալով ինչ որ է, վարկ քիչ պիտի ստանայ
Եկեղեցին կամ բանակը կամ յարքունիս։ — Այսպէս կ'շարժի աշխարհ։

ՀԷՆ ԽՕՍ

Ալպէր Մալվուազէն, Նախագահ, կամ միաբանութեան գործածած ճամով, Դէնբլդովի հիմնարկութեան Հրամանատար, մեր պատմութեան մէջ երբեմնակի յիշատակած Ֆիլիպ Մալվուազէնի եղբայրն էր, և՝ այս սեպուհին պէս՝ սերտ յարաբերութիւն ունէր Պրայն տը Պուա Կիլպէրի հետ։

Առանց սկզբունքի և վաւաշոտ մարդոց մէջ, որոց տեսակէն Տաճարի միաբանութիւնն շատեր ունէր, Դէնբլդովի Ալպէրն ամենէն նշանաւորն էր. բայց յանդուգն Պուա—Կիլպէրէն կ'տարբերէր այնպէս որ նա իր փառասիրութիւնն ու մոլութիւնները կեղծաւորութեամբ կ'վարագուրէր, և մոլեռանդութիւն մը կ'կեղծէր զոր չ'ներքուստ կ'աաէր։ Եթէ Մեծ Վարպետն այնպէս յանկարծակի Դէնբլդովի չհանէր, անշուշտ անոր մէջ չպիտի տեսնէր բան մ'որ կրօնական խստամբերութեան թոյլութիւն մը ցուցընէր։ Եւ թէպետև Ալպէր Մալվուազէն յանկարծ բռնութեր և կերպով մ'իր խաբէութիւնն երևան ելեր էր, սակայն իր մեծասրտին յանդիմանութիւններն այնքան ակնածութեամբ և երևութական հլութեամբ մնիկ կ'ընդունէր, և այնքան կ'արտօրար անոր դատապարտած բաներն ուղղել, որ չ'ի վերջէ յաջողեցաւ այնպիսի անձնուէր բարեպաշտութեան կերպարան մը տալ միաբանութեան մ'որ ինքզինքը վերջին աստիճանները զեղխութեան և ապերասանութեան տուեր էր, որ Ղուկաս Պօմանուար սկսաւ աւելի մեծ զգալիար մը տածել Հրամանատարին բարոյականին վրայ, քան ինչ որ միաբանութեան առաջին տեսքէն յորդորուեր էր ունենալու։

Բայց Մեծ Վարպետին նպաստաւոր կարծիքը սաստիկ տկարացաւ երբ լսեց թէ Ալպէր կրօնատան մէջ ընդուներ էր Հրէայ դերի աղջիկը, և որ աւելի երկնչելի էր, ուխտին մէկ ասպետին սիրուհին էր. երբ Ալպէր ներկայացաւ, Պօմանուար դաժան խստութեամբ անոր երեսը նայեցաւ։

— Այս ապարանքը՝ որ Տաճարի սուրբ ուխտին նուիրուած է — ըսաւ Մեծ Վարպետը խիստ ձայնով մը — հրէայ կին մը կայ զոր կրօնակից եղբայր մը բերեր է աստանօր, և դուն, պարոն Հրամանատար, ակնառութեամբ զանի ներս ընդուներ ես։

Ալպէր Մալվուազէն յայլայլմէ եղաւ, վասն զի տարաբաղդ Ռեբեկան բնակարանին մէկ թագուն և հեռաւոր կողմը փակուած էր և ամէն տեսակ զգուշութիւն ըրեր էին որ անոր ներկայութիւնը ծածուկ պահեն։ Պօմանուարի աչքը մէջ կարդաց իր և եղբօրը Պուա–Կիլպէրի կորստեան վճիռը, եթէ հնար մը չգտնէր սպառնալից փոթորկին դէմ առնելու։

— Ինչո՞ւ համար լուռ ու մունչ կ'մնաս — շարունակեց Մեծ Վարպետը։

— Միթէ ներելի է ինձ պատասխանել — հարցուց Խնամատարն ամենախորին հեզութեան ձայնով մը, թէև այս հարցումով կ'փափաքէր միայն պահ մը շահիլ որ իր դաղափարները կարգի դնէ։

— Խօսէ, հրաման ունիմ — ըսաւ Մեծ Վարպետը։ — Խօսէ, և ըսէ թէ արդեօք դիտե՞ս մեր կանոնագրին սա յօդուածը. De commilitonibus Templi in sancta civitate, qui cum miserrimis mulieribus versantur, propter oblectationem carnis.*

Արդարև, դերապատուելի հայր — պատասխանեց Խնամատարը — մեր միաբանութեան այս բարձր պաշտօնին չհասայ առանց դիտնալու իր ամենէն կարևոր մէկ պատուէրը։

— Ուրեմն ի՞նչէ պատճառը, վերստին կ'հարցնեմ քեզի, որ դուն յանձն առիր որ եղբայր մ'իր սիրուհին, և այս սիրուհին ևս հրէայ վհուկ մը լինելով, այս նուիրական վայրս բերէ, որպէս զի զայն արատէ։

— Հրէայ վհուկ մը — պոչեց Ալպէր Մալվուազէն — բարի հրեշտակները մեզ պահպանեն։

— Այո՛, եղբայր, հրէայ վհուկ մը — ըսաւ Մեծ Վարպետը

*Այս յիշած վճիռը թեթևաբարոյ կանանց հետ հաղորդակցութիւն ունենալ կ'արդիլէ։

խստութեամբ — արդէն ըսի քեզ, միթէ կ'ժպրհի՞ս ուրանալու թէ այն Ռեբեկան, Եօրքցի Թշուառ վաշխառու Իսահակին դուստրը, և Միրիամ աղտեղի կախարդին սանուհին, այժմ աստ . . . ինչ ամօթ է խորհիլ և ըսելն իսկ . . . աստ, այս ապարանիս մէջ չբնակիր։

— Ձեր խմաստութիւնը, վերապատուելի հայր — պատասխանեց Հրամանատարը — իմ մտացս խաւարը փարատեց։ Ես ևս շատ կ'զարմանայի որ Պուա–Կիլպէրի պէս բարեսիրտ ասպետ մը նոյն կնկան հրապոյրներէն այնպէս յիմարաբար նուաճած երևի, կին մը զոր այս տանս մէջ ընդունեցայ որպէս զի անոնց սրտակցութեան արգելք մը դնեմ, թէ ոչ՝ օր ըստ օրէ պիտի բորբոքէր և մեր կրօնակից արիասիրտ եղբօր հոգին՝ի կորուստ պիտի մատնէր։

— Ուրեմն մինչև ցարդ չգտա՞ր բան մ'անոնց մէջ իր ուխտին հետհակ — հարցուց Մեծ Վարպետը։

— Ի՞նչպէս, միթէ այս ապարանքի՞ս մէջ — ըսաւ Հրամանատարը խոչ հանելով։ — Սուրբ Մակդալինէ և տասն մէկ հազար կոյսերն մեզ պահպանեն։ Ո՛չ, եթէ մեղք գործեցի հրէայ աղջկան այս տեղ մնալ տալով, սա մոլար խորհրդովէր որ պիտի կարենամ եղբօրս աղէտաբեր եռանդն դադարել՝ որ ինձի այնքան վայրագ և անբնական կ'երեւէր, որ ուրիշ բանի չէի կարող վերագրել բայց միայն կերպ մը խելագարութեան, որ աւելի կարեկցութեան արժանի էր քան թէ յանդիմանութեան։ Սակայն քանի որ ձեր վերապատուելի խմաստութիւնն եւ ըսաւ հանեց թէ այս հրէայ օրիորդը վհուկ մ'է, այժմ բոլորովին կը մեկնուի իր սիրային յիմարութիւնը։

— Այո՛, այո՛ — ըսաւ Պօմանուար։ — Նայէ միանգամ, Գօնթատ, ինչ վտանգի կ'հանսի մարդ երբ սադանի առաջին հմայից հեռանալու միտ կ'դնէ։ Անկան կ'նայինք միայն մեր աչքը պարարելու և նկատելու ինչ որ մարդիկ դեղեցկութիւն կ'անուանեն, և հին թշնամին, պիշակեր առիւծն ասոլ իշխանութիւն մը կ'ստանայ մեր վրայ, որպէս զի բժժանօք և հմայութեամբ աւարտէ գործ մ'որ գանդաղութենէ և յիմարութենէ ծնունդ առաւ։ Կարելի է որ մեր Պուա–Կիլպէր եղբայրը դթութեան արժանի է քան ծանր պատուհասի, դաւաճանի օգնութեան կ'կարօտի քան փայտի հարուածներուն, և թէ մեր խրատներն ու աղօթքը թերևս իր յիմարութիւնը փարատեն և դինքն իր եղբարցը ծոցը վերադարձնեն։

— Արդարև՝ մեղք պիտի լինէր — ըսաւ Գօնթատ — եթէ Տաճարի Ուխտը իր լաւագոյն նիզակներէն մին կորուսէր, մինչդեռ սուրբ Միա-

բանուելիւնս իր որդւոյ օգնութենէն սաստիկ պէտք ունի։ Այս Պուա–Կիլպէրն է որ իր ձեռօք երեք հարիւր սարակինոսի սպանեց։

— Այս անիծեալ շուներուն արիւնն — ըսաւ Մեծ Վարպետը — հաճելի պարգեւ մը պիտի լինի սրբոյ և հրեշտակաց զոր կ'անգոսնեն հայհոյելով, և որոց աջակցութեամբը պիտի կարողանանք ցրուել այն հնայքն ու յանդուգնքն որով մեր եղբայրը՝ իբրև ուխտած, շրջապատուած է։ Այս՝ Դալիլայի կապերը պիտի խորտակէ, ինչպէս որ Սամսոն խորտակեց այն երկու նոր լարերն որով Փղշտացիք զինքը կաշկանդեր էին, և պիտի ջարդէ, դէզ ու դէզ կուտակէ անհաւատները։ Իսկ այն վատթար վհուկին գալով որ Տաճարական եղբօր մը վրայ իր բժժանքը նետեց, անշուշտ՝ ի մահ պիտի դատապարտուի։

— Բայց Անկլիոյ օրէնքն — ըսաւ հրամանատարն՝ որ թէև շատ ուրախ էր որ Մեծ Վարպետին ինքն՝ այսպէս բարեբաղդօրէն իրմէ և Պուա–Կիլպէրէն հեռանալով ուրիշ ուղղութիւն մ'առեր էր, այժմ սկսաւ երկնչիլ որ չափը կ'անցնի։

— Անկլիոյ օրէնքն — ընդհատեց Պօամանուար — կ'ներէն և կ'պատուիրեն որ ամէն դատաւոր իր իրաւասութեան սահմանին մէջ գտնուած մարդիկը դատէ։ Ամենէն աննշան սեպուհը կարող է ձերբակալ ընել, դատել և դատապարտել իր հողերուն մէջ գտնուած վհուկ մը։ Եւ միթէ այս իշխանութիւնը պիտի ղանձն Տաճարի Մեծ Վարպետին իր Միաբանութեան սպարանի սահմանին մէջ. ոչ, մենք պիտի դատենք և դատապարտենք։ Վհուկն երկրիս վրայէ պիտի ջնջուի, և իր կախարդանաց զօրութիւնն իրեն հետ պիտի անհետի։ Հրամանատար, դղեկիս մեծ սրահն վհուկին դատաստանին համար պատրաստել տուր։

Ալպէրը Մալվուազէն խոնարհելով քաշուեցաւ դնաց, չէ թէ սրահին պատրաստութեան համար հրամանները տալու, այլ Պուա–Կիլպէրը փնտռելու և գործին հետևանաց վրայ անոր հետ խորհրդակցելու համար։ Շատ չանցաւ զանի պատն՝ բարկութեամբ բորբոքած՝ դեղանի հրէայ օրիորդին կողմէն նորէն դիմադրութիւն տեսնելուն առթիւ, — Անմիա — կ'ըսէր նա — ապաշնորհ աղջիկ, ինչպէս կ'անդոսնէ այն մարդն որ արեան և բոցերու մէջէն՝ իր կեանքը վտանգի մէջ դնելով, իրենն ազատեց։ Երկին վկայ, Մալվուազէն, անդ մնայի մինչև որ տախտակներն ու դերանները իմ բոլորտիքս ընկան։ Հարիւրաւոր նետերու նշաւակն էի, որոնք իմ զէն ու զարդիս վրայ կ'թնդէին ինչպէս որ ապակեայ պատուհանի մը վրայ կարկուտը կ'թնդայ, և ես իմ վա-

հանս զինքը պահպանելու համար միայն կ'գործածէի։ Ահա այս նեղութիւնները կրելչի անոր համար և այժմ կամասէր օրիորդը կ'սպառնէ որ զինքը չթողուցի որ մեռնի, և կ'զլանայ ինձ ոչ միայն երախտապիտութեան թեթևապոյն մէկ նշանն, այլև նոյն իսկ չյուսադրէր ինձ որ ապագային մէջ պիտի հաւանի իմ սիրոյս։ Սատանան որ իր ցեղին յամառութիւն տուած է, իր բոլոր այծն անոր անձին մէջ կեդրոնացուցեր է։

— Կարծեմ թէ — ըսաւ հրամանատարը — սատանան ձեր երկուքին փորը մտեր է, քանի՛ քանի անգամ, եթէ ոչ ժուժկալութիւն, դէթ զգուշութիւն քարոզելչի քեզ։ Միթէ չըսի՛ քեզի որ կրնաս բաւական դթասէր քրիստոնեայ օրիորդներ գտնել որ մեզ կ'համարին քեզի նման արիասիրտ ասպետի մը «էքսէլ» պրէօ»ը մերժել, և դու դարձեալ կ'երևնես քու սիրտդ կամասէր և յամառ հրէայ օրիորդի մը վրայ կ'դնես։ Սուրբ պատարագ վկայ, կարծեմ թէ ծերունի Ղուկաս Պօամանուարի դուշակութիւնը ճիշտ է, երբ կ'պնդէ թէ հրէուհին քեզ համայեր է։

— Ղուկաս Պօամանուար — դոչեց Պուա–Կիլպէր յանդիմանական ձայնով մը — միթէ ասոնք են քու զգուշութիւններդ, Մալվուազէն։ Ինչպէս թողուցիր որ խելայեղ ծերունին խաղայ թէ Ռեպեկա այս ապարանիս մէջն է։

— Ինչպէս պահէի — ըսաւ հրամանատարը — ամէն հնար՝ի գործ դրի որ այս դաղտնիքը թաղուն պահեմ, բայց երեսան ելաւ, ուրիշ միջոցաւ, սատանայի՛ն թէ ուրիշի ձեռօք, սատանան միայն կարող է ըսել։ Բայց կարելի եղածին չափ գործը կարգի դրի, կ'աղատիս, ես թէ Ռեպեկային հրաժեշտ տաս. կ'պճան վրադ, իբրև հմայութեան զոհ մը. իսկ հրէայ օրիորդը վհուկ մ'է, և իբրև այն պիտի պատժուի։

— Ո՛չ, երկին վկայ, չպիտի մեռնի — ըսաւ Պուա–Կիլպէրը։

— Երկին վկայ, պիտի մեռնի, և պէտք է որ մեռնի — ըսաւ Մալվուազէն։ Ոչդու, և ոչ որ և է մեկը կարող է զանի աղաւնելու։ Ղուկաս Պօամանուար որոշեց որ հրէայ աղջիկան մը մահը բոլոր տաճարականաց ասպետներուն սիրային սխալանաց համար բաւական պարգև մ'է քաւութեան, և արդէն գիտես թէ իշխանութիւն և միաբռնային կարողութիւն ունի այսպիսի օրինաւոր և բարեպաշտական խորհուրդ մը գործադրելու։

— Միթէ ապագայ դարերը պիտի հաւտան երբէք որ այսպիսի ա-

պուշ մոլեռանդութիւն մը դտնուած է — ըսաւ Պուա–Կիլպէր՝ սեղանին մէջ վեր վար քալելով մեծաքայլ։

— Ձղիտեմ թէ ինչ պիտի հատուտն — ըսաւ Մալվուազէն համառօտութեամբ, բայց սա քաջ գիտեմ որ մեր այս ժամանակները, կղերական և աշխարհական՝ հարիւրին հինսուն հինն՝ ոչ պիտի դոչեն Մեծ Վարպետին վճռոյն։

— Գիտեմ և ես ընելիքս — ըսաւ Պուա–Կիլպէր։ — Ալպէր, դու իմ բարեկամս ես. դու անոր փախուստին աչք պիտի դոցես, և զանի առնելի ապահով և դաղանի վայր մը պիտի փոխադրեմ։

— Եթէ կամիմ իսկ, չպիտի կարենամ խնդիրդ կատարել — պատասխանեց հրամանատարը — ապարանս Մեծ Վարպետին սպասաւորներով և իրեն անձնուէր մարդերով լեցուն է։ Եւ բայց՝ ի բաց ըսեմ, եղբայր, այս մասին քեզի գործակից չպիտի դտնուիմ, եթէ ապահով իսկ լինիմ որ անոր նահանգիստը պիտի հատնինք։ Արդէն բաւական նեղութեան քու սիրոյդ համար, միտք չունիմ պատուոյ աստիճանէս ընկնելու, կամ մինչև հրամանատարութենս կորսնցնելու դատապարտիլ հրէի կտորի մը համար։ Իսկ դու, եթէ խրատիս անսալ կ'ուզես, թողայս վայրի սպղ որսորդութենն և բաղէդ ուրիշ որսի մը վրայ ասձակէ։ Մտածէ միանգամ, Պուա–Կիլպէր, որ քու արդի աստիճանդ, ապագայ պատիւդ, ամէն ինչ մեր ուխտին մէջ բռնելիք դիրքէդ կախում ունի։ Եթէ առ Ռեպեկա տուփանդդ կամակորութեամբ շարունակես, Պօմանուարին իշխանութիւն պիտի տաս քեզ արտաքսելու, և այս իշխանութիւնը պիտի գործածէ անշուշտ։ Իր դողհար ձեռքը բռնած հրամանատարութեան դատաղանին նախանձախնդիր է և քաջ գիտէ որ կորովի բաղուդ կ'կարկառես արդէն զայն բռնելու։ Աներկիւղ եղիր որ քեզ պիտի կործանէ եթէ հրէայ վհուկ մը պաշտպանելու չափ պատեհ առիթ մ'ընծայես անոր։ Այս պարագային մէջ արձակ ձգէ աստղարէզն անոր առջև, վասն զի չես կարող անոր դիմադրել։ Երբ անդամ մը դատաղանը քու հաստատակամ ձեռքդ անցնի, այն ատեն կարող ես, ըստ հաճոյս՝ դդուել կամ այրել Յուդայի աղջկունքը։

— Մալվուազէն — ըսաւ Պուա–Կիլպէր — դու ես մեկ պաղարիւն . . . ։

— Բարեկամ մը — ըսաւ հրամանատարը՝ խօսքն առարտելու շտապելով, որուն տեղ Թերևս Պուա–Կիլպէր առելի վատ բառ մը պիտի գործածէր — պաղարիւն բարեկամ մ'ես արդարև, և հետևապէս քեզ խրատ տալու առելի յարմար։ Ահա վերստին կ'յայտնեմ քեզ, Ռեբեկան չես կարող ազատել, վերստին կ'ըսեմ քեզ, անոր հետ ինքզինքդ կորուստ պիտի մատնես միայն։ Դնա Մեծ Վարպետը գտիր, անոր ոտքն ընկիր և ըսէ . . . ։

— Երկին վկայ, չէ թէ անոր ոտքն ընկնելով այլ խելայեղոր ծերուկին երեսին պիտի ըսեմ . . . ։

— Լաւ, անոր երեսին ըսէ — շարունակեց պաղարիւնաբար Մալվուազէն, թէ խենդի պէս կ'սիրես այն հրէայ աղջիկը, և որչափ տուփանդդ մեծցընես այնչափ պիտի արտորայ նա զայն մարելու գեղանի վհուկին մահուամբը. մինչդեռ դու, երդմանդ հակառակ յանցանացդ իրական խոստովանութեամբ՝ չես կարող եղբարդդ կողմէ օգնութեան յուսալ, և քու փառասիրութեան և իշխանասիրութեան բոլոր փայլուն տեսիլներդ Թերևս պիտի՝ ի բաց Թողուս և երթաս պիտի վարձկան նիզակ մը շարժել Գլանտրայի և Պուրկօնյի մէջ եղած անլսան կռիւներու մէջ։

— Դու ձշմարիտը կ'խօսիս, Մալվուազէն — ըսաւ Պրայն տը Պուա–Կիլպէր՝ պահ մը խորհելէն ետև — այն ալևոր մոլեռանդին իմ վրայ տիրանալու առիթ մը չպիտի տամ. իսկ Ռեբեկա, այնքան անարժան դտնուեցաւ իմ մտքիս որ իր սիրոյն համար չպիտի զոհեմ ոչ սպասիս։ Զայն՝ ի բաց պիտի մերժեմ . . . այո, իր բաղդին պիտի Թողում, միայն Թէ . . . ։

— Մի՛ փոխեր այդ խոհական և անհրաժեշտ դիտաւորութիւնդ — ըսաւ Մալվուազէն — կանայք խաղալիկներ են միայն որ մեր խնդութեան ժամերը կ'սփոփեն։ Փառասիրութիւնը կենդանի ծանր զրաղմունքն է։ Այն հրէայ օրիորդին պէս հազար դիւրաբեկ հոսպիտներ կրողին Թող երթան, քան Թէ քու արիական քայդդ կանգ առնու առջևդ բազմած փայլուն ասպարէզին մէջ։ Ան այժմ իրարմէ բաժնուինք, վասն զի պէտք է որ մեր խորհրդակցիլը չտեսնեն։ Երթամ պիտի սրահը դատաստանին համար պատրաստել տալ։

— Ո՞նչ, այսչափ շուտով — դոչեց Պուա–Կիլպէր։

— Այո՛ — պատասխանեց հրամանատարը — դատաստան մ'երկար չտևեր երբ դատաւորը կանխաւ վճիռն արձակեց։

— Ռեբեկա — ըսաւ իւրովի Պուա–Կիլպէր՝ երբ առանձին մնաց — անշուշտ դու լինձ սուղի պիտի նստիս. ինչու՞ չկարողանամ քեզ քու բաղդիդ Թողուլ, ինչպէս որ այս հանդարտ կեղծաւորն կ'յորդորէ։ Ճիգ մը պիտի Թափեմ քեզ ազատելու համար, բայց վա՛յ քեզ Թէ որ վերստին ապաշնորհ գտնուիս. վասն զի Թէ որ նորէն մերժուիմ, վրէժխնդրութենս սիրոյս պիտի հաւասարի։ Պէտք չէ որ Պուա–Կիլ-

սէր իր կեանքն ու պատիւը դիպուածին յանձնէ, եթէ իր միակ վարձքն արհամարհանք և յանդիմանութիւններ պիտի լինին։

Հաղիւ թէ հրամանատարը կարեւոր պատուէրները տուեր էր՝ երբ Գօնրատ Մօնֆիշէ եկաւ զինքը գտաւ, և Մեծ Վարպետին՝ կախարդութեան ամբաստանութեամբ հրէայ օրիորդին անմիջապէս դատաստանի հանելու դիտաւորութիւնն իմացուց։

— Ա՛յս ամէնն ինձ երազ կ՚երեւի — ըսաւ հրամանատարը — արդէն շատ մը հրէայ բժիշկներ ու՛նինք որ զարմանալի բոյժեր կ՚ընեն, թէեւ իրրեւ վհուկ չեն նկատուիր։

— Մեծ Վարպետին այս մասին տարբեր կերպով կ՚խորհի — ըսաւ Մօնֆիշէ — և Ալպէր, քեզի արձակ հանարձակ պիտի խօսիմ, այն հրէայ աղջիկը, վհուկ լինի թէ ոչ, լաւագոյն է որ մեռնի քան թէ Պրայն տը Պուա–Կիլպէր Ուխտէն արտաքսի, կամ Ուխտին ներքին երկպառակութեամբ բաժնուի։ Դու դիտես անոր բարձր աստիճանը, պատերազմի մէջ՝ հանճարը, դու դիտես թէ մեր միաբանութիւնէն շատերն ինչ եռանդով անոր յարած են, բայց այս նկատումներն մեր Մեծ Վարպետին վրայ չպիտի ներգործեն, եթէ Պրայն իրրեւ դաւակից քան զհ նկատուի հրէայ աղջկան։ Եթէ տանտերկու ցեղերուն հոգին իսկ իր միակ մարմնոյն մէջ պարունակէ, լաւ կը է որ նա կորնչի, քան թէ Պրայն տը Պուա–Կիլպէր անոր կորստեան վճռակից։

— Քիչ մ՚առաջ կ՚յորդորէի զինքն որ այն օրիորդէն հրաժարի — ըսաւ Մալվօազէն, բայց չդիտեմ թէ Ռեբեկան իրրեւ վհուկ դատապարտելու համար զօրաւոր փաստեր կան։ Մինչ Մեծ Վարպետն իր միտքը չպիտի փոխէ երբ տեսնէ որ ակար են փաստերը։

— Պէտք է զօրացընել զանոնք, Ալպէր — պատասխանեց Մօնֆիշէ — պէտք է զօրացընել, մինչ կ՚իմանամ — ըսաւ հրամանատարը — և խիղճ չեմ ըներ մեր միաբանական ուխտին՝ ի նպաստ պէտք եղածն՝ ի գործ դնել, բայց յարմար գործիներ գտնելու համար ժամանակ չունինք։

— Մալվօազէն, պէտք է գտնել զանոնք — ըսաւ Գօնրատ — և այս բանս մեծ առաւելութիւն մը պիտի տայ թէ Ուխտին և թէ քեզ։ Այս Գինքըլտովը անշուք ազարան մ՚է, Մէզօն Տիէօիէն կրկնապատիկ արժէք ունի, դու դիտես թէ մեր ծեր գլխաւորին վրայ ինչ ազդեցութիւն ունիմ. եթէ այս գործին յաջող եկք մը տալու մարդիկ գտնես Մէզօն Տիէօի հրամանատար պիտի լինիս։ Ինչ կ՚ըսես ասոր։

— Գուա–Կիլպէրին հետ աստ եկող սպասաւորներու մէջ երկու հոգի կան զոր քաջ կ՚ճանչեմ. իմ Փիլիպ Մալվօազէն եղբօր ծառաներն էին, և անոր ծառայութենէ Փրօն–տը–Պէօյի անցան։ Կարելի է որ այն աղջկան կախարդութեանց վրայ տեղեկութիւն մ՚ունին։

— Գնա անմիջապէս զանոնք գտնելու . . . մտիկ ըրէ, եթէ քանի մը ոսկի անոնց յիշողութիւնը կրնայ սրել, մի խնայեր, տուր։

— Մէկ քանի գահեկանի համար զիրենք կերակրող մայրն իրրեւ վհուկ ամբաստանող և երդումնլնող մարդիկ են — ըսաւ հրամանատարը։

— Ուրեմն ձամբայ ելլիր — վրայ բերաւ Մօնֆիշէ — կէսօրին դատաստանը պիտի սկսի։ Երբէք մեր մեծաւորն այսչափ եռանդով պատրաստութեանց հոգը տարած չունէր Կամէլ Ալֆակին կախաղանի դատապարտելէն ի վեր, դարձած մահմետական մ՚որ վերստին Մէհմէտի կրօնն ընդուներ էր։

Գղեկին ահագին զանգակն այն ինչ կէսօր զարկեր էր, երբ Ռեբեկա իրեն բանտի տեղ ծառայող սենեկին տանող թագուն սանդղին վրայ ոտքի դիպուած մը լսեց։ Ա՛յս արձակը բազմաթիւ անձերու դալստեան կ՚յայտներ, և այս պարագան իրեն ուրախութիւն պատճառեց. վասն զի աւելի կ՚զարհուրեր հրէայ օրիորդը վայրագ և մոլեգին Գուա–Կիլպէրի առանձնական աղերսութիւններէն քան թէ իրեն դալիք որ և է փորձանքէ։ Սենեկին դուռը գոցուեցաւ, և Գօնրատ ու Մալվօազէն հրամանատարը ներս մտան սակաւ հապճեպ և նիզակներով զինուած չորս պահակներ իրենց ետեւն ունենալով։

— Անիծեալ աղտի մ՚աղջիկ — ըսաւ հրամանատարը — ելլիր և մեր ետեւէն եկուր։

— Ո՛ւր — ըսաւ Ռեբեկա — և ինչ նպատակաւ։

— Օրիորդ — պատասխանեց Գօնրատ — դու միայն հնազանդելու պարտաւոր ես և չէ թէ հարցուփորձ ընելու։ Սակայն, զիտցիր որ այժմ մեր սուրբ միաբանութեան Մեծ Վարպետին առեւնին առջեւ պիտի երեւես և անդ գործած յանցանքդ պիտի խոստովանիս։

— Օրհնեալ լինի Աբրահամու Աստուածը — գոչեց Ռեբեկա իր ձեռները չերմեռանդութեամբ ծալլելով — դատաւորի մ՚անունը, թէեւ իմ ժողովրդեանս թշնամին լինի նա, ինձի համար պաշտպանի մը անուն կ՚երեւի։ Յօժարամիտ ձեզ պիտի հետեւիմ, ներեցէք միայն որ քօղովս ծածկուիմ։

Սանդղէն վար իջաւ ծանր և հանդիսաւոր քայլվով մը, երկայն դաւիթ

թէ մ՚անյաս, և ծայրը շինուած երկու դուներու շնորհիւ, մեծ սրահը մտան, ուր Մեծ Վարպետն այս առթիւ իր դատաստանական ատեանը կազմեր էր։

Ա՚յս ընդարձակ սրահին վարի մասը գինակիրներով և դեղացիներով լեցուն էր, որոնք գժուարաւ տեղ բացին Ռեբեկային համար, որուն հետ էին Հրամանատարն ու Մօնֆիշէ, և ետևէն կ՚գային նիզակաւոր պահակներ, և Ռեբեկա շիտակ քալեց իրեն յատկացած տեղը գնաց։ Ամբոխին մէջէն՝ իր թևերը ծալլած և գլխիկոր անցնելուատեն՝ Թղթի կտոր մը անոր ձեռքը սահեցուցին, և օրիորդն առանց անոր պարունակութիւնը քննելու առաւ։ Ա՚յս հոյակապ ժողովին մէջ քանի մը բարեկամներ ունենալու ստուգութենէ կ՚արիւնար իր բոլորտիքը նայելու, և ինչ տեսակ մարդոց ներկայանալը քննելու։ Հետևապէս իր աչքը շրջեց այս տեսարանիս վրայ, ըղձալջորդ գլխին մէջ նկարագրելու պիտի ջանանք։

ԳԼՈՒԽ ԼԷ

Դժնեայ էր այն օրէնքն՝ որ կ՚արգելուր միաբանից
Սրտով լուկ մարդկային վշտակիզիլ մարդու աղետից.
Դժնեայ էր այն օրէնքն՝ որ ճարտարութենան նորածիլ
Զուտ և անմեղ խաղերուն խոչ կ՚արգելուր ծիծաղիլ.
Բայց աւելի դժնեայն երբ բարձր երկաթ գաւազան
Բռնակալութեան շարժէր իբրև իշխան դերընական։

ՄԷՋԷՆ ԴՕՐԻ։

Անպարտ և հէք Ռեբեկայի դատաստանին համար շինուած դատարանը մեծ սրահին վերնադոյն ծայրը դանուած բարձր կողման վրայ շինուած էր, տեսակ մը դարակ կամ յարկ մը զոր արդէն նկարագրեցինք իբրև պատուոյ վայր և որ գղեկին ամենէն նշանաւոր բնիկները կամ հիւրերն ընդունելու սահմանուած էր։

Ուղղակի ամբաստանելոյն դիմացը՝ բարձր աթոռի մը վրայ Տաճարին Մեծ Վարպետը նստեր էր, և չինջ սպիտակ ու մեծ վերարկուով ծածկուած՝ իր ձեռքը բռներ էր խորհրդաւոր գաւազան՝ որուն վրայ գրուած էր Ուխտին նշանակը։ Իր ոտից մօտ սեղան մը կար, և ասոր շուրջն երկու քարտուղար, Ուխտին մատենադպետները, որոց պաշտօնն

Էր օրուան տարեգրութիւնը առնել։ Ա՚յս կրօնաւորներուն սև զգեստները, գլխի մերկ գագաթներն և գաժան նայուածքը նշանաւոր համապատկեր մը կ՚ընծայէին Հանդիսական ասպետներու մարտական կերպարանին հետ, որ կամ ապարանը կ՚բնակէին և կամ Մեծ Վարպետին սպասաւորելու համար եկեր էին։ Հրամանատարներն՝ որոց չորսը ներկայ էին, իրենց մեծաւորին աթոռէն աւելի ցած և փոքր ինչ յետոյս դրուած աթոռներու վրայ նստած էին, իսկ ասպետներն՝ որ միաբանութեան մէջ այնքան բարձր աստիճան մը չէին վայելեր՝ աւելի ստորին նստարաններու վրայ կ՚երևէին, և հրամանատարներն այնչափ հեռու էին որչափ որ էին ասոնք Մեծ Վարպետէն։ Ասոնց ետին՝ բայց միշտ սրահին դարակին վրայ՝ Ուխտին գինակիրները կ՚տեսնուէին, որոնք նոյնպէս սպիտակ՝ այլ աւելի հաստ կտաւէ հանդերձներ հագեր էին։

Բոլոր ատեանը խորին ծանրութեան երևոյթ մը կ՚ընծայէր, և ապտներու երեսին վրայ նշմարելի էին գինուորական արիութեան նշանները, նոյնպէս հանդիսաւոր վարմունք մ՚որ կրօնական դաստուն կ՚վայելէր, և որ հարկաւ իրենց Մեծ Վարպետին առջև՝ ամենուն ձակտին վրայ պիտի դրոշմուէր։

Սրահին ստորին մասը գեղարդաւոր պահակներ բռներ էին, նոյնպէս հետաքրքրութենէ շարժեալ ուրիշ հանդիսատեսներ, որպէս գի Մեծ Վարպետն ու միանդամայն հրեայ վճռակ կին մը տեսնեն։

Ա՚յս ստորին դասու մեծ մասն որ և է աստիճանով Ուխտին կապած էին և հետևապէս իրենց սև հագուստէն կ՚որոշուէին իրարմէ։ Սակայն մօտաւոր նահանգներէ եկող գեղացիներու հրաման տրուեր էր ներս մտնելու, վասն զի Պօմանուարի փառասիրութիւնն էր կարելի եղածին չափ հրապարակային ընել իր հաստատած արդարութեան տեսարանը։ Իր մեծ կապոյտ աչերը կարծես թէ կ՚ծաւալէին քանի ժողովին բոլորտիքը կ՚նկատէին, և իր կատարելիք պաշտօնին մտածին արժանութենէ և խղճահար դործադրութենէ կարծես թէ անձը կ՚փքանար։ Սաղմոս մ՚որուն իր ծանր և անուշ ձայնով մտնակից եղաւ, ձայն մ՚որ երդողին տարիքին պատճառաւ իր զօրութիւնը չէր կորուսած, օրուան դատաստանն սկսաւ. սա հանդիսական խօսքը venite exultemus Domino (արի՛ զօրացո՛ մեզ, Տէր) որ ստէպ կ՚երդէին տաճարականներն իրենց երկրային թշնամիներու դէմ կռուելու միջոցին՝ պատշաճ դատուեցաւ Ղուկասի կողմէ խաւարի զօրութեանց վրայ տանելիք մտաբերման յաղթանակը հռչակելու համար։ Ծանր և երկարաձև խազերն՝ որոց վարժ հարուածող առնացի ձայներ միաբան կ՚միանային՝ սրա հին մինչև

գմբեթը կ'բարձրանային և գահավէժ սրընթաց ջրերու ահորժէլի այլ հանդիսական որոտմամբ կ'թաւալէին անոր կամարներուն մէջ։

Երբ երդերը գադրեցան՝ Մեծ Վարպետն իր բոլորտիքը շրջեց ծանրաբար իր նայուածքը և դիտեց որ հրամանատարապետն միայն ամուր թափուր է։ Պրայն տը Պուա–Կիլպէրը, որուն յատկացած էր նոյն աթոռը, տեղէն ելեր ու Տաճարին ասպետներուն սահմանուած նստարանաց միոյն ծայրը կանգուն կեցեր էր. մէկ ձեռքով իր երկար վերարկուն կ'տարածէր կերպով մ'իր դէմքը ծածկելու համար, մինչդեռ միւս ձեռքով խաչաձև ճարմանդ ունեցող թուղթը բռնած՝ անոր ծայրովը, թէև պատենին մէջն էր, կաղնաշէն յատակին վրայ ծանր ծանր դիրեր կ'դնէր։

— Ապերջանիկ մարդ — ըսաւ Մեծ Վարպետը՝ արդահատութեամբ Պրայն տը Պուա–Կիլպէրը նկատելէն ետև։ — Կ'նայիս, Գօնթրատ, այս ահաւոր տեսարանին ինչ ազաւորութիւն ունի անոր վրայ։ Մինէ կարելի՞ էր որ դժոխային զօրութիւններն իրեն աջակից ունեցող թեթև կնիկան մ'ակնարկին այս վիճակին հասցընեն արիասիրտ և անվեհեր ասպետ մը։ Ահա կ'տեսնես, չիշխեր մեզ նայելու, չէ կարող Ներեվային նայելու, և ո պիտի որ սատանային դրդմամբն իր ձեռքն այն կախարդական տառերը կ'դնէ։ Թերևս մեր կեանքն ու ազահօտութիւնն ունի իրեն նպատակ, բայց այն վատթար թշնամին կ'արհամարհենք և առ ոչինչ կ'դրենք, semper leo percutiatur (Առ–ի–ձը ծեր պիտի յաղթահարէ)։

Մեծ Վարպետն այս դիտողութիւնները մեկուսի հաղորդեց իր մտերիմ Գօնթրատ Մօնֆիշէլին, բայց իր ձայնը բարձրացընելով ժողովին խօսեցաւ այսպէս.

— Վերապատուելի և արիասիրտ մարդիկ, ասպետներ, հրամանատարներ և սուրբ Ուխտիս միաբանիներ, իմ եղբարքս ու որդիքս, նոյնպէս դուք ամենու և բարեպաշտօն դինակիրներ, դուք որ այս սուրբ խաչը կրելու կ'բաղձաք, և դուք ամէն դասու քրիստոնեայ եղբարք, գիտելի լինի ձեզ որ մեր իշխանութեան անզօրութիւնը չէ այս ժողովը գումարելու յորդորողը, վասն զի որչափ որ անձնուիրն անարժան ենք, այս պատասխանով լիազօր իշխանութիւն առինք մեր սուրբ Ուխտին վերաբերող ամէն բաները դատել և վճռել։ Երջանկայիշատակ սուրբ Պէրնար, մեր ասպետական և կրօնական կանոնագրին լիննատն լինեորդ գլխին մէջ ըսած է թէ՝ միայն Մեծ Վարպետին կամօք և հրամանաւ կրնան միաբան եղբարք ի ժողով գումարուիլ, այսպէս աղատ ժողով մեզ, ինչպէս նաև մեր նախորդ պաշտօնակից սուբբ հարքը՝

դատել և որոշել թէ ի՞նչ պարագայի և ո՞ր տեղի մէջ Ուխտին ժողովը կամ անոր մէկ մասը պարտ է գումարել։ Նոյնպէս՝ այսպիսի ժողովներու մէջ՝ մեր պարտաւորութիւնն է մեր եղբարց խորհուրդը մտիկ ընել և մեր համոյից համեմատ վճիռ արձակել։ Իսայց երբ սովալլուկ պայլը հօտին վրայ կ'յարձակի և անոր մէկ անդամը կ'պրաւէ կ'տանի, բարի հովիւին պարտքն է իր ընկերները հաւաքել որպէս զի իրենց աղերսներով և պարսերով յափշտակիչը ղարնեն, մեր արդէն ծանօթ եղող կանոնին համաձայն թէ՝ հարկ է միշտ առիւծը յաղթահարել։ Ուստի հրաման տուինք որ Եօրքցի Խահակի գուստր, Ռեբեկա անուն հրեայ կինը մեզ յայտ յանդիման հանեն, կախարդական և հմայական գործերով վատահամբաւ կին մը, որոյ մէջտեղ չէ թէ պարզիա դեղջուկի մը, այլ ասպետի մը խելքը միտքը մոլորեց և խանգարեց, չէ թէ պարզ ասպետի մը, այլ սուրբ Տաճարին պաշտպանութեան ուխտեալ ասպետի մը, չէ թէ ընկերակից ասպետի մը, այլ մեր Ուխտին մէկ հրամանատարին, առաջինն թէ պատուոյ և թէ արժանաւորութեան մէջ։ Մեր եղբայրը, Պրայն տը Պուա–Կիլպէր՝ մեղի և ամէն անոնց որ զիս մտիկ կ'ընեն, քաջ ծանօթ է, իրրև ճշմարիտ և եռանդուռ ախոյեան Խաչին, որուն բազուկը շատ արիութեան գործեր գործեց սուրբ Երկիրն և սուրբ Տեղիքը մաքրելոյ այն անհաւատներուն արեամբ որ զայն կ'պղծէին։ Նոյնպէս մեր եղբօր խորագիտութիւնն ու խոհեմութիւնն նուաղ հակակ չունին մեր մէջքան իր քաջասրտութիւնն ու ճարտարութիւնը, այնպէս որ թէ արևելեան և թէ արևմտեան աշխարհի ասպետներ Պուա–Կիլպէրի անունը կ'անուանեն իրրև այն որ արժանի է այս պատուազանիս իշխանութեան, երբ Աստուած հաճի անոր բեռէն մեզ ազատել։ Եթէ խմանայինք որ այսպիսի պատուեալ և պատուաւոր մարդ, յանկարծ իր պաշտօնին պատկառանքն, իր ուխտն, իր եղբարքն և իր յոյսերն՝ի բաց թողլով հրեայ օրիորդի մը միացեր է, անոր յայրատ ընկերակցութեամբ ամայի վայրեր թափառելէ, անոր անձը պաշտպանել է իրը վտանգի մէջ ձգելով, և՝ի վերջ՝ այնքան իր մոլութեամբ կուրացեր և յիմարեր է որ միևնոյն ատեն զանի մեր մէկ տաճարատունն է բերեր, ինչ պիտի ըսէինք եթէ ոչ այս աղնիւ ասպետն գիւտհարեր կամ չար ոգւով մը հմայուեր է։ Եթէ հնարին լինէր մտածել թէ այսպէս չէ դործեր, մի կարծէք թէ աստիճան, արիութիւն, համբաւ, կամ որ և է երկրային նկատում պիտի արգիլէին մեզ պատուհասել զանի որպէս զի անօրէնութիւնը փարատի, ըստ գրոց, Auferte malum exvobis (ՏԻՐԸ ՀԻՆԻՑ ՅԱՐ ԴՔՆԻՆ) վասն զի բաղմանիւ և

քաւեն եւ են մեր օրհնեալ Ուխտին դէմ գործուած պարտաղանդու-
թիւններն որով այս ողբալի պատմութիւնն հիւսուած է. ա) իր յատուկ
համապաշտութեամբ շարժեցաւ մեր կանոնադրին 33դ. յօդուածին
դէմ. Quod nullus juxta propriam volontatem incedat. — բ) նա
բանադրեալ անձի մը հետ հաղորդակցութիւն ունեցաւ, դլուխ 57դ.
Ut fratres non partecipent cum excomunicatis եւ հետեւապէս Ana-
thema Maranatha մէկ մասն իր վրայ հրաւիրեց. — գ) նա օտար
կնկան հետ խօսեցաւ, հակառակ կանոնին. Ut fratres non conver-
santur cnm extrancis mulieribus. — դ) նա չմերժեց, նա մանա-
ւանդ կ'ափսոսամ որ խնդրեց կնկան համբոյրը, որով մեր հռչակաւոր
Ուխտին յետին կանոնին համեմատ՝ ut fugientur oscula խաչին գին-
ւորներեն որոպայթին մէջ ընկած են: Այս ատելի եւ բաղնասպատիկ յան-
ցանացը համար՝ Պրայն ոը Պուա—Կիլպէր մեր միաբանութենէ դուրս
պիտի արտաքսուէր մերժուէր եթէ անոր աջակից ու աջակէց իսկ լի-
նէր:

Մեծ Վարպետը լուեց. մեղմ տրտունջմը բոլոր ժողովին մէջ լսելի
եղաւ: Նորահաս եղբայրներէն մէկ քանին որ De osculis fugientis
կանոնին վրայ ծիծաղելու հակամէտ էին՝ նոյն պահուն վայելուչ
ծանրութիւն մ'առին եւ մնայողջ սպասեցին որ Մեծ Վարպետին ա-
ռաջարկելիքը մտիկ ընեն:

— Ահա այսպէս, եւ այսպէս պիտի լինէր արդարև — շարայարեց
նա — Տաճարական ասպետի մը պատուհասն որ կամովին մեղանչած է
իր Ուխտին կանոնաց դէմ այսպիսի ծանրակշիռ կէտերու նկատմամբ:
Բայց եթէ հմայիլք եւ բժժանքով՝ Սատանն ասպետին վրայ տիրապե-
տեր է՝ թերեւս անոր համար է որ իր ակնարկն անխոհեմութեամբ օրի-
որդի մը դեղեցկութեան վրայ ձգած է, ուստի եւ մենք անոր վրայ
պիտի ցաւինք քան թէ յանցանքը պատժենք, եւ եթէ մէկ կողմէն անոր
անօրէնութիւնը սրբելու համար ապաշխարութիւն մը դնենք անոր
վրայ, միւս կողմէն մեր սրտմտութեան բոլոր կրակը պիտի թափենք
այն անիծեալ դործիքին դէմ որ քիչ առաջ անոր անյարիր անկման պատ-
ճառ պիտի լինէր: Ուրեմն առաջ անցիք եւ վկայեցէք դուք որ այսպիսի
ողբալի գործերու տեղեակ էք, որպէս զի կարող լինիք դատելու
յանցանքին ծանրութիւնն եւ տեսնել թէ արդեօք մեր արդարութիւնը
սոյն անհատատ կնկան պատուհասով պիտի ամոքի, թէ ոչ՝ արիւնալի
սրտով պիտի ստիպուինք մեր եղբօր դէմ ատելի ծանր կերպով վա-
րուիլ:

Ըստ վկաներ կոչուեցան հաստատելու համար թէ Պուա—Կիլպէր
ինչ վտանգներ աչքն առած էր բոցավառ դղեկէն Ռոբեկան աղատելու
աշխատելով, և թէ ինչ միջոցներ՝ ի գործ դրեր էր զանի՝ ի ձեռս ան-
ձին այնուհետև պահպանելու համար: Վկաները՝ որ և է նշանաւոր
դէպքէ դրդուած դուհիկ մնայ յատուկ չափազանցութեամբ մանր
պարագաներ պատմեցին, և հրաշալի բաներու մասին իրենց ունեցած
բնածին տրամադրութիւնն մնծապէս ոյժ առաւ երբ տեսան որ մեծ
պոհունակութիւն կ'ըզդայ այն բարձրաստիճան մարդն որ ժողովին կը
նախագահէր և իրենց վկայութիւնը մտիկ կ'ընէր: Այսպէս Պուա—
Կիլպէրի դիմադրուած վտանգները՝ թէև լինքնին մեծ էին, անոնց
պատմութեան մէջ հրաշալի դարձան: Ռոբեկային պաշտպանութեան
համար ասպետին ցոյց տուած անձնուիրութիւնն ոչ միայն խոհեմութեան
այլև ասպետական մեծագին եռանդեան սահմանէն դեր՝ ի վեր նկարա-
դրեցին. իսկ անոր ըսածին համար ունեցած հլութիւնն, թէև իր լե-
զուն ստէպ խիստ յանդիմանական էր, յետին ծայր հասած պատմեցին,
չափազանցութիւն մ'որ ասպետին պէս վէս մարդու մը համար դրեթէ
դերբնական կ'երեւէր:

Այնուհետև Դէնքլոդովի հրամանատարը կանչուեցաւ որ պատմէ
թէ ինչ կերպով Պուա—Կիլպէր և հրեուհին տաճարատունը մտան:
Մալվուազէն իր վկայութիւնը շատ ճարտարութեամբ յայտնեց: Բայց
մինչդեռ կ'ջանար նա Պուա—Կիլպէրի ղայտունքը չվիրաւորել, ատեն
ատեն այնպիսի ակնարկութիւններ կ'ընէր որպէս թէ կ'ուզէր հետեցը-
նել, որ ասպետը մնայուն անցաւոր պակասութեան մը նեղքև կ'տառա-
պէր, այնքան սիրահարած կ'երեւէր իրեն ընկերակից դանուող օրիոր-
դին: Ասպաշաի հատաչներով՝ հրամանատարը խոստովանեցաւ որ մեղ
ապարտ է Ռոբեկան տաճարատունն ընդունելուն: — Բայց իմ խոստո-
վանութիւնս — յարեց նա — մեր վերապատուելի Մեծ Վարպետին ըս-
րի. դիտէ նա որ իմ նպատակս վատթար չէր, թէև ընթացքս թերեւս
ապօրէն կ'երեւի: Ուստի յօժարամիտ պիտի ընդունիմ ինչ ապաշխարու-
թիւն որ նա ինձի սահմանէ:

— Դուք լաւ խօսեցար, Ալպէրտ եղբայր — բսաւ Պօմանուար — քա-
նպատակ բարի էր, քանի որ այդ մտօք կարծեցիր թէ մոլորած եղբ
բայրդ պիտի ազատես իր յիմարութեամբ ընկած կորստեան անդունդէն:
Բայց վարմունքդ մեղադրելի էր, նման այն անձին որ զայրագին երիվ
ար մը բռնելու համար՝ փոխանակ սանձէն բռնելու աստղատանէն կը
բռնէ և ինքն իրեն կ'վնասէ առանց իր նպատակին հասնելու: Տասն և-

ընք Հայր Ֆր. ուսուցանեան և ինն երեկոյեան ժամուն ըսելու պարտաւորուած ես՝ մեր բարեպաշտ հիմնադրին հրամանին համեմատ, բայց դու կրնատպատիկը պիտի ըսես: Տաճարականներն շաբթուան երեք օրը միս ուտելու արտօնութիւն ունին, դու բոլոր շաբաթ պահք բունելու պատասխանատու ես: Այս ապաշխարութիւնը մեզ շաբաթ շարունակելէն եաև պիտի դադրեցնենս:

Կատարեալ հլութեան կեղծ ու պատիր ձեւերով Դէնիզլուզովի հրամանատարը մինչև դեռին խոնարհութիւն ըրաւ իր մեծաւորին առջև, և ապա իր տեղը դնաց նստաւ:

— Միթէ բանաւոր չէ, եղբայրք — ըսաւ Մեծ Վարպետն — որ մենք փոքր ինչ այս կեանքն նախորդ կեանքն ու արարքը քննենք, որ յատկապէս երևան հանենք եթէ իրօք կախարդական բաներ գործածեր է, քանի որ մեր լաւ Ճշմարտութիւնները կրնան յորդորել մեզ հասնելու որ մեր եղբայրն այս ձախող գործին մէջ դժոխային ազդեցութենէ և չնորհքէ մղուած է:

Հերման կատարելիք ժողովին ներկայ դանուող հրամանատարաց չորրորդն էր. միւս երեքն էին Գօնթրատ, Մալվուազէն և նոյն ինքն Պուա–Կիլպէր: Հերման վաղեմի պատերազմիկ մ'էր, որու դէմքը մահմէտականաց սրով ստացած շատ մը սպի և վէրեր ունէր և միանգամայն իր եղբարց մէջ մեծ ատելհան և յարդ: Ոտք ելաւ նա և խոնարհեցաւ Մեծ Վարպետին առջև՝ որ խոչոր խօսելու ազատութիւն շնորհեց ա–նոր: — Վերապատուելի Հայր — ըսաւ նա — կ'փափաքիմ իմանալ նոյն ինքն մեր արիական Պրայն սը Պուա–Կիլպէրէն թէ այս զարհուրելի ամբաստանութեան դէմ ինչ ունի ըսելու և հրեայ օրիորդին հետ ողբալի յարաբերութիւնն այժմ ինչ աչօք կ'նայի:

— Պրայն սը Պուա–Կիլպէր — ըսաւ Մեծ Վարպետը — կ'լսես անշուշտ մեր եղբօր Հերմանի ըրած հարցումն որով կ'փափաքի իմանալ միտքդ: Կ'հրամայեմ քեզի անոր պատասխան տալու:

Պուա–Կիլպէր իր գլուխը դէպ ի Մեծ Վարպետը դարձուց անոր ըրած հարցման վրայ և լուռիւն պահեց:

— Համր գնէ մը բռնուած է — ըսաւ Մեծ Վարպետը — կորիր դու, սադան . . . : Խօսէ, Պրայն սը Պուա–Կիլպէր, մեր սուրբ Ուխտին այս նշանակին վրայ կ'երդմնցնեմ քեզ:

Պուա–Կիլպէր ինքն իր վրայ Ճիգ մ'ըրաւ որպէս զի իր նորածին արհամարհանքն ու սրտմտութիւնը զսպէ, քանզի գիտնալով որ զայն յայտնելով իրեն օգուտ մը չպիտի լինէր: — Պրայն սը Պուա–Կիլպէր —

քննաւ նա — պատասխան չունի, վերապատուելի Հայր; այնպիսի տար–տամ և մտածին ամբաստանութեանց: Եթէ իր պատիւը յարձակում կրէ պիտի պաշտպանէ զայն իր մարմնով և այս սրով որ շատ անգամ քրիստոնէութեան համար պատերազմած է:

— Կ'ներեցնք քեզ, Պրայն եղբայր — ըսաւ Մեծ Վարպետը — թէև քու մարտական քաջութիւններու դովասան կանդնելդ մեր առջև՝ պարծենկոտութիւն մ'է և մեր Թշնամւոյն գործը: Բայց դու մեր նե–րողութիւնն ունիս, մտածելով որ ոչ այնչափ քու յատուկ թերացրու–թեամբդ կ'խօսիս այլ այն ոգիին դրդմամբն զոր երկնից օգնութեամբը պիտի արտաքսենք մեր ժողովէն:» Արհամարհական ակնարկ մը Պուա–Կիլպէրին սև և վէս աչաց մէջ փայլեցաւ, բայց պատասխան մը չտուաւ նա: — Եւ այժմ — շարայարեց Մեծ Վարպետը — քանի որ մեր եղբօր Հերմանի հարցումն այսպէս կիսկատար պատասխան մ'ընդ–ունեց, այս դաղտնի անօրէնութեան խորը պիտի թափանցենք: Ուստի անոնք որ սոյն հրեայ աղջկան կենաց և գործերու վրայ բան մը գի–տեն՝ թող մեր առջև ելնեն:» Սրահին վարի կողմն աղմուկ մ'եղաւ, ու երբ Մեծ Վարպետը պատճառը հարցուց, պատասխան տուին թէ ամ–բոխին մէջ անդամալոյծ մը կար որ հրաշալի սպեղանիով մը բոյժ դտեր էր կաստառը հրեայ օրիորդին ձեռօք:

Խեղճ դիւղացին՝ որ 'ի ծնէ սաքսօն էր, մինչև դատարանն քաշ քշե–լով հասաւ, և կ'վախնար որ թերևս մեծ պատիժ կրէ՝ հրեայ օրիորդի մը տուած դեղով բժշկուելը իբրև յանցանք նկատուելով: Արդարև լիու–վին բժշկուած չէր, վասն զի վկայութիւն տալու համար դեռ ևս ցու–պերով կ'քալէր: Մեծ դժկամակութեամբ և շատ արտասուք թափելով գեղացին իր վկայութիւնը տուաւ, բայց խոստովանեցաւ որ երկու տարի առաջ՝ երբ Եօրք քաղաքը կ'պանուէր և իբրև հիւան Խաչակիր կոչուած հրէից համար կ'աշխատէր՝ յանկարծ անդամալոյծ եղեր և անկողին ըն–կեր էր առանց շարժիլ կարենալու, մինչև որ Ռեբեկայի խորհրդով և ի մասնաւորի համեմատ և ջերմուռ սպեղանիի մը միջոցաւ կարող ե–ղեր է կերպով մը անդամներըը շարժել: Ասկից զատ, ըսաւ նա, այն թանկագին սպեղանիէն քիչ մը տուեր էր իրեն ամանով մը, և միանգա–մայն փոքրիկ դումար մը շնորհեր էր որպէս զի Դէնիզլուզովի մօտ իր հօրը տունը վերադառնայ:

— Եւ եթէ չեք նեղանար, շնորհալի Հայր — ըսաւ մարդը — պարտիմ յայտնել որ օրիորդն ինձ ինչ բերելու միտք չունէր բնաւ, թէև իր սև բաղդէն հրեայ ծներ էր. վասն զի՝ երբ անոր դեղը գործ–

ածեցի Հայր Ջէն ու հաւատացի ըսի և դարմանը դարձեալ իր զօրութիւնը ցցուց։

— Սարուկ, լուռ կեցիր — գոչեց Մեծ Վարպետը — և կորիր դնա։ Քեզի պէս անբաններուն կ'վայլէ արդարև դժոխային դեղերը դուքաբանել և ձեր աշխատութիւնն դամահելի ազգի մը նուիրել։ Ահա կ'ըսեմ քեզի թէ նոյն ինք սատանը կարող է հիւանդութիւններ տալ զանոնք բուժելու և սադայէլական դարմանի մը արժէք տալու մտօք։ Միթէ այն սպեղանին՝ որու վրայ կ'խօսիս, քիմիք է։

Գեղացին՝ դողդողար ձեռօք իր ծոցէն փոքրիկ տուփ մը հանեց, որուն խուփին վրայ քանի մը եբրայական տառեր փորագրուած էին. այս ստոյգ ապացոյց մ'երևցաւ ներկայ բազմաթիւ հանդիսականաց որ սատանային դեղարանին մէջ շինուած էր այն։ Պօմանուար խաչ հանեցին եւս՝ այն տուփն իր ձեռքն առաւ, և ըստ որում հմուտ էր արևելեան շատ լեզուներու, խուփին վրայ դրուած արձանագիրը հեշտիւ կարդաց. — Յոտոյչ ցեղին սոխածըչաղնեց։ — Զարմանալի զօրութիւն Սատանի — գոչեց Մեծ Վարպետն — որ կարող է Սուրբ Գիրքը հայհոյութեանց վերածել, մեր անհրաժեշտ մնունդին թոյն խառնելով։ Միթէ այս տեղ բժիշկ մը չգտնուիր որպէս զի մեզի յայտնէ թէ այս խորհրդաւոր սպեղանին բաղադրող նիւթերն ի՞նչ են։

Երկու բժիշկներ, ինչպէս որ ինքզինքնին կ'անուանէին, մէկը վանական մը և միւսը սափրիչ, առաջ անցան և խոստովանեցան որ այն սպեղանիին բաղադրութիւնները չեն գիտեր, այլ միայն զմուռս և քացախ կ'հոտէին, զորս արևելեան խոտեր համարեցին։ Բայց իրենց մէկ արհեստակցին դէմ ունեցած ձշմարիտ ատելութեամբ վաւաշած՝ թեև լաւ գիտէին թէ, քանի որ այն դեղն իրենց գիտութենէ դուրս էր, անտարակոյս աւօրէն և հմայագործ դեղարարի մը ձեռօք բաղադրուած պիտի լինէր, նա մանաւանդ, թէև իրենք թոյլիչ չէին, սակայն լիապէս իրենց արհեստին բոլոր ճիւղերուն վարժ էին որչափ որ կարելի էր վարժիլ քրիստոնէի մը խղճահարութեամբ։ Երբ այս բժշկական խուզարկութիւնն աւարտեցաւ, սաքսօն դեղացին խոնարհաբար խնդրեց որ իրեն այնքան օգտաւէտ եղող դեղն ետ տան. բայց Մեծ Վարպետը այս խնդրոյն վրայ անոր նայեցաւ խոժոռ դիմօք և անդամալոյծին հարցուց. — Ի՞նչ է քու անունդ։

— Հիլ, Սնէլի որդին — պատասխանեց դեղացին։

— Ուրեմն, Հիլ, Սնէլի որդին — ըսաւ Մեծ Վարպետը — ահա կ'ըսեմ քեզի, լաւ ևս է անդամալոյծ մնալ քան թէ անհաւատից դեղն

ընդունիլ որ կարենաս ոտք ելնել և քալել. լաւ ևս է անհաւատներու դանձերը կողոպտել հզօր ձեռօք քան թէ անոնց ձեռքէն պարգևներ ընդունիլ, կամ վարձքի համար անոնց ծառայել։ Գնա, և իմ բաժս ըլլի։

— Աւաղ — պատասխանեց դիւղացին — մի նեղանաք, վերապատուելի հայր, բայց այդ դաւն ինձի համար շատ ուշ կ'հասնի. վասն զի ես ասլիկար մարդ մ'եմ. բայց Նաթան Պէն Սամուէլ ռաբբիին ծառայող երկու եղբարցս սլիտի ըսեմ թէ Ձեր Մեծութիւնը կ'ըսէ որ աւելի օրինաւոր է զանի կողոպտել քան թէ անոր հաւատարմօրէն սպասաւորել։

— Դուրս հանեցէք սա թշուառական շաղակրատը — գոչեց Պօմանուար, որ իր ընդհանուր առածին այս գործնական պատասխանը հերքելու պատրաստ չէր։

Հիլ, Սնէլի որդին, ամբոխին մէջ մտաւ, բայց իր բարերար աղբ ջնան վճռակին հոգն ունենալով սրահին մէջ մնաց մինչև որ անոր դատապարտութիւնը լսէ՝ գաժան դատաւորին ակնարկին հանդիսանալու վտանգն աչքն առնելով, թէև անոր տեսքն իրեն սարսափ կ'պատճառէր և սիրտը դող կ'հանէր։

Դատաստանին այս միջոցին՝ Մեծ Վարպետը հրամայեց Ռեբեկային որ իր քօղն երեսէն հանէ։ Օրիորդն առաջին անգամ իր շրթունքը բանալով մեղմիկ այլ արժանապէս պատասխանեց. — Իմ ժողովրդեան աղջկունք սովոր չեն իրենց երեսը բանալ երբ օտարներու ժողովի մը մէջ մնան։ — Իր ձայնին քաղցր հնչիւնը, և իր պատասխանին անուշութիւնն համակրութեան և ողթութեան զգացում մը գրգռեցին բոլոր ունկնդիրներուն մէջ։ Բայց Պօմանուար, որ կարծեր թէ երևակայական պարտաւորութեանը դիմադրող որ և է մարդասիրութեան զգացում ջնջելն ինքնին առաքինութիւն մ'է, կրկնեց իր հրամանը թէ անոր քօղը հանելու կ'պատրաստուէին, երբ օրիորդն ոտք ելաւ Մեծ Վարպետին յանդիման և ըսաւ. — Ե սէր ձեր աղջկանց . . . աւաղ, կ'մտնամ որ աղջիկ չունիք։ Բայց 'ի յիշատակ ձեր մարց, 'ի սէր ձեր քոյրերուն, յանուն հաւատութեան, մի պահանջէք որ ձեր ներկայութեան այսպէս նախատուիմ և այս կոշտ մարդիկ աղջկան մը քօղը հանեն։ Պիտի հնազանդիմ ձեզի — յարեց նա՝ իր ձայնին մէջ համբերատար տրտմութիւն մը յայտնելով, որ Պօմանուարի սիրտն իսկ շարժեց — դուք ձեր ժողովրդեան մէջ հրէական աւազանի էք, և ձեր հրա-

ւմանկին համեմատ՝ տարաբաղդ աղջկան մը դէմքը պիտի ցոյց տար ձեզի։

Ռեբեկա իր քոյրը քաշեց հանեց և հանդիսականաց նայեցաւ այնպիսի կերպարանով որ համեստութիւնն արժանապատուութեան հետ կը մրցէր։ Իր անուանի դեղեցկութիւնը զարմանաց մրմունջ մը դրդռեց, և նորատի աղջիկներն աչօք իրարու կ՚ըսէին՝ ըլլին բանակցութեամբ, թէ Պուա–Կիլբերի լաւագոյն ջատագովութիւնն օրիորդին ձշմարիտ հրապուրանաց մէջն էր քան թէ անոր երևակայական կախարդութեան մէջ։ Բայց Հիլ, Սնդէլի որդին, իր բարերարուհւոյն կերպարանին ըրած տպաւորութիւնը սաստիկ զգաց և ըսաւ սրահին դուռը կեցող պահակներուն. — Թողէք որ դուրս ելնեմ, թողէք որ ելնեմ։ Եթէ վերատին նայիմ անոր դէմքը պիտի մեռնիմ, վասն զի ես ալ անոր մահուան մասնակից եղայ։

— Մի՛ վրդովիր, հէք մարդ — ըսաւ Ռեբեկա՝ երբ անոր արտունջը լսեց — դու ինձ ճնաս մը չտուիր ձշմարտութիւնն ըսելով, բողոք և ողբ ընելով չես կարող ինձ օգնել։ Հանդարտէ, ի՛աղաչեմ, տունդ դնա և ինքզինքդ աղատէ։

Պահակներն կարեկցութենէ Հիլը դուրս պիտի արտաքսէին առ այն որ իր աղմկալի դանգատներն իրենց յանդիմանութիւն և անոր վրայ պատիժ չբերեն, բայց երբ սա քսօնը խօսք տուաւ լռելու, թոյլ տուին որ սրահին մէջ մնայ։ Երկու զօրականաց՝ որոց հետ Ալբերտ Մալվուազէն համաձայներ էր իրենց վկայութիւնը տալու, երևան գալու համար հրաման տուեցաւ։ Թէև այս երկու մարդիկ յանդուգն ոճրագործներ էին, դերի օրիորդին տեսքն և անոր հիասքաշ դեղեցկութիւնը կարծես թէ պահ մը իրենց շփոթութիւն տուին. բայց երբ Դէնբըզդուվի հրամանատարը նշանակական ակնարկ մը նետեց անոնց վրայ, իրենց նախորդ անզգայութեան դարձան, և աւելի անկողմնապահ դատաւորներու կասկածելի երևելու դիներ ունեցող այնպիսի խրողութիւններ պատմեցին, որ բոլորովին ստուտ էին, կամ դէթ անհնարին և խիստ բնական, բայց՝ որովհետև չափազանցութեամբ չարագուշակ մեկնութիւններ տալով իրենց ըսածները յառաջ բերին, շատերուն կասկածները յարուցանելու յաջողեցան։ Մեր ժամանակներն՝ այս վկայութեան պարագաներն երկու դաս կրնային բաժնուիլ. անոնք որ անհնարին էին, և անոնք որ նկատմամբ հնարաւոր չէին։ Բայց այն տղէտ և աւելորդապաշտ դարուն մէջ՝ երկու դասն ալ իրրև յանցաւորութեան փաստեր դիւրաւ ընդունելեցան։ Առաջին կարգի իրողութիւնները կը յայտնէին թէ՝ Ռեբեկա անծանօթ լեզուով ինքն իրեն խօսեր է, թէ

երբեմն երգած երգերն զարմանալի անուշութիւն մ՚ունէին որ ականջները կ՚գիւթէին և սիրտ կ՚բախէին, թէ՝ մերթ ընդ մերթ իւրովի խօսելով պատասխանի կ՚սպասէր, թէ իր զգեստներն տարօրէն և խորհրդաւոր ձև մ՚ունէին, և չէին նմաներ բարեկեցիկ կանանց հագուստին, թէ կախարդական նշանապրով փորագրուած մատանիներ ունէր և թէ անյայտ գիրեր հիւսուած էր քօղին վրայ։ Բոլոր այս պարագաներն՝ որ այնքան բնական և չնչին էին՝ իրրև փաստեր մտիկ ըրին ծանրօրէն, կամ այնպէս կարծուեցան թէ Ռեբեկա խորհրդաւոր էակներու հետ ապօրէն հաղորդակցութիւն ունենալուն զօրաւոր կասկածներ կ՚յարուցանեն։

Ա՛յնուհետև ուրիշ աւելի անորոշ վկայութիւն մը մէջ բերին, որուն հանդիսականաց մեծ մասին դիւրահաւանութիւնն հետաքրքրութեամբ հաւատաց, թէև անհաւատալի։ Ջինուորներէն մին տեսեր էր որ Ռեբեկա վիրաւոր մարդ մը բուժած էր իր հրաշալի դեղով, և այս մարդն իրենց հետ Դօրքիլդըֆի դղեակը տարած էին. խորհրդաւոր բառեր արտասանելով վէրքին վրայ քանի մը նշաններ ըրեր էր, ըսաւ, թէև, օրհնեալ Աստուած, չէր հասկըցած, երբ դեղարդի մը սլաքն ինքնին վէրքէն դուրս ելեր, արիւնը դադրեր, վէրքը դոցուեր էր, և քառորդ մը՝ տեսեր էին վիրաւորն որ պարիսպներուն վրայ կ՚քալէր, վկային օգնելով որ պարապաքար նետելու գործիքը գործածէ։ Հաւանական է թէ այս պատմութեան հիմը սա է թէ՝ Ռեբեկա վիրաւոր Իվանհօէն դարմաներ էր երբ Դօրքիլդըֆի դղեակը կ՚գտնուէր։ Սակայն վկային ստուգութիւնն այնքան աւելի դժուարին էր կասկածի ներքև դնել, որչափ որ՝ իր բերանացի վկայութեան անժխտելի փաստ մը բերելու համար՝ իր գլխանէն նոյն իսկ գեղարդին սլաքը հանեց, որ՝ իր պատմածին նայելով Իվանհօէի վէրքէն հրաշքով քաշեր հաներ էին. և որովհետև երկաթը գէթ ունկի մը կ՚կշռէր՝ ասով վկային խօսքը հաստատուեցաւ թէև հրաշալի էր։

Իսկ իր ընկերը՝ մատաղ պարոյր մը վրայէն ականատես եղեր էր Ռեբեկայի և Պուա–Կիլբերի մէջ անցած տեսարանին, երբ օրիորդն աշտարակին պատին ինքզինքը վար դահավիժելու վրայ էր։ Իր ընկերէն վար չմնալու համար՝ այս ապիրատը սկսաւ թէ ձիւնի պէս սպիտակ կարապի կերպարանով Ռեբեկայի թաւիլը տեսեր էր աշտարակին քովին վրայ, և թէ այս կերպարանով Դօրքիլդըֆի դղեկին բոլորտիքն երեք անգամ թռեր էր, նորէն աշտարակին վրայ դադարեր և հնական մը կերպարան առեր էր։ Ա՛յս ծանր վկայութեան կէսն անգամ

քաւական էր կախարդութեան դատապարտելու տգէտ ազգաբնակութիւնը, եթէ հրէայ իսկ չլինէր: Այս տգէտ մարդիկ պարագային հետ միանալով վկայութեան լրութիւնն շատ ծանրակշիռ էր Ռեբեկայի համար և իր ծաղիկ հասակն ու գեղեցկութիւնը չէին կրնար նպաստաւոր տպաւորութիւն մը բերել:

Մեծ վարպետն ամենուն կարծիքն խնդրեր էր և Ռեբեկայի կը հարցնէր հանդիսաւոր ձայնով թէ առարկութիւն մ'ունի՞ մէջ բերելու արձակելիք դատապարտութեան վճռոյն դէմ:

— Եթէ Ձեր գթութիւնը հայցեմ — պատասխանեց գեղանի հրէայ օրիորդն այլայլութենէ դող եղած ձայնով մը — որչափ անօգուտ նոյնչափ ինձի համար ստորին բան մը պիտի ընեմ ի'ղդամ, եթէ պնդեմ թէ իմ կրօնէս տարբեր կրօն մը դաւանող վիրաւորներն ու հիւանդները դարմանելը մեր երկու կրօնից Հիմնադրին չկրնար անհաճոյ երևիլ, դարձեալ ապարդիւն պիտի լինի ինձի համար, եթէ հաստատեմ թէ այս մարդոց (թող Աստուած անոնց մեղք չհամարի) ինձի դէմ մէջբերած շատ բաներ անկարելի են, բնաւ ինձ օգուտ չպիտի լինի, քանի որ անոնց հնարաւորութեան կ'հաւատաք, նոյնպէս բան մը չպիտի շահիմեթէ բացատրեմ ձեզ որ իմ ղեստս, իմ լեզուս և սովորոյթս իմ ժողովրդեան են, քիչ մնաց իմ հայրենեացս պիտի ըսէի, աւաղ, հայրենիք չունինք: Նոյնպէս ինքզինքս արդարացնելու չպիտի երևնեմ ի՛ ձեռս իմ հարստահարչիս, որ ամէ է և կ'ըսէ այն գրպարտիչ առասպելներն որ կերպով մը բռնաւորին նահատակի կերպարան կ'տան: Թող Աստուած անոր և իմ մէջ դատաւոր լինի, և տանտպատիկ նախատաս կը համարիմ ենթարկիլ այն մահուան զոր ըստ հաճոյս կ'պատրաստէ ինձի դէմ, քան թէ լսելու տիպոտիլ այս Բելիարայ մարդուն առաջարկութիւնները, ես որ առանց բարեկամի, անօգնական եմ և իրեն դերին: Բայց նա ձեր կրօնակիցն է, և իր թեթևապոյն վկայութիւնը տարաբաղդ հրէայ աղջկան մը բողոքներէն գեր ի վեր է: Ուստի ինձի դէմ եղած ամբաստանութիւնն անոր վրայ չպիտի ձգեմ, բայց անոր, այո, Պրայն ալ Պուա-Պիլպէր նոյն իսկ քեզի կոչումի'ընեմ և կ'հարցնեմ թէ արդեօք այս ամբաստանութիւնները ստուտ չէն, արդեօք որչափ հրեշային և ստուտ ու պատիր նոյնչափ դժնդակ չէն:

Ռեբեկա պահ մը լռեց. ամենուն աչքը Պուա-Պիլպէրի կողմը դարձան: Լռութիւն կ'պահէր նա:

— Խօսէ — կրկնեց նա — եթէ դու մարդ ես, եթէ դու քրիստոնեայ ես, խօսէ, կ'աղաչեմ, կ'երդմնեցնեմ քեզ քու հազած զգեստիդ

վրայ, քու հարցդ անուան վրայ, քու պանծեցած ասպետութեանդ վրայ, քու մօրդ պատուոյն վրայ, քու հօրդ դերեզմանին և ոսկորներուն վրայ՝ կ'երդմնցնեմ քեզ ըսելու թէ այս բաները ճշմարի՞տ են:

— Պատասխան տուր անոր — ըսաւ Մեծ վարպետը — եթէ այն Թշնամին որու դէմ կ'մարտիս քեզի այժ տալու կամենայ:

Արդարև՝ Պուա-Պիլպէր ներսկ կրկին թափէն վրդոված կ'երևէր, որոնք իր կերպարանը կ'այլակերպէին. և ի վերջէ խիստ մեղմ ձայնով պատասխանեց Ռեբեկային նայելով.

— Թո՛ղթը, թուղթը:

— Վերջապէս — վրայ բերաւ Պոմանուար — ահաւասիկ վաւերական վկայութիւն մը: Այս հմայութեանց զոհը միայն այն թուղթը կարող է նուաճել որու վրայ գրուած է անշուշտ պինքը լուսեան դատապարտող հմայքը:

Բայց Ռեբեկա տարբեր կերպով մեկնեց Պուա-Պիլպէրին բերնէն դեթէ բռնի եղած խօսքը, և իր ձեռքը բռնած փոքրիկ մագաղաթին վրայ ակնարկ մը ձգելով, կարդայ արաբական լեզուով գրուած սա բառերը. Ախպեան մը ինծի: Պուա-Պիլպէրին այլանդակ պատասխանին վրայ բոլոր ժողովին մէջ պարտած զանազան մեկնութիւններն ժամանակ տուին Ռեբեկային քննել և պատուել թուղթին առանց տեսնուելու: Երբ շշուկը դադրեցաւ, Մեծ վարպետն ըսաւ.

— Ռեբեկա, այս դժբաղդ ասպետին վկայութենէ օգուտ մը չես կարող քաղել. վասն զի Թշնամին դեռ ևս անոր վրայ կ'տիրապետէ զօրապէս: Միթէ ուրիշ ըսելիք մ'ունի՞ս:

— Տակաւին ազատութիւն մ'ունիմ — ըսաւ Ռեբեկա — նոյն իսկ ձեր անաղարտ օրինաց օգտին համեմատ. իմ կեանքս՝ քանի մը ժամանակէ հետէ, թշուառ եղած է, բայց Աստուծոյ այս պարգևը չպիտի զոհեմ որչափ որ զայն պաշտպանելու համար ինձ միջոցներ ընծրհի: Ձեր ամբաստանութիւնը կ'ժխտեմ, իմ անմեղութեանս վրայ կ'պնդեմ, և իմ դատաստանս մենամարտութեամբ տեսնուելու արտօնութիւնը կը պահանջեմ՝ իմ կողմս ախոյեան մը ցոյց տալով:

— Եւ ո՞վ, Ռեբեկա — պատասխանեց Մեծ վարպետը — իր նիզակը պիտի դործածէ վհուկի մը համար, ո՞վ պիտի լինի հրէայ օրիորդի մ'ախոյեանը:

— Աստուած պիտի առաքէ ինձ ախոյեան մը — պատասխանեց Ռեբեկա — կարելի չէ որ այս ազնիւ Անկլիոյ մէջ, այս հիւրասէր, վեհանձն, ազատ երկրին մէջ, ուր այնքան ասպետներ իրենց կեանքը

վտանգի կ'դնեն պատուոյ համար, չպատուի մէկն որ արդարութեան համար մնատմարտելու յանձն չառնու: Բայց բաւական է որ ես գինուոյ փորձը պահանջեմ և ահա իմ դրաւս:

Իր ձեռքէն հանեց Ռեբեկա դեղահիւս մէկ ձեռնոցն և մեծ վարպետին առջևը նետեց այնպիսի պարզութեան և վեհանձնութեան կերպարանով մ'որ ընդհանուր զարմանք և հիացում պատճառեց:



ԻՎՈՒԽՈ ԼԸ

— Ահա կ'նետեմ իմ դրաւս,
Ծայրագոյն կիսին քու վրադ փորձելուն:
Մարտական յանդգնութիւնս,
Բիւրդո Բ

Նոյն ինք Ղուկաս Պօմանուար յուզուեցաւ Ռեբեկայի դէրաղնիւ և վեհանձն ընթացքին վրայ: Ա՛յս մարդն՝ ի բնէ անզուարթ և ոչ իսկ խիստ չէր. բայց ինքնին աշխարհային կեանցը անհաղորդ և բարձր, այլ պարտուց թիւր դիտակցութեամբ շարժեալ՝ իր սիրտն աստիճանաբար կարծրացեր էր իր վարած ճգնաւորական կեանքը, իր վայելած բարձրագոյն իշխանութեամբ և անհատներն նուաճելու և հերեսուէ թիւնը բնաջինջ ընելու կարծեցեալ հարկէն ստիպեալ: Իր կերպարանին սովորական խստութիւնը մեղմեց իր առջևը դանուող չքնաղ էակին նայելով աննասիլ, միայնակ, անօգնական էակ մ'որ ինքզինքն այնքան արիութեամբ և հաստատամտութեամբ կ'պաշտպաներ: Պօմանուար երկու անգամ խաչ հանեց իրեն մարդ մ'որ իր սրտին թոյլութենէն կը կասկածի, մինչդեռ այնպիսի պարագայից մէջ խստութեան կողմէ իր սրին պողպատին կ'նմանէր այն: Վերջապէս խօսեցաւ և ըսաւ.

— Օրիորդ, եթէ քեզի համար ղպացած արդահատութիւնս քու ձեռասարեր արուեստիդ հնարից արդիւնքն է, մեծ է քու յանցանքդ: Բայց լաւ ևս ունիմ իմ սրտիս բնածին մէկ ղպացումը հաւասարելի զգայի, որ կ'հեծեծէ քեզի պէս շնորհալի էակի մը կորստեան անօթի մը դառնալուն:

Ապաշաւէ, աղջիկս, հնայդդ խոստովանէ, Թող քու սուտ կրօնդ ընդունէ այս սուրբ նշանակը, և այն ատեն Թերևս այս և միւս աշխարհին մէջ երջանիկ լինիս: Ամենախիստ կուստոսն մը մանելով ժամանակ պիտի ունենաս աղօթելու և արժանի ապաշխարութիւն մ'ընելու, և այս ապաշաւդ երբէք քեզի վիշտ չպիտի պատճառէ: Ա՛յս ըսածս ըրէ և ապրէ: Մովսիսի օրէնքն ինչ ըրաւ քեզի համար որ անոր համար մեռնելու կամենաս:

— Իմ հարցս օրէնքն է այն — պատասխանեց Ռեբեկա — այն օրէնքն Սինա լերան վրայ, վայրկենապայծառ ամպերու և շանթերու մէջ արուեցաւ անոնց: Դուք եթէ քրիստոնեայ էք՝ կ'հաւատաք այս բանիս, միայն կարծէք թէ անդորձադրելի է, և սակայն այս օրէնքն տարվեցաւ նոյներն երբէք այդպէս չըսելն ինձ:

— Թող մեր մատրանապետը յառաջ անցնի — ըսաւ Պօմանուար — և այս յամառ անհաւատին ըսէ . . . :

— Ներէ ինձ — ըսաւ Ռեբեկա անուշութեամբ — եթէ խօսքդ կ'ընդհատեմ: Ես օրիորդ մ'եմ, կրօնիս վրայ վիճաբանելու անկարող եմ, բայց անոր համար կրնամ մեռնիլ, եթէ Աստուած այսպէս կամեցաւ: Շնորհ ըրէ իրեն պատասխան մը խնդրելու ախոյենի առաջարկութեանս մասին:

— Տուէք ինձ իր ձեռնոցն — ըսաւ Պօմանուար: — Ահաւասիկ արդարև — շարունակեց նա ձեռնոցի նօսր հիւսուածքը դիտելով — ահա խիստ դիւրաբեկ դրաւ մը մնահաւոր մենամարտութեան մը դէմ: Դ'նայիս, Ռեբեկա, որչափ որ այս նօսր ու փափուկ ձեռնոցը մեր երկաթէ ծանր թաթալանները կ'տարբերի, նոյնչափ քու գլուխդ Տաճարին դասէն վար է. վասն զի մեր Ուխտին դէմ դիմադրաւ կ'կենաս:

— Նեռէ իմ անմեղութիւնս կշռին մէջ — վրայ բերաւ Ռեբեկա — և մեռաքսէ ձեռնոցը պիտի յաղթէ երկաթէ թաթալանին:

— Ուրեմն կ'պատրաստ միշտ մեղքդ խոստովանելու մերժելդու, և այդ նեռած յանդուգն մենամարտդ կ'պահպանես:

— Կ'պահեմ, տէր իմ — պատասխանեց Հրէայ օրիորդը:

— Թող այդպէս լինի, յանուն երկնից — վրայ բերաւ Մեծ վարպետն — և Թող Աստուած իրաւունքը պաշտպանէ:

— Ամէն — պատասխանեցին Մեծ վարպետին բոլորտիքը կեցող հրամանատարներն և այս բառը բոլոր հանդիսականները կրկնեցին հանդիսապէս:

— Եղբարք իմ — ըսաւ Պօմանուար — դիտէք որ կարող էի այս

ինկան մենամարտութեան փորձն ընելու համար խեղդած չնորհը մերժել, բայց՝ թէև հրեայ և անհաւատ մ'է, սակայն օտարական է և առանց պաշտպանի, և քաւ լիցի որ մեր արդար օրինայ պաշտպանութիւնը հայցելէն ետև՝ զայն մերժէինք: Ասկէ զատ՝ մենք ասպետ և զինուոր ենք նոյնպէս և կրօնաւոր մարդիկ, և մեզի մեծ ամօթ պիտի լինէր, եթէ որ և է բարուրանօք՝ մերժէինք մեղ առաջարկուած պայքար մը: Այս վիճակին մէջ կ'մնայ ուրեմն գատը: Ռեբեկա, Եօրքցի Իսահակի դուստր, բազմաթիւ և կասկածելի պարագաներու մէջ՝ ամբաստանեալ կախարդութիւններ ընելուն մեր նուիրական Ուխտին մէկ աղնիւ ասպետին դէմ, և պայքար կ'պահանջէ իր անմեղութիւնը հաստատելու համար: Իմ վերապատուելի եղբարքս, ինչ է ձեր խորհուրդը, որմէ կ'ուզէք որ յանձնենք պայքարին գրաւը, մեր սահմանելիք անձն պատերազմի դաշտին վրայ պիտի լինի նաև մեր ախոյեանը:

— Պրայն տը Պուա–Կիլբէրի, որու կ'պատկանի յատկապէս այս գատն — ըսաւ Կուտալբիդ Հրամանատարն — որ միանգամայն ամենէն քաջ զինուէ թէ որ կողմն է ճշմարտութիւնն այս գործին մէջ:

— Բայց — գոչեց Մեծ Վարպետը — եթէ մեր Պրայն եղբայրն հմայից կամ կախարդութեան ներգործութեան ներքո՞ է: Մեր դիտողութիւնը պարզապէս զգուշութեան համար կ'ընենք. վասն զի այս գատն, և կարևորագոյնն իսկ անկից աւելի ապահով բազիւ մը չենք կրնար յանձնել:

— Վերապատուելի Հայր — պատասխանեց Կուտալբիդ Հրամանատարը — չկայ հմայ մ'որ կարենայ ներգործել Աստուծոյ դատաստանին համար մաքառելու ներկայացող ախոյենին վրայ:

— Իրաւացի է խօսքդ, եղբայր — ըսաւ Մեծ Վարպետը: — Ալ պէրդ Մալվուազէն, Պրայն–տը–Պուա Կիլբէրի տուր մենամարտութեան գրաւը: Եղբայր — շարունակեց նա Պուա–Կիլբէրի դառնալով — կ'պատուիրեմ քեզ արիաբար պատերազմելու, և աներկիւղ ենք որ մեր արդար գատը պիտի յաղթանակէ: Եւ դու, Ռեբեկա, մինչ դիր, քեզի երեք օր կ'շնորհեմ՝ այսօրէն համրելով, որպէս զի ախոյեան մը գտնես:

— Շատ կարճ է այդ պայմանաժամը — պատասխանեց Ռեբեկա — և չեմ կարող ես, որ տարակրօն օրիորդ մ'եմ, գտնել ախոյեան մ'որ իմ գատիս համար մաքառի և իր պատիւն ու կեանքը վտանգի մէջ դնէ, այնպիսի ասպետի մը դէմ որ փորձ զինուորի մը համբաւն ունի:

— Այդ պայմանաժամը չենք կրնար երկարաձգել — վրայ բերաւ Մեծ Վարպետը — պէտք է որ պատերազմը մեր առջև կատարուի, և ուրիշ կարևոր գործեր կ'սպասեն մեզ շրջրդ օրն ասկից մինչև:

— Թող Աստուծոյ կամքը լինի — պատասխանեց Ռեբեկա: — Ես իմ վստահութիւնս անոր վրայ կ'դնեմ, որու վայրկեան մը բաւական է զիս ազատելու համար որչափ դար մը:

— Դու լաւ խօսեցար, օրիորդ — ըսաւ Մեծ Վարպետը — բայց դիտենք թէ ո՞վ կարող է լուսոյ հրեշտակի մը կերպարանն առնուլ: Արդ՝ կ'մնայ որոշել մենամարտութեան տեղն և եթէ հարկ լինի, գործադրութեան: Ո՞ւր է տաճարատանս հրամանատարը:

Ալպէրդ Մալվուազէն միշտ Ռեբեկայի ձեռնոցը բռնած, տաք տաք Պուա–Կիլբէրի կ'խօսէր բայց ցած ձայնով մը:

— Ի՞նչպէս — գոչեց Մեծ Վարպետը — միթէ ձեռնոցը չուզէը ընդունիլ:

— Պիտի ընդունի, ընդունեցաւ, վերապատուելի Հայր — վրայ բերաւ Մալվուազէն՝ անոր վերարկուին ներքև սահեցընելով ձեռնոցը: — Իսկ մենամարտի վայր՝ յարմարագոյն կ'սեպեմ Սուրբ Գէորգի մրցարանն՝ որ տաճարատանս սեպհականութիւնն է, և մեր զինուորական մարզանաց համար կ'պատրաստուի:

— Շատ լաւ — ըսաւ Մեծ Վարպետը: — Ռեբեկա, ահա այն մրցարանը պիտի կոչես ախոյեանդ, և եթէ չկարենաս բերել, կամ եթէ Աստուծոյ դատաստանով քու ախոյեանդ պարտուի, այն ատեն իբրև վհուկ պիտի մեռնիս, այս է ահա մեր վճիռը: Թող մեր այս դատաճինքն արձանագրուի և բարձր ձայնով կարդացուի որպէս զի ոչ ոք չառարկէ թէ այս մասին իբրև անտեղեակ էր:

Մատրանապետներէն մին որ ժողովին իբրև դրագիրներէն մին կը պրծէր, այս հրամանն իսկոյն արձանագրեց խոշոր տումարի մը մէջ որ Տաճարի ասպետներուն արարքը կ'պարունակէր՝ երբ հանդիսապէս այս պիսի պարագայից մէջ դումարուէին. երբ գրուածը լմընցուց, միւսը բարձրաձայն կարդաց Մեծ Վարպետին վճիռը, որ նորմանական դաղղիարէնէ թարգմանուելով այսպէս գրուած էր.

«Ռեբեկա, հրէուհի մը, Եօրքցի Իսահակին դուստրը, կախարդութեամբ, նոյնպէս հմայութեամբ և ուրիշ եսերելի յանցանօք ամբաստանեալ լինելով՝ որպէս թէ գործած լինի Սիօնի տաճարին ամենասուրբ Ուխտին մէկ ասպետին դէմ, այս ամբաստանութիւնն ուրացաւ և պնդեց թէ այս մասին տրուած վկայութիւնը սուտ, անօրէն և շինծու է, և թէ իր անձն ըստ օրինի պաշտպանելու ունեցած արտօնու-

թեամբը, ըստ որում ինքն անկարը է մենամարտելու, կ'առաջարկէ իր կողմէ ախոյեան մը սահմանել, որ ասպետապէս իր պարտքը պիտի կատարէ, ինչ զէնքով որ ուզուի, պատասխանատուութիւնն իր վրայ առնելով։ Արդ՝ իր զբաղ Պրայն–տը–Պուա–Կիլբէր անխիղճ ասպետին ձեռքն է, որ Ուխտին և իր կողմէ պիտի մենամարտի, վհուկին չարահնար վարմունքէն ինքն ալ նախատինք և ջնաս կրելուն համար։ Հետևապէս՝ Պօամանուար Լուկաս մարքիզ, վերապատուելի հայր և հզօր իշխանն՝ թոյլ տուաւ որ այս մենամարտութիւնը տեղի ունենայ, և սոյն պայքարին համար երրորդ օրը սահմանեց. մրցարանն Սուրբ Գէորգ կոչուած տեղը լինելով, որ Գէնրլզովի ապարանքն մօտ կ'գտնուի։ Եւ Մեծ Վարպետը կ'հրամայէ որ ամրաստանեալն իր ախոյենին միջոցաւ անպ սերկայանայ՝ եթէ չկամիր մահու դատապարտուիլ, իբրև կախարդութեամբ ամբաստանեալ անձ մը. նոյնպէս ամբաստանը պարտաւոր է ներկայիլ, թէ ոչ իբրև վատ պիտի նկատուի և չներկայութենէ պիտի դատապարտուի. իսկ մեր աղնիւ աէրն ու զերապատուելի հայրն որոշեց որ այս մենամարտն իր առջև կատարուի, այսպիսի պարագայի մէջ հաստատեալ պատիւելի սովորութեան հետևելով. Ասուած անշուշտ արդար դատաստան պիտի ընէ։»

— Ամէն — ըսաւ Մեծ Վարպետը։

Եւ այս բառը բոլոր Հանդիսականներն երեք անգամ կրկնեցին։

Ռեբեկա խօսք մը չըսաւ, այլ միայն աչերն երկինք բարձրացուց և ձեռքը ծալլելով՝ մէկ վայրկեան չափ այս դիրքով անշարժ մնաց։ Ապա Մեծ Վարպետին յայտնեց համեստութեամբ թէ իր բարեկամայ հետ աղաւորէն հաղորդակցելու արտօնութիւն տուի իրեն, որպէս զի իր վիճակին անոնց ծանուցանէ, և եթէ հնար է, իր կողմէն կռուելու համար ախոյեան մը դանէ։

— Խնդիրդ արդար և օրինաւոր է — ըսաւ Մեծ Վարպետը։ — Հաստատիմ կարճած մէկ պատգամաւոր ընտրէ քեզի որ սա բանտիդ մէջ կրնայ աղաւթութեամբ հետդ բանակցիլ։

— Եթէ այս տեղ չկայ անձ մը — ըսաւ Ռեբեկա — որ արդար դատի մը սիրով կամ մեծ վարձք մ'ընդունելու յուսով դժբաղդ էակի մը պատգամաւորը լինելու յանձն առնու։

Ամէնքը լուռ կեցան, վասն զի՝ Մեծ Վարպետին ներկայութեան՝ ոչ ոք անվանդ համարեց, զրպարտեալ կալանուհւոյն համակրութիւն ցոյց տալու, առ ահի որ հրեութեան հակամէտ չհամարուի։ Ոչ միայն արդահատութեան զգացում մ'այլ վարձատութեան յոյսն անգամ այս երկիղը չփարատեց։

Ռեբեկա պահ մ'անհնարին անձկութեան մէջ մնաց և ըսաւ դողդոջ.

— Միթէ իրա՞ւ է այս, միթէ Անկլիոյ հողին վրայ իրօք պիտի գրկուի՞մ ինձ մնացած ազատութեան մէկ գոյն բաղդէն, պատերազմ մը չտեսնելով զոր մարդ ձգրտպատրաստ մ'անդամ չզլանար։

Վերջապէս՝ Հիւկ, Սնէլի որդին պատասխանեց.

— Ես հաշմատ մարդ մ'եմ, բայց եթէ փաքր ինչ ի'շարժիմ, այս շարժումն անոր պատերը օդնութեան պարտաւոր եմ։ Ես պիտի լինիմ քու պատգամաւորդ — յարեց նա Ռեբեկային դառնալով — որչափ որ կարիամ մարդ մը կարող լինիլ։ Երանի՛ թէ իմ լեզուս ըրած ինձան ոտիկս արագաշարժութեամբ պարմանելու կարող լինէի։ Ափսո՛ս, երբ ես քու ազգմանիրդ թիւնդ գովեցի, բնաւ չէի կասկածեր որ քեզ վտանգի կ'ենթարկեմ։

— Աստուած — ըսաւ Ռեբեկա — ամէն բանի անօրէն է. կարող է Յուդայի գերութեան վերջ տալ, նոյն իսկ տիարապոյն դործքիդը դործածելով։ Իր պատգամն հաղորդելու համար՝ խղտնդն իսկ բաւէին չափ արքնթայ է։ Եօրքի Խաչակիր վիճակ է. ահա քեզի դրամ պէտք եղած ձին և բաները առանալու համար։ Այս գիրն Խաչակիրն տուր։ Զգի՛ տեմ թէ արդեօք երկնային ոգին կ'ներշնչէ ինձ, բայց վստահ եմ որ այս մահտամբ չսիրած միտիմ, և ախոյեան մ'իմ պաշտպանութեանս պիտի հատնի։ Երթաս բարեաւ. իմ կեանքս կամ մահս քու արագութենդ կախումն ունի։

Գեղացին թուղթն առաւ, որ միևնակ երբայերէն քանի մը տող կը պարունակէր։ Ամբողջէն շատերը կ'ուզէին յորդորել զինքն որ այնպիսի կասկածելի թուղթ մը ձեռք չառնու, բայց Հիւկ միտքն հաստատ դրեր էր իր բարերարուհւոյն ծառայութիւն մ'ընելու։ — Նա իմ մարդինս պատեց — ըսաւ նա, և վստահ էր որ հրեուհին իր հոգին վտանգելու միտում չունէր։ — Պիտի երթամ — յարեց նա — իմ դրայի՛ Պրիթանի լաւ ձին փոխ ուզելու և Եօրք պիտի հասնիմ այնքան սուղ ժամանակի մէջ որչափ որ կարելի է մարդու և հեծանելիի մը։

Բայց յաջող դիպուածով մը՝ Հիւկ այնչափ հեռու դնալու պէտք չունեցաւ, վասն զի տաճարատունէն քառորդ մղոնի չափ հեռու՝ երկու ձիաւորներու հանդիպեցաւ, որոց հագուստն ու խոշոր դլխանոցները տեսնելով հասկցաւ որ հրեայք են. իսկ երբ աւելի մօտեցաւ, դիտեց որ անոնց մին իր հին աէրն էր, Եօրքի Խաչակիր։ Միւսն էր պին Սամուէլ ռաբբին. և երկուքնին ալ իմանալով որ Մեծ Վարպետը ժողով դումարեր է վհուկուհի մը դատելու մտօք, իրենց համաձայնութեանը ներածին չափ տաճարատանը մօտեցեր էին։

— Եղբայր Պէն Սամուէլ — կ'ըսէր Իսահակ — հոգիս վրդոված է և չգիտեմ ինչ պատճառաւ: Այս դիւթամթեան ամբաստանութիւնն, ստէպ ի գործ կ'դրուի որպէս զի մեր ժողովուրդը տանջեն:

— Սիրա առ, եղբայրդ իմ — ըսաւ բժիշկը: — Կարող ես նաղովբեցւոց հետ սակարկել և ամէն կերպով ապահարկ մնալ. այս ամբաստանութիւնը մարդկան ոգին վարողը շահն է, ինչպէս որ, կ'ըսեն, հզօր Սողոմոնի կինքը չար ոգիները կ'վարէր: Բայց դուն որ նեղուելի վրայ յենած մեզի կ'մօտենայ և կարծեմ թէ փափաք ունի ինձի խօսելու: Բարեկամ — շարունակեց բժիշկը Հիլլի ուղղելով խօսքը — իմ արուեստիս օգնութիւնը քեզի չեմ մերժեր, բայց արհեստին վրայ իղնէ ոգեղմութիւն խնդրողին Թանկ մ'անպատ չեմ տար: Կորիր ուրեմն: Միթէ սրունքդ են անդամալոյծ, ուրեմն ապրուստդ Ճարելու համար ձեռքդ աշխատէ. վասն զի, թէև անկարող ես արագաշարժ սուրհանդակ մը, կամ հոգատար հովիւ մը, կամ գինւոր մը լինելու, կամ նոյն իսկ սրտեղ տիրոջմը ծառայութեան մտնելու, սակայն զորձելու համար ուրիշ շատ արհեստներ կրնաս գտնել: Բայց դուն ինչ ուզես, եղբայր — ըսաւ նա՝ իր յորդորն ընդհատելով՝ որպէս զի Իսահակը դիտէ, որ Հիլլին տուած առմնակին վրայ ակնարկ մը նետելով խորին մտնչիւն մը հանեց, իր ջորիէն վար սահեցաւ կիսամեռ մարդու մը պէս, և պահ մ'անկենդան մնաց:

Ռաբբին այլայլելով ձիէն վար իջաւ, և իր ընկերակցին շունչ տալու համար արուեստին թելադրած գարմանները իսկոյն գործածեց: Մինչև անդամ նշարակ մը հաներ էր իր գրպանէն և անորմէ արիւն առնելու ի պատրաստուէր երբ իր անձկութեան առարկան՝ հրէայն ուշաբերեցաւ յանկարծ, բայց միայն իր գլխանոցը հեռու նետելու և իր ալեւոր գլխին վրայ հող թափելու համար էր: Բժիշկը նախ այս յեղակարծ և քուռն այլայլութիւնն խելայեղութեան վերագրելու ի մտաւ, և իր առաջին գիտաւորութեան գառնալով, վերսկսաւ իր գործիները ի պատրաստել. բայց Իսահակ շատ չանցաւ համոզեց զանի որ ի'սխալի:

— Վշտայս զաւակը — գոչեց նա — լաւ ևս էր անուանել քեզ Բէնոնի և ոչ Ռեբեկա: Ինձ համար մահդ իմ ալեւոյթս գերեզմանի իջեցնէ, մինչև որ իմ սրտիս գառնութենէ, անիծեմ զԱստուած և մեռնիմ:

— Եղբայր — ըսաւ ռաբբին սաստիկ զարմացած — միթէ դուն ևս, Իսրայէլի որդի մը, այդպիսի խօսքեր արտասանողը: Ես յուսամ որ առանց զաւակը տանելուն ի'ապրի:

— Կենդանի է — պատասխանեց Իսահակ — բայց Դանիէլին պէս, որ Պէղտիշաղար (Պաղտասար) կոչուեցաւ՝ երբ առիւծներու գուբը նետուեցաւ: Բելթարայ արքանիկայ ձեռքը գերի ընկած է և իրենց անպղծութիւնն անոր վրայ պիտի թափեն՝ առանց ծաղիկ հատակին և գերկութեան խնայելու: Ո՛հ, իմ սպիտակ գլխիս վրայ կանաչագեղ արմաւենիէ սլաք մ'էր, և Յովնանի պղպին պէս մէկ գիշերուան մէջ պիտի թոռմի: Իմ ծերութեանս զաւակը, իմ հոգւոյս հատորը, ո Ռեբեկա, իմ Յակէլիս աղջիկը, մահուան ստուերները քեզ կ'շրջապատեն:

— Բայց կարդա սա տոմսակն — ըսաւ Պէն Սամուէլ — կարելի է դեռ ևս կարող լինինք ազատումի հնար մը գտնելու:

— Դէռ կարդա — պատասխանեց Իսահակ — վասն զի իմ աչերս արտասուաց աղբիւր դարձեր են:

«Ո՛ւ Իսահակ, Անդունիխանի որդի, զոր հեթանոսները Եօբբայի Իսահակ կ'անուանեն, խնդալ և օրհնութիւն Ամենակալին քու վրայ բազմապատկի: Հայր իմ, դատապարտեալ եմ մեռնելու յանցանքի մը համար զոր իմ հոգիս չճանչեր, այս է կախարդութեան համար: Հայր իմ, եթէ հնարին է ուժեղ մարդ մը գտնել՝ որ նաղովբեցւոց սովորութեան համեմատ՝ իմ գատիս համար սրով և նիզակով մինամարտի, Գէնրլոգովի մրցարանը, ասկից երեք օր ետքը, թերևս մեր Հայոց Աստուածն անոր զօրութիւն տայ անմեղ մը պաշտպանելու, որ միայն այս օրհնութեան կ'յուսայ: Բայց եթէ այնպիսի քաջ մը չգտնուի, թող Իսրայէլի աղջկունք լան իմ վրայ իբրև իրենց մէկ ընկերուհւոյն վրայ որ կենդանի չէ, իբրև նետահար եղնկի մը վրայ, իբրև հնձողին մանգաղով կտրուած ծաղկի մը վրայ: Ուրեմն, նայէ թէ ինչ կարող ես ընել, և թէ արդեօք ազատումի հնար մը կայ: Նաղովբեցի պատերազմիկ մը կայ արդարև որ անշուշտ գիս պաշտպանելու համար պիտի գինէր, այս է Վիլֆրիտ, Սէտրիկի որդին, զոր հեթանոսները Իվանոէ կ'անուանեն: Բայց կարելի է անոր է դեռ իր գէնուզարդի ծանրութիւնը կրելու. սակայն անոր ականջին հասցուր այս լուրը, հայր իմ, վասն զի իր ժողովրդեան հզօր մարդոց մէջ մեծ հռչակ ունի, և որովհետև դերութեան բանտին մէջ մեզ ընկերակից եղած է, թերևս մեզ՝ ի նպաստ մինամարտելու անձ մը գտնէ: Եւ ըսէ անոր, ըսէ Վիլֆրիտի, Սէտրիկի որդւոյն, որ Ռեբեկա թէ ապրի և թէ մեռնի, բոլորովին անպարտ է իրեն դէմ եղած ամբաստանութենէ: Եւ եթէ Աստուծոյ կամքն է որ դուս աղջիկդ զրկուիս, այնուհետև այս աշխարհքս և անոր հոգին վրայ մի՛ բնակիր, այլ Գոդոռովա գնա, ուր եղբայրդ ապահովութեան մէջ կ'ապրի՝ գահին շքին ներքև, և նոյն իսկ Գօտպ-

որ Պէղտիշաղար (Պաղտասար) կոչուեցաւ՝ երբ առիւծներու գուբը նետուեցաւ: Բելթարայ արքանիկայ ձեռքը գերի ընկած է և իրենց անպղծութիւնն անոր վրայ պիտի թափեն՝ առանց ծաղիկ հատակին և գերկութեան խնայելու: Ո՛հ, իմ սպիտակ գլխիս վրայ կանաչագեղ արմաւենիէ սլաք մ'էր, և Յովնանի պղպին պէս մէկ գիշերուան մէջ պիտի թոռմի: Իմ ծերութեանս զաւակը, իմ հոգւոյս հատորը, ո Ռեբեկա, իմ Յակէլիս աղջիկը, մահուան ստուերները քեզ կ'շրջապատեն:

— Բայց կարդա սա տոմսակն — ըսաւ Պէն Սամուէլ — կարելի է դեռ ևս կարող լինինք ազատումի հնար մը գտնելու:

— Դէռ կարդա — պատասխանեց Իսահակ — վասն զի իմ աչերս արտասուաց աղբիւր դարձեր են:

«Ո՛ւ Իսահակ, Անդունիխանի որդի, զոր հեթանոսները Եօբբայի Իսահակ կ'անուանեն, խնդալ և օրհնութիւն Ամենակալին քու վրայ բազմապատկի: Հայր իմ, դատապարտեալ եմ մեռնելու յանցանքի մը համար զոր իմ հոգիս չճանչեր, այս է կախարդութեան համար: Հայր իմ, եթէ հնարին է ուժեղ մարդ մը գտնել՝ որ նաղովբեցւոց սովորութեան համեմատ՝ իմ գատիս համար սրով և նիզակով մինամարտի, Գէնրլոգովի մրցարանը, ասկից երեք օր ետքը, թերևս մեր Հայոց Աստուածն անոր զօրութիւն տայ անմեղ մը պաշտպանելու, որ միայն այս օրհնութեան կ'յուսայ: Բայց եթէ այնպիսի քաջ մը չգտնուի, թող Իսրայէլի աղջկունք լան իմ վրայ իբրև իրենց մէկ ընկերուհւոյն վրայ որ կենդանի չէ, իբրև նետահար եղնկի մը վրայ, իբրև հնձողին մանգաղով կտրուած ծաղկի մը վրայ: Ուրեմն, նայէ թէ ինչ կարող ես ընել, և թէ արդեօք ազատումի հնար մը կայ: Նաղովբեցի պատերազմիկ մը կայ արդարև որ անշուշտ գիս պաշտպանելու համար պիտի գինէր, այս է Վիլֆրիտ, Սէտրիկի որդին, զոր հեթանոսները Իվանոէ կ'անուանեն: Բայց կարելի է անոր է դեռ իր գէնուզարդի ծանրութիւնը կրելու. սակայն անոր ականջին հասցուր այս լուրը, հայր իմ, վասն զի իր ժողովրդեան հզօր մարդոց մէջ մեծ հռչակ ունի, և որովհետև դերութեան բանտին մէջ մեզ ընկերակից եղած է, թերևս մեզ՝ ի նպաստ մինամարտելու անձ մը գտնէ: Եւ ըսէ անոր, ըսէ Վիլֆրիտի, Սէտրիկի որդւոյն, որ Ռեբեկա թէ ապրի և թէ մեռնի, բոլորովին անպարտ է իրեն դէմ եղած ամբաստանութենէ: Եւ եթէ Աստուծոյ կամքն է որ դուս աղջիկդ զրկուիս, այնուհետև այս աշխարհքս և անոր հոգին վրայ մի՛ բնակիր, այլ Գոդոռովա գնա, ուր եղբայրդ ապահովութեան մէջ կ'ապրի՝ գահին շքին ներքև, և նոյն իսկ Գօտպ-

տէր Աարակինացւոյն Հովհաննէին ներքեւ. վասն զի Մաւրիտանացւոց անպիտանութիւնները Իսրայէլի որդւոց դէմ նուաղ անապորէն են քան թէ Անկլիոյ նաղուկներուցդ:»

Խահակ բառական հանդարտութեամբ մտիկ կ'ընէր երբ պէն Սամուէլ նամակը կ'կարդար. յետոյ վերստին սկսաւ իր ողբն ու կօծը, իր զգեստները պատռելով, գլուխը փոշի թափելով, և բայազանչութիւններ արձակելով ըստ արեւելեան սովորութեան. «Դէ՛ստր իմ, դէ՛ստր իմ, արեւոնս արիւնը, ոսկերացս ոսկրը:»

— Բայց — ըսաւ ռաբբին — քաջայո՛ր, վասն զի այդ վիշտդ օգուտ մը չունի: Ողեւորէ, և դնա այն Վիլֆիլտը գտիր, Եէսարիկի որդին: Թերեւս նա օգնէ քեզ խորհրդով կամ իր զօրութեամբը, վասն զի այն պատանին սիրելի է Բիւբատի, զոր նաղուկներդիք Աւիւծասիրա կ'անուանեն, և ձայն կ'պատի անդադար թէ նա իր հայրենի հողը դարձեր է: Կարելի է անօրէն գիր մը կ'ստանայ և կնիքն որով այն արիւնկլակ մարդոյ՝ որ Ցաճարի անունը կ'կրեն 'ի նախատինս այս սուրբ աւուրց, արդիւք իրենց անօրէն գաղափարին 'ի գործ դնելու:

— Պիտի փնտռեմ այն մարդը — վրայ բերաւ Խահակ — վասն զի բարի պատանի մ'է և Յակորայ տարագիրներու համար համակրութիւն ունի. բայց չէ կարող նա զէնք կրել և ուրիշ որ քրիստոնեայն Սիօնի տառապելոց համար 'ի մարտ պիտի վազէ:

— Կ'երեւի ինձ — ըսաւ ռաբբին — որ հեթանոսներու բնութեան անհմուտ մարդու մը պէս կ'խօսիս: Ոսկիով կարող ես դնել անոնց արիութիւնը, ինչպէս որ ոսկիով քու անձիդ ապահովութիւնը պիտի գնես: Սիրտ առ, և ձամբայ ելլէր այն Վիլֆիլտա Իվանոէին փնտռելու. ես ալ իմ կողմէս պիտի աշխատիմ, վասն զի մեծ մեղք մը պիտի գործեմ եթէ քեզ այդ թշուառ վիճակիդ մէջ անօգնական թողում: Ծօրք քաղաքը պիտի գնամ. անդ շատ մարտիկներ և ուժեղ անձեր գտնուրտած են և տարակոյս չունիմ որ քու աղջկանդ համար մենամարտելու պատրաստ մէկը պիտի գտնեմ. վասն զի ոսկին է անունդ Աստուածն, և ոսկիի համար ոչ միայն իրենց կեանքն այլև իրենց հոգիները տալու հակամէտ են: Եղբայր, քու կողմէդ ընելիք խոստումներս 'ի հարիէ կատարելու չպիտի զժկամակիս:

— Ի հարիէ, եղբայր իմ — պատասխանեց Խահակ — և օրհնեալ չլինի Երկին որ իմ թշուառութեանս մէջ ինձ միխթարիչ մը ղրկեց: Սակայն խնդրն անունդ լռդիրը կատարելու մի ղիջանիր, վասն զի այն անիծեալ աղջկան քնութիւնն է, ինչպէս որ պիտի դիտես, ոսկիներ պահան-

ջել և ապա արծաթով գոհ լինիլ: Դարձեալ քու դիտցածիդ պէս շարժէ, վասն զի այս գործն իմ խելքս կ'խանգարէ, և ինչ օգուտ պիտի ունենայ ոսկիս եթէ իմ սիրասուն աղջիկս 'ի կորուստ մատնեմ:

— Երթաս բարեաւ — ըսաւ բժիշկը — և երանի՛ թէ սրտիդ փափաքներն 'ի կատար հասնին:

Ջերմակին իրարու փարեցան, և մէն մին իր բունելիք ուղին ընկաւ: Անպամալոյծ դեղացին քիչ մ'ատեն կայ առաւ որ աչքով անոնց հետեւի:

— Շուն հրեաներ — գոչեց նա վերջապէս — ինձ ուշադրութիւն չընին որպէս թէ ստրուկ մը կամ թուրք մը լինէի: Կարող էին մէկ երկու արծաթ նետել ինձ: Սակայն չէի այն տոմսակն անոնց բերելու՝ հմայութեան վանդակին մէջ ընկնելով, ինչպէս որ շատեր ինձ ըսին այս բանս: Եւ ինչ փոյթս է նորատի աղջկան ինձ տուած ոսկին եթէ Ջատկին քահանայիկն յանդիմանելիմ և եթէ անոր կրկնապատիկ գրամ տալու սպասելիմ որպէս զի հետը հաշտուիմ, և ասկէ զատ՝ եթէ բոլոր կենացս մէջ «Հրեից սուրհանդակը» կոչուիմ, ինչպէս որ շատ հաւանական է: Կարծեմ թէ իրօք թողլոյ գիս այն աղջիկն երբ անոր մօտեցայ, բայց նոյն փորձանքին հանդիպած են անոր ամէն մօտեցողները: Ոչ ոք կարող է անոր բան մը մերժելու և հիմակ ես պատրաստ եմ իմ գրպակս ու գործիներս զոհել անոր կեանքն ազատելու համար:

ԳԼՈՒԽ ԼԸ

Ո՛ օրհորդ, որչափ որ պաղ ես և անագորոյն,
Ինծ ալ սիրտ գոռոզ է քոյդ հանգոյն:

ՍԸՎԱՐՏ

Ռեբեկայի պատաստանին տրուած օրուան հետեւեալ վերջալուսին էր, եթէ այս անօրէնութիւնը դատաստան կրնայ կոչուիլ, որ իրեն բանտին դուռը մեզմ հարուած մը լսելի եղաւ: Կալանուհին չվրդովեցաւ այն հարուածը, վասն զի նոյն պահուն՝ իր կրօնին պահանջման համեմատ՝ երեկոյեան աղօթքն ընելու զբաղած էր, և ի՛սաւորեր այն շարականով զոր անկլիարէնի թարգմանելու փորձ փորձեցինք:

Երբ Իսրայէլ, Տիրոջ սիրելին,
Ելաւ դնաց դերութեան երկրէն,
Իր հարցն Աստուած շարժէը առաջին,
Սիւն ուղեցոյց, ամպոտ բոցեղէն։
Օրն՝ի բուն ընդ երկար շաւիղն
Կոթող ամպոտ ծանրօրէն սահէը.
Իսկ պիշերային ծիրանի աւազն
Արաբիոյ՝ հրավայր բեկբեկէը։

Անդ դովաբան ձայն հանէը սաղմոս,
Փող և թմբուկ պատասխանէը դոռ,
Անդ դստերքն Սիօնի հառայն,
Երգէին ընդ երեցն ու ղևտոր։
Զիք այժմ հրաշք՝ մեր թշնամւոյն ահ,
Հէք Իսրայէլ դնայ մենաւոր.
Մեր հարք մոռյան շաւիղըդ անահ,
Ո՛ Տէր, և դու թողեր մեզ անզօր։

Բայց դեռ ներկայ՝ մեզ միշտ անտես այլ,
Երբ ջինջ փայլի օր աւետալի,
Քո յիշատակ թող ձգէ մեայլ
Որ պատկեն նշոյլ դոյն ինչ մեղմի։
Իսկ Յուդայի, ահ, վրայ Ճամբուն
Ստուեր, մրրիկ երբ իջնէ անդուլ,
Մի՛ զարմանար, այլ համբերէ դուն,
Մեզ լուսաւորէ, մի առներ մեզ կուլ։

Բաբելոնի ափունքը՝ մեր քնար
Թողինք՝ի խաղ բռնաւորներուն,
Համր են մեր վին, թմբուկ և փողար,
Անվառ է խունկ՝ վրայ մեր խորանի։
Բայց դու ըսիր. «Արիւն նոխազի,
Ճան խոյի մեծ բան չեն արժեր,
Այլ հեզ սիրտ՝ մի սիրտ՝ մի հլու հոգի,
Հաճոյ են ինձ և ընտիր զոհեր։»

Երբ Ռեբեկայի շարականին յետին հնչիւնը նուաղեցաւ, դրան վերստին զարկին թեթեւակի։ — Ներս մտիր — ըսաւ նա — եթէ բարեկամ մ'ես. իսկ եթէ թշնամի, քու մուտքդ արգիլելու միջոցը չունիմ։

— Ես — ըսաւ Պրայն-ար-Պուա Կիլզէր՝ սենեակը մանելով — բարեկամ եմ կամ թշնամի, Ռեբեկա, և այս բանս մեր տեսութեան արդիւնքէն կախում ունի։

Այս մարդուն աչքէն շուարելով որու վարշուէր սէրն իր աղէտից բուն շարժառիթը կ'սեպէր, Ռեբեկա շփոթ և զգուշաւոր, այլ անվհեր կերպով մը՝ սենեկին ներքնադոյն անկիւնը քաշուեցաւ, որպէս թէ կարելի եղածին չափ հեռու նահանջել կամէր, բայց միտքը հաստատ դնելով դիմադրել երբ նահանջն անարգիւն մնար։ Ուստի գլուխը վերցուց և չէ թէ երկչոտութիւն այլ անյողդողդ դիրք մը բռնեց. կ'երևէր թէ չէր ուզեր կռիւ գրգռել. բայց երբ սկսէր իր բոլոր ուժովը յարձակման դէմ դնելու պատրաստ էր։

— Ռեբեկա, իջնէ ենկնչելու բնաւ պատճառ մը չունիս — ըսաւ տաճարականը. կամ եթէ կ'ուզես որ աւելի բացայայտ ըսեմ, այժմ իջնէ վախնալու տեղի չունիս։

— Տէր ասպետ, ես քեզնէ չեմ վախնար — պատասխանեց Ռեբեկա, թէև իր ընդհատ ձայնը կարծես թէ սուտ կ'հանէր իր լեզուին դիւցազնական շեշտը — իմ բոլոր յոյսս Աստուծոյ վրայ է, և քեզնէ վախ չունիմ։

— Հարկ չկայ — պատասխանեց Պուա-Կիլզէր ծանրաբար — իմ նախորդ չիմարական փորձերէս այժմ երկնչելու պէտք չունիս։ Պահակներ կան քեզի մօտ՝ որոց վրայ ես իշխանութիւն մը չունիմ։ Պաշտօն ունին անոնք քեզ մահուան տանելու, Ռեբեկա, սակայն չպիտի թողուն որ նախատանս նոյն իսկ իմ կողմէս, եթէ երբէք զայրոյթ և իրօք զայրոյթ է, այն աստիճանին հասնի։

— Օրհնեալ լինի Աստուած — ըսաւ Ռեբեկա — մահն իմ երկիւղներէս ամենէն թեթեւն է այս ահիրներու քարայրին մէջ։

— Անշուշտ — պատասխանեց տաճարականը — մահուան տեսիլն անվհեր հոգի մը շուտով կ'ընդունի, երբ անոր շուխլը յանկարծական և բաց է. նիզակի հարուած մը, սրի վէրք մ'ինձի համար փոքր բաներ են, իսկ քեզի համար բարձր աշտարակէ մ'անկումը, կամ սրածայր գաշոյնի մը ծայրն՝ բնաւ ահ ու դող չեն պատճառեր քեզ երբ բաղդատենք այն տանջանքին հետ զոր անպատուութիւն կ'սեպենք։ Քալ նշա-

նակէ ըսածս, Ռեբեկա, կարելի է որ պատուոյ վրայ ունեցած զաղա-փարներս քու ունեցածներէդ նուազ ցնորական չեն, բայց երկուքիս ալ պիտենք անոնց համար մեռնիլ:

— Ողբերգի մարդ — ըսաւ հրէայ օրիորդը — միթէ կեանքդ այն-պիսի սկզբունքի համար վտանգելու սոխպուածծ ես որոյ ճշմարտու-թիւնն ուղիղ գաղտողութիւնդ չճանչեր: Արդարև՝ զանձդ տալ է այն բանին համար որ հացի չվերածուիր. բայց այդպէս մի դատեր դիս: Քու միտքդ կրնայ այլայլիլ մարդկային կարծեաց յեղյեղուկ ալեաց հա-մեմատ, իսկ իմս գաբերու ժայռին վրայ անսասան կեցած է:

— Լուսնի՛ն, նորատի օրիորդ — պատասխանեց տաճարականը — այդպիսի խօսքեր այժմ անպատեհ են: Դու գաղտպարտեալ ես՝ չէ թէ յանկարծական և գիւրին մահուամբ մեռնելու, ինչպէս որ թշուառու-թիւնը կ'ընտրէ և յուսահատութիւնը զոյն կ'փնտռէ, այլ ծանր, ահ-ռելի, երկարատև մահուամբ՝ այն բանին համար զոր այս մարդկան դիւական մոլեռանդութիւնը յանդգնիդդ կ'անուանէ:

— Եւ որո՛ւ, եթէ այս է ձակատագիրս, որո՛ւ պարտաւոր եմ զոյն — ըսաւ Ռեբեկա — ինչ ապաքէն այն մարդուն որու դաղանաբարոյ և ինքնասէր զգացումն զիս այս տեղ քաշքշեց, և որ այժմ՝ ինձ անյայտ պատճառաւ մը, իրեն ահարկու նկարագրելու կ'ձգտի այն վէճին ո-րու մէջ զիս զլորեց:

— Մի՛ կարծեր — ըսաւ տաճարականն — որ ես կամովին յանձնեցի քեզ. դարձեալ պատրաստ եմ իմ լանջքիս որ և է վտանգէ պահպանել քեզ եռանդագին, ինչպէս որ Գօդրիլլոգօնի դղեկին մէջ քեզի դէմ ար-ձակուած նետերէն վահանս պաշտպանեց քեզ:

— Եթէ անմեղիս պաշտպանելէդ դիտաւորութիւնդ — ըսաւ Ռե-բեկա — քեզ շնորհապարտ պիտի մնայի. բայց ընդ հակառակն՝ այնքան ատելի այդ արժանիքդ մէջ բերիր, որ ահա կ'ըսեմ քեզ կեանքն աչքիս չէ, եթէ այդ քու խնդրած գնովդ պիտի վայելեմ:

— Վերջապէս այդ յանդիմանութեանդդ, Ռեբեկա — պատասխա-նեց Պուա—Պիլպէր — ես ալ իմ վիշտս ունիմ և չեմ հանդուրժեր որ կշտամբանքդ աւելի ևս սաստկացընեն զանոնք:

— Ուրեմն, ի՞նչէ միտքդ, ասպետ — հարցուց հրէայ օրիորդը — համառօտ յայտնէ. միթէ նպատակդ քու պատճառած թշուառու-թեանդ ականատես վկայ լինել չէ: Շուտ բացատրէ ինձ, և եթէ այս-պէս է, թոյլ տուր դիս իմ սև բաղդիս. մահուան և յաւիտենականու-թեան մէջ եղած քայլը կարճ բայց սոսկալի է. քիչ մը ժամանակ ու-նիմ միայն մահուան պատրաստուելու համար:

— Ա՛նայիմ, Ռեբեկա — ըսաւ Պուա Պիլպէր — որ դիս կ'ամբաս-տանես իրեն պատճառ աղէտիդ՝ որոյ առաջն առնուլ շատ կ'փափա-քէի:

— Ասպետ — ըսաւ Ռեբեկա — չէի համձներ քեզ յանդիմանել, բայց միթէ ճշմարիտ չէ որ քու անզգուշդ տափանայդ հետևանքն է իմ մահս:

— Ա՛խաղիս, կ'սխալիս — ըսաւ տաճարականը շտապով — եթէ դիս պատճառ սեպես այնպիսի բանի մը զոր ոչ դուշակել և ոչ արգիլե-լու կարողէի: Միթէ կարծէի դուշակել այն խելայեղութիւն դալուստը, որուն մոլեգնին արիւնծարան մէկ քանի դործերը, և իրեն պէս ինքնա-չարչար ճգնաւորի մը յիմարներու տուած գովեստները բարձրացուցին դինքն իր բնիկ արժանիքէն վեր, ուղիղ բանէն վեր, իղձէ վեր, և մեր Ուխտին հարիւրաւոր ասպետներէն վեր, որոնք աղատ մարդոց պէս կը խորհին և կ'ղգան և վերծ են այն մոլեռանդ նախապաշարումներէ որ Մեծ վարպետին բոլոր դործոց և կարծեաց շարժառիթներն են:

— Եւ սակայն — ըսաւ Ռեբեկա — դու իրեն դաղտաւոր կանդնեցար իմ վրայ, դու որ դիտես թէ անմեղ, բոլորովին անմեղ եմ, դու աջա-կից եղար դաղտապարտութեանս, և եթէ լաւ խնայայ, դու ինքնին զի-նուք պիտի մնամտրտիս իմ յանցանքս հաստատելու և պատիժս ապա-հովելու:

— Հաւերժութի՛ւն, օրիորդ — պատասխանեց տաճարականը — չկայ ապդ մ'որ ձերինին պէս ժամանակին համակերպելու արուեստը դիտնայ, և իր նաւն այնպէս վարէ՝ որ ներհակ հովերէն իսկ օդուտ քաղէ:

— Ողբալի է այն ժամն — ըսաւ Ռեբեկա — որ Իսրայէլի տան այս արուեստը սորվեցուց: Բայց դժբաղդութիւնը սիրտը կ'ծռէ ինչպէս կրակը կ'կակղէ պողպատը, և անունք որ ինքնիշխան տէր չեն, և աղատ ու անկախ երկրի մը բնակիչները լինելէն դադրեր են, պէտք է որ օ-տարայ առջև խոնարհին: Ասպետ, այս անէծքը մեր վրայ է, և ար-դարև մեր յատուկ անխոհեմութեան և մեր հարց անվիաբանութեան արդիւնքն է այս: Բայց դուք, դուք որ աղատութեան վրայ կ'պարծիք՝ իրեն ծննդեան իրաւունք մը, որչափ աւելի մեծ յանցանք կ'դործէք երբ ուրիշներուն նախապաշարմանց առջև կ'խոնարհիք ձեր յատուկ համոզման հակառակ:

— Քու խօսքդ դառն են, Ռեբեկա — ըսաւ Պուա Պիլպէր անհամ քեր շրջելով սեղանին մէջ — բայց ես չեկայ աստ փոխադարձ յանդիման-

ութիւններ ընելու։ Գիտցիր որ Պուա Կիլպէր որ և է մարդու մ՚առջև չծռիր, թէև երբեմն պարագաները կ՚յորդորեն զինքն իր խորհուրդն պլպլելու. իր կարքը լեռէն հոսող սահանքին կ՚նմանի, որու թերևս պահ մ՚ընթացքը շեղի, բայց հուսկ ուրեմն ովկիանոս կ՚թափի։ Այն թուղթն որով ախոյեան մը խնդրել կ՚առաջարկէին քեզ որմէ՞ կարծես թէ եկաւ ձեռքդ եթէ ոչ Պուա Կիլպէրի կողմէ. ոճ կրնար անորմէ աւելի հոգ տանիլ քու վրայ։

— Կարճառեւ դադար մ՚է այդ որ քանի մը վայրկեան անխուսելի մահը կ՚յապաղէ — պոչնչ Ռեբեկա — միթէ այսչափ միայն կարծիքիր ընել այնպիսի անձի մը համար՝ որու դլուխն այնչափ փորձանք բայիր և ղերեզմանին դուռը հասուցիր։

— Ո՛չ, օրիորդ — ըսաւ Պուա Կիլպէր — միայն այսչափ ընել չէր իմ նպատակս։ Եթէ այն մոլեռանդ խելայնորն ու յիմար Կուտալբիդ չմիջամտէին, որ տաճարական մը լինելով կարծէ թէ մարդասիրութեան սովորական կանոնայ համեմատ կ՚շարժի, այն ատեն Ուխտին Պաշտպան ախոյենի պաշտօնը չէ թէ հրամանատարի մ՚այլ Ուխտին մէկ ասպետին պիտի լինար։ Ուստի և ես, լինչպէս որ էր իմ խորհուրդս, փոքն առաջին անդամ հնչելուն՝ կրկէսը պիտի երևէի իրրև քու ախոյեանդ, իրրև թափառական ասպետ մը ծպտեալ, որ արիած կ՚վճռուէ իր վահանով և նիզակով հուչակ ստանայ։ Իսկ այն ատեն Պօմանուար կրնար չէ թէ մէկ՝ այլ իմ ընկերակիցներէս երկու երեք հատ ընտրել և ինձի դէմ ղրկել, դարձեալ վստահ եմ որ զանոնք մէկ հարուածով դետին պիտի տապալէի։ Այսպէս, Ռեբեկա, անմեղութիւնդ պիտի հաստատուէր և քու երախտապարտութեանդ պիտի ապաւինէի որ յաղթութեանս վարձքն ընդունիմ։

— Ասպետ — ըսաւ Ռեբեկա — այդ ամէն ըսածներդ լոկ մեծամտութիւն են և ունայն յայտարարութիւն մը թէ՝ ինչ պիտի ընէիր եթէ ուրիշ կերպով շարժելու յարմար չդտաէիր։ Իմ ձեռնոցս առիր, և պէտք է որ իմ ախոյեանս՝ եթէ ինձի պէս ընկերակից մը կրնայ մէկը գտնել, քեզի դէմ մաքառի մրցարանին մէջ, և սակայն դու բարեկամի և պաշտպանի կերպարան մը կ՚առնուս իմ առջևս։

— Ա՛յո, դարձեալ քու բարեկամդ և պաշտպանդ պիտի լինիմ — ըսաւ տաճարականը ծանրօրէն — բայց նկատէ մի անդամ թէ ինչ վտանգի, կամ ինչ իրական անպատուութեան կ՚ենթարկիմ, և ապա պարտաւէ գլխ եթէ պայմանները առաջարկեմ, ինձ ամենէն սիրելի եղած բաները զոհելէն առաջ, որպէս զի հրեուհի մ՚ազատեմ։

— Խօսէ — ըսաւ Ռեբեկա — միտքդ չեմ իմանար։

— Լաւ ուրեմն — ըսաւ Պուա-Կիլպէր — այնքան աղատօրէն պիտի խօսիմ որչափ խօսած է երբէք դիւբահատան ասպետ մ՚իր խոստովանահօր։ Ռեբեկա, եթէ այն մրցարանը չերևիմ՝ իմ հաւքաւս և ասպեհանս կ՚կորուսեմ, պիտի կորուսեմ իմ կենացս շունչն, այս է իմ եղբարցս հանարումն որով գիս կ՚պատուեն, և այն յայսերս որով օր մը խեղայնոր Լուկաս Պօմանուարի վարած բարձր իշխանութիւնը պիտի ստանամ, թէև նոյնը բոլորովին ուրիշ կերպով պիտի գործածեմ։ Այս է իմ անվրէպ վերջս՝ եթէ քու դատիդ դէմ գինեալ չերևիմ։ Անիծեալ լինի այն կուտալբիդն որ գիս այս ծուղակին մէջ նետեց, և երկինքս անիծեալ լինի Ալպէրդ Մալվուազէնն որ իմ խորհուրդս կատարելու արգիլեց, այս էր ձեռնոցը նետել այն աւելորդապաշտ յիմարին երեսին, որ քեզի պէս մարդով բարձր և ձևով չքնաղ էակի մը դէմ արձակուած անհեթեթ զրպարտութեան կ՚անսաս։

— Բայց այս մեծաբանութիւնը կամ շողոքորթութիւնն ինչ օգուտ ունին այժմ — պատասխանեց Ռեբեկա։ — Քու ընտրութիւնդ ըրիր, և լաւ ևս համարեցիր անմեղ կնկան մ՚արիւնը մանել քան թէ երկրային վիճակդ ու յոյսերդ վտանգել։ Ինչ հարկ կայ այժմ հաշիւներ ընել, քանի որ արդէն ընելիքդ որոշած ես։

— Ո՛չ, Ռեբեկա — ըսաւ ասպետը մեղմագոյն ձայնով մը ու անոր աւելի մօտ դնալով — իմ որոշումս ըրած չէի, նա մանաւանդ միտ դիր, դու պիտի ընես այս որոշումը։ Եթէ մրցարանն երևիմ, պարտաւոր եմ համբաւս պահել զինուք, և եթէ պահեմ, թէ ախոյեան ունենաս թէ ոչ՝ խարոյկի վրայ պիտի մեռնիս. վասն զի չկայ ասպետ մ՚որ կարող լինի զինուք ինձի հետ գլուխ եղնել, Առիւծասիրտ Բիշարտէն և իր սիրելի Իվանհոէէն զատ։ Գիտես արդէն Իվանհօ անկարող է զրահը բառնալ, և Բիշարտ օտար աշխարհ կ՚գտնուի՝ ի բանտ։ Եթէ երևիմ, դու պիտի մեռնիս, եթէ քու գեղեցկութիւնդ հրապուրէ խակ կրակոտ երիտասարդ մ՚ասպարէզ իջնել քու պաշտպանութեանդ համար։

— Եւ ինչ օգուտ ունի այժմ ստէպ կրկնել այդ բանը — հարցուց հրէայ օրիորդը։

— Շատ օգուտ ունի — պատասխանեց տաճարականը — վասն զի քու վիճակդ ամէն կողմէ քննելու պիտի օդնէ քեզ։

— Լաւ ուրեմն — պատասխանեց Ռեբեկա — օձոյը դարձուր և միւս երեսը ցոյուր ինձ։

— Եթէ այն մրցարանն երևիմ — ըսաւ Պուա-Կիլպէր — դու

ծանր և անազորոյն մահուամբ պիտի մեռնիս, այնպիսի տանջանօք որոյ համար կ'ըսեն թէ 'ի հանդերձեալն ոճրագործներու սահմանուած է։ Բայց եթէ չերևիմ, այն առեն վատթար և անպատիւ աստիճ մը պիտի գառնամ, և պիտի ամբաստանուիմ կախարդութեամբ և իբրև անհաւատից հետ հաղորդակից պիտի ամբաստանուիմ. իմ կրած նշանաւոր անունս՝ որուն այնքան փայլ տուի, յանդիմանութեան և նախատանաց առիթ պիտի տայ. իմ հզօր փառասիրութիւնս պիտի զոհեմ, պիտի տապալեմ այն խորհուրդները որ կ'բարձրանային այն լեռներու պէս, որոնք՝ ինչպէս կառապաններ կ'ըսեն, երկին հասնելու համար երբեմն ծառայեցին. և սակայն, Ռեբեկա — յարեց նա՝ անոր ոտքն ընկնելով — պատրաստ եմ այս մեծութիւնը զոհելու, պատրաստ եմ համբաւիս հրաժեշտ տալու, պատրաստ՝ սոյն իշխանութիւնը թողլու. միայն անդամ հիմակ որ կիսովին իմ ափիս մէջն է, եթէ միայն ըսես սա խօսքը. «Պուա-Կիլբէր, քեզ իբրև իմ սիրահարս կ'ընդունիմ։»

— Ա՛յդ պիտի չիմար բաներու վրայ մի մտածեր, ասպետ — պատասխանեց Ռեբեկա — այլ դուն փութով իննամակալին, մայր Թագուհւոյն և ճօհն իշխանին դիմէ, 'ի պատիւ Անկլիոյ Թագին՝ չպիտի թողուն որ ձեր Մեծ Վարպետին վճիռն 'ի գործ դրուի։ Ա՛յսչէս առանց զոհողութիւն մ'ընելու քու կողմէդ, և իմն փոխարէն մը խնդրելու, դիս պաշտպանած պիտի լինիս։

— Անոնց հետ ես գործ չունիմ — շարունակեց տաճարականն իր պատմուճանին տուտը բռնելով — քեզի միայն կ'դիմեմ, և ինչ բան կրնայ հակակշռել քու ընտրութիւնդ։ Քաջ խորհէ, եթէ սադան մ'իսկ լինէի, դարձեալ մահը վատթարագոյն է, և մահն է իմ նախանձորդս։

— Ձեմ կրնար քննել այդ ծանր խնդիրներն — ըսաւ Ռեբեկա՝ վայրագ ասպետը դրդռելու վախնալով, թէև միտքը դրած էր ոչ անոր տուփանաց հաւանիլ և ոչ իսկ հաւանութեան տուտ նշան մը յայտնել։ — Մ'արդ եղիր, քրիստոնեայ եղիր. եթէ իրօք քու հաւատդ կ'հրամայէ քեզ դթութիւն, զոր ձեր լեզուները քան գործերը կ'յայտնեն, ազատէ զիս այս ահռելի մահէն, առանց արիւնաւոր մը խնդրելու, վասն զի այն առեն քու մեծանձնութիւնդ անարդ սակարկութեան մը պիտի փոխէ։

— Ո՛չ, օրիորդ — դոչեց դուռդ տաճարականն ընդվիզելով — այդ կերպով չպիտի համոզես զիս։ Եթէ իմ արդի համբաւս և ապագայ փառասիրութեանս հրաժեշտ տամ, պիտի տամ միայն քու սիրոյդ համար, և միասին պիտի փախչինք։

Մտիկ ըրէ, Ռեբեկա — կրկնեց նա իր ձայնն ամբարձուած — Անկլիա, Եւրոպա, չեն աշխարհը։ Կան դեռ ուրիշ երկիրներ ուր կարող ենք դործել, և բաւական ընդարձակ են իմ փառասիրութեանս համար։ Պալեստին կ'երթանք, ուր Գօնրատ, Մոնդֆէրատի մարքիզն, իմ բարեկամս կ'դանուի, բարեկամ մ'որ լինձի պէս ազատ է այն չխմարական խղճահարութենէ որով մեր ազատածնութիւնը կ'կաշկանդեն. լաւ ևս պիտի համարինք Սալահդինի նիզակակից լինել՝ քան թէ մեր արհամարհած կրօնամոլներուն անարդանաց հանդուրժելու։ Մեծութեան հասնելու համար նոր նոր խորհուրդներ պիտի կազմեմ — շարունակեց նա մեծաքայլ քայլելով սենեկին մէջ — Եւրոպա պիտի լսէ այն անձին մեծագործ քայլերն զոր իր ծոյլն արատակեց։ Պալեստինի ազատութեան համար զրկած միլիոնաւոր խաչակիրներն այնչափ մեծ դործեր չպիտի կարենան կատարել որչափ մենք. Սարակինացոց բիւրաւոր սուրերն չպիտի կարենան այնքան մեծ ճամբայ մը հորդել այն երկրին մէջտեղ ժողովրդներն իրարու դէմ ի'պատերազմին որչափ պիտի լինեն Պուա-Կիլբէրի և իր եղբարց արիութիւնն ու քաջագործութիւնը, որոնք՝ այն մրցեանդ ծերունիին հակառակ՝ թէ 'ի բարին և թէ 'ի չար՝ լինձի հաւատարիմ պիտի մնան։ Դու Թագուհի պիտի լինիս, Ռեբեկա. Կարմելեան լեռնին վրայ պիտի բարձրացընենք այն ամրոցն զոր բաղձալս քեզի համար շահած պիտի լինի, և երկար առենէ վաճառած ցեղս արքայական դաւազանի հետ պիտի փոխանակեմ։

— Երազ մ'է այս — ըսաւ Ռեբեկա — դիւերային մտոտի երազ մը որ եթէ իրական իսկ լինէր զիս չպիտի հրապուրէր։ Իաւական է ըսել քեզ որ քու սառնասիրտ իշխանութեանդ մանանիկից չպիտի դանուիմ երբէք։ Իմ աղջիս և կրօնիս այնքան սերտիւ կապուած եմ որ չեմ կրնար յարգել այն մարդն որ հաւատն ուրանալու և իր ուխտած պարտաւորութիւնները դրժելու պիտի հաւանի՝ որպէս զի օտար ժողովրդեան մ'աղջկան համար ունեցած անհանոն տուփանքը զոհ ընէ։ Իմ աղատութեանս համար զին մը մի պահանջեր, ասիկա ասպետ, վնհանձնութեան դործ մը մի ծախեր, յանուն դթութեան հարստահարեալը պաշտպանել և չէ թէ ինքնասիրական օգտի համար։ Գնա Անկլիոյ Թագաւորին, Ինչպէս՝ այս անազորոյն մարդկան դէմ ըրած բաղձքս պիտի լսէ։

— Երբէք, Ռեբեկա — ըսաւ Տաճարականը դոռոզաբար։ — Եթէ հրաժարիմ Ուխտէս, քեզի համար պիտի հրաժարիմ։ Փառասիրութիւնը պիտի մնայ ինձ եթէ իմ սէրս մերժես. ամէն բանէ չպիտի

զրկուիմ: Ես ծուեմ գլուխս Բիշարտի առջև, այն Հպարտ սրտէն շնորհ մը խնդրե՛մ, երբէք, Ռեբեկա, երբէք Տաճարականաց Ուխտն իմ անձովս անոր ոտից ներքև չպիտի դնեմ, կարող եմ Ուխտս թողուլ, սակայն երբէք չպիտի եղծեմ կամ մատնեմ զայն:

— Թող Աստուած դայ ինձ օգնութեան — ըսաւ Ռեբեկա — վասն զի մարդկան օգնութիւնն անյուսալի է:

— Այդ ճշմարիտ է — վրայ բերաւ Տաճարականը — վասն զի, որչափ որ հպարտ ես, դիս ինքզինքիդ հաւասար դատ: Եթէ մրցարան մտնեմ նիզակս կանգուն, մի յուսար բնաւ որ մարդկային որ և է նախատում արգիլէ զիս զօրութիւնս՝ի գործ դնելու, և այն ատեն քու ճակատդիդ վրայ խորհէ. այս էյտեին ձեռագործի ահռելի մահուամբ մեռնիլը, բոցակէզ խարոյկի մը վրայ սպառիլը, տարերայ գառնալ որով մեր մարմինը խորհրդաւոր կերպով բաղադրուած է: Այդ շնորհալի մարմնոյդ մաստնէն իսկ չպիտի մնան, որպէս զի կարենանք ըսել թէ՝ այս մարմինը կ՚շարժէր և կենդանի էր: Ռեբեկա, կնկան մը գործ չէ այսպիսի ծանր առնչութիւն մը կրելը. իմ աղաչանացս պիտի դիմանիս անշուշտ:

— Պուա-Կիլբէր — պատասխանեց Հրէուհին — դու կանանց սիրտը չես ճանչեր. կամ Հաղորդակցեր ես միայն անոնց հետ որ քու լատզոյն ղպացուածներուդ կրօնական պատճառ եղեր են: Գուցէ Տաճարականն, ահա կ՚ըսեմ քեզ, որ ամենէն կատաղի պատերազմներու մէջ չես ցոյց տուած այնքան անվհատ արիութիւն, որչափ ցոյց տուած են կանայք երբ սիրոյ կամ պարտաւորութեան գործմամբ առաջարկեր են: Ես ևս կին մ՚եմ, փափկութեամբ մեծցած, չի բնէ տակաւ վտանգի առջև, և նեղութեան անվարժ, և սակայն երբ կ՚մտնենք այն աղէտաբեր մրցարանները, դու պատերազմելու և ես տառապելու համար, կատարեալ պէս վստահ եմ որ իմ արիութիւնս քուկդ պիտի պերազանցէ: Երթամ բարեաւ, այսուհետև քեզի հետ պէտք չունիմ խօսակցելու. Յակոբայ աղջկան երկրիս վրայ մնացած ժամն պէտք է որ ուրիշ կերպով գործածուի. պէտք է որ վնտռէ նա Մխիթարիչն՝ որ Թերևս իր ժողովրդին կ՚պահէ երեսը, բայց կ՚բանայ միշտ ականջն այն անձանց ձայնին որ անկեղծութեամբ և վստահութեամբ անոր կ՚ապաւինին:

— Ուրեմն այսպէս պիտի բաժնուինք — ըսաւ Տաճարականը պահ մը լռելէն ետև: — Տար երկին որ երբէք իրարու հանդիպած չլինէինք, և կամ գոնէ ծննդոյ աղնուական և կրօնիւ քրիստոնեայ լինէիր: Նա մնաւանդ, տէր Աստուած, երբ քեզի կ՚նայիմ, և կ՚մտածեմ թէ նո-

րէն ուր պիտի իրարու հանդիպինք, կ՚փափաքիմ խնդ որ քու վատթար ազդիդ մէկ անդամը լինէի, և փոխանակ նիզակ և վահան շարժելու, ձեռքս միայն ոսկի և արծաթ ճանչէր, իմ գլուխս յետին իշխանին առջև ծռէի և իմ նայուածս ահարկու գառնար միայն գոհաղարտ և մնանկ պարտապանին: Այս կ՚փափաքէի, Ռեբեկա, որպէս զի քեզ կենակից լինէի, որպէս զի քու մահուանդ սոսկալի մանանկյութենէս ազատ մնայի:

— Այդպէս հրէին նկարագիրն ըլլիր — ըսաւ Ռեբեկա — ինչպէս որ քեզ նմանողներուն հալածանքը զանի ըրած են: Երկինք իր սրամտութեան մէջ իր ընկէր երկրէին զանի վանեց, բայց Ճարտարութիւնն անոր առջև բայաւ իշխանութեան և ազդեցութեան միակ Ճամբան, զոր բռնութիւնն անարգել ձգած է: Կարդա Աստուծոյ ժողովրդեան հին պատմութիւնը, և ըսէ լնձ եթէ անունը որոյ ձեռօք Եհովա այնքան սքանչելիք գործեց օտար աղգերու մէջ, ազատ և վաշխառու ժողովուրդ մ՚էին: Գիտցիր նաև, վէս ասպետ, մեր մէջ այնպիսի փառաւոր անուններ ունինք որ հիւսիսի ազնուականութիւնն անոնց մօտ դդմենի մ՚է եղևնի առջև. անուններ որ կ՚հանգին այն փառապեղ ժամանակաց երբ պերազոյն էին ներկայութիւնն կ՚սարսեր գիտութեան գահը քրիստոնէից մէջ, և որոնք իրենց շքեղ ծագումն երկրային իշխանէ մը չեն առնուր՝ այլ այն ահարկու Զայնէն որ հրամայեց անոնց նախահարց երթալին Տէրեան մօտենալու. այսպէս էին Յակոբայ տուն պատուականները:

Ռեբեկայի դէմքն երկնային փայլ մը կ՚առնուր քանի իր աղդին հին փառքը կ՚փառաբանէր, բայց գոյնը նետեց երբ նա հառաչելով յառեցաւ. — Այսպէս էին Յուդայի իշխանները, բայց այժմ այսպէս չեն: Ոանահար կ՚լինին արմատախիլ խոտերու պէս և արահետներու տիղմին հետ կ՚խառնուին: Եւ սակայն կան այնպիսիներ անոնց մէջ որ իրենց անուանի հարց հարազատ զաւակներն են, և այսպէս պիտի լինի նաև Անատնիխանի որդի՝ Խահակայ դստերը: Երթամ բարեաւ, չեմ փափաքիր ձեր արեան դնով շահած փառքը, չեմ փափաքիր ձեր բարբարոս նախահարքը, հիւսիսային հեթանոսները. չեմ փափաքիր ձեր հառաջն, որ յարաժամ ձեր բերնին մէջ է, այլ երբէք ձեր սրտին և դործոց մէջ:

— Երկին վկայ, հմայք կան իմ վրայ — ըսաւ Պուա-Կիլբէր: — Գրեթէ կ՚յորդորիմ հաւատալու որ այն յիմար պօմպոսաւոր ճշմարիտ ըսաւ, և թէ դերբնական բան մը կայ որ ակամայ կ՚հեռացնէ զիս քեզ-

նէ, սիրասուն էակ — յարեց նա՝ անոր մօտենալով, բայց մեծ յարգանօք: — Այդչափ ծաղկահասակ, այդչափ դեղանի, այդչափ աներկիւղ կ'երեւիս մահուան առջեւ, և սակայն դատապարտեալ ես մեռնելու, անարդ և քամմենելի մահուամբ: Ով կարող է չողբալ սեւ բաղդդ: Քանի աւելի կայ որ այս իմ աչերս արտասուք չեն թրջած, և այժմ կ'լեցուին երբ քեզ կ'նայիմ: Բայց, աւաղ, ամէն ինչ կատարեալ է, այժմ ոչ ինչ չէ կարող կեանքդ ազատել: Դու և ես՝ անզսպելի ձակատագրի մը կոյր գործիքներն ենք որ մեզ կ'մղէ իրարու դէմ իբրեւ երկու նաւեր՝ մրրկայոյզ, որ իրարու դէմ կ'զարնուին և կ'փշրուին: Գէթ ներէ ինձ և իբրեւ բարեկամ իրարմէ բաժնուինք: Ընդ ունայն ջանայի որոշումդ ապօրէնը և իմ ալ բաղդին վճռոյն պէս անդրդուելի է:

— Ահա այսպէս — ըսաւ Ռեբեկա — մարդիկ իրենց վայրագ կրից հետեւանքը ձակատագրին վրայ կ'ձգեն: Բայց քեզ կ'ներեմ, Պուա-Կիլբէր, թէեւ դու իմ կանխահաս մահուանս հեղինակն ես: Կան վէհ բաներ որ քու հզօր միտքդ կ'պաշարեն, բայց ծոյլին պարտէզն է այն, տատասկը զոյն բոներ են և անոր դեղեցիկ և կենսատու ծաղիկը խեղդելու դատակներ են:

— Այո — ըսաւ տաճարականը — ինչպէս որ դիս նկարագրեցիր այնպէս եմ, Ռեբեկա, անուս, անզուսպ և հպարտ, և տակաւին մը չի մնար, նենգաւոր և մոլեռանդ մարդոց մէջ ստացայ այն վէս բնաւորութիւնն որ դիս դեր ի վեր հանեց: Ի մանկութենէ դու մարտի տղայ մի էի, փառասէր խորհուրդներ կ'տածէի, և անոնց հասնելու համար անզգաքելի և անվրդով հաստատամտութիւն մ'ունէի: Այսպէս պիտի մնամ միշտ, դուշ, անդրդուելի և անտատան, և աշխարհ ասոր փորձերը պիտի տեսնէ: Բայց մինչ կ'ներքես ինձ, Ռեբեկա:

— Ցօժարակամ, ինչպէս զոհ մ'իր գահճին կ'ներքէ:

— Ուրեմն մնաս բարեաւ — ըսաւ Տաճարականը, և սենեկէն դուրս ելաւ:

Ալկերա հրամանատարը մօտակայ սենեակ մը կ'սպասէր անհամբեր Պուա-Կիլբէրի վերադարձին:

— Շատ ուշացար — գոչեց նա — կարծես թէ հրաշէկ երկաթներու վրայ սպասած էի: Եթէ մեծ վարպետը, կամ իր Գօնդատ լրտեսը դար ատ, ի՞նչ պիտի լինէր մեր վերջը. այս իմ կամահաճութիւնս ինձ շատ տուղի պիտի նստէր: Բայց, եղբայր, ի՞նչ ունիս: Դու կ'երեսաս, դիշերուան պէս մթին ես ճակատդ, մթէ անհանգիստ ես, Պուա-Կիլբէր:

— Այո — պատասխանեց Տաճարականը — այնքան քաջառողջ որչափ ժամէ մը մեռնելու պատասպարտած թշուառ մը: Բայց ոչ, անոր կէսին չափ անդամ հանգիստ չեմ, վասն զի կան մարդիկ որ այս վիճակիս մէջ իրենց հին հաղուստ կեանքը մէկդի կ'նետեն: Երկին վկայ, Մալվուազէն, այն նորատի օրիորդը դիս դրեթէ դինաթափ ըրաւ. կիսովին որոշած եմ երթալ Մեծ Վարպետը գտնել, ուխտս անոր առջեւ ուրանալ և իր բռնութեամբ ինձ առած վայրենի հրամանը կատարելու մերժել:

— Դու յիմար ես — պատասխանեց Մալվուազէն — ձշմարիտն այդ ընթացքով բոլորովին 'ի կորուստ պիտի դիմես, և ոչխակ հնար մը պիտի գտնես հրեայ աղջկան կեանքն ազատելու, որ՝ ըստ երեւոյթին՝ շատ անդին է քու աչքդ առջեւ: Պօհմոնտաւր քու տեղդ ուրիշ տաճարական մը պիտի կարգէ, և ամրաստանեալ օրիորդն պիտի մեռնի անշուշտ, որպէս թէ քեզ յանձնուած պարտաւորութիւնը կատարած լինելիր:

— Այդ ստոյգ չէ: Ձէնք պիտի առնում անոր պաշտպանութեան համար — պատասխանեց Տաճարականը դուրսթեամբ և եթէ այսպէս վարուիմ, կարծեմ թէ, Մալվուազէն, քալ դիտես որ մեր միաբանութեան մէջ ասպետ մը չկայ որ կարող լինի ինձի հետ չափուելու:

— Ճիշտ է, բայց դու կ'մոռնաս — ըսաւ կամաչէր խորհրդատուն — որ ոչ ժամանակ և ոչ առիթ պիտի ունենաս այդ յիմարական խորհուրդդ 'ի գործ դնելու: Գիտս Ղուկաս Պօհմոնտաւրը դիտէր, դիտս անոր ըսէ թէ հնազանդութեան ուխտէդ հրաժեշտ տուիր, և պիտի տեսնես այն ատեն թէ բռնասէր ծերունին քանի՛ ժամ քեզ ազատ պիտի թողու: Այն ինչ բերնէդ այդ խօսքերը պիտի հանես և քառն ոտք խորհրդակցութեան մը պիտի նետուիս և իբրեւ ուրացող ոտքերդ այն տեղ գտատատա՜ նի պիտի սպասես. իսկ եթէ քեզ դիւահարի տեղ դնելու յաճախի, քու բաժինդ պիտի լինին յարդ, շղթայ և հետաւոր վանքի մը մէջ խուցաւոր, և կախարդութիւնդ փարատելու և քեզ դրաւոր սպանդը հալածելու համար անդադար օրհնեալ ջրով պիտի թրջեն քեզ: Պարտաւոր ես ասոնք գիտնալ, Պրայն, թէ ոչ կորուստ և անպատիւ մարդ մը սեպէ ինքզինքդ:

— Պիտի խոյս տամ — ըսաւ Պուա-Կիլբէր — պիտի խոյս տամ հեռուաւոր երկիր մ'ուր յիմարութիւնն ու կրօնասիրութիւնը դեռ իրենց իշխանութիւնն հաստատած չլինին: Այս ընթեր և աղնիւ էակին արեան մէկ կաթիլն անդամ չպիտի թափի իմ ձեռօքս:

— Դու չես կարող խոյս տալ — ըսաւ հրամանատարը — այդ քու

պայրոյթիդ կասկածները յարոյց և քեզ այս ապարանքէն եղնելու չափ Յուդան։ Գնա փորձէ, եթէ կամիս։ Գնա դրան մօտ, և հրամայէ որ կամուրջն իջեցընեն, այն ատեն պիտի տեսնես թէ ինչպատասխան պիտի առնուս։ Դու զարմանք կ'յայտնես և կարծես թէ կ'ընշանաւոխես, բայց միթէ ասկից լաւագոյն բան մը կարելի էր ընել քեզի համար։ Եթէ երբէք խոյս տաս, ինչ պիտի լինի հետևանքը, եթէ ոչ աստիճական կարգին նուաստութիւնը, նախահարցդ անպատուութիւնն և աստիճանիդ կորուսաը։ Բարեկամ, լաւ խորհէ ասոր վրայ, քու հինգ վինակիցներդ ձեր պիտի պահեն իրենց երեսն երբ Պրայն ալ Պուա–Կիլպէրը, Տաճարականաց լաւագոյն նիզակն, իրրև վատ հրատարակուի համագումար ժողովրդեան մը նախատալից աղաղակներով։ Այս ինչ սուգ պիտի պատճառէ Փրանսայի արքունեաց։ Վէս Բիչարա ինչ խնդութեամբ արդեօք պիտի իմանայ այս լուրը, թէ այն ասպետն որ Պաղեստինի մէջ իրեն դէմ մաքառեցաւ և իր համբաւը գրեթէ նսեմացուց, իր անունն ու պատիւը զոհեր է հրեայ օրիորդի մը համար, զոր այս թանկագին զոհողութեամբ անպատ չէ կրցած աղատել։

— Մալվուազէն — բսաւ ասպետը — շնորհակալ եմ քեզի, այժմ գալար այն թելին որով սիրտս խնդոյն կ'երթեւայ։ Ինչ կ'ուզէ թող պատահի, երբէք վատ մակդիրը չպիտի միանայ Պուա–Կիլպէրի անուան։ Տար երկին որ Բիչարա, կամ իր բաղմաղով մտերիմներէն մին այս մրցարանին մէջ երեւէին։ Բայց թափուր և առանց պիտի մնայ ասպարէզն, ոչ ոք պիտի յանդգնի անմիջ և ընկերցիկ օրիորդի համար նիզակ շարժել։

— Լաւ ևս քեզի համար, եթէ այս պատահի — բսաւ հրամանատարը — եթէ ախոյեան մը չներկայանայ, քու ձեռքդ չպիտի մնանի այն անբաղդ օրիորդը, այլ Մեծ Վարպետին դատակնքով, թէ նա միայն պատասխանատու պիտի մնայ, և այս դէպքին վրայ պիտի պարծի իրրև դովանի և սքանչացման արժանի գործի մը վրայ։

— Ճշմարիտ է — բսաւ Պուա–Կիլպէրը — եթէ ախոյեան մը չերեւի, ես միայն Հանդիսատես պիտի սեպուիմ, արդարև ձիաւոր Հանդիսատես մը մրցարանին մէջ, բայց գործին հետևանաց անմասն պիտի դառնամ։

— Բոլորովին անմասն — շարունակեց Մալվուազէն — ինչպէս է Ս. Գէորգայ գինեալ պատկերն երբ Թափորի մը մէջ կ'երևի։

— Լաւ ուրեմն, իմ նախկին խորհրդիս կ'դառնամ — պատասխանեց գոռոզ տաճարականը։ — Ան օրիորդը գիս արհամարհեց, մերժեց, նուաստացուց, և ինձ համար այլոց առջև վայելած համբառումն անոր պիտի զոհեմ։ Մալվուազէն, ասպարէզ պիտի իջնեմ։

Ա յս խօսքն արտասանելով ընդ փոյթ սենեկէն ելաւ, և հրամանատարն անոր ետևէն դնաց, որպէս թէ անոր վրայ հսկէ և դիտաւորութիւնն ամրապնդէ։ վասն զի ինքն ևս Պուա–Կիլպէրի համբառն հոգ կ'տանէր, վասն զի կ'յուսար որ եթէ օրին մէկն Ուխտին դլխին անցնի իրեն շահաւոր պիտի դառնայ, ատանց չի համար առնելու Մօնֆիշէի յուսադրած առաւելութիւնն, սա պայմանաւ որ դժբաղդ Ռեբեկային դատապարտութեան նպաստէ։ Սակայն, մինչդեռ իր բարեկամին դիմաց իր զղայնանց դէմ կ'մաքառէր, բառն և ներհակ կրից թափէն յուզած մարդու մը վրայ նենդաժէտ, ծանր և նսեմ բնաւորութեան մ'առաւելութիւնն ունէր, և Մալվուազէնի բոլոր հնարագիտութիւնը պէտք էր որպէս զի Պուա–Կիլպէրին բռնած ընթացքին մէջ զանի յարատև պահէ։ Ուստի սախալեցյաւ մնաւն անոր վրայ հսկել որպէս զի իր վախուստի դիտաւորութիւնը չնորոշէ, Մեծ–Վարպետին և անոր մէջ որ և է յարաբերութիւն արգիլէ, որպէս զի իր դէխաւորին հետ բայե՛ ի բայ չկռուի, նոյնպէս պարտաւոր էր ատեն ատեն կրկնել այն վատաերն զոր գործածէր էր հաստատելու համար թէ այս պարագայիս մէջ Պուա–Կիլպէր իրրև ախոյեան ներկայանալով որ և է կերպով Ռեբեկայի բաղդին վրայ չնորոշէն զատ՝ իր անունն վատահամբաւութեանէ զերծ պահելու միակ ձամբան բռնած պիտի լինէր։

Գ Լ Ո Ւ Խ Ս

Պատերներ, լեռս գացէք — նոյն ինքը Բիչարա է նորէն, Բէրանժէ Գ.

Երբ Սև ասպետը — վասն զի կարևոր է անոր արկածից թելը նորէն առնուլ — վերհանձն վատարկին ժամադրութեան ծառը թողուց՝ շրջակ մնատուր կրծատուն մը դիմից, որ անշուք և աղքատիկ էր՝ Ս. Պօթօղֆի վանատուն անուամբ։ Վիրաւոր Խվանօէն սոյն վայրը փոխադրուեր էր երբ դղեակն առնուեցաւ՝ հաւատարիմ Կիւրթի և մծծանձն Վամպայի առաջնորդութեամբ։ Ան այժմ կարևոր չէ պատմել թէ ինչպես նոյն միջոցին Վիլֆրիտի և իր աղատարարին մէջ, բաւական է ը-

սել թէ՝ երկար և ծանրակշիռ բանակցութենէ մ՚ետք, վանահօր կողմէ զանազան տեղեր սուրհանդակներ ղրկուեցան, և թէ հետևեալ օրը՝ Սև ասպետը Ճամբայ ելնելու պատրաստուեցաւ, վասնզի ընկերացկցութեամբ, որ իրեն իրբև ուղեցոյց պիտի ծառայէր:

— Ձիերը պիտի դանենք — ըսաւ նա Իվանոէին — ի Գոնինկսպրկ, այս է հանդուցեալ Ամէլստէյնի դղեակը, քանի որ իր աղնիւ աղջականին համար հայրդ Սէտրիկ այն տեղ պիտի կատարէ յուղարկաւորութեան հանդէսը: Աղնիւ Վիլֆրիտ, ի՛փափաքիմ սաքսոն բարեկամներդ մէկտեղ դումարուած տեսնել և անոնց հետ քան զառաջինն աւելի լաւ ծանօթանալ: Դու ևս պիտի դաս դիս անդ դանելու, և քեզ հօրդ հետ հաշտեցընելու պաշտօնն ես իմ վրայ պիտի առնեմ:

Այս ըսելով սիրալիր հրաժարական բարև առաւ Իվանոէին, որ եւս անդադրին փափաք մը յայտնեց իր ազատարարին հետևելու: Բայց Սև ասպետը բնաւ այս առաջարկութեան համաձայն չուզեց:

— Այսօր հանգստացիր, հաղիւ թէ վաղը Ճամբայ ընկնելու բաւական ոյժ պիտի ունենաս: Ես համոզուած եմ վասնզին զատ առաջնորդ մը չեմ ուզեր, որ իմ դանուած վիճակիս համեմատ կարող պիտի լինի քահանայի կամ յիմարի դերը խաղալ:

— Եւ ես — ըսաւ Վամբա — բոլորով սրտով քեզի հետ պիտի գամ: Հետաքրքիր եմ Ամէլստէյնի գամբանական խնջոյքը տեսնելու, վասն զի եթէ այս կոչունքն առատ և լեցուն չլինի՝ գոգաղէն պիտի երևի՝ խոհակերը, սեղանապետն և մատուռակը ատամնելու, և ուշադրութեան արժանի տեսարան մը պիտի լինի: Սակայն միշտ, տէր ասպետ, ձեր արիութեան վրայ պիտի դնեմ իմ վստահութիւնս իմ Սէտրիկ տիրոջս մօտ արդարանալու, եթէ երբեք իմ միտքս ինձ օդնութեան չհասնի:

— Եւ ինչպէս կ՚ուզես որ իմ արիութիւնս յաջողի, պարոն Վամբա, երբ քու ուշիմ միտքդ Ճամբայ մնայ. սա խնդիրը լուծէ նայիմ:

— Խելքը, աղնիւ ասպետ — պատասխանեց միմոսը — շատ բան կրնայ ընել: Վաւաշուն, ուշիմ թշուառական մ՚է որ իր գրացոյն տիար կողմը կ՚տեսնէ, և դիտէ թէ ինչպէս հովէն պատսպարիլ պէտք է երբ կիրքը բուռն կ՚փչէն: Բայց արիութիւնն անվեհեր ընկեր մ՚է որ ամէն ինչ կ՚տապալէ: Թէ հովին և թէ մրրկին դէմ կ՚քիթալարէ և շիտակ նպատակին կ՚դիմէ, և հետևապէս, բարի ասպետ, երբ իմ աղնիւ տիրոջս բնաւորութեան աղտոր օդէն օգուտ քաղեմ, ձեզի պիտի դիմեմ որ փոթորկի առեն ինձ օգնութեան հասնիք:

— Ադուցիկ փականքի տէր ասպետ, քանի որ այս անուռնով կոչտիլ կ՚յօժարիք — ըսաւ Իվանոէ — վախնամ որ շաղակրատ և տալտակալէ մարդ մ՚ընտրեցիք ձեզի առաջնորդ, բայց նա այս կողմերն չամախող որսորդէն քաջ և դիտէ անտառին բոլոր շաւիղները. և խեղճ յիմարն, ինչպէս որ կարող եղաք տեսնելու, պողպատի պէս հաստատում է:

— Էյ, բնաւ — դոչեց ասպետը — եթէ իմ շաւիղս յոյց տալու հնարքը դիտէ, չպիտի դանդատիմ եթէ զայն զուարճալի ընելու ջանայ: Առաջնորդութիւն ի՛մաղթեմ քեզ, բարեսիրտ Վիլֆրիտ, և ի՛յորդորեմ քեզ որ բնաւ փորձ չընես ուղևորելու վայն առանց առաջ:

Այս ըսելով իր ձեռքն Իվանոէի կարկառեց, որ զայն իր շրթանցը տարաւ. յետոյ հրաժեշտ տուաւ վանահօր, ձին հեծաւ և Վամպան իրրև ընկեր հետն առնելով մենաստանէն դուրս ելաւ: Իվանոէ աչքն անոնց հետևեցաւ, մինչև որ շրջակայ անտառներու ստուերին մէջ անհետ եղան և ապա վանատուն դարձաւ:

— Բայց այն ինչ առաւօտեան ժամերգութիւնն աւարտեր էր որ Իվանոէ վանահայրը տեսնելու փափաք յայտուց: Ծերունին արտորնօք վազ ելաւ եկաւ և անոր առաջնորդութեան վրայ հարցումներ ըրաւ:

— Այժմ լաւագոյն եմ — ըսաւ նորաբոյժը — թէև իմ ամենէն անուշ յոյսս չէր կարող այս բանս դուշակել. անշուշտ կամ իմ վէրքս թէև էր՝ թէև վաղած արիւնէն ուրիշ կերպ կարծէի, և կամ սոյն բալասանը հրաշալի գարման մը բերաւ: Արդէն ի՛դդամ որ կարող եմ զբահս հագնիլ և չափազանց ուրախ եմ. վասն զի մարթիս մէջ այնպիսի խորխոռըդներ ի՛ծնին որ չեն նեղեր ինձ աւելի ևս անգործութեան մէջ մնալ:

— Սուրբերը վկայ — ըսաւ վանահայրն — որ սաքսոն Սէտրիկի որդին մեր մենաստանէն չպիտի հեռանայ մինչև որ իր վէրքը չբժշկուի. եթէ նեղեմ մեծ ամօթ պիտի լինի մեր պաշտօնին:

— Եւ ես իմ կողմէս բնաւ փափաք չպիտի ունենայի, պատկառելի հայր, ձգել ձեր հիւրասիրութեան յարկը — ըսաւ Իվանոէ — եթէ Ճամբայ ելնելու ստիպուած և անոր յոդնութիւնները կրելու չափ ուժով չլինէի:

— Եւ մի՛ դրդէ ձեզ այսչափ արտորնօք Ճամբայ ելնել — հարցուց վանահայրը:

— Հայր սուրբ, միթէ երբեք մօտալուտ վտանգի մ՚երկիւղն ղացած չէք, թէև ի զուր անոր բուն պատճառը փնտռելու ի՛նշխատիք: Արևափայլ գաշտանկարի մը պէս՝ միթէ միտքդ երբեք սև ամպերով դո-

ցուած չէ, իբրև կարապետ մծտաւոր վոհմորկի մը։ Եւ միթէ չէք կարծեր որ այս դունակ նախաղգացումները ուշադրութեան արժանի են, որպէս թէ մեր պահապան հրեշտակներէն դրուած ազդարարութիւններ լինէին մծտաւոր վտանգին դէմ։

— Ձեմ կրնար ուրանալ — ըսաւ վանահայրը — թէ այդպիսի բաներ պատահած և երկնուստ եկած չեն. այլ սակայն այսպիսի յայտարարութիւններ օգտակար և ակներև նպատակ մ'ունէին։ Բայց դուք քանի որ վիրաւոր ես, ի՞նչ կրնաս ընել եթէ հետևիս այն անձին որու չպիտի կարենաս օգնել, եթէ երբէք յարձակում կրէ։

— Վանահայր — ըսաւ Իվանոէ — դու կ'սխալիս. ես բաւական ուժեղեմ և կարող նիզակով ինձի հետ չափուիլ ուղղին հետ կռուիլ։ Բայց եթէ այս ալ չկարենայի ընել, միթէ վինուց զօրութենէ տարբեր հնարքով անոր օգնութեան հասնիլ կարող չպիտի լինէի։ Ա.յս շատ յայտնի է որ սաքսօնները չեն սիրեր նօրման ցեղը, և ո՛վ իսէ, ինչ վախճան կ'ունենայ դործն եթէ անոնց մէջ ներկայի երբ Ամէլտէֆինի մահուան վրայ սաստիկ յուզուած են, և երբ լինելիք հանդիսին մէջ իրենց գլուխները տաքնան։ Ա.յնպիսի վայրկենի մէջ անոր գալուստն անոնց մէջ շատ վտանգաւոր կ'համարիմ և միտքս դրած եմ նոյն վտանգին առաջն առնուլ կամ՝ անոր մասնակից դտնուիլ։ Եւ ահա այս պատճառաւ պիտի աղաչեմ քեզ որ ինձ ձի մը դտնես որ իմ պատերազմի երիվարէս աւելի հանդարտիկ քալուածք ունենայ։

— Իրաւ — ըսաւ բարեշնորհ կրօնականը — քեզի պիտի տամ իմ յատուկ սիրածեմ երիվարս, և կ'փափաքիմ որ սուրը Ալպանի սրբալինին պէս քեզ հանդարտ քալուածքով տանէր։ Սակայն կրնամ ըսել, Մալէնէի համար, վասն զի այսպէս կ'անուանեմ իմ երիվարս, որ՝ միայն թէ ձեռնածուի մը պէս չընտրես, որ հաւկիթներու մէջ կ'կաքաւէ, չպիտի կարենաս անոր պէս անուշ և հանդարտ կենդանի մը դտնել ուղևորելու համար։ Անոր կռնակը հեծած՝ ես շատ մը քարողներ յօրինած եմ մեր վանական եղբարց և ուրիշ քրիստոնեայ թշուառ հոգևոր մխիթարութեան համար։

— Կ'աղաչեմ քեզ, վերապատուելի հայր — յարեց Իվանոէ — որ հրաման տայիր Մալէնէն խսկոյն պատրաստելու, և ասպսպրէիր Ալբերիկ որ զէն ու զարդս բերէ։

— Սակայն, ազնիւ ասպետ — ըսաւ վանահայրը — կ'աղաչեմ քեզ յիշելու որ Մալէնէ իր սիրոջը պէս անձարակ է գինուց մէջ, և ապահովեմ որ չպիտի կարենայ ապատագինութեան տեսքը կամ ծանրութիւ-

նը տանիլ։ Ո՛հ, Մալքին, հաւատաս եղիր որ խոհական կենդանի մ'է և տաժանելի բեռ մը կրելու պիտի մերժէ։ Անդամ մը Ս. Պիղի վանահայրէն ֆրէ-ֆրէ-պէ-ֆրէ-ը փոխ առի, և այն դունէն դուրս չելաւ մինչև որ այս ահագին գրքին տեղ իմ փոքրիկ ժամագիրքս չառի։

— Վստահ եղիր, հայր իմ — վրայ բերաւ Իվանոէ — որ շատ ծանր բեռ մը չպիտի դնեմ վրան, և եթէ լինձի դէմ ստահակի, շատ բան չպիտի շահի։

Իվանոէ այս պատասխանը տալու ատենը՝ Ալբերի՝ ասպետին կրակներուն վրայ զոյգ մ'ոսկեզօծ լայն խոթանոներ կ'անցընէր, որոնք կարող էին ամենէն ըմբոստ ձին հաւատալել թէ լաւագոյն միջոցն էր ձիաւորին կամաց հնազանդիլ։

Երբ վանահայրը տեսաւ այն խորունկ և սուր անուշադիր մտածմունքն որով Իվանոէի կրակները գինուեցան, իր կամակատարութեան վրայ դղջայ և գոչեց.

— Ազնիւ ասպետ, կ'մտածեմ այժմ որ Մալէնէ չէ կարող մտրակի հանդուրժել. ուստի լաւ ևս կ'լինէր եթէ մեր մատակարարին մատակ ձիուն սպասէիր որ վարը յարդանոցին մօտ է, և շատ շատ ժամէ մը կրնաս ստանալ. աւելի ընտել է այն, վասն զի մեր ձմերուան վայրը կ'կրէ և բնաւ ցորեն չուտեր։

— Շնորհակալ եմ քեզի, հայր սուրբ, առաջին խօսքդ լաւ ևս կը բռնեմ, նա մանաւանդ որ Մալքին արդէն դուրն ելած կ'տեսնեմ։ Թող Ալբերի զէնքս կրէ, իսկ միւս կիսին դալով, հաւատաս եղիր որ Մալէնէին կռնակը շատ չպիտի բեռնաւորեմ. իմ համբերութիւնս չպիտի հատցնէ։ Ուրեմն, մնաս բարեաւ։

Իվանոէ՝ թէև վիրաւոր՝ կարծուածէն աւելի շուտ և դիւրաւ ինքնագնդէն վար, երիվարը հեծաւ, վանահօր տաղտկալի խօսքերէն ետոյ տալու անհամբերութեամբ, մինչդեռ կրօնաւորն իր տարիքին ու պատութեանը ներածին չափ աստիճան քովէն կ'քալէր, մերթ Մալէնէին դոլեսաներ վտանելով և մերթ ապսպրելով ձիաւորին որ անոր խնամք տանի։

— Ա.յս կենդանին իր ամենէն վտանգաւոր ժամանակին մէջ կը գտնուի, ոչ միայն աղջկանց համար այլև մատակ ձիերու համար այսպէս է — ըսաւ ծերունին՝ իր ըսած կատակին վրայ ինք ծիծաղելով — վասն զի հազիւ թէ իր տասնհինգերորդ տարիքը կ'մտնէ։

Իվանոէ՝ որ աւելի կարևոր բան մը ունէր հիւսելու քան թէ իր ձիուն սիրոջ հետ հեռակից դնալ, խուսափանքի եղան վանահօր ծանր խոր-

հրդեհ և մոտակի կառոյներուն. իր ձին քշեց և ղինակերին հրամայեց (վասն զի Կիւրթ արդէն այսպէս կ'կոչուէր)։ Սև ասպետին հետը բռնեց նա անտառին մէջ, մինչդեռ վանահայրը վանուց դուռը կեցած կ'դողչէր։

— Սո՛րբ Մարիամ, այս պատերազմի մարդիկ քանիծն արագաշարժ և վայրագ են։ Կ'ցաւիմ որ անոր յանձնեցի Ռաչինը, վասն զի՝ յօդացաւով անդամալոյծ լինելուս՝ չդիտեմ ինչ պիտի ընեմ թէ որ երիվարիս փորձանք մը հանդիպի։ Եւ սակայն — ըսաւ նա ինքզինքին դալով — որովհետև Հին Անկլիոյ արդար դատին համար իմ դողշհար և ապիկար մարմինս չպիտի խնայէի, պէտք է որ Ռաչինն վտանգի դիմադրաւէ, և թերևս օրին մէկը մեր անշուք վանատունը փառաւոր վարձատրութեան մ'արժանի սեպեն։ Թերևս ծեր վանահօրս հետ երիվարիկ մը ղրկեն։ Իսկ եթէ այսպիսի բան մը չընեն, վասն զի մեծ իշխաններ փոքրիկ մարդոց ծառայութիւնը շուտով կ'մոռնան, գարձեալ վարձքս դատած պիտի համարիմ ինքզինքս օրհնաւոր դործ մը կատարելուս համար։ Բայց ահա ժամէ վանական եղբարքը սեղանատունը կոչելճաշի։ Ա՛հ, քաջ դիտեմ որ այս կոչման աւելի անհամբեր կ'սպասեն քան թէ առաւօտեան ժամերգութեան . . . ։

Ուստի Ս. Պօթոլֆի վանահայրը սեղանատունը դարձաւ կաղ կաղ որպէս զի վանականաց նախաճաշիկին նախապահէ, և այս նախաճաշիկն՝ որ ձողաձկէ և դարեջրէ կ'բաղկանար, արդէն մեծարեր էին։ Վանահայրն որ շնչարգել էր և կարևոր կերպարան մը կ'առնուր, սեղան նստաւ և շատ մը մոմէ խօսքեր արտասանեց անուանի մարդոց ըրած ծառայութեանցը վրայոնէն վանատան դալիք օգտից վրայ։ Այս դիտողութիւններն՝ ուրիշ պարագայի մէջ անշուշտ ամենուն ուշադրութիւնը պիտի դրաւէին, բայց որովհետև ձողաձուկը շատ աղած էր, դարեջուրը բաւական ընտիր, ուստի վանականաց կզակները սաստիկ զբաղած էին և առեն չունէին իրենց ականջները դործածել. հետևապէս միաբանութեան անդամներէն և ոչ մէկն իր մեծաւորին խորհրդաւոր ակնածութեանց մտադիր չեղաւ, հայր Ցիկօրիէն զատ՝ որ ախորժի ուժգին ցաւ մը բռնուելով, մինակ բերնին մէկ կողմով կ'ուտէր։

Նոյն պահուն, Սև ասպետն ու իր ուղեցոյցն ըստ հաճոյս կ'յառաջանային անտառին խորերը, բայց ասպետն երբեմն սիրահար վիպասանի մ'երգը կ'մրմնջէր, երբեմն իր հարցումներով առաջնորդին լեզուապատութիւնը կ'գրգռէր, այնպէս որ իրենց տրամախօսութիւնն երկէ և

կատակէ այլանդակ խառնուրդ մ'էր, որուն վրայ դաղափար մը տալ կ'փափաքինք։ Ուրեմն թող ընթերցողն երևակայէ այս ասպետն այնպէս ինչպէս որ արդէն նկարագրած ենք, անձնուէր ուժեղ, բարձրահասակ, թիկնեղ, լայն ոսկորներով, իր պատերազմի տեսուն երիվարին վրայ նստած, որ կարծես թէ յատկապէս իր ծանրութիւնը կրելու համար եղած էր, այնպէս հեշտ կ'բալէր իրեն ներքև, իր սաղաւարտին պահնակը բայեր էր որպէս դի ազատ շունչ առնու, բայց կզակապանը դոց էր, այնպէս որ իր դէմքը կիսովին կ'ծածկուէր։ Ա՛յլ սակայն դիւրին էր տեսնել իր լեցուն և կարմրուն այտերը, թէև արևակէզ, և իր մեծ կապոյտ, փայլուն աչերն որ իր բարձած պահնակին մուխ ատուերին ներքև կ'շողային. այս ահռելին արտաքին երևոյթն անհոգ զուարթութիւն և անվհատ վստահութիւն կ'յայտնէր, նոյնպէս ոսկի մը որ վտանգէ չէր երկնչէր և եթէ մօտաւուտ՝ զայն վտանգել կարող, սակայն իրեն համար վտանգն ընտանի մտածմունք մ'էր, քանի որ պայքար և արկածներ էին իր զբաղմունքը։

Միևնոյն ինչպէս որ սովոր էր, այլանդակ ղեկտա մը հագեր էր. սակայն վերջին դէպքերը սակաւ էին զինքը հատու սուր մը կախել քան թէ փայտէ սուր մը, և փոքրիկ վահան մը կրել՝ պահպանութիւն, և Դօրվիլսղրնի յարձակման ժամանակ՝ այս երկու զէնքն ալ ձեռնտուութեամբ դործածեր էր՝ թէև ինք արհեստով միանս էր։ Արդարև վամպայի ըղեղին տկարութենն ուրիշ բան չէր այլ միայն սեռակ մը դիւրաբդռութիւն՝ որ չէր ներեր զինքը մի և նոյն վիճակին մէջ ընդ երկար հանդարտ մնալ, կամ որոշ դաղափարի մը յարիլ, թէև կարճատև դործ մը կատարելու կամ իր ուշադրութիւնը դրաւող բան մ'ըմբռնելու համար բաւական ունակութիւն ունէր։ Ուստի՝ ձիուն վրայ՝ միտքն ասդին անդին կ'օրօրէր անդադար, երբեմն կենդանիին վզին, երբեմն գաւակին վրայ, և երբեմն իր երկու ոտքն երիվարին մէկ կողմը կ'կախէր, երբեմն երեսը պոչին վրայ կ'դներ, մմմաալով, երեսը ծռմռելով և տեսակ տեսակ շարժուածներ և կապկութիւններ ընելով, մինչև որ երիվարն այս քմահաճ ձևերէն այնչափ տաղտկացաւ, որ զանի դալարիին վրայ նետել բոլոր երկայնութեամբը։ Այս դիպուածը մեծ զուարճութիւն պատճառեց ասպետին իրաւ, բայց միտքը ստիպուեցաւ այնուհետև աւելի հանդարտ կենալ ձիուն վրայ։ Ան միջոցին որ մեր ուղևորներուն կ'գատնանք՝ այս զուարթ ամոլքը սկսեր էին շէր մ'երգել, միմոսը հագներդը կ'կրկնէր, մինչդեռ ասպետը նուագները կ'երդէր։

Ահաւասիկ սոյն նուագները.

Աննա Մարիամ, սէր, երա՛ւ արև,
Աննա Մարիամ, սէր, այդուն բարև,
Կ'ցրուին մշուշք, սէր, թռչունք կ'երգեն
Ծագի առաւօտ, սէր, լոյս է վառ,
Որսորդն փողէն հանէ ձայն կայտառ,
Լեռներ ու պուրակ արձագանք կրկնեն,
Ժամ է որ երթաս, սէր, Աննա Մարիամ։

ՎԱՄՊԱ

Ո՛ Թխպաղա, սէր իմ, թռչ, թռչ որ հնչեմ,
Անուշ երաղներ բարձիկս կ'դդուեն,
Ինչ են խնդութիւնք, երբ ես եմ արթուն,
Այս երազիս մօտ, ո՛չ ինչ, ո սէր իմ։
Թող որ թռչուններ այդուն ճուռղեն,
Անուշ ձայն, հաճոյք կ'զգամ ես ի քուն,
Եւ երազիս մէջ, կ'երևիս լինձ դուն։

— Այս ինչ ընաիր երգ է — ըսաւ Վամպա, երբ լրենց նուագն ա-ւարտեցին — և կ'երդնում իմ խաղալիքիս վրայ որ սիրուն բարոյական մ'ունի։ Սովոր էի Կիւրթի հետ երգել զայն, որ իմ խաղընկերս էր՝ ա-զատ մարդ լինելէն առաջ, Աստուծոյ և մեր տիրոջ շնորհիւ, բայց օր մը ծեծը կերանք, վասն զի այս երգին անուշութենէ այնքան յափշտա-կուեր էինք որ արևը ծագելէն երկու ժամ առք անկողնէն ելեր էինք։ Քանի կ'մտածեմ այն երգին վրայ ոսկորներս տակաւին կ'յուզին. բայց Աննա Մարիամի մասն ես երգեցի, աղնիւ ասպետ, ձեզ հաճելի լինե-լու համար։

Ա՛յնուհետև միմոն ուրիշ շէր մ'սկսաւ երգել, տեսակ մը կատակ-երգական երգ, որուն ձայնակից կ'լինէր ասպետը միմոնին սկսածը շա-րունակելով։

ԱՍՊԵՏ ԵՒ ՎԱՄՊԱ

Հարաւէն, հիւսիսէն և արևմուտքէն եկան երեք Ճամբորդ. Մենք բոլորակի երգենք. Վիքօմսի այրի կինն որսալու ելան. և ո՛ւր է այն այրին որ անոնց ո՛չ պիտի ըսէր։

Առաջինն էր ասպետ մը, Թայտաէլ երկրին քնիկ. մենք մեր երգ բո-լորակի երգենք. և իր նախահարքն, Աստուած պահէ, էին մեծահամ-բաւ. ո՛ւր այրի կինն պիտի ըսէր անոր ո՛չ։

Իր տանտէր հօր, իր ասպետ հօրեղբօր վրայ կ'պարծենար նա ամ-դուլ մեծաձայն երգելով. բայց այրին Ճամբեց զանի իր հողակոյտ առնէն, վասն զի այն է այրի կինն որ պիտի ըսէր ոչ։

ՎԱՄՊԱ

Եռեւէն եկող երկրորդ Ճամբորդն երկնի և երկրի վրայ կ'երգնու. . . մենք ուրախ զուարթ երգենք մեր երգը . . . Թէ ինք ազատորդի է, Աստուած գիտէ, և իր սերունդն է Կալէսէն. և ո՛ր այրի կին կրնար ը-սել ոչ։

Տէր Գաւիթենց, Մօրիանենց, Կրիֆիթենց, Հիւկենց, Թիւտորենց, Ռասենց, այս բոլոր անուններն իր երգին մէջ կան. Այրի կինն ըսաւ այսքան բազմաթիւ անուններու համար ինք քիչ է, և Կալէսացին իր լեռներն երթալու Ճամբեց։

Ա՛յնուհետև եկաւ դեղացին, Քէնտի դեղացի մը, իր երգն անուշ երգելով. այրի կնկան արջառի և հասոյթի վրայ խօսք բրաւ. և ո՛ւր էր այն այրի կինն որ անոր ոչ պիտի ըսէր։

ՍԻԱՍԻՆ

Ա՛յսպէս ասպետ և ազատորդի դրան առջև մնացին իրենց երգն եր-դելով։ Քէնտի դեղացւոյ մը և տարեկան հասոյթի մը համար, այրի կին մ'երբէք ոչ պիտի չկրնայ ըսել։

— Վամպա — գոչեց ասպետը — կ'փափաքէի որ կաղնիի ծառին վտարակը, կամ իր զուարթուն կրօնաւոր ընկերն ըսէր Քէնտի ազատա-խօս դեղացւոյն ի դուէտա այս երգը։

— Եւ ես չէի փափաքեր — ըսաւ Վամպա — առանց կամարէզ կա-խուած շէփորին։

— Այ՛ — ըսաւ ասպետը — Լօքսլէյի բարեկամութեան մէկ դրա-ւականն է այս, թէև տարակուսելի է որ ասկից պէտք ունենամ։ Եթէ այս շէփորն երեք անգամ փչեմ, ինչպէս որ նա հաւաստեց, այն բարե-միտ դեղացիներէ խումբ մըզի օգնութեան պիտի հասնին։

— Տրամադիր եմ ըսելու որ Աստուած մեզ այս օգնութենէ պահէ — ըսաւ միմոնը — եթէ չկրնայի որ այն աղտոր պարգև մ'է որ կը հաստատէ թէ պիտի թողուն մեզ անվնաս անցնելու։

— Ինչպէս, ինչ կ'ուզես ըսել — հարցուց ասպետը — միթէ կար-

ձեռս թէ առանց այս բարեկամական նշանին սիրտ կարող լինէին մեր վրայ յարձակելու :

— Ես իմ մասիս բան մը չեմ ըսեր — պատասխանեց Վամպա — վասն զի քարկիր պատերուն պէս կանաչ ծառերն ալ ականջներ ունին : Բայց, նայինք, ախր ասպետ, միթէ կարծել էք սա Հարպմանց պատասխան տալ . որ ժամանակ դինիի կոժն ու քսակն առնլի պարապ ունենալ սիրտը է մարդ քան լեցուն :

— Իրաւի, երբէք, կարծեմ — պատասխանեց ասպետը :

— Ես ոչ մին լեցուն ունենալու արժանի էք այդպիսի պարզ պատասխանի մը համար : Լաւագոյն է որ ձեր կոժը սաքօշի մ'անցնելէն առաջ պարպէք, և ձեր դրամը առնը թողլ անտառն ուղևորելու եր նելէն առաջ :

— Ուրեմն մեր բարեկամներն տաղակներըն տեղ դրեր ես — հարցուց ասպետը :

— Այդպիսի բան մը բերնէս չելաւ, աղնիւ ասպետ — բաւ Վամպա — երբ մարդ մ'երկար ճամրորդութիւն մ'ունի ընելու՝ իր ըրահը քաշտալով խեղճ ձիուն բեռը կրնայ թեթեւնալ . և արդարև՝ կարելի է մարդու մը հոգւոյն բարիք ընել իր աղէտից շարժառիթը թեթեւցընելով . հետևապէս ծանր անունները չեմ կրնար տալ այսպիսի ծառայութիւններ ընող մարդոց : Մինակ կ'փափաքիմ որ իմ ըրահս առնը դանուի և քսակս սեռեկիս մէջ, երբ այն բարի մարդոց հանդիպիմ, վասն զի աստղ թերևս մեծ տաղնապէ ազատին :

— Մեր պարտքն է անոնց համար աղօթել, բարեկամ, թէև այդպէս սև գոյներով կ'նկարագրես զանոնք :

— Բոլոր սրտով անոնց համար պիտի աղօթեմ — պատասխանեց Վամպա — բայց տան մէջ և չէ թէ անտառը, Ս. Պիղի վանահօր պէս, զոր խոռոչաւոր կաղնիի մը մէջ պատարագ ընելու տիսկեցին իբրև իր խորանը :

— Ինչո՞ր կ'ուզես ըսել, Վամպա — պատասխանեց ասպետը — այն գեղացիներն մեծ ծառայութիւն մը մատուցին Սէտրիկ տիրոջ. Դօրդիլըզնի դղեկին մէջ :

— Շատ ճշմարիտ է — պատասխանեց Վամպա — բայց երկնից հետ իրենց ունեցած առևտուրն ձեզ է այս :

— Իրենց առևտուրը, Վամպա, ինչ կ'իմանաս այդ բառով — հարցուց ասպետը :

— Ահա սա կ'իմանամ — բաւ Միմնոը — երկնից հետ հաշիւնե բաւ կշիռ մը կ'ընեն, ինչպէս որ մեր ծեր մատանապետը կ'կարդայ իր տումարը, որ Խահակ Հրէին իր պարտապանները հետ բրած հաշիւները չափ ու ջիլ է . ասոր պէս մեր մեծ դումարները փոխ կը տան և փոխարէն մեծ դումարներ կ'պահանջեն, կ'հարկէ օրհնաբոր փոխատուութեանց համար Սուրբ Գրոց խոստացած եօթնապատիկ վարձը շահու կողմը հաշուելով :

— Այդ բանդ օրհնակալ մը բայցարէ, Վամպա, ես թուանշաններէ և շահու խնդիրներէ բան մը չեմ հասկընար :

— Լաւ ուրեմն — բաւ Վամպա — քանի որ, արիասիրտ ասպետ, ձեր խնայականաթիւնն այդչափ գանդաղ է, դիտցիք որ այս բարեկիրթ մարդիկ բարի գործ մը կ'հշտեն ուրիշ գործի մը հետ որ բոլորովին դովելի չէ . օրհնաբոր համար, մանրայան կրօնաւորի մը քանի մը աբծամթ կ'տան և փոխարէն հարուստ վանահօր մը հարիւր ոսկին կ'կոզպատեն, կամ խեղճ այրի կնոջ մը տունը կ'թալլեն վարձատրելու համար օրիորդ մ'որուն հետ անտառին մէջ զուարճացեր են :

— Այս պարծելին նրն է լաւը, և նրն է վատը — հարցուց ասպետը :

— Աղ՝ որ կատակ, աղ որ կատակ — բաւ Վամպա — խելացի մարդոց ընկերաթիւնն խելքը կ'սրէ : Կ'երևնամ որ բաւական բան մը չբրիք, ախր ասպետ, երբ այն սիրուն Ճղնաւորին հետ պինեխտան եբեկոյեան աղօթք կ'երգէիք : Բայց կ'շարունակեմ : Անտառին զուարթութիւնս աղաչք անակն մը կ'շինեն և գլխակ մը կ'այլեն . փոքրիկ մատուռ մը խոզաքոմ կ'ծածկեն և եկեղեցի մը կ'թալլեն . գժբաղդ բանտաւոր մը կ'պատանեն և գատ գատ պատուար մը կ'պատճենեն, կամ առելի մեզի վերաբերող քաներս վրայ խօսելով, սարսօն Գրենվիլ մը կ'պատանեն և նօթման սեպուհ մ'ողջ ողջ կ'այրեն : Եկէք խօսքով, բարեսիրտ գողեր և մարդասպան աւազակներ են . բայց բարեբաղդ է այն որ անոնց հանդիպած առեն իրենց հաշիւն հատատարակիւս չէ :

— Ինչպէս հատատար չէ, Վամպա — հարցուց ասպետը :

— Վասն զի այն առեն սարջանը ունին և Աստուծոյ հետ հաշտուելու փափաք : Սակայն երբ իրենց հաշիւը կանոնաւոր է, ուզ առնց որոյ հետ նախ հաշիւ կ'բանան : Դօրդիլըզնի մէջ իրենց ըրած լաւ գործէն եաև՝ ամէ որ իրենց ձեռքն ընկած է անտարակոյս կիղեքուած է : Եւ սակայն — յարեց Վամպա՝ ասպետին մտածողով բոլորովին — կան այնպիսի մարդիկ որ ուղևորներու համար շատ առելի վտանգաւոր են քան թէ այն վտարակաները :

— Որո՞ւ վրայ է խօսքդ, վասն զի շրջակայքն ոչ մէկ կայ և ոչ գայլ — ըսաւ ասպետը։

— Իրաւի, Մալվուազէնի գինուորները կան — դոչեց Վամպա — և ներեցէք ինձ ըսել որ քաղաքային պատերազմի մ՚առեն տասնի չափ այս անօրէն մարդիկներէն միշտ դայլերու վոհմակ մը կ՚արժէն։ Իրենց բերքի եղանակն այս է, և Դօրոլիսգընի դղեկէն խոյս տուողներով ստուարացած են, այնպէս որ եթէ այս ասիրատներու խումբը մեր առջևն ելնէ, կարծեմ թէ պիտի ստիպուինք պատերազմելու։ Արդ՝ կ՚հարցնեմ ձեզ, ազնիւ ասպետ, ի՞նչ պիտի ընեինք եթէ անոնցմէ երկու հոգի մեզի հանդիպէին։

— Այն ասիրատները գետինը պիտի գամէի նիզակովս, Վամպա, եթէ մեզ քարոզ լինելու յանդգնէին։

— Բայց եթէ չորս հոգի լինէին, ա՛յն ատեն։

— Նոյն բաղդը պիտի ունենային — պատասխանեց ասպետը։

— Հապա եթէ վեց հոգի լինէին — շարունակեց Վամպա — և ես թէ այսպէս մինակ երկու հոգի մնայինք, միթէ Լօքսլէյի փողը չպիտի յիշէինք։

— Ինչ, ես — դոչեց ասպետը — ես օրնուիթեան կոչեմ տասնի չափ ասիրատներու դէմ, մինչդեռ մէկ քահանայ մը կարող է վանել զանոնք ինչպէս որ հովը կ՚վանէ չորաբեկ տերևները։

— Ուրեմն — պատասխանեց Վամպա — ներեցէք ինձ որ այդ հզօր ընդդէմ ունեցող փողն՝ ի մօտուստ քննեմ։

Ասպետն իր կամարին կոճակը քակեց և փողն իր ընկերին տուաւ, այս ալ իսկոյն վզէն կախեց զայն։

— Դրա, լէբա, լ — բսաւ նա փողը փչելով — կ՚նայիք որ իմ կոճս ուրիշին չափ լաւ դիտեմ։

— Ի՞նչ ըսել կ՚ուզես, անպիտան — ըսաւ ասպետը — տուր ինձ այդ փողը։

— Անհոգ եղիր, տէր ասպետ, ապահով ձեռքի մէջ կ՚գտնուի։ Երբ Արիուիթիւնն ու Ցիմարուիթիւնը միասին կ՚ուղորդուին, Ցիմարուիթիւնը պարտաւոր է փողը կրել, վասն զի նա լաւ ևս կարող է հնչել։

— Բայց, անզգամ — ըսաւ Սև ասպետը — դու չափէդ անդին կ՚անցնիս, նայէ որ Համբերուիթիւնս չհասցընես։

— Դու ալ փրփրալով բունուիթեամբ մի դիտեր զիս, տէր ասպետ — ըսաւ միմոսը զայրացած ասպետէն քանի մը քայլ հեռանալով — թէ ոչ Ցիմարուիթիւնն ընդ կրուի պիտի գտնայ և պիտի թողու որ Արիուիթիւնդ կրցածին պէս սոյն անտառէն իր շաւիղը գտնէ։

— Օ՛ն, դու տկար կողմն կ՚զարնես — ըսաւ ասպետը — և Ճշմարիտն ըսելով, քեզի հետ վիճաբանելու առեն չունիմ։ Եթէ կամիս փողը քովդ պահէ, բայց մեր ճամբան շարունակենք։

— Ուրեմն ինձ չպիտի ձգասէք, այնպէս չէ՞ — հարցուց Վամպա։

— Չէ, ըսի քեզ, ասլիրատ։

— Բայց ասպետական խօսք տուէք ինձ — շարունակեց Վամպա, երբ մեծ ղղու շուքեամբ կ՚մօտենար։

— Իմ ասպետական խօսքս կ՚տամ, միայն ընդ առաջ քալենք։

— Շատ լաւ, ուրեմն Արիուիթիւնն և Ցիմարուիթիւնը վերստին հաշտ ընկերներ դարձան — ըսաւ Միմոն ասպետին կողմն համարձակ մօտենալով — բայց Ճշմարիտը, չեմ սիրեր այն տեսակ կոփոյներ զոր մեծափոր կրօնաւորին իշեցուցիք և որով նորին Սրբուիթիւնն գետինը խոտին վրայ թաւալգոր եկաւ։ Այժմ սոյն Ցիմարուիթիւնը փողը կը կրէ, Արիուիթեան կ՚յորդորեմ արթուն կալ և բաշը թոթուել, վասն զի եթէ չեմ սխալիր, սա մայաւներուն մէջ խումբ մը մարդիկ կան որ մեզի կ՚սպասեն։

— Այդ բանն ուսկից իմացար — հարցուց ասպետը։

— Վասն զի երկու երեք անգամ դալարի տերևներու մէջ սաղաւարտի մը փայլը նշմարեցի։ Եթէ պարկեշտ մարդիկ լինէին՝ իրենց ճամբան պիտի շարունակէին։ Բայց սա վարի պուրակը Ս. Նիկողոսի* վանականներուն համար շատ յարմար մատուռ մ՚է։

— Հաւատա վիայ — ըսաւ ասպետն իր դիմապահը վար առնելով — կարծեմ թէ դու իրաւունք ունիս։

Եւ իրաւի այս ղղուշութիւնն ընելու ժամ էր, վասն զի նոյն պահուն երեք նետ արձակուելով կասկածելի վայրէն՝ եկան ասպետին դլխին և լանջին զարկին, նետին մէկն անդուշ ըղեղէն պիտի թափանցէր, եթէ պողպատի դիմապահը զայն՝ ի բաց չվանէր։ Միւս երկու նետերը պարանոյի պահպանակին և վզէն կախուած ասպարէսն զարնելով վար ընկան։

— Շնորհ ունիմ քեզ, իմ հաւատարիմ սպատազինուիթիւնս — ըսաւ ասպետը — Վամպա, քալենք անոնց վրայ։

Եւ շիտակ անտառակին կողմն արշաւեց։ Վեց եօթ հոգի իր դիմացն ելան և ուժգին մղեցին իրենց նիզակներով։ Նիզակներէն երեքն իրեն դպան և՝ որպես թէ պղնձէ աշտարակի մը զարկին՝ կտոր կտոր լինելով չորս կողմը թռան։ Կարծես թէ սև ասպետին աչերն նոյն իսկ

*Ս. Նիկողոս ուսուցչներու պաշտպանն է, կ՚ըսեն,

պիտասահին բացուածքէն հոտ կ'ժայթքէին: Աննկարագրելի վհատու-
նութեամբ իր ասպատանիներու վրայ կանդնեցաւ և ըսաւ. — Ինչ կը
նշանակէ այս, իմ տեարքս:» Ալ հարցման չի պատասխան զօրականնե-
րեն իրենց սուրերը քաշեցին և չորս կողմն անոր վրայ յարձակեցան
պոռալով. «Մեռիր, բռնաւոր:»

— Ա՛յ, սուրբ Էմմաուս, ա՛յ, սուրբ Վէորգ — բաւ Սև ասպետն
ամէն մէկ բացագանչութեան մարդ մը անապատա նետելով — մի՛թէ
դատաւաններ են ասոնք:

Սև ասպետին հակառակորդները թէև մինդնաձ էին, ետ քա-
շուեցան բաղդի մ'առջև որ ամէն մէկ հարուածին մահ կ'պատճա-
ռէր, և կ'երևէր թէ իր անուան նկրչցած սարսափը բուռական պիտի
լինէր իր ոսխները յաղթահարել, երբ ասպետ մը, կապոյտ գրահով,
որ միշտ այն տեղն միւս յարձակողներուն եռանդ կ'ցած էր, նիզակ'ի
ձեռին ընդ առաջ սլացաւ, և նշան առնելով չէ թէ ձիաւորին, այլ ձի-
ուն կարելիքը վիրաւորեց ազնիւ կենդանին:

— Ահաւասիկ դատաւանի հարուած մ'է այս — պոչեց սև ասպե-
տը, երբ երիվարը գետին ընկաւ, ձիաւորն ևս միասին տապալելով:

Եւ նոյն պահուն Վամպա շեփորը փչեց, վասն զի այս ամէնն այն-
քան արագութեամբ պատահեր էր որ ժամանակ չէր պատ առնելի
շուտ շարժելու: Այս յանկարծական շրջմունքը վերջապէս մարդասպանները
ապիկից ետ քաշուելու, և Վամպա, թէև կիսամահ վիրաւոր էր,
Սև ասպետին վազելու և զանի պետանէն վերցնելու չխրատեցաւ:

— Ամօթ ձեզ, վատ դատաւաններ — պոչեց կապոյտ գրահով ասպե-
տը որ կ'երևէր թէ յարձակողներուն պետն էր — ինչպէս կ'վախե-
նաք միտման մը փչած պարապ շեփորին ձայնէն:

Այս խօսքէն քաջալերուելով նորէն Սև ասպետին վրայ յարձակե-
ցան, որ ուրիշ չուտ, բայց միայն կոնակը կաղնիի մը ստղն
ինքնին պաշտպանել: Ափիրատ ասպետն, որ ուրիշ կողմէ մ'առեր
էր, վայրկեան մը միտքը միջ իր ամարտու ախոյանն չորս կոմսն
ասպետ կ'նետուելը էր, զէպ անոր վրայ ձին վազցնելով որպէս զի իր նիզա-
կով զանի ծառին գամ՝ երբ իր խորհուրդը վերջապէս կ'պետ Վամպա
ի ճարպկութեամբը: Ասիմոն իր չտնեցած այժն արագաշար-
ժութեամբը կեցնելով և զօրականներն իրեն ուշադրութեան չընդ-
րուելով, որոնք աւելի կարևոր գործով զբաղած էին, պալքարին սահմանը շուրջ
կ'զառնար, և կապոյտ ասպետին ետևն արդի հոգ իրապէս, իր սրտին
անոր ձիաւն ծնկան չխլերը կարելով: Ձի ու մարդ գետին գլորեցան,

ուսկից Սև ասպետն վրնկակը գետ ևս վտանգաւոր էր, քանի որ լիա-
զէն մարդը պինդը ասոնկ կ'նեղէին և սկսաւ յոգնիլ, ամենուսանք
կրած յարձակումներուն դէմ ինքզինքը պաշտպանելու համար թափած
անհնարին ճիգերուն պատճառաւ, երբ յանկարծ մութ մ'եկաւ և գետին
տապալեց իր մէկ գօրաւորագոյն ոսոխը, և շինական գօրաց պատնէշ մը
Լօքսլէյի և զուարթ վանականին առաջնորդութեամբ՝ անտառակէն
դուրս եկաւ: Այս նորեկ գինուորներն իսկոյն պայքարին մէջ մտան և բո-
լոր չարագործները զարկին, այնպէս որ ամէնն ալ գետին չհասած
մեռած կամ կարելի չէր վիրաւորած: Սև ասպետն իր ազատարարնե-
րուն ահագին գործակատարութեամբ շնորհակալ եղաւ, որ առաջին
անգամ չէին գործած նոյն բանն անոր վրայ, այլ կար-
ծես էին որ յանդուգն ու կռշտ գինուոր մ'էր նա քան թէ բարձր աս-
տիճանի մարդ մը:

— Շատ կ'փափաքիմ — բաւ Սև ասպետը — եթէ հնար է լմնա-
նալ, նոյն իսկ իմ բարեկամներուս երախտագիտութիւնս յայտնե-
լէն առաջ, թէ ձեր են առանց դրդռւթեան իմ վրայ յարձակող շքան-
դիներս: Վամպա, սա կապոյտ ասպետին դիմագրկը բաց, նա ուր
զրահներուն պարագլուխը պիտի լինի:

Միմոնը վազեց իսկոյն եղեռնագործ գնդին դլխատրին, որ անիու-
ժէն ջախջախեր՝ վիրաւոր ձիուն ներքև մնալով դեռին պատկեր էր մա-
քառելու կամ դիմադրելու անկարող:

— Օ՜ն, քաջդ ասպետ — բաւ Վամպա — պէտք է որ գինակիրդ
լինիմ ինչպէս նաև ախոռապանդ. քեղ ձիէն վար իջեցուցի, հիմակ ալ
սաղաւարտդ պիտի հանեմ:

Այսպէս ըսելով միմոնը շուտ ընդ փոյթ քակեց կապոյտ ասպետին
սաղաւարտն՝ որ խառին վրայ պրծաւ, և Սև ասպետին աչքը պարզեց
աղեխառն մազերը և կերպարան մը զոր նա չէր յուսար բնաւ տեսնել
այսպիսի պարագայի մը մէջ:

— Վօմամար Փէյտրա — պոչեց նա զարմանօք — ինչպէս քեզի
պէս բարձրաստիճան և պատուարժան ասպետ մը այսպիսի վատ ձեռն-
արկի մը պըտի կանդնելու:

— Բիչարա — բաւ պերճ ասպետն անտար նայելով — դու մարդկային
աղտը լաւ չես ճանչեր՝ եթէ չգիտես թէ փառասիրութիւնն ու վրէժ-
խնդրութիւնը միևնոյն ծառ կ'ատանն Ադամի մէկ որդին:

— Վրէժխնդրութիւն — պատասխանեց Սև ասպետը — ես բնաւ
չեմ հասկնար քեզ, իմնէ ինչ վրէժ ունիս հանելու:

— Հասպա իմ դուստրս, Բիչարա, իմ դուստրս որու հետ ամուսնա-նալու մերժեցիր. միթէ այս Նօրմանի մը Թշնամանք չէր, որուն արիւնը քու արեանդ չափ ալնիւ է:

— Դուստրդ — պատասխանեց Սև ասպետը — դուստրդ այս Թշնա-մութեան դրդիչ լինի, որ այսպիսի արիւնալի եղք մ'ունենայաւ: Հեռա-ցի'ք, բարեկամներս, այս մարդուն հետ առանձին խօսիլ կ'ուզեմ: Ու-թեմն, Վօլտամար Ֆիցուրս, ըսէ ինձ Ճշմարտութիւնը, խոստովանէ Թէ ինձ դրդեց քեզ այս գործն առնելու:

— Քու հօրդ որդին — պատասխանեց Վօլտամար — և այս ընելով հօրդ վրէժը կ'լուծէր առ այն անհնազանդութեանդ համար:

Բիչարայի աչերը սրամտութեամբ շողացին, բայց իր բարեմտին դուս-ուորութիւնը զսպեց այս զայրոյթը: Ձեռքը ճակտին տարաւ և պահ մը վիրաւոր ասպետին դէմքը դիտելով անցուց, որու կերպարանէն կ'երե-էր որ հպարտութիւնն ամօթասպարտութեան հետ կ'մաքառէր:

— Վօլտամար, ինչո՞ւ համար չես աղաչեր որ կեանքդ բաշխեմ քեզի — հարցուց Սև ասպետը:

— Առիւծին ձիրանին ներքև գտնուողը — պատասխանեց Ֆիցուրս — դիտէ որ անօգուտ է այդ ընորհը հայցել:

— Ուրեմն առանց հայցելու՝ ընդունէ կեանքդ իմ ձեռքէս — ըսաւ Բիչարտ — առիւծն իր հանդիսացած դիակներով չգնանիր: Կեանքդ քե-զի կ'բաշխեմ, բայց սա պայմանաւ որ երեք օրուան մէջ Անկլիոյ հո-ղին հեռանաս և երբեք ոտ վտանգիդ նօրմանդղեկիդ մէջ ծածկես ու երբեք չսիրես որ Անժուի ճօճն այս գաւաճանութեան մէջ մաս ունեցած է: Եթէ պայմանեալ ժամանակէն ետք՝ Անկլիոյ հո-ղին վրայ տեսնուիս՝ սիրտդ կխոնխոր, կամ եթէ իմ գերդաստանիս ա-նուան արատ բերելու մտօք բառ մ'անգամ արտասանես, սուրը գէդր-պայ վրայ կ'երգնում, որ նոյն իսկ եկեղեցւոյ խորանը քեզ ապաւէն չսիրտ կարենայ լինիլ. քեզ դղեկիդ աշտարակէն սիրտ կախել տամ անդղնեղու կուր լինելու համար: Լօքսլէյ, սա ասպետին երիվար մը տուր, վասն զի կ'տեսնեմ որ աղեղնաւորներդ արձակ մնացած ձիերն առին, և Թող որ անվնաս ասկից մեկնի:

— Եթէ չդիտէի որ ձայն մը կ'լսեմ որու հրամաններն անվրէպ պէտք է կատարել — պատասխանեց չինական դինուորը — անտարակոյս սա չարագործին սլաք մը պիտի զրկէի որպէս զի երկար ոտնուրթեան մը ծանրութենէ զինք ազատեմ:

— Դու անկլիացի սիրտ ունիս, Լօքսլէյ — ըսաւ Սև ասպետը — և

քանի կ'դատես որ պարտ է հնազանդիլ իմ հրամանիս. վասն զի ես, Անկլիոյ Թագաւոր Բիչարտն եմ:

Այս խօսքիս՝ զոր իր բարձր ատենէն և ազնիւ բնաւորութեան վայել վեհափառութեամբ արտասանեց Առիւծասիրտ Բիչարտ, շինա-կան զօրականներն խոհրդ ատոր տալն ծռնոր դրին, և միանգամայն հա-ւատարմութեան երդումը ընելով իրենց յանցանքին համար ներողութիւն խնդրեցին:

— Ոտք եղիք, բարեկամներս — ըսաւ Բիչարտ շնորհալի ձայնով, և դիտելով զանոնք այնպիսի դէմքով մ'որ կ'ցուցնէր Թէ իր սովորական ղուարթութիւնն, իր բարկութեան բուռ ութիւնն արդէն զսպեր էր, և կերպարանն ալ մղած յուսահատ սլայքարին նշոյլը չէր յայտներ բնաւ, բայց միայն յոգնութենէ պատճառած կարմրութիւնը: — Ոտք եղիք, բարեկամներ — ըսաւ նա — ձեր անկարգ գործերը՝ Թէ անատուի և Թէ դաշտի մէջ, քաւեցիք Դօրգիլսղբնի դղեկին առջև հարստահա-րեալ հպատակացս ձեր ըրած անկեղծ ծառայութեամբ, և այսօր ալ ձեր վեհապետին ալատութեամբ՝ զոր ձեզի կ'պարտաւորի: Ոտք եղիք, իմ հպատակներս, և այսուհետև ուղիղ վարմունք մ'ունեցէք: Իսկ դու, քաջդ Լօքսլէյ . . . :

— Վեհափառ տէր, այլ ևս մի անուններ զիս Լօքսլէյ. պարտաւոր եմ բուն անունս յայտնել ձեզ, անուն մ'որուն համբաւը, կարծեմ շատ տարածուելուն՝ միտքդ ձեր արքայական լսելեաց հասած պիտի լինի: Ես Ռոպէն Հուտ, Շէրվուտի անտառէն եմ:

— Դու վտարականերու Թագաւոր, և կտրիճներու իշխանն ես — գոչեց Բիչարտ: Ոչ լսած չէ անուն մ'որ միտքն պաղեստին հասաւ: Բայց հաւատտի եղիր, քաջդ վտարակ, որ մեր բացակայութեան ժա-մանակ և խռովալի ատենները որ մեր տարակայութենէ եկած են, ինչ գործ որ ըներ չսիրտի յիշուի քեզի դէմ:

— Այդպէս իսկ կ'ըսէ առածը — գոչեց Վամպա — որ ամէն տեղ քար մը նետել կ'ուզէր, և որուն ձայնն այս անգամ նուազ վաւելուչ էր քան առաջին անգամ:

Երբ կատուն կր փախչ
Մուկն խաղալ կ'ըսկսի:

— Լաւ, Վամպա, միթէ ձաստ ես — ըսաւ Բիչարտ: — Շատ ա-տենէ վեր ձայդ լսած չէի և կարծէի Թէ փախուստ տուեր ես:

— Ե՞ս փախիմ — բսաւ Վամպա — տեսած ես բնաւ որ յիմարու-Թիւնը քաջութենէ բաժնուի: Իմ սուրիս յաղԹանակն ահա սա տեղ

կեցած է, այս է գործ ձեր. կ'փափաքիմ սրտավին որ վերատին ուրբ վրայ գտնէ, սա պայմանաւ որ իր սիրոյ ծնկան չիյերն անոր տեղ կարող ըլլայ: Իրաւ է որ՝ ի սկզբան քիչ մը նահանջեցի, վասն զի խստատիպ վարուելակ մը չէ կարողնիդակի մը գիտնալ այնչափ լաւ որչափ պատշաճաւոր մը, բայց եթէ սուրբ ծայրով չվարուեցայ, կ'խոստովանիմ անշուշտ որ գէթ արիաբար պատերազմի փոյթը ցուցի:

— Եւ արդարև լաւ գիտնամ ըրիր, բարեսիրտ Վանիա — պատասխանեց Թադէոսը: — Քու այդ աղօթ ծառայութիւնդ չպիտի մոռնամ:

— Confiteor! confiteor (խոստովանիմ՝ խոստովանիմ) — գոչեց հոգւոյ ձայնով մը, Թադէոսին քովէն ձայն մը — իմ լսածներէս գլխս չպիտի ազատէ. բայց կ'խոստովանիմ իմ մեծ մեղանութիւնս, և ներողութիւն կ'հայցեմ կախաղանը գրկելէն առաջ:

Բիշարա աչերը գոցած՝ և ծունկի վրայ տեսաւ զուարթ վանականին որ աղօթք կ'ընէր, մինչդեռ իր երիծայր վիրդը՝ որ կուտի ժամանակին անպատմելի չէր կրցած, իր քովը կը խոսին վրայ: Իր կերպարանն այնպէս երևոյթ մ'առած էր որպէս թէ խորին զեղջմը կ'զգար. աչերը գլուխը վերցուցած և բերնին անկիւնները վար կոչած, վանդալի խօսքին համեմատ, իրրև ծոպք քահանի մը բերանը: Սակայն այս հեզութիւնն ու անհնարին զղջման բայաարութիւնն այլանդակ կերպով սատ կ'հանէին ծիծաղաշարժ նշաններ որ իր կոշտ գիտայ դէմքն մէջ կ'նշմարուէին, և որմէ կ'հասկնար թէ իր զղջումն ու երկիւղը միանգամայն կեղծ ու պատիր էին:

— Ինչո՞ւ համար այդպէս վհատած կ'երևիս, չիմար քահանայ — հարցուց Բիշարա — միթէ կ'վախնաս որ քու թեմականդ չիմանայ թէ ինչ հատատութեամբ կ'ծառայես Նօդը—Տամի և սուրբ Տրնոգանի, օն, քոչդ, մի վախնար. Անկիւյ Բիշարդը գինիի կոժին վրայ ըսուած պաղտնիք մ'երևան չհաներ բնաւ:

— Ո՛չ, իմ առնաշնորհալի վեհապետս — պատասխանեց Ճղնաւորը (որ քոչ ծանօթ է Թոլէդոյ Հուսի պատմութեան հմուտ եղբայրներուն եղբայր Դրք անուամբ), իմ երկիւղս հոգևոր պատգամէն չէ այլ արքայականէն: Բաւէ, իմ սրբազնիդ բուռնս ինչպէս Տիրոջ օրհնելոյն ականջին լինցուցի:

— Հա, հա — վրայ բերաւ Բիշարա — դեռ ևս այդ բանը հոգ կ'ընես: Իրաւ բռնցի հարուածդ մոռցեր էի, թէև իմ ականջս նոյնն ընդունելէն ետև ամբողջ օր մը հնչեց: Սակայն եթէ կուտիդ լաւ էր, թող իմ բոլորտիքս կեցող բարի մարդիկ վկայեն, եթէ փոխարէն տուածս անկից վար կ'մնար, իսկ եթէ կ'կարծես թէ տակաւին բան մը կ'պարտաւորիմ քեզի, և երկրորդ հարուած մը կ'փափաքիս . . . :

— Ամենևին, ամենևին — պատասխանեց Դրք Ճղնաւորը — իմ վաշխով հատուցիր ինձ: Երանի՛ թէ Ձեր վեհափառութիւնն այսպէս առատապէս վճարէր միշտ իր պարտքը:

— Եթէ այսպէս կրնայինք հատուցանել կարենայի — ըսաւ Թադէոսը — իմ պարտապահանջներս դատարկ դանձիս վրայ դանդատելու պատճառ մը չպիտի ունենային:

— Եւ տակայն — շարունակեց Ճղնաւորը շինծու ծանրութիւն մը ձերատին դասելով — չպիտեմ թէ ինչ ապաշխարանք պարտիմ կրել այն պիղծ հարուածիս համար:

— Եղբայր, այլևս մի խօսիր այդ բանին վրայ — ըսաւ Թադէոսը — հեթանոսայ և անհաւատից կողմէն այնքան հարուածներու տակաւին ետևէ չիմարութիւն պիտի լինէր իմն եթէ դժկամակի Գօթմէնհըրտի Ճղնաւորին պէս սուրբ կրօնաւորի մը կողմէն ընդունած կուտիս վրայ: Գարձեալ, իմ բարեսիրտ կրօնաւորս, կարծեմ թէ եկեղեցւոյն և քու անձիդ համար լաւ կ'լինէր եթէ քեզ քահանայական կարգէդ հանելու համար արտօնագիր մը ստանայի մեր պահպան գօրայ մէջ քեզ տեղ մը տալով, և սուրբ Տրնոգանի սեղանին սպասաւորութեան տեղ մեր ռանձին պահպանութիւնը քեզ յանձնէի:

— Աւատապետս — ըսաւ Ճղնաւորը — խոնարհաբար քեզնէ ներողութիւն կ'խնդրեմ, և անտարակոյս ինձ պիտի ներես եթէ խմանաս միայն թէ ծուլութեան մեղքն որչափ պաշարած է զիս: Սուրբ Տրնոգան (միշտ պահէ պահպանէ քեզ) իր խորշին մէջ հանդարտ կ'մնայ միշտ, եթէ իմ ժամերգութիւնս մոռնամ դերուկ այծեամ մը սպաննելու առթիւ: Երբեմն իմ Ճղնարանէս դուրս կ'անցնիմ գիշերը, չպիտեմ ինչ ընելու համար սուրբ Տրնոգան չզանգատիր բնաւ, հանդարտ տէր մ'էն և խաղաղասէր որչափ որ կրնայ լինիլ փայտեայ սուրբ մը: Անտարակոյս մեծ պատիւ մ'է ինձ իմ վեհապետիս սպասաւորելը, սակայն եթէ երեքայի որբևարի մը միսիթարել գեղին մէկ անկիւնը, կամ ուրիշ տեղ այծեամ մը սպանել, ինչ պիտի պատահէր: Ո՞ւր է այն շուն քահանայն» պիտի ըսէր մին: «Ո՛վ տեսաւ այն անիծեալ Տըքը» պիտի ըսէր ուրիշ մը: «Սա կրօնաղուրկ ապիրատն ուրկէ կ'սպասենք քանի թէ գատաւին կէսը» պիտի պատար որսապահը: Հուսկ ուրեմն, իմ մեծասիրտ վեհապետս, կ'աղաչեմ քեզ թողուլ զիս ուր որ եմ, կամ ե-

թէ կ'փափաքիս բարերարութիւն մ'ընել ինձ, Գօրմէնհըրդի մատրան իբրև խեղճ երէցը նկատէ ըլլս, և ինչ որ շնորհես սոյն մատրան՝ մեծ շնորհակալութեամբ պիտի ընդունիմ:

— Ա'խմանամ միաբդ — ըսաւ Թագաւորը — և սուրբ Հայրդ Վարնքլիֆի անտառին մէջ որսալու իրաւունք պիտի ունենաս: Սակայն ուշ դիր որ միայն երեք այծեամ սպաննելու հրաման կ'տամ քեզ ամէն մէկ եղանակի մէջ, բայց եթէ այս հրամանն երեսունի չափ սպաննելու իրեն պատճառ չծառայեր քեզ ոչ քրիստոնեայ ասպետ:

— Վեհափառ տէր, կրնաս վստահ լինիլ — պատասխանեց կրօնաւորն — որ սուրբ Տընսդանի օրհնութեամբը, առատաձեռնութիւններդ բազմապատկելու հնարը պիտի գտնեմ:

— Տարակոյս չունիմ, իմ բարի եղբայրս — վրայ բերաւ Թագաւորը — և որովհետև լսկ երէն չոր մնացեր մ'է, մեր մատանապետին հրաման պիտի տամ որ ամէն տարի տակառ մը գինեբէսի դինի, տակառ մի մը Մալվուազիի դինի, և երեք տակառ ալ առաջին կարգի գարեջուր դրկէ քեզ: Եթէ ծարաւդ մարելու համար այսչափը չբաւեր՝ արքունիքս պիտի դաս և շտեմարանապետիս հետ պիտի ծանօթանաս:

— Հմայ սուրբ Տընսդանի համար — ըսաւ Ճղնաւորը:

— Շուրջառ մը, ուրար մը, խորանի ծածկոց մը պիտի ունենաս նաև — յարեց Թագաւորը խաչ հանելով: — Բայց մեր կառակը վերջացընենք, առ ահի որ Աստուած մեզ չպատժէ տեսնելով որ աւելի իր պաշտամունքն և փառքը կ'մտածենք քան թէ մեր չխնայութիւնները:

— Ես իմ պաշտպան սուրբիս կողմէն պատասխանատու կ'ձնամ — ըսաւ կրօնաւորը զուարթաղին:

— Դու քու անձիդ պատասխանատու ձնայիր, կրօնաւոր — ըսաւ Բիչարտ Թագաւորը՝ փոքր մը խստութեամբ: Բայց անմիջապէս նորէն իր ձեռքը տարածելուն Ճղնաւորին կողմը, այս վերջինը փոքր մը դլխիկոր, ծունր դրաւ և նոյն ձեռքը համբուրեց: — Դու իմ այս տարածած ձեռքիս այնչափ պատիւ չես ըներ — ըսաւ Թագաւորը — որչափ ըրիր իմ կուռվիս, դու միայն ծունր կ'դնես միոյն առջև, մինչդեռ մեսին առջև երկիրը պագիր:

Բայց Ճղնաւորը՝ վախնալով որ Թագաւորը կ'վիրաւորվի նոյն ծաղրածու կերպով խօսքը շարունակելով, սխալմունք մ'որմէ զգոյշ կենալ պէտք են Թագաւորներու հետ խօսակից դանուողները, խորին խոնարհութեամբ բարևեց և նոր քաշուեցաւ:

Նոյն պահուն ուրիշ երիտ անձեր երևան եկան այս տեսարանիս մէջ:

ԳԼՈՒԽ ԽԱ

Տանք առ ամէն բարձր աւազանին, ողջոյն,
Որք մեղմէ երջանիկ չեն թէև ճոխագոյն,
Ամէն գալար ծառի տակ
Գան տեսնելու մեր խաղեր,
Ընդ ամէն չեն պուրակ, բարի՛ եկաք ողջոյն:
ՄԱ՛ՔՏՆՕԼՏ

Նորեկ ուղևորները էին Վիլֆրիտ Իվանօէ, Պոտոլֆի վանահօր ձիուն վրայ հեծած, և Ալբերթ՝ որ անոր կ'ընկերանար՝ նոյն իսկ ասպետին պատերազմի երիվարը նստած: Մեծ եղաւ Իվանօէի զարմանքն երբ Թագաւորն արիւնթաթաւ և պատերազմի դաշտին վրայ վեց հօթ դիակներ փռուած տեսաւ: Նոյնչափ տարապայման զարմանք ղգաց Իվանօէ անոր չորս կողմն անտառորդներ տեսնելով, որոնք՝ ըստ երևոյթին՝ մծատակայ անտառին վտակներն էին և հետևապէս Թագաւորի մը համար վտանգաւոր ընկերներ էին: Պահ մը վարանեցաւ և չգիտէր թէ ինչ կերպով վարուի անոր հետ և, իբրև Թափառական Ասպետ՝ թէ ոչ նոյն իսկ իր վեհապետին հետ: Բիչարտ անոր շփոթութիւնը տեսաւ:

— Մի՛ վախնար, Վիլֆրիտ — ըսաւ անոր — Բիչարտ Բլանդաժնէդի ուղղելու խօսքդ, քանի որ այսչափ ձշմարիտ և քաջասիրտ անկլիական եւանդէն մղուելով:

— Պարոն Վիլֆրիտ Իվանօէ — ըսաւ վտարականերու պարագլուխն դէպ անոր կողմը քալելով — իմ ապահովութիւններս չեն կրնար աւելի արժէք մը տալ իմ վեհապետիս յայտարարութեան. սակայն, ներէ ինձ, փոքր ինչ հպարտութեամբ յայտնել քեզ, թէ իր ամենէն շատ տառապող հպատակներէն չեն գտնուիր աւելի անկեղծ հպատակներ քան թէ այս պահուս իր բողոքները:

— Քաջ աղեղնաւոր, այդ մասին չեմ տարակուսիր բնաւ — վրայ բերաւ Վիլֆրիտ — քանի որ դու ալ այս կարգէն ես: Բայց այս մահուան և վտանգի նշաններն, այս սպանուած մարդիկն ու իմ վեհապետիս ապրելու զրահն ինչ կ'նշանակեն:

— Մահմուդիէհը մեր վրայ հասաւ, Իվանովէ — ըսաւ Թագաւորը — բայց այս քաջ մարդոց շնորհիւ մահմուդիէհն իր պատիժը գտաւ: Սակայն հիմակ կ'մտածեմ որ դու ալ մասնիչ մ'ես — յարեց Բիչարա ժպտելով — և մէկ խիստ անհնազանդ մասնիչ մը. վասն զի ես բացարձակ հրամաններ տուի որ Պօտոլֆի վանահօր տունը նախ մինչև վերջին բոյժը:

— Վերջը բոյժ դուստ — պատասխանեց Իվանովէ — այժմ սլաքի մը ձգած վերայն չափ ծանր չէ. բայց ինչու համար, աղնուատոհմ իշխան, այսպէս կ'վշտացընես քու հաւատարիմ հպատակացդ սիրտը, և կեանքդ վտանգի մէջ կ'դնես առանձին ուղևորելով և վտանգալի պատահարները փնտռելով, որպէս թէ իր միակ հոգն իր նիզակն ու սուրն եղող թափառական ասպետի կենաց արժէքն ունենար նաև քու կեանքդ երկրիս վրայ:

— Եւ Բլանդաժնէդի Բիչարան — ըսաւ Թագաւորն — ուրիշ հոգ չփափաքիր քան զոր ինչ իր նիզակն ու սուրը կրնան շահիլ, և Բլանդաժնէդի Բիչարան աւելի դուռղութիւն կ'ղգայ սպայքար մ'ընելով իր ընտիր սրոճն ու բազկին զօրութեամբը քան թէ հարիւր հազար հոգւոյ բանակ մը պատերազմի առաջնորդել:

— Բայց քու Թագաւորութեանդ, վեհափառ տէր — ըսաւ Իվանովէ — քու տէրութեանդ կ'սպառնան մեծ ձախորդութիւններ և քաղաքական պատերազմ. հպատակներու ամէն տեսակ աղէտք կ'սպասեն եթէ իրենց վեհապետը կորուսեն վտանգի մը մէջ զոր ամէն օր ախորժ կ'ըզգաս փնտռելու և որմէ այժմ իսկ մազապուր ազատեցար:

— Հօ, հօ, իմ Թագաւորութիւնս — և իմ հպատակներս — պատասխանեց Բիչարա անհամբերութեամբ: — Ահա կ'ըսեմ քեզ, Վիլֆրիտ, անոյշմէ լաւագոյններն իսկ պատրաստ են իմ յիմարութեանցս փոխարէն յիմարութիւններ ընել: Օրինակի համար, իմ ամէնէն հաւատարիմ սպասաւորս, Վիլֆրիտ Իվանովէն իմ հաստատ հրամանիս անսաղ չուզեր, և սակայն այժմ իր Թագաւորին քարող կ'կարդայ, վասն զի իր խորհրդին բոլորովին չհետևիր: Մեղնէ ոչ միւսը յանդիմանելու իրաւունք ունի: Բայց ներէ ինձ ըսել, իմ հաւատարիմ Վիլֆրիտս, որ այսպէս անյայտ անցուցած և դեռ ևս անցնելիք ժամանակս կարևոր էր որպէս զի բարեկամներս և հաւատարիմ աղնուականներս իրենց զօրքը ժողովելու միջոց ունենան, այնպէս որ երբ Բիչարտի վերադարձը ծանուցուի՝ կարող լինի նա այնպիսի բանակի մը գլուխն անցնիլ որ թշնամիներն իրեն դէմ ելնելու դողան, և հետևապէս առանց սուրը պատե-

նէն հանելու իսկ կանխորոշ մահմուդիէհը պսպէ: Քսան չորս ժամ պէտք է որ Էսքովիլ և Պօհուն կարող լինին իրենց զօրքը պատրաստել և դէպ 'ի Լօրք քալել. Ի հարաւ գտնուող Լորտ Մէլվըլըրիի կողմէն լուրեր առնելու կ'սպասեմ, իսկ Վօրվիդշայրի մէջ՝ Պօշանէն իսկ հիւսիսի կողմը, Մուլտոնէն և Բէրսիէն: Օրինապետը Լանաոնը պիտի խաղաղ պահէ: Եթէ յանկարծակի երևան գայի Թերևս վտանգի ենթարկէի, և սոյն վտանգէն չպիտի ազատէի նիզակիս և սուրիս շնորհիւ, թէև աջակից ունենամ յանդուգն Րօպէն Հուտի աղեղը, մեր խնդումբոս եղբայր Դրքի երկայր վիրգը, և խնաստուն Վամպայի շեփորը:

Վիլֆրիտ դլուխը ծռեց խոնարհաբար, քաջ կխանալով որ զուր բան էր իր տիրոջն ասպետական անզուսպ ոգւոյն դէմ մաքառելու, որով ատեպ Բիչարա արկածներու մէջ կ'նետուէր, թէև անկից խոյս տալ իրեն դիւրին էր, կամ լաւ ևս ըսենք, աննեղելի էր իրեն զանոնք փնտռելու: Նորատի ասպետը հառաչեց և լուռ կեցաւ, մինչդեռ Բիչարտ, իր խորհրդատուն լուռթեան դատապարտելուն վրայ ուրախանալով, թէև սրտովին կ'զգար թէ անոր ըրած յանդիմանութիւնը հիմնաւոր էր, Րօպէն Հուտի հետ խօսակցութիւնը շարունակեց. — Վտարակաց Թագաւոր — ըսաւ նա — միթէ քու վեհապետ եղբօրդ քիչ մը մտնդ տալու կարողութիւն չունիմ. վասն զի սա մեռած ասլիբանտներն ինձ ախորժակ և յոգնութիւն տուին:

— Ճշմարիտը — պատասխանեց հրամանատարը — վասն զի Ձեր վեհափառութեան առջև խօսելու կ'անդամնեմ, մեր մտաւանին մէջ մասնաւորապէս . . . — և խօսքը կտրեց շփոթելով:

— Երէի միս կայ, կարծեմ — վրայ բերաւ Բիչարա խնդալին: — Նեղ ժամանակ՝ ասկէ լաւագոյն մտնդ մը չկրնար լինիլ, և արդարև, քանի որ Թագաւոր մ'իր տունը չնստիր և իր յատուկ երկն չսպասներ, կարծեմ թէ պարտաւոր չէ արտնջել երբ իր տեղն ուրիշները կ'որսան իր անտառներուն մէջ:

— Ուրեմն, եթէ հաճիս, տէր արքայ, ներկայութեամբդ պատուել Րօպէն Հուտի ժամադրութեան մէկ վայրը, երկն պակաս չպիտի գտնէ. ասկէ զատ Թակոյկ մը պարէջուր, և Թերևս բաւական ընթեր դինի մը ճաշակել տալու յոյժողիմ:

Հետևապէս վտարակը ճամբան ցոյցոյց. եաևէն կ'երթար զուարթագին Թագաւորն, որ Թերևս աւելի երջանիկ էր Րօպէն Հուտն իր անտառորդներուն հետ, յանկարծ գտնելուն, քան Թէ իր արքայական աթոռը նստէր և նախարարաց ու աղնուականաց շքեղ ժողովի մը նա-

խաղահէր: Ինչ որ նոր, ինչ որ արկածական էր Առիւծասիրտ Բիւզարաի կենաց հրապոյրը կ'դառնար, և երբ վտանգներու պատահէր և յաղթանակէր աւելի մեծ արժէք կ'ստանար աշխարհ իր աչաց: Այս առիւծասիրտ թագաւորին վիպասանական ասպետի մը փայլուն այլանօգուտ բնաւորութիւնը կերպով մը կենդանութիւն և իրականութիւն առեր էր, և իր զինուց ղօրութեամբ ստացած անձնական փառքն իր վառվռուն երեւակայութեան աւելի սիրելի էր քան թէ իմաստուն և քաղաքագէտ կառավարութեան մը փայլը: Ուստի իր իշխանութիւնն փայլուն և արագաշարժ աստղի մը շրջանին նմանեցար, որ թէև երկնից երեսը կ'փայլատակի հիասքանչ լուսով, բայց շուտով կ'անցնի և անոր տեղ ընդհանուր խաւար մը կ'սիրէ: Իր ասպետական շահատակութիւնները վիպասաններու նիւթ տուին, սակայն իր հայրենեաց չթողին այն երկարատեւ բարիքն՝ որու վրայ պատմութիւնն հաճոյութեամբ կ'խօսի և ապագայ սերնդին իբրև օրինակ կ'ընծայէ: Բայց Բիչարա իր արդի ընկերներուն մէջ իր բոլոր բարեմասնութիւններովը կ'երևէր: Ջուարթ, բարեմիտն էր, և ժողովրդեան որ կարդին մէջ որ արիասրտութիւն պահէր կ'սիրէր:

Շուտով պատրաստեցին պեղջական ձաշը ստուար կաղնիի մը տակ, Անկլիոյ թագաւորին համար, որուն շուրջն աւերէին իր կառավարութեան կողմէ տարագրած վտարականներ, և ասոնք այժմիւ պալատականներն ու թիկնապահ զօրքը կ'կազմէին: Երբ գինիի թակոյկը բոլորովքը շրջան բրաւ, կոշտ անտաւորդներն իսկոյն մոռցան նորին վեհափառութեան ներկայութեան ազդած յարգանքը: Երգ ու կատակ բերնէ բերան անցան, ամէնքն սկսան հին շահատակութիւններ պատմել, և ի վերջէ՝ մինչդեռ կ'պարծէին թէ ինչպէս ատենով օրինաց դէմ գործեր էին, ոչ ոք ուշ ածեց որ ասոնց բնական պահապանին առջև կ'խօսին: Ջուարթուն թագաւորը՝ իր սեղանակիցներուն պէս իր աստիճանին անփոյթ, կ'ծիծաղէր, կ'խմէր և ուրախալի խմբին մէջ կատակներ կ'ընէր: Բօսկէն Հուտ իր բնական և հասարակ խելքով կ'փափաքէր որ այս ինջոյքը վերջանայ՝ անոր ներդաշնակութիւնը վրդովող բան մը չպատահած, մանաւանդ քանի կ'դիտէր որ Իվանհօէի ճակատն անձկութեան մուայլով կ'ծածկուէր: — Մեր արիասիրտ վեհապետն իր ներկայութեամբը մեզ կ'պատուէ — ըսաւ Իվանհօէին մեկուսի, սակայն կ'փափաքիմ որ սէրուն թեան գործոյ համար անդին ժամանակն ի զուր չանցընէ աստանօր:

— Շատ լաւ և իմաստութեամբ խօսեցար, քաջդ Բօսկէն Հուտ — ըսաւ Վիլֆրիա մեկուսի — և պիտի միանգամայն որ նոյն իսկ զուար-

թուն ժամերուն մէջ՝ թագաւորի մը հետ կատակ ընելը, առիւծի մը կորիւնին հետ խաղալ է, որ եթէ թեթև պրպիւռ մ'անդամ պատահի, ձիրաններն ու ակռաները կ'գործածէ:

— Իմ երկիւղիս ձիշտ պատճառը դուստր — ըսաւ վտարակը: — Իմ մարդիկս ի բնէ և սովորութեամբ կոշտ են, թագաւորն որչափ ցասկոտ նոյնչափ զուարթ է. ո՛վ գիտէ, կարելի է բարկութեան առիթ մը տրուի և մեծ կռիւ մը բռնուի. ժամ է արդ այս խնջոյքն ընդհատել:

— Ուրեմն, արիասիրտ մարդ, հնար մը գտիր — ըսաւ Իվանհօէ. վասն զի ամէն անպատճառն որ յորդոր տուի այս մասին՝ թագաւորն անսաստ մնաց և ձաշն աւելի երկարաձգելու փափաք ցոյց:

— Ուրեմն սիքսը է իմ վեհապետիս ներողամտութիւնն ու շնորհը չարաչար գործածել — ըսաւ Բօսկէն Հուտ՝ պահ մը մտածելով: Բայց սուրբ Քրիսթոֆ վկայ, սիքսը է: Անոր շնորհայ անարժան սիրտ սեպհական եթէ օգտին համար զայն կորուսելու երկնչիմ: Հէյ, Ալբաթլօք, դնա սա պատրակին եռակը պահէ և որսորդի շեփորովդ նօթմանեան երգ մը հնչէ, առանց ժամանակ անցընելու, եթէ չես կամիր կեանքդ վտանգի մէջ դնել:

Ալբաթլօք իր հրամանատարին անասց և հինգ վայրկեան այն ինչ անցեր էր որ փողի շրնդիւնն կոչնականներն ահ ու դող ելան:

— Մալվուազէնի փողն է — գոչեց Միլլը՝ ոտքի վրայ կանգնելով և աղեղն առնելով: Նոյն պահուն Ալբաթ Ճղնաւորն ալ ձեռքը բռնած շիշը վար ձգեց և իր երկայայր վիրցն առաւ: Վանպայի բերանը կիսկատար մնաց կատակը, և լուռ խոկոյն իր սուրն ու ասպարն առաւ: Բոլոր միւս հանդիսականներն իրենց գինուց վազեցին:

Վաղանցուկ կեանք վարող մարդիկ սեղանէն հեշտիւ կ'անջնին ի դուստր, և Բիչարաի համար այս փոփոխութիւնը հրճուանաց յաջորդութիւն մը կ'երևէր: Իր սաղաւարտն և արդէն հանած գինուց ամենէն ծանր մասերը խնդրեց, և մինչդեռ կիրթ զանոնք կ'կապէր, Վիլֆրիայի խոսիւ ապտպրեց մօտալուտ կարճած պայքարին մէջ չմտնել, եթէ չէր կամեր իր տհաճութեան հանդիսիլ:

— Դու հարիւր անգամ կուռած ես ինձի համար, Վիլֆրիա, և ես ականատես վկայ եղած եմ ըսածիս: Այսօր ալ դու հանդիսատես պիտի լինիս և պիտի տեսնես թէ ինչպէս Բիչարա կ'պատերազմի իր բարեկամին և հատատարիմ հպատակին համար:

Նոյն պահուն՝ Բօսկէն Հուտ զանազան տեղեր դրկեր էր իր մարդիկը՝ որպէս թէ թշնամւոյն դիրքը լրտեսեն. և երբ տեսաւ որ ընկերնե-

ըր ձիը ուզան եղած են՝ Բիչարտին մօտ գնաց, որ նոյն միջոցին լծուկին ղեկուելը էր, և մէկ ծունկը կրկնելով, իր վեհապետէն ներողութիւն խնդրեց։

— Ի՞նչ բանի համար, քաջդ — հարցուց Բիչարտ՝ փոքր ինչ անհամբեր։ — Միթէ արդէն բոլոր օրինազանցութեանդ համար լիուլի ներողութիւն չտուի։ Միթէ կարծես թէ մեր խօսքը փետուր մ'է՝ զոր հովը մերթ այս մերթ այն կողմը կ'քշէ։ Այս ներողութենէ ետք՝ դուն նոր յանցանք մը գործելու ժամանակ չունեցար։

— Այո, գործեցի — պատասխանեց Րօպէն — եթէ յանցանք է վեհապետս խաբել իր օգտին համար։ Լսած փողդ Մալվուազէնինը չէ, այլ իմ պատուէրիս համեմատ հնչեցին այս խնջոյքին աւարտ տալու համար, վախնալով որ քու անդին ժամերդ կարևորագոյն գործերու նուիրելու տեղ այսպէս ընդ ունայն չանցնին։

Ցետոյ ոտք ելաւ, թևերը կուրծքին վրայ ծալլեց և ակնածու քան հնդ կերպով Թագաւորին պատասխանին սպասեց, իբր մարդ մ'որ՝ թէև յանցանք մը գործելը կ'զգայ, սակայն վստահ է իր բարի դիտաւորութեան վրայ։ Բարկութենէն Բիչարտին արիւնն երեսին զարկաւ, քայց անցաւոր այլայլութիւն մ'էր, և արդարութեան զգացումը զայն ղսպեց։

— Շէրվուտի Թագաւորը — ըսաւ Բիչարտ — կ'խնայէ արդեօք իր երէն և դինին Անկլիոյ Թագաւորին։ Շատ լաւ, արդ Րօպէն, բայց երբ դաս գնս տեսնելու իմ Լոնտօնի զուարթուն քաղաքս՝ գնս աւելի վեհանձն հիւրընկալ մը պիտի դտնես։ Սակայն՝ իրաւունք ունիս, բաներիա ընկեր. ուստի աշտանակինք և Ճամբայ եղնենք։ Ժամ մը կայ որ վ.իլֆրիտ անհամբեր կ'սպասէ։ Ըսէ ինձ, արդ Րօպէն, միթէ խմբիդ մէջ բարեկամ չունի՞ս որ խորհուրդ տալը բաւական չսեպելով, շարժումներդ անդամ ուղղելու կ'փափաքի և դժբաղդ կ'լինի երբ դու ինքն քու գլխիդ դործ մը կատարես։

— Այո, վեհափառ, այդպէս իմ տեղակալը Փոքրիկ Ճօն — պատասխանեց Րօպէն — և այս պահուս մինչև Սկովտիոյ սահմանները արշաւելու պաշտօն ունի. և պիտի խոստովանիմ քեզ որ երբեմն իր ապատաբան խորհուրդներն ինձ անախորժ կ'թուին. բայց երբ վերստին կ'խորհիմ, չեմ կարող նեղանալ այն մարդուն դէմ որ իր անձնուիրեան ուրիշ գրգիռ մը չունի այլ միայն իր տիրոջը ծառայելու անշուշտ եռանդ մը։

— Իրաւունք ունիս, քաջդ — պատասխանեց Բիչարտ — և եթէ մէկ կողմն Իվանհօէն ունենայի իբրև խորհրդատու, և իր խորհրդոց իբրև փաստ իր Ճակտին տրտմութիւնը, և միւս կողմէն քեզ, իմ յատուկ օգուտս կարծած բանիդ համար գլիս խաբելու, այն ատեն քրիստոնեայ Թագաւորաց մէջ ամենէն անապատը պիտի լինէի։ Բայց, բարեկամներ, ծն, երթանք, Գօնինկսպըրկ դնալու ոտք եղնենք, և այս խօսքին վերջ տանք։

Րօպէն Հուտ ապահովցուց զամէնքն որ իրենց բունելիք Ճամբուն վրայ իր մարդիկներէն խումբ մը ղրկած է, որոնք անտարակոյս երեւան պիտի հանեն և յայտնեն եթէ պաղտնի դարան մը կայ. և թէ անկասկած էր որ Ճամբան անվտանգ պիտի ընեն, կամ, եթէ վտանգ կայ, ժամանակին ազդարարութիւն ստանալով կարող պիտի լինին նահանջել և դունդ մ'աղեղնաւորներու վրայ կրթնիլ, որոց հետ ինքն հեռուէն Թագաւորին հետևելու կ'մտադրէր։

Թագաւորն իր ապահովութեան համար Րօպէնի առած այս խոհական ղգուշութիւնները լսելով սիրտը շարժեցաւ և վտարակաց պարապելն անմեղ խաբէութեան վրայ ղգացած թեթև սրտմտութիւնն իսկ փարատեց. վերստին իր ձեռքը կարկառեց Րօպէն Հուտի, ապահովցուց որ կատարեալ ներողութիւն կ'ընծայէ անոր և ապագայ արտօնութիւններ, որ նպատակ պիտի ունենան անտաւային բուռն օրէնքը մեղմել, որով շատ մը անկլիացի դեղակիներ ապստամբելու սկիպուեր էին։ Բայց Բիչարտի պատուական խորհուրդներն իր տարաժամ մահամերձն՝ ի դերև ելան, և Անտաւայ Գաշինքն Ճօն Թագաւորին ձեռքէն խլեցին միայն, երբ իր դիւցազնական եղբօրը յաջորդեց . . . : Վտարակին կարծիքը Ճշմարիտ ելաւ. և Թագաւորն՝ Իվանհօէի, Վուբթի և Վամպայի ուղեկցութեամբ՝ անարգել հասաւ Գօնինկսպըրկի դղեկին առջև՝ երբ արևը տակաւին հորիզոնին վրայ էր։

Անկլիոյ մէջ այս սաքսոնեան հին բերդին մօտ գտնուած բնական տեսարաններուն պէս դեղեցիկ կամ հրապուրելի տեսարան քիչ կայ։ Մեղմ և հեղաձայն Տօն գետն ամիրեմաորնի մը մէջէն կ'հոսի, ուր մշակեալ հողեր անտառուտ վայրերու հետ կ'խառնուին, և բլրի մը վրայ, որ գետին եղերքէն վեր կ'ելնէ, և պատերազմու փոսերով պաշտպանուած է, հին դղեակը կ'բարձրանայ։ Այս դղեակն՝ ինչպէս որ անունէն կ'իմացուի, աշխարհակալութենէ առաջ՝ Անկլիոյ Թագաւորներու մէկ բնակարանն էր։ Հաւանօրէն արտաքին պատերը նորմանները շինել տուած լինին, սակայն ներքին աշտարակը հնութեան նշաններ

կ'կրէ : Ա յս աշտարակը բարձրութեան մը վրայ՝ ներքին պատին մէկ անկիւնը շինուած է, և շուրջ քսան հինգ ոտք տրամագիծ ունեցող շրջանակ մը կ'յօրինէ : Պատերն ահագին թանձրութիւն մ'ունին և բռնուած են վեց խոշոր աղեղնաձև յենարաններով որ շրջանակէն դուրս կ'ժայթքին և աշտարակին կողերուն վրայ կ'կռթնին անոր ամրութիւնը կամ նեցուկ տալու համար : Ա յս ամրակուռ յենարանները հաստատուն են երբ հիմունքն ի վեր կ'ելնեն և բաւական կ'բարձրանան, սակայն կատարին կողմը դոգաւոր կ'դառնան և տեսակ մը փոքր աշտարակներու կ'հասնին որ նոյն իսկ ներքին բերդին հետ հաղորդակցութիւն ունին : Ա յս ստուար շէնքն՝ իր այլանդակ մասերով ի հեռուստ այնպիսի տեսք մ'ունի որ ոչ միայն նկարագեղ տեսարաններու սիրահար մարդոց, այլև հետազննին հնադիտին աչաց համար դղեկին ներքին կողմը հետաքրքրաշարժ է, ըստ որում իր երևակայութեամբը կրնայ Եօթնապետաց թեան ժամանակները թուիլ : Դղեկին մօտ հողաքլուր մը կայ՝ որու համար կ'ըսեն թէ հռչակաւոր Հէնկիստի դերեզմանն է և շատ հետաքրքրական և հին յիշատակարաններ կ'տեսնուին նաև մօտակայ դերեզմանատան մէջ :

Երբ Առիճասիրտ Րիչարտ և իր հետևակներն այս կողմ այլահարկու շէնքին մօտեցան, ինչպէս այժմ՝ արտաքին ամրոցներով շրջապատուած չէր : Սաքսոն ճարտարապետն իր արհեստին բոլոր հնարքը գործածեր էր ներքին բերդն անառիկ գործելու և շուրջն ուրիշ պատնէշ չուներ բայց եթէ կոշտաբար շինուած քանի մը պատուարներ :

Աշտարակին ծայրը տատանող ահագին սև դրօշակ մը կ'իմացուէր որ սոյն դղեկին վերջին տիրոջ յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարէին : Ա յս դրօշակը հանդուցեալին ծննդեան և տասնհանին նշանը չէր կրեր, վասն զի՝ նոյն իսկ նօրման ասպետներու մէջ անդամ զինագրոշմները նորութիւն մ'էին տակաւին, իսկ սաքսոններու բոլորովին անծանօթ : Բայց մեծ դրան վրայ ուրիշ դրօշակ մը կար՝ որու վրայ կոշտաբար նկարուած սպիտակ ձիու մը դէմքը կ'տեսնուէր, և այս էր Հէնկիստի և իր սաքսոն մարտիկներու քաջածանօթ նշանակը :

Դղեկին չորս կողմը խառն ու շփոթ շարժում և աղմուկ կար . վասն զի այսպիսի դամբանական խնջոյքներ ընդհանուր և շռայլ հիւրընկալութեան առիթներ էին, որու հրաւիրուած էին ոչ միայն հանդուցեալին հեռաւոր ազգականները, այլ որ և է անցորդներ : Վախճանեալ Աթէլստէնի հարստութիւնն ու աստիճանը սոյն սովորութիւններն կատարելապէս պահելու սահմանը էին :

Ուստի բազմաթիւ մարդիկ կ'եղնէին և կ'իջնէին այն բլրէն որու վրայ շինուած էր դղեակը . և երբ թագաւորն ու իր մարդիկն արտաքին պատուարին բայց և անպաշտպան դռներէն ներս մտան, իրենց աչաց այնպիսի տեսարան մը ներկայացաւ որ դժուարին էր սոյն խնջոյից պատճառին հետ համաձայնել : Ասդին՝ խոհակերներ արիւն քիրտ կը թափէին որ ահագին կովեր և գէր ոչխարներ խորովեն, անդին՝ դահեկրի տակառներ կ'բանային որպէս զի ըստ հաճոյս ով որ ներս գայ խմէ : Ամէն տեսակ մարդկան խմբակներ կերակուրը կ'լափէին և ապաուրէն իրենց ուզածին չափ ըմպելի կ'կլլէին : Ա յն տեղ մերկ սաքսոն սորուկն իր կիսամեայ անօթութիւնն ու ծարաւը կ'անցընէր մէկ օրուան որկրամոլութեամբ և գինովութեամբ : Յոյր ոստանին ու մեծայայ վաճառականն ամենէն փափուկ պատառն ախորժանօք կ'ուտէր, կամ հետաքրքրութեամբ կ'քննադատէր գարեջրին տեսակին ու գարեջրի վաճառականին վարպետութիւնը : Սակաւաթիւ նօրման ազնուականներ ևս կային անդ, որոնք գիւրաւ կ'ճանչցուէին իրենց գերծուած կզակէն և կարճ վերարկուէն, որոնք իբրու մօտ մկուսի կեցեր էին և արհամարհ աչօք կ'դիտէին այս հանդէսը, թէև առատօրէն գրուած պատուական կերակուրներ ուտելու կ'հաճէին :

Աւելորդ է ըսել թէ նոյն վայրը հարիւրաւոր մուրացիկներ ալ կային, նոյնպէս Պալեստինէն գարձած թափառական գինուորներ, գէթ իրենք այսպէս կ'ըսէին : Շրջուն փերեզակներ իրենց ապրանքը կ'ցուցնէին, ուղեւոր գործաւորներ գործ կ'փնտռէին, դատարկապորտ ախտաւորներ, լեռնական քահանաներ, սաքսոն վիպասաններ և վէրշյի քերթողներ աղօթներ կ'մրմնային և իրենց սանդուկէն, կիթառէն և ջութակէն անախորժ ձայներ կ'հանէին : Մին՝ Աթէլստէնի գովեստը կ'երգէր սիրապին ներբողմ'ըսելով, ուրիշմը՝ սաքսոն լեզուաւ՝ ազգաբանական քերթուած մը կ'նուագէր և անոր ամենէն նախնեայ խորթ և անսուաղ անուններն կ'կրկնէր : Ա յս ամրոխին մէջ միմոններ և ձեռնածուներն ալ պակաս չէին, և այս սղալի ժամուն՝ բոլոր հանդիսականներն անոնց կ'նայէին առանց անոնց այս արհեստն անվայել կամ դժպատեհ սեպելու : Իրաւի՝ սաքսոններու դատարկարերն՝ այսպիսի պարագաներու մէջ՝ որչափ բնական նոյնչափ կոշտ էին : Եթէ վիշտը ծարաւի էր՝ խմելիք կար, եթէ սիրտը վշտաբեկ կ'ձնշուէր՝ նոյն տեղ ինքնութեան, պէտ զուարճութեան միջոցներ կային : Հանդիսականներն սոյն միխիթարական նշանները սիրելու չէին մերժեր, թէև մերթ ընդ մերթ մարդիկ՝ որպէս թէ սոյն գուսանական բուն շարժառիթը յիշելով միա-

ձայն ողբալու կ'սկսէին, մինչդեռ կիները՝ որ բազմաթիւ էին, իրենց ձայները բարձրացընելով ողբ ու կոծ կ'արձակէին:

Գօնթինկսպըրիի դղեկին դատին մէջ այս այլանգակ տեսարանը կ'անցնէր՝ երբ Բիչարտ և իր հետեւորդները ներս մտան: Պատահարը չէր զլխաներ սարին կարգի խռմբերու անընդհատ եկքն ու մուտքը դիտելու, այլ միայն եթէ հարկ լինէր կարգ կանոն պահել տալ: Սակայն Թագաւորին և Իվանհօէի առնիւ կերպարանքն իր ուշադրութիւնը դրաւեց, նա մանաւանդ երբ նկատեց որ վերջնոյն զէմքն իրեն ընտանի կ'երեւէր: Ասկից զատ՝ երկու ասպետներու գալուստն, որոնք իրենց հագուստէն կ'մանաւանդ, հաղուագիւտ բան մ'էր սաքսոնեան հանգիսի մը մէջ, և հետեւապէս մեծ պատիւ մը կ'սեպուէր այս այցելութիւնը հանգուցեալին և ներկաստանին համար: Այս կարեւոր անձը՝ սևեր հագուած և իր պաշտօնին ազնուական ցուցը ձեռքը բռնած այցելուներու բազմութեան մէջէն ճամբայ մը բացաւ և Բիչարտն ու Իվանհօէն մինչև աշտարակին մուտքն առաջնորդեց: Կիրթ և Վամբա բակին մէջ իսկոյն ծանօթները գտան, չհամարձակելցան աւելի ևս առաջ գնալ և սպասեցին որ ներս կանչուին:

ԳԼՈՒԽ ԽԲ

Տեսայ զանոնք որ Պարսկաստանի մարմինը կ'պատանքէին:
Եւ կար անգամօր մը այնպիսի մեղեդի հանդիսաւոր,
Երգերու, արտասուքի և ողբ ու լալիւնի —
Որպէս պատուհ կիներ աշխարհէն երբ մեռելի մնա,
Եւ բոլոր գիշեր անգութ հակելով կ'անցնեն ժամեր,
Հին Եաղ:

Գօնթինկսպըրիի մեծ աշտարակը մանելու ճամբան շատ նշանաւոր է և իր շինութեան նախկին ժամանակներու անուսյ պարզութեան գրաշմը կ'կրէ: Աստիճաններու շարք մը, այնքան խոր և նեղ որ դրեթէ սեղան ձեւ կ'երեւի, աշտարակին հարաւային կողմը պատուող ցած գրան մը կը տանի, ուսկից յանդուգն հնաստերը գետնի ևս կարող է, կամ դէթ քանի մը տարի առաջ կարող էր, փոքրիկ սանդղի մը հասնիլ աշտարակին մեծ պատին վրայ բացուած, որ շէնքին երրորդ դասիկոնը կ'առաջնորդէ: Երկու տարին դասիկոնները նկուղներ կամ կամարներ են, որ ոչ օդ ոչ

լոյս կ'ընդունին, բայց՝ ի քառակուսի ծակէ մ'որ երրորդ դասիկոնին վրայ կ'տեսնուի, որու հետ կ'երևի թէ հաղորդակցութիւն ունի եղած բանի մը միջոցաւ: Աշտարակին վերնատոյն սենեակները երթալու համար, որ ընդ ամէնը չորս դասիկոն ունէր, արտաքին կամարակապերու մէջ շինուած սանդուխներ կային:

Ահա այս դժուարին և կիզուռտ ճամբէն էր որ Բիչարտ բարի թագաւորը՝ իր հաւատարիմ Իվանհօէի ընկերութեամբ երրորդ դասիկոնը բոլորովին բռնող բոլորակ սենեակն ներս մտան: Վիլֆրիտ այս երբեմն դժուարութենէն ժամանակ գտաւ իր դէմքը վերարիւովը ծածկելու, և այս միջոցը գործածեց որ Հօրը չյայտնուի մինչև որ Թագաւորն իրեն նշան չընէ երևան երթալու: Սոյն սենեկին մէջ, կարելի մեծ սեղանի մը բոլորը նստած էին մօտակայ գաւառներէն եկող սաքսոն ներդաստանականերու ամենէն երեւելի ներկայացուցիչները: Ամէնքը ծերուկներ, դէմ արդուն մարդիկ էին, վասն զի նոր սերունդը, ի մեծ դժգոհութիւն հիներուն, Իվանհօէին պէս՝ տասպերը էին շատ մը պատանեշներ՝ որ կէս գաբէ վեր յաղթողնորմանները յաղթեալ սաքսոններէն կ'գատէին: Ա յս պատկառելի մարդոց ակնոր և վշտահար դէմքը, իրենց լուռթիւնն և սգալի դիրքը նշանաւոր հակապատկեր մը կ'ընծայէին դղեկէն դուրս դանուող մարդոց խնդութեան հետ: Իրենց ալեխառն մազերը, իրենց երկար մօրուքը, նոյնպէս իրենց հին պատմուճանն և թոյլ սև վերարկուն շատ կ'յարմարէին իրենց նստած սենեկին եղական և անուշադ ձևին հետ, և անոնց վշտահի հին երկրպագուներուն խռմբի երևոյթը կ'տային, որպէս թէ իրենց ազգային փառքն ողբալու համար վերածներ էին: Թէև Սէտրիկ իր քաղաքացիներուն հաւասար կարգը նստեր էր, սակայն՝ ամենուն հաւանութեամբ՝ ժողովին իրրև նախագահը կ'դործէր: Երբ Բիչարտ ներս մտաւ (որ իրեն ծանօթ էր միայն իրրև երկաթէ Վզգակի ասպետ) Սէտրիկ ծանրօրէն ոտք ելաւ, և անոր բարև տուաւ սաքսոնական waes hael ըսելով, միանգամայն կոյժ մը մինչև գլուխը տանելով: Թագաւորն՝ որ անվարժ չէր անկիւսյի հպատակացը սովորութեանց, փոխադարձ բարև տուաւ drink hael սովորական խօսքն արտասանելով, և մատուսակին կողմէն իրեն տրուած բաժակն առաւ: Մի և նոյն մարդավարական մաղթանքն եղաւ նաև Իվանհօէին, որ փոխադարձը մատոյց իր Հօրը լուռթեամբ, և որպէս զի իր ձայնէն չմատնուի՝ փոխանակ խօսելու՝ գլուխը ծռեց: Երբ այս նախնական արարողութիւնը լմընցաւ, Սէտրիկ ոտք ելաւ, և ձեռքը Բիչարտի տալով՝ փոքրիկ և կոշտ մատուռ մը տարաւ որ կեր-

պով մը արտաքին կամարակալին մէկուն մէջ փորուած էր: Որովհետև ուրիշ բացուածք չկար բայց միայն նեղ լուսամուտ մը, այս վայրը բոլորովին՝ ի մեծ պիտի մնար եթէ երկու կանթեղ կամ ջահ չվառէին, որոց կարմրուն և ծխոտ լոյսէն կ՚երևէին կամարաձև ձեղունն, մերկ պատերը, քարաշէն խորանն և նոյն նիւթէն անոտաշ խաչը:

Այս խորանին առջև գազաղմը դրուած էր, և սոյն գազաղին ամէն մէկ կողմն երեք քահանայ ծունր կրկներ էին, և վարդապետ քաշելով արտաքին ջերմեռանդութեան ամէն նշանաներով իրենց աղօթքը կը մրմնջէին: Այս պաշտաման համար սուրբ Էմմօնդի վանուց փառաւոր պարզև մը արուեր էր հանդուցեալին մօրը կողմէ, և որպէս զի պաշտօնը շքեղօրէն կատարուի, բոլոր վանականք, կաղլուսաբարէն զատ, գ-ծնինկալըրկ եկեր էին: Վեց կրօնաւոր Ամէլստէֆի գազաղին մօտ շարունակ վերջին արարողութիւնները կատարելու առեն, միւսները դղեկին մէջ տեղի ունեցած զուարճութեանց և խնջոյից մասնակից լինելու չէին դանգաղեր: Մինչդեռ այս բարեպաշտական կոչումն և պահպանութիւնը կ՚կատարէին՝ բարի վանականները յատկապէս ուշադիր էին պահ մ՚իրենց ժամերգութիւնը չընդհատել, առ ահի որ Ջէրնոլօք, սաքսօնեան հին սադանը, Ամէլստէֆի դիակին վրայ իր ձիրանները չդնէ: Նոյնպէս հոգ կ՚տանէին որ անսուրբ աշխարհական մը գազաղին ծածկոյթին չդպչի, գազաղ մ՚որ սուրբ Էմմօնդի յատկութեան գործածուած լինելով նուիրական կ՚սեպուէր . . . : Բիչարտ և Վիլֆրիտ մեռելի սենեակին երթալու համար սաքսօն Սէտրիկին հետևէն գային, որ հանդիսաւոր կերպով Ամէլսթէֆի դիակը ցոյց տալուն՝ երկու հիւրերը խաչ համբուրելին և հանդուցեալին հոգւոյն համար կարճ աղօթք մ՚ըրին:

Այս բարեպաշտական գործը կատարելէն ետև՝ Սէտրիկ վերստին նշան ըրաւ անոնց որ իրեն հետևին, և անշշուկ քայլով քանի մ՚աստիճան վեր եկնելէ ետև՝ մեծ զգուշութեամբ մատրան պատկից փոքրիկ աղօթարանի մը դուռը բացաւ: Շուրջ ութ քառակուսի ոտք տարածութիւն ունէր, և մատրան սէտ հատ պատին մէջ շինուած էր: Տեսակ մը խեստ նեղ լուսամուտ մ՚որ այս աղօթարանը կ՚լուսաւորէր և ներքուստ կ՚լսէնար, մարդ մնտող արևուն նշոյլները կ՚ընդունէր նոյն պահուն, և երևան կ՚հանէր աղնուագէմ կին մը, որու կերպարանքը վաղեմի փառաւորութեան մը նշանները կ՚կրէր: Իր սուգի երկայն շրջազգեստն և ծփուն սև քօղն իր կաշկին սպիտակութեան և դեղձան գիսակներուն աւելի փայլ կ՚ընծայէին, որոնք ժամանակին ոչ անօսրեր

և ոչ ձերմակեր էին: Իր կերպարանքը կ՚յայտնէր խորին տրտմութիւն և համբերատար ներմեռանդութիւն: Իր առջևը՝ քարէ սեղանի մը վրայ փղոսկրեայ խաչ մը կար, ասոր մօտ դրուած էր խորհրդատետր մը՝ որու երեսները պերճօրէն զունաւորուած, ծայրերն ոսկի ճարմանդով և նոյն թանկագին մետաղէ դրուագներով զարդարուն էին:

— Ազնիւ Էտիթ — ըսաւ Սէտրիկ՝ պահ մը լուռ կենալէն ետև, որպէս թէ Բիչարտի և Վիլֆրիտի ժամանակ տալ կ՚ուզէին որ դղեկին տիրուհին տեսնէն — ասոնք ընտիր օտարականներ են որ ձեր վշտայ մասնակից լինելու եկած են: Եւ այս անձը՝ մասնաւորապէս՝ այն արիասիրտ ասպետն է որ այնքան քաջութեամբ կռուեցաւ մեր այսօրուան ողբացած անձին ազատութեան համար:

— Իր քաջութիւնն իմ շնորհակալութեան արժանի է — պատասխանեց տիկինը — թէև Աստուծոյ կամքն էր որ անարդիւն մնայ: Նոյնպէս շնորհակալ եմ և իր ընկերին մարդասիրութեան համար որ զիրենք այս տեղ Ատլին այրի կնոջ, Ամէլստէֆի մօրը քով առաջնորդեց այս տրտմութեան և ողբոյ ժամանակ: Բարեսիրտ ազգականս, ձեր խնամոյ կ՚յանձնեմ զանոնք, վստահ լինելով որ այս տխուր դղեկին մէջ պէտք եղած ասպնջականութիւնը պիտի գտնեն:

Հիւրերը խորին խոնարհութիւն մ՚ըրին լալագին մօր առջև և իրենց հիւրասէր առաջնորդին հետ հեռացան:

Ուրիշ բոլորակ սանդուղք մ՚իրենց առաջուց մնած սենեկին մեծութեամբ սրահ մը մտան որ վերին պատիկնն էր: Պուռը բացուելէն առաջ՝ նոյն սենեկէն ծանր և մելամաղձիկ երգի մը մրմունջը լսեցին: Երբ ներս մտան՝ սաքսօնեան տոհմէ քանի չափ ազնիւ տիկիններ և օրիորդներ տեսան: Զորս օրիորդներ՝ որոց գլուխն էր Րովէնա, հանդուցեալին հոգւոյն համար շարական մ՚երգելին, որու միայն երկու երեք տուները կարող եղանք պահելու:

Հոգ ենք և՚ի հող
Ուր տանջանք անհնարին
Տի դառնանք անշուշտ.
Տի սրբեն քո արատ
Քու ձև կորնչական
Ասի յանցանացդ:
Ան իր մարդ հողածին,
Ի վայր այն տխրագին,
Որդոց տի լինիս կուր
Թմղ շնորհիւ Տիրամօր,
Ապականն յապական:
Կարճանայ քո գազար,
Ուղևներէն անյայտ
Մինչ գլուխ ու աղօթք
Քու հոգիդ սրայատ,
Եւ սաղմոսք սրբանուէր
Խնդրելու վայր վշտայ,
Ազատեն գերիդ սպատ:

Մինչդեռ նորաստի օրիորդայ գան այս սպալի երգը կ'երգէր ծանր ու մելամաղձիկ ձայնով, միւս կիներն երկու մաս բաժնուած՝ միմ իր բոլոր ձայնին ու ձարտարութիւնը Թափելով Ամէլսահէնի պապակը ծածկելու սահմանուած սև ատլաս մը պէնալարդ գործելու կ'զբաղէր, և միւս մասը՝ իր առջև գրուած զանիւղներէ ծաղիկներ քաղելով նոյն սպալի նպատակին համար պսակներ կ'յօրինէր: Նորաստի աղջիկներու ընթացքն եթէ ոչ խորին տրամութեան, գէթ վայելչութեան նշաններն ունէր. բայց երբ առն առն իրենց կողմէ մրմունջ մը լսէր կամ ժպիտ մ'երևէր, ամենէն խիստ տիկիններէ սաստ կ'ընդունէին, իսկ սպիս անդին կ'առնուէր օրիորդ մ'որ առելի զբաղած էր քննելու թէ արդեօք իր սև լաթերն իրեն կ'վայլէին, քան թէ այն տխուր արարողութիւնն որու համար կ'պատրաստուէին: Եթէ հարկ է ճշմարտութիւնը խոստովանիլ, պարտինք ըսել թէ աղջկանց այս խնդալու հակումը չպակսեցաւ ամենևին երկու օտար ասպետներու գալովն, զորս լուստ մ'որ ամենուն աչքը վեր վերցընել, պաղատ ու դողդ նայիլ և փափաղ առաւ: Բովէնա միայն՝ որ հպարտութենէն մնապարծ չէր, շնորհալի մարդավարութեամբ բարևեց իր աղաստարարը: Իր կերպարանն ծանր էր առանց չափազանց տրտմութեան, և կասկածելի էր թէ արդեօք Խնանօէի վրայ մտանուքն և իր բազդին անստուգութիւնն առելի իրեն ծանր վարմունք մը կ'տային քան թէ իր ազգականին մահը:

Իսկ Ամարիկ, որ՝ ինչպէս արդէն ըսինք՝ շատ հեռատես չէր այսպիսի պարագայից մէջ, իր առնին տրտմութիւնն այնքան առելի ծանր դատ միս օրիորդայ տրտմութենէն, որ յարմար դատեց ըսելու թէ՝ «Բովէնա աղնիւ Ամէլսահէնի նշանածն էր:» Ընթերցողը կրնայ երևակայել թէ՝ այս տեղեկութիւնն կրնար Գօնկինհասլերկի սպառնալեր վշտակից դանուելու համար Խնանօէի տրամադրութիւնն առելցնել:

Այսպէս Ամարիկ հիւրերն այլ և այլ սենեակները տանելէն ետև, որ Ամէլսահէնի յուղարկաւորութեան հանդէսը կատարելու համար կերպ պատրաստութիւններ կ'տեսնուէին, առաջնորդեց զանոնք փոքրիկ խուց մ'որ, ինչպէս ինք յայտնեց, պատուաւոր հիւրերու սահմանուած էր միայն, որոնք հանդուցեալին հետ սերտ յարաբերութիւն չունենալով թերևս չէին ուզեր միանալ այս տխուր դէպքին ուղղակի պատճառած անձերու հետ: Հաւատաց անոնց որ բան մը չպիտի պակսի իրենց հանգստութեան համար, և քաշուելու վրայ էր երբ Ամ պահան անոր ձեռքէն բռնեց:

— Աղնիւ տանուտէր, ներեցէք ինձ ձեր ուշն ածելու — ըսաւ նա —

որ երբ մենք վերջին անգամ մեկնեցանք, խօսք տուիք ինձ՝ ձեզ ըրած ծառայութեանս փոխարէն շնորհ մ'ընել ինձ:

— Աղնիւ ասպետ — պատասխանեց Ամարիկ — դեռ չյայտնած ձեր խնդիրը կատարած համարեցէք, սակայն այս տխուր ժամուս . . . :

— Ես ալ մոռցեր էի այդ բանը — ընդմիջեց Թագաւորը — բայց ժամանակս սուղ է, և սակայն բարեպատեհ ժամ մը կ'թուի ինձ որ, երբ աղնիւ Ամէլսահէնի պերեզմանը պիտի դոցուի, անոր մէջ Թաղենք նաև քանի մը նախասպաշարումներ և կանխակալ կարծիքներ:

— Ամ ասպետ — ըսաւ Ամարիկ կարմրելով և ըստ կարգի Թագաւորին խօսքն ընդհատելով — յուսամ որ խնդիրը չէ Թէ ուրիշի այլ ձեզի կ'պատկանի, վասն զի իմ տանս պատուոյն վերաբերող գործի մ'անվայել է որ օտարական մը միջամտի:

— Ես ալ չեմ կամիր միջամտել — պատասխանեց Թագաւորն անուշութեամբ — միայն Թէ պէտք է ընդունիք Թէ արքան հանկրութիւն ունիմ ձեզի: Մինչ յարդ զիս իբրև Ամ ասպետ ճանչցած էք, այժմ իբրև Բիչարտ Բլանդաժնէդ ճանչցիր զիս:

— Անժուէ Բիչարտը — գոչեց Ամարիկ զարմանօք ընկրկելով:

— Ո՛չ, աղնիւ Ամարիկ, Անկլիոյ Թագաւոր Բիչարտ, որու ջերմ փափաքը, որու ջերմաջերմ խղճն է իր որդիքն իրարու հետ կապուած տեսնել: Լաւ ուրեմն, աղնիւ ազգապետ, միմէ քու Թագաւորիդ առջև ծունր չպիտի կրկնես:

— Երբէք ծունր չեմ կրկնած նօրմանի մ'առջև — ըսաւ Ամարիկ:

— Ուրեմն յարդանքդ վերապահէ — ըսաւ Թագաւորը — միևնոյն ատ'լի փորձ հաստատեմ Թէ անոր արժանի եմ՝ հաւատարմութիւն պաշտպանելով նօրմանն և անկլիացի հպատակներս:

— Իշխան — պատասխանեց Ամարիկ — ես միշտ քու արիութենդ և արժէքդ յարգած եմ. գիտեմ նաև իրաւունքդ Թագին՝ իբրև սեռոնդ Մարթիլտի, որ Էսկարտ Էթլինի եղբօրաղջիկն և Սկովտիոյ Մալքոմի գուստրն էր . . . : Բայց Մաթիլտ՝ Թէև արքայական տոհմէ, սաքսօնական իշխանութենէն ժառանգուհի չէր:

— Ես քեզի հետ իմ իրաւանցս վրայ վիճել չեմ կամիր աստանօր, աղնիւ ազգապետ — ըսաւ Բիչարտ հանդարտութեամբ — բայց պիտի խնդրեմ որ բոլորտիքդ նայիս և տեսնես Թէ ուրիշ իրաւունք մը պիտի դանես իմիոիս դէմ դնելու:

— Եւ միթէ այս խօսքերն ըսելու համար, իշխան, անտեղեակ — ըսաւ Ամարիկ: — Եկար որ ազդ առնես ինձ իմ ցեղիս կործանումն,

սաքսօնեան թագաւորութեան յետին շառաւիղն վրայ դեռ ևս գերեզմանին քարը չդրուած — իր դէմքը կ'ամփոփեր այսպէս խօսելու ատեն :

— Ա՜յս մեծ յանդգնութիւն, մեծ ժպրհութիւն է քու կողմէդ :

— Այդպէս չէ, սուրբ խաչվկայ — պատասխանեց թագաւորը : — Ես անկեղծ և ազատ վստահութեամբ խօսեցայ, ինչպէս որ ուղիղ մարդ մը պարտ է խօսիլ ուրիշի մը՝ առանց ամենաթեթև վտանգի :

— Դուն իրաւունք ունիս, վեհափառ թագաւոր. վասն զի կ'խոստովանիմ որ դուն թագաւոր ես և իմ տկար դիմադրութեանս չնայելով միշտ պիտի լինիս : Ձեմ իշխեր զայն արգիլելու համար միակ միջոցին դիմել, թէև այդ զօրաւոր զրոխն իմ ձեռացս ներքև դրիր :

— Հիմակ իմ խնդրոյս դառնանք — ըսաւ թագաւորը — զայն կը պահանջեմ միշտ վստահութեամբ որպէս թէ իմ օրինաւոր վեհապետութիւնս ճանչնալու մեծաց չլինէիր : Քեզնէ կ'պահանջեմ իրրև իօսքի տէր և պատուոյ մարդ սեպելով քեզ, և եթէ չես կամիր որ անհատատարիմ, ուխտադրուժ և վատահոգի երևիս իմ առջև, կ'պահանջեմ որ ներես : Պիտի խոստովանիս որ այս հաշտութեան մէջ շահ մը ունիմ, այս է իմ բարեկամիս երջանկութիւնն և իմ հատատարիմ ժողովրդեան մէջ երկպառակութեան դադարումը :

— Ուրեմն այս ընկերակիցդ է Վիլլբրիտ Խնամօէն — հարցուց Սէտրիկ իր որդին յուզ տալով :

— Հայր իմ, հայր իմ — ըսաւ Խնամօէ Սէտրիկին ոտքն ընկնելով — չնորհէ ինձ ներողութիւնդ :

— Իմ ներողութիւնս ունիս, որդեակ իմ — վրայ բերաւ Սէտրիկ զանի վերցնելով : — Հիրվարտի որդին իր խօսքը կ'յարգէ, թէև այս խօսքը նօրմանի մը տուած լինի : Բայց պէտք է որ քու անկլիացի նախնեացդ հպատակը վերստին հայտնիս. չեմ ուզեր տեսնել վրադ կարճ վերարկու, զարդարուն դգակ, և ոչ այլանդակ փետուրներ իմ համեստ տանս մէջ : Այն որ կ'փափաքի Սէտրիկի որդին լինիլ պէտք է որ անկլիացի նախնեացը հատատարիմ երևի : Դուն խօսիլ կամիս — յարեց նա խստութեամբ — և ես կ'զուշակեմ ըսելիքդ : Պէտք է որ օրիորդ Ռովէնան երկու տարի սուգ պահէ 'ի յիշատակ իր նշանածին : Բոլոր մեր սաքսօն նախնիքը մեզ պիտի ուրանան եթէ եղնենք այժմէն կարգելու այն օրիորդն, մինչդեռ այն անձին դերեզմանն որու հետ պիտի ամուսնանար, այն որ այնչափ արժանի է իրեն թէ ծննդեան և թէ աղնուականութեան կողմէ, հապա թէ դողուած է : Ախէլստէյնի ուրուականն իր պատանքը պիտի մերկանար և մեր առջև պիտի երևէր իր յիշատակին լինելիք այսպիսի նախատինքը մ'արգիլելու համար :

Ա՛հսպէս իմն կ'երևէր որ Սէտրիկի խօսքն ուրուական մը կոչեցին. վասն զի այն ինչ այս խօսքն արտասանեց որ դուրն լինքնին բացուեցաւ, և Ախէլստէյն՝ կերեզմանական հագուստովը զարդարուած, անոնց առջև կանգուն կեցաւ՝ դունատ, դաժան և դժոխքէն եկնող մեռելի մը պէս :*

Այս երևոյթին տպաւորութիւնը ներկայ գտնուող անձերու վրայ ահարկու եղաւ : Սէտրիկ սենեկին պատին ներածին չափ ետ ետ քաշուեցաւ լեզուպատառ և անոր կռթնեցաւ իբրև մարդ մ'որ չէ կարող ոտքի վրայ կենալ, և իր բարեկամին նայելով այնպիսի աչերով որ անթարթ կ'երևէին և բերանով մը զոր գոյնելու անկարող էր : Խնամօէ խաչ հանեց, սաքսօն, լատին և նօրման – գաղղիական լեզուաւ աղօթք ընելով ինչպէս որ յուշը կ'գար խառն ի խուռն, մինչդեռ Րիչարտ հետզհետէ կ'ըսէր լատին և գաղղիացի լեզուաւ. Benedicité! և կ'երդնուր. Mort de ma vie!

Նոյն պահուն սանդղին ոտքը սոսկալի աղմուկ մը լսուեցաւ, ոմանք կ'ըսէին. — Բռնեցէք մատնտու կրօնաւորները — այլք — Ջուտ նկուղն իջեցուցէք — վերջապէս ուրիշներ — Բարձրադոյն պարիսպներէն վար նետեցէք :

— Ցանուն Աստուծոյ — գոչեց Սէտրիկ խօսքն ուղղելով այն ստուերին որ իր մեռեալ բարեկամին ուրուականը կ'երևէր : — Եթէ մահկանացու ես՝ խօսէ, եթէ ոգի ես՝ ըսէ մեզ թէ ինչ պատճառաւ մեզի նոր չէն այցի կ'գաս. կենդանի կամ մեռած, ալնիւ Ախէլստէյն, խօսէ Սէտրիկին, ինչ կրնամ ընել հոգւոյդ հանգստութեան համար :

— Պիտի խօսիմ — ըսաւ ուրուականը — երբոր քիչ մը շունչ առնում և դու ալ ժամանակ տաս : Եթէ կենդանի եմ, հայրդ ես դուն. կենդանի եմ, այո, որչափ որ կարող է լինիլ մարդ որ երեք օր, որ երեք դար կ'երևնին, չոր հայրով ու ջրով ապրած է, այո, հայրով ու ջրով միայն, Սէտրիկ, երկին և արքայութեան բոլոր սուրբերը վկայ. երեք ամեներիար օր կոկորդէս լաւագոյն կերակուր մ'անցած չէ, և Աստուծոյ նախախնամութեան մէկ հրաշքովն է որ ողջ մնալով ահա այժմ քեզի կ'խօսիմ :

*Ախէլստէյնի յարութիւնն՝ նոյն իսկ վիպական գործի մը մէջ, հաւանական նութեան կանոնաց իրրև հակառակ դեպք ստեպ քննադատութեան առարկայ եղաւ : Երդարև ըսուն դեպք մ'է որու դիմելու ստիպուեցաւ հեղինակը՝ իր հրատարակչին և բարեկամին ազդու թախանձանաց դիմանալով, վասն զի չէր կրնար մխիթարուիլ նա Ախէլստէյնի մահուան վրայ : Վ. Ս

— Ինչպէս, աղնիւ Ամէլսաէն — պոչեց Սև ասպետը — Դօրդիլսըլի կռուին վերջերը տեսայ վայրագ տաճարականն որ քեզ տապալեց, և վանգա, ինչպէս որ կարծեր էի, յայտնեց մեզ որ գանիէդ միևչև ահռաներդ ձեղքած է:

— Պարոն ասպետ, ծուռ տեսեր ես — վրայ բերաւ Ամէլսաէն — և վանգա ստուտ խօսեր է: Իմ ահռաներս լաւ վիճակի մէջեն և պիտի տեսնես այժմ կերակուր ուտելու առենս: Սակայն ապաշնորհ էր և տաճարականն, որուն սուրը ձեռքին մէջ դարձաւ այնպէս որ սուրին տափակ կողմէն հարուած մը կերայ, և նոյն հարուածն ալ ընդհարի իմ մանկլաւուկս: Եթէ պողպատէ սաղաւարտս ունենայի, փոյթ չպիտի ընէի, և անոր հարուած մը պիտի տայի որով նահանջելու առեն չպիտի գտնէր, բայց իմ վիճակիս մէջ դեռևին ընկայ՝ արդարև հնչասպառ այլ ոչ վիրաւոր: Ուրիշ մարտիկներ երկու կողմէն տապստա ընկան և իմ վրայ ջարդուելուն, այնպէս որ ինքզինքս դապաղի մը մէջ գտայ (բարեբաղդաբար բայ էր) երբ աչքս բացի, և դապաղն ալ սուրբ Էտմոնտի խորանին առջև դրուած էր: Քանի մ՚անգամ բռնկացայ, հեծեցի, բոլորովին խելքս գլուխս եկաւ, և կ՚ուզէի ոտք ելնել, երբ լուսարարն և աբբան սարսափահար՝ աղմուկը լսելով վազեցին, անշուշտ դժդոհելով որ կենդանի գտան այն մարդն որուն ժառանգորդները լինիլ կ՚սպասէին. գինի խնդրեցի, տուին ինձ, բայց անտարակոյս սաստիկ դեղած պիտի լինէր գինին, վասն զի առաջուանէ աւելի խորունկ քնացայ, և բաւական ժամեր անցնելէն ետև արթնցայ: Այն առեն իմ թևերս պատատած, ոտքերս այնչափ ուժով կապուած գտայ որ քանի մտածեմ դեռ ևս յօդուածներուս ցաւը կ՚զգամ: Իմ գտնուած տեղս բոլորովին մութ էր, կարծեմ թէ իրենց անիծեալ վանքին մէջտեղն էր, և առկից ելած հեղձուկ ու տմարմուկ հոտէն գուշակեցի որ գերեզմանատուն մի էր: Անցած գարձածին վրայ շփոթ գաղափարներ ունէի, երբ իմ պահապան գուռը կրչեց և երկու անզգամ վանականներ ներս մտան: Անոնք կ՚ուզէին համոզել զիս թէ քաւարանն եմ, բայց քաջ ճանչցայ վանահօր թասուն և նուաղուն ձայնը: Սակրը Եբրոիա, այն ձայնը չէր որով երբեմն երէի երկրորդ կարգ մը կ՚խնդրէր. շունն ինձի սեղանակից եղեր էր Ծնունդէն միևչև Թագաւորաց տօնը:

— Համբերէ, աղնիւ Ամէլսաէն — ըսաւ Թագաւորը — շունչ առ, կամաց կամաց պատմէ պատմութիւնդ. ձշմարիտն, այսպիսի պատմութիւն մը վիպասանութեան չափ հետաքրքրաշարժ է:

— Այո, բայց կ՚երդնում Պրոմհօմի խոչափայտին վրայ, որ վիպա-

կան բան մը չկայ գործին մէջ — ըսաւ Ամէլսաէն: Գարնէ նկատակ մը և թակոյկ մը ջուր, ահա ասոնք միայն տուին ինձ անզգամ գաւաճանները, որ հարատացած են իմ հօրս և իմ ձեռօքս, մինչդեռ իրենց միակ ապրուստն էր ճարպի շերտեր և քանի մը պրիս յորեն զոր անգադար շողքորթութիւններ ընելով խեղճ սարուկներէն կ՚ստանային իրենց աղօթից փախարէն: Ինչ անշահ և ապաշնորհ իժերու որջ մ՚էր այն, ինձի պէս սիրողմը գարնէ հայ և հօրի ջուր տամ: Իրենց աղտեղի որջին մէջ պիտի ծխատեմ զանոնք, եթէ բանադրութիւմ անգամ:

— Բայց, յանուն մեր Տիրամօր, աղնիւ Ամէլսաէն — ըսաւ Սէտրիկ՝ իր բարեկամին ձեռքը բռնելով — ինչպէս այն մեծ վտանգէն ազատեցար: Արդեօք իրենց սիրտը կակղցա՞ւ:

— Իրենց սիրտը կակղի՞ — կրկնեց Ամէլսաէն: — Միթէ ժայռերն արեւէն կ՚հալի՞ն: Տակաւին նոյն վայրը պիտի մնայի, եթէ վանքին մէջ շփոթութիւն մը չծագէր, երբ թափօրով դէպ՝ ի այս դղեակը կ՚գիմէին, ինչպէս որ իմացայ, որպէս զի իմ յաղարկաւորութեանս ձայն ուտեն, թէև քաջգիտէին թէ ոբ և ինչպէս ողջողջթաղուած էի: Եւ ահա այս թափօրին պատճառաւ վանականներն իրենց որջէն դուրս եկան: Լսելի անունց երգած մեռելոց աղօթքը. չէին մտածեր բնաւ որ այն աղօթքը կ՚երգէին իմ հոգւոյս փրկութեան համար անունք որ այսպէս մսրմինս սովամահ կ՚թողուին: Սակայն մեկնեցան անունք, և ես, ղարմանք չեն որ ընդ երկար սպասեցի որ ինձ կերակուր բերեն. կաղ լուսարարն իր սրկորը պարարելու համար այնքան զբաղած էր որ իմ մասքէն չմտցուց: Վերջապէս՝ վար իջաւ նա երերուն քայլով, և իր վրայէն գինիի զօրաւոր հոտ մը կ՚բուրէր: Աղտոր կեր ու խումն իր սիրան ունքեր էր, վասն զի քաքարի աղտոր պատառ մը և պղտիկ շիշ մը գինի թողուց ինձ, իմ սովորական կերակուրիս տեղ: Ուստի կերայ, և ոյժ առի, և ապա, իմ լաւ բաղդէս, լուսարարն՝ որ շատ արբած լինելուն չէր կրնար դռնապահի պաշտօնը լաւ վարել, դուռը կղպեց նիզը դուրս թողլով, այնպէս որ կիսբայ մնաց: Լոյսը, սնունդը, գինին և ուրախութիւնս բորբոքեցին: Այն օրական որու շղթաներս կապուած էին, իմ և կամ անզգամ վանահօր կարծածէն աւելի ժանդոտեր էր: Երկաթն անգամ սոյն գժոխային ընդանին խոնաւութեան չէր կարող դիմանալ:

— Շունչ առ, աղնիւ Ամէլսաէն — ըսաւ Րիչարտ — այդ սոսկալի պատմութիւնդ շարունակելէն առաջ քիչ մ՚ինքզինքդ կազդուրէ:

— կազդուրո՞ւմ — ըսաւ Ամէլսաէն — այսօր հինգ անգամ անունդ

առի. և սակայն սա հաճեղ ապուխտէն կաթը մը չպիտի մերժեմ. կ'ա-
ղաչեմ, քալ ասպետ, դու ալ բաժակ մը պինի ընտրհիւր ինձ:

Հիւրերը՝ թէև տակաւին ապուշ կրթած էին՝ յարատեալ տանտիրոջ խնդիրը կատարեցին, որ այսպէս շարունակեց իր պատմութիւնը: Իրաւ է որ այժմ իր ունկնդիրներն աւելի շատուր էին քան թէ երբ սկսաւ, վասն զի Էսթէր՝ իր մայրն՝ դղեկին մէջայլ և այլ կարգադրութեանց համար պէտք եղած հրամանները տալէն ետև՝ մինչև օտարականաց յատկացեալ սենեակը հետևեր էր դերեզմանէն եկնող Ա֊թէլատէյնի, իրեն ուղեկից ունենալով այնչափ այր ու կին հիւրեր որչափ որ կարելի էր պարունակել փոքրիկ սենեկին մէջ, մինչդեռ ուրիշներ՝ սանդուղներուն վրայ խռնելով՝ պատմութիւնն կիսկատար լսեր էին և աւելի անկատար կերպով կ'աւանդէին իրենցմէ վար գտնուող անձերուն, որ դարձեալ դուրսն եղողներուն կ'հաղորդէին նախատիպ պատմութենէ հիմնուվին տարբեր ոճով մը: Սակայն Ա֊թէլատէյն հետևեալ կերպով շարունակեց իր ազատութեան պատմութիւնը.

— Երբ շղթայիս օղակին պրծայ, սանդղէն վեր ելայ այնպէս արագ որչափ որ կարող է շղթայով բեռնաւորուած և երեք օրուան ծոմապահութենէ սկսրացած մարդ մը. բաւական ատեն ապիս անդին խարխարելէն ետև՝ վերջապէս զուարթ նուագի մը ձայնը լսեցի և սենեակ մը դիմացի ուր արժանապատիւ լուսարարը, ներեցէք ինձ ըսելու, սատանայն պատարագ կ'կատարէր դաժան դէմքով, լայն ուսերով և մսեղ պարզուկ ղլեստ ու կնգուղ կրող մեծ վանականի մը հետ, որ աւելի աւազակի կերպարան ունէր քան թէ եկեղեցականի: Անոնց վրայ յարձակեցայ, և իմ դերեզմանական հագուստս, նոյնպէս շղթաներուս շչինն ինձ ուրիշ քան այս երկրի բնակչի կերպարանը կ'տային: Երկուքն ալ ապշած մնացին. բայց երբ լուսարարը թաւալգլոր բերի բռնցի, մուսը, իր պինելի ընկերը, հատ գաւազանի հարուած մ'ուղղեց ինձ:

— Կամի մը փրկանքի վրայ պրաւ կ'դնեմ — գոչեց Բիչարա՝ Խմանօէլի կողմն գառնալով — որ այն մարդը մեր Երք եղբայրը պիտի լինի:

— Պրողը լինի կամ ուրիշ մը, փոյթ չէ — ըսաւ Ա֊թէլատէյն: — Քառերաղօրէն չկրցայ լաւ նշան առնուլ, և երբ անոր մօտեցայ որ հետը կռուիմ՝ ղուտ մը կծիկը գրաւ: Ես ալ իմ ոտքս աղատութիւն առի ու փոքրիկ շղթայիս բանալիով, որ այլոց հետ լուսարարին գօտիէն կախուած էր, և միւսք ըրի այն չարագործին գլուխը պատռել բանալիներուն խուրձովը, երբ կատը մը քաքալի, և փոքրիկ շիշ մը

պինիի յիշատակն, որով իմ դերութիւնս սփոփեր էր, իմ գութս շարժեց. ուստի մինակ քանի մ'ուժդին կիցեր տալով զանի դեմինը տապալեցի. և երկու պատկառելի վանականաց խնջոյքը կաղմող ճաշէն կատը մը միս և շիշը պինի շուտ մը ճաշակելէն ետև՝ ախորը վազեցի և իմ յատուկ երիվարս դտայ, որ անտարակոյս վանահօր գործածութեան համար մէկդի դրուած էր: Կարելի եղածին չափ երիվարը վազցնելով աստ հասայ, և ամէն մարդ՝ քանի կ'յաւաչանայի, արտօրնօք խոյս կ'տալին, կարծելով թէ ուրուական մ'եմ, մանաւանդ սա պատճառաւ որ չյայտնուելու համար դէմքս կիսովին ծածկեր էի պատանքով: Իմ գիտակս մանելու չպիտի կարենայի անշուշտ եթէ գիս ձեռնածուին մէկ ընկերը չտեսնէին, որ մեծ գաւթեր կ'գնտի և իրենց ախորջը յօդաբկաւորութեան համար դուսարուած մարդիկը գտագնդելու հնարը գիւտ է: Տեսայ կարծեց թէ իմ հագուստս ձեռնածուին խմբին կ'վերաբերի, այսպէս կարող եղայ դեռս մնալ. և հագիւ ժամմնակ ունեցայ ինքզինքս մօրս յայտնելու և ձեզ, սիրելի բարեկամք իմ, գանելու եկած եմ աստ, պատառ մը բան ուտելու:

— Ես չես կ'գանես — բսաւ Ա֊թարիկ — կամ և պատրաստ պատառ և ազատութեան խորհուրդները վերստին սկսելու: Ահա կ'լսեմ քեզ, երբեք սաքսօնեան այնիւ ապրին ազատութեան աւելի նպաստաւոր արև մը չպիտի ծագի:

— Ազատութեան վրայ մի խօսիր ինձ — պատասխանեց Ա֊թէլատէյն: Հէրիք է որ ես ինքզինքս ազատեցի. ես աւելի արամապիր եմ անդրամ վանահայրը պատժելու: Սա Գօնսինկսպրրիի դղեկին պատերը պիտի կախեմ զանի իր շրջառով և պատմուճանով, և եթէ իր մեծ փորը նեղ անդրդուներէն անցնելու դժուարին լինի, ճախարակի մը միջոցաւ զանի դրսէն պիտի քաշել տամ:

— Բայց, որդեակ իմ — ըսաւ Էսթէր — չես մտածեր որ նուիրական կարգ ունի:

— Դու ալ մոռացիր, մայր իմ, որ երեք օր ծոմապահեցի — պատասխանեց Ա֊թէլատէյն: — Ա'ուզեմ որ ամենուն արիւնը խմեմ: Գլօն—սը—Պէօ աւելի թեթև յանցանքի մը համար այրեցաւ, վասն զի իր գերիներուն աղտոր սեղան կ'պատրաստէր, մինակ իր վերջին թանկն մէջքէն մը շատ խստոր կ'դնէր: Բայց այս մեր կեղծաւոր, ապերախտ ստրուկներն, որ ստէպ իմ սեղանիս ինքնակոչ շողոմարար հիւրերն էին, որ ինձի ոչխան տուին և ոչ խստոր, պիտի մեռնին, Հէնկիստի հոգւոյն վրայ կ'երդնում:

— Բայց Պապն ի՞նչ սիրի ըսե՛, ազնիւ բարեկամս — հարցուց Սէ՛ա-բրիկ։

— Ո՛չ Պապ ոչ սառանայ մարիկ սիրի ընեմ — պատասխանեց Ա-թէլստէյն — սիրտ սպանեմ զանունք. խօսքը կտրինք։ Եթէ աշխարհիս ամենէն ընտիր կրծատուներն իսկ լինին, աշխարհս կրնայ առանց անոնց քալել։

— Ամէն է, ազնիւ Ա-թէլստէյն — ըսաւ Սէ՛արիկ — մոռցիր այն սիսկի թշառներ քու առջեդ բացուած փառաց ասպարիզին մէջ։ Ըսե՛ սա նօրման իշխանին թէ՝ որչափ որ առիւծասիրտ է, Ալֆրէտի առթոռն առանց պայքարի չպիտի նստի, քանի որ սուրը Խոստովանողին աղաւտհմէն մին ապրի իրեն դէմ մաքառելու համար։

— Ի՞նչ — պոչեց Ա-թէլստէյն — մի՞թէ այս է Բիչարա ազնիւ իշխանը։

— Նոյն ինքն Բիչարա Բլանդաժնէդն է — պատասխանեց Սէ՛արիկ — բայց աւելորդ է յիշեցընել քեզ թէ, այս տեղ իրրև կամաւոր հիւր եկած լինելով, չենք կարող ոչ մինչը թշնամանել և ոչ դերել. պարտքս կ՛ՀանՀես իրրև հիւրընկալ։

— Անտարակոյս, հաւատս վկայ — ըսաւ Ա-թէլստէյն — պիտեմ նաև իմ պարտքս իրրև հպատակ մը. վասն զի ահա իմ հաւատարմութեան նուէրս կ՛յայտնեմ անոր, ինչպէս նաև սիրտս և սուրս։

— Որդեակ իմ — ըսաւ Էսիթ — մտածէ քու արքայական իրաւանցդ վրայ։

— Անկլիոյ ազատութեան վրայ խորհէ, անհարազատ իշխան — պոչեց Սէ՛արիկ։

— Հայր և բարեկամ — վրայ բերաւ Ա-թէլստէյն — այդ ձեր յանդիմանութեանց վերջ տուէք։ Հացը, ջուրն ու զինդանն հրաշալի դերեր են փառասիրութեան դէմ, և դերնզմանէն աւելի խիստ ուսուցիչ մարդ մը վերկ՛երևեմ քան որ էի իջնելու առեւնս։ Այս յիմարական անփառասիրութեան մասն այն նենգամիտ Վալֆրէմ վանահայրը թելադրեց ինձ, և կարող էք այժմ դատել եթէ վտահաւութեան արժանի խորհրդատու մ՛է։ Այս դաւադրութիւններն սկսելէն հետէ, ուրիշ բան չշահիցայ, բայց միայն արտորալի ուղեւորութիւններ, տհալութիւն, հարուած, ձնշում, բանտ և սով. ասկից զատ կ՛նայիմ որ այս ամէնը սիրտի դադրի հաղարաւոր հանդարտ մարդոց կոտորածով։ Ահա կ՛յայտնեմ ձեզ, ես իմ առանձին կալուածոյս մէջ թագաւոր սիրտ լինիմ և ոչ այլուր. և իմ իշխանութեանս առաջին դործը սիրտ լինի վանահայրը կախել։

— Հասցա իմ Րովէնա աներուհիս — հարցուց Սէ՛արիկ — յուսամ որ զանի երեսի վրայ չսիրտ Թողուս։

— Հայր Սէ՛արիկ — ըսաւ Ա-թէլստէյն — խելքդ գլուխդ բեր։ Օրիորդ Րովէնա բնաւ իմ հոգս չառանիր. իմ Վիլֆրիտ ազգականիս Թաթպանին պըտիկ մատն աւելի կ՛սիրէ քան թէ իմ բոլոր անձս։ Ահա լինքն անձամբ կարող է խոստովանիլ։ Այո՛, ու կարմրիր, իմ պեղանի ազգականուհիս. ամօթ չէ քեզ բնաւ արքունական ասպետ մը սիրելդ քան թէ պատառաքնակ Գրանքլէյն մը, բայց ու ծիծաղիր ըսածիս, Րովէնա, վասն զի դամբանական լաթեր և նիհար դէմք մը, Ատառած պիտէ, որ խնդութեան առարկայ մը չեն։ Բայց եթէ կ՛փափաքիս ծիծաղիլ անվրէպ, քեզի լաւագոյն կատակ մը սիրտ ընեմ։ Տուր ինձ ձեռքդ, կամ լաւ ևս փոխ տուր ինձ, վասն զի լոկ բարեկամի դէմքով զայն կ՛խնդրեմ։ Լաւ, ասա եկուր, Վիլֆրիտ Իվանօէ ազգականս, ՚ի նպաստ քեզ կ՛Հրաժարիմ այս . . . Հէյ, սուրը Տընսդան վկայ, մեր Վիլֆրիտ բարեկամն աներևոյթ եղեր է, սակայն եթէ իմ աչերս ծոմապահութենէ շլացած չեն, կ՛սպեմ եթէ քիչ մ՛առաջ զանի այս տեղ տեսայ։

Նոյն միջոցին ամէնքը շուրջ նայեցան և Իվանօէն փնտռեցին. բայց նա աներևոյթ եղեր էր։ Ի վերջէ լսացան որ հրէայ մ՛եկեր էր գինք փնտռելու, և թէ կարճ բանակցութենէ մ՛ետքը՝ Սիւրթը կոչեր և գղեկէն հեռացեր էր։

— Գեղանի օրիորդ — ըսաւ Ա-թէլստէյն Րովէնային — եթէ մտածէի որ Իվանօէ այսպէս յանկարծ անհետ լինելու խիստ ծանրակշիռ պատճառ մ՛ունէր, անմիջապէս իմ իրաւունքս . . . ։

Բայց այն ինչ Ա-թէլստէյն Րովէնայի ձեռքը թողուց Իվանօէի անհետանալն լսանալով, որ օրիորդը՝ իր վիճակը չսիրաղոյց շփոթալի գտնելով, այս պատեհ առթէն օգուտ քաղեց և սենեկէն դուրս ելաւ շուտափոյթ։

— Անշուշտ — ըսաւ Ա-թէլստէյն — կենդանեայ մէջ ամենէն վստահութեան անարժաններն են կինները, ՚ի բաց առեալ կրծատուրներն ու վանահայրերը։ Հեթանոս լինիմ եթէ անորմէ շնորհակալութիւն և թերևս համբոյր մը չէի սպասեր։ Այս անիծեալ պատանեք անտարակոյս հմայած են, ամէն մարդ խոյս կ՛տայ իմ քովէս։ Ուստի, քեզի կը դառնամ, ազնիւ Բիչարա Թագաւոր, նուիրել քեզ իմ հնազանդութեան ուխտս, զոր իրրև աւատապետ . . . ։

Բայց Բիչարա Թագաւորն ևս անհետ եղեր էր, և ոչ ոք գիտեր թէ

ուր դացեր էր։ Վերջապէս իմացուեցաւ որ արտորնօք մեծ դաւիթը դացեր, Խվանօֆի հետ խօսող Հրեային իր առջևը կանչել տուեր և քանի մը վայրկեան անոր հետ խօսակցելէն ետև՝ ձի մը բերելու հրամայեր, անոր վրայ աշտանակեր, Հրէային ուրիշ մը հեծնելու տախտեր էր և այնպէս սանձարձակ ձամբայ ելեր էր, որ՝ Վանեցւոյն խօսքին նայելով, ծեր Հրէին մարմինը մէկ ստակի պիտի ըլլար։

— Գլուխս վկայ — ըսաւ Ամէլտէին — որ Ջէրնոզօք իմ բացակայութեանս ատեն դղեկիս տիրացեր է։ Պատանդով ծածկուած կ'դառնամ, դերեզմանին վրայ տարած յաղթութեանս մէկ նշանակը, և որու որ խօսիմ աներեւոյթ կ'լինի երբ իմ ձայնս կ'լսէ։ Բայց անօգուտ է այս բանիս վրայ խօսիլ։ Եկէք, բարեկամներս, այս տեղիացուցիչներն թող իմ եռանդս դան լննջելի սրահը, առ ահի որ ուրիշներն ալ չվախչին։ Յուսամ որ սեղանը տակաւին զարդարուած է, ինչպէս որ կ'վայլէ սաքսոն հին աշխուժական մը յուզարկաւորութեան, բայց շտապինք, ովզիտէ թերևս սատանան ձաշն կ'յափշտակէ կ'տանի։

ԳԼՈՒԽ ԽԳ

Ամէրան իր խղճին վրայ Մօվոլէյի մեղքը ծանրանան,
Որ իր փրփրալից նժոյգին քամակը խորտակեն,
Ձեռքն ի կրկես նետելով դէմիվար,
Իբրև ապերասա ազաչաւոր։

ՐԻՉԱՐՏ Բ

Մեր պատմութիւնը կ'ստիպէ մեզ Դէմբըդովի դղեակը կամ տաճարատունը դառնալու, այն միջոցին որ Ռեբեկայի կենաց կամ մահուան արհնալի վիճակը պիտի նետուէր։ Աղմկալի և շարժուն տեսարան մի էր, որպէս թէ բոլոր շրջակայ տեղեաց բնակիչներն գեղջկան ժողովի մը կամ գաշտային հանդիսի մը համար դումարուեր էին։ Բայց ահրեան և մահուան տեսարանի մը հանդիսադիր լինելու եռանդալին փափաքը, այն խառնարին դարերու յատուկ բան մը չէր, թէև մնամարտութեան կամ ընդհանուր նիզակամարտի մէջ մարդիկ այն տեղն տալոր էին արհնահեղ պայքարները տեսնել, երբ քաջարի մարդիկներ մա-

քառելով զիրար կ'սպաննէին։ Մինչև անդամ մեր օրերն, ուր բարոյականութեան սկզբունքն աւելի լաւ կ'ըմբռնեն մարդիկ, դլխատութիւն մը, կռփամարտ մը, խուռնամարտ մը, կամ արմատական ազատասէրներու ակումբ մը, միշտ՝ հանդիսատեսներու մեծ ամբոխ մը կ'դումարէ, որոնք ամէն վտանգ աչք առնելով, կ'վազեն դուպարին վայրը, թէև շատերն ուղղակի շահ մը չունին տեղի ունեցած դէպքին մէջ, բայց միայն դիտելու համար թէ ինչ դարձուած պիտի առնուն դործերը, և այլ պիտի լինին կռուին դիւցազունները կամ վատերը։ Հետևապէս անթիւ բազմութիւն մ'իր աչքը սևեռեր էր Դէնբըդովի դղեկին դրան վրայ, որպէս զի հանդէսը տեսնէ, մինչդեռ մեծագոյն ամբոխ մը նոյն շինութեան կից յանկը շրջապատեր էր։ Այս յանկը տաճարատան մօտ շինուած սարահարթ մ'էր զոր յատկապէս հարթեր էին դինուորական և աստիճանական մարզանաց համար։ Այս յանկը ցած և դիւրաբլրակի մը վրայ էր, և շուրջ պատնէշներ ունէր, և որովհետև տաճարականները մանաւանդ հանդիսականներ հրաւիրեր էին որպէս զի աստիճանական մարզանաց մէջ իրենց ճարտարութեան ականատես լինին, յանկն անոնց դործածութեան համար շատ մը պատշգամներով և նստարաններով զարդարուած էր։

Այս պարագայիս մէջ մեծ վարպետին համար դահ մը շիներ էին կրկէսին արևելեան կողմը, որ պատուոյ աթոռներով շրջապատուած էր միաբանութեան հրամանատարներուն և աստիճաններուն համար։ Այս ամենուն վրայ կ'սաւառնէր Le beau-Seant անուանեալ նուիրական դրօշակը, որ տաճարականաց նշանագիրն էր, և այս անունն իրենց պատերազմի աղաղակն էր։ Կրկէսին դիմացի կողմը փայտերու կոյտ մը կար և դեամին ուժգին մուած դերանի մը շուրջը այնպէս շարուած էր որ այրելու սահմանուած ըլլին անմիջապէս դի այն մահարբը փայտակոյտին վրայ եղնէ և դերանէն կախուած կառափնով հաշկանդուին։ Այս ահռելի դործիքին մօտ չորս հատ սև դերևներ կեցեր էին, որոց դոյն և ահրկեան կերպարանքն, որ այն ատեն քիչ ծանօթ էին Անկլիոյ, ահ ու սոսկում կ'ազդէին ժողովրդեան, որ անոնց կ'նայէր իբրև սպաննիներ որ պատրաստ կ'պատուէին իրենց դիւական պաշտօնը կատարելու։ Այս մարդիկ անշարժ կեցեր էին, միայն ատեն ատեն կ'շարժէին իրենց պարագլխին հրամանին համեմատ, որպէս զի խարոյկն արծարծեն և նորոգեն։ Ատոնք ամբոխին վրայ չէին նայեր, կարծես թէ գիրենք շրջապատող բաներուն անզգայ էին, և մինակ իրենց սոսկալի պործը կատարելու մտադիր։ Եւ երբ՝ իրարու

հետ խօսելով, իրենց թանձր շրթունքը կ՚բանային և սպիտակ ակռա-
ներն երեւան կ՚հանէին՝ որպէս թէ կանխաւ կ՚ժպտէին իրենց սպասած
եղերական տեսարանին, ահաբեկ խուժանն ակամայ այնպէս կարծէին
թէ ասոնք արդարեւ այն դերբնային ոդիներն են որոց հետ վհուկն հա-
ղորդակցութիւն ունեցած է, և որոնք, իր ժամանակը լրացած լինե-
լով երկրէս վրայ, եկեր էին անոր ահռելի պատուհասին դործակից
դանուելու: Հանդիսատեսներն իրարու կ՚փսփսային և սպասին՝ այն
դժբաղդ և խռովայոյզ ժամանակին՝ երբոր չարիքն իրարու կ՚հաղորդէ-
լին, բնականապէս չմոռնալով սատանային պէտք եղածէն աւելի վերա-
դրել:

— Մխիթ չլսեցիր, հայր Տէնէդ — հարցուց դեռատի դեղացի մը
ծերունւոյ մը — որ սատանան Գօնհիլապըրկի Ամէլտէնի մեծ սաքսօն
ցեղապետին մարմինը յափշտակեց տարաւ:

— Այո՛, բայց վերջը նորէն բերաւ՝ Աստուծոյ և սուրբ Տընդանի
հնարհիւրը:

— Ո՞նչպէս — հարցուց վառվռուն երիտասարդ մ՚որ ոտիկհիւս կա-
նգած պզծնաւորը մը հազիւ էր. իր եռանդուժեղ տղայ մ՚ունէր, որ
կռնակին առեր էր իր տատիկն, և ասով իր կոչումը կ՚յայտնէր: Այս
վիպասանը դժբախտ կարգէ չէր երեւեր, վասն զի, ՚ի բայ առեալ ոս-
կեթել պզծնազարդ կրնոջն, իր վիպն արծաթէ շղթայ մ՚ունէր, որմէ
իր տատիկը լարելու համար բանալին կախեր էր. իր աջ թևին ար-
ծաթէ տախտակ մը կապեր էր, որ ըստ սովորութեան՝ փոխանակ սե-
պուհի մը նշանապիրը կրելու, որու դերդաստանին կրնար պատկանիլ,
մի միայն սա բառը փորագրուած ունէր վրան, ՇԻՐՎՈՒՏ:

— Ո՞նչ կ՚ըմնաս այդ խօսքով — բսաւ զուարթերես վիպասանը՝
դեղացիներուն խօսակցութեան խառնուելով: — Եկած եմ քնարիս
համար երգի նիւթ մը փնտռելու, և խաչ վկայ, դոհ պիտի լինիմ եթէ
երկու հատ դտնեմ:

— Ամենուն յայտնի է — բսաւ դեղացւոյ մեծը — որ Գօնհիլապըրկի
Ամէլտէնը մեռնելէ ետև չորս շաբաթի չափ . . . :

— Այդ անկարելի բան է — դոչեց վիպասանը — ողջառողջ տե-
սայ զանի Էշալ-տը-լա-Շուշի պայքարին մէջ:

— Եւ սակայն մեռած, աշխարհէս անհետ եղած էր — բսաւ նո-
րատի դեղացին — վասն զի սուրբ Իտմոնտի կրօնաւորներն անոր հա-
մար մեռելոց երգն ըսին, ինչպէս որ ես լսեցի, և ասկէ զատ՝ Գօնհիլա-
պըրկի դղեակը դամբանական խնջոյք մը տեղի ունեցաւ, ինչպէս որ

պարտ էր, և ես ալ սկսի երթալ այս խնճոյքին թէ որ ծապէլ,
Բարքինս, որ . . . :

— Այո՛, Ամէլտէնն մեռած էր — բսաւ ծերունին դլխիկն օրե-
լով — և այս մեծ կորուստ մ՚էր, վասն զի սաքսօնական հին արիւնը .
. . :

— Բայց ձեր պատմութիւնն ըսէք, բարեկամներ, ձեր պատմութիւ-
նը — պատասխանեց վիպասանը փոքր մ՚ինչ անհամբերութեամբ:

— Այո՛, այո՛, պատմէ մեզի սա պատմութիւնն — բսաւ ըստ կար-
գի խոշոր վանական մ՚որ անոնց մէջ կ՚կենար դաւազանի մը կռթը-
նած, որ կէս մ՚ուխտաւորի դուսլին և կէս մը վիրդի կ՚նմանէր, և
հաւանօրէն երկուքին պաշտօնն ալ ըստ պարագայից կ՚կատարէր —
ձեր պատմութիւնն ըսէք — յարեց կորովի կրօնաւորը — պարապ տեղ
օրը մի անցընէք, վասն զի պէտք չէ որ ժամավաճառ լինինք:

— Եթէ այդպէս կ՚հաճի ձեր վերապատուութիւնն — յարեց Տէ-
նէդ — դինով քահանայ մ՚եկաւ սուրբ Իտմոնտի լուսարարին այցելու-
թեան . . . :

— Իմ վերապատուութեանս անհաճոյ է — պատասխանեց կրօնաւ-
որն — որ դինով քահանայի պէս կենդանի մը դտնուի, և եթէ իրօք
այդպիսի քահանայ մը կայ, չեմ խորհիր որ աշխարհական մ՚այդ
կերպով խօսի անոր վրայ: Քիչ մը մարդավար եղիր, բարեկամ, և ա-
նոր վճռակէն սա հեռւոյն որ այն սուրբ մարդը խորհրդածութեան
մէջ թաղուած էր որով դլխիկը կ՚դառնար և ոռները կ՚երերային այն-
պէս որպէս թէ նոր դինի խմած լինէր. ես ինքս այդ բանը փորձով
դիտեմ:

— Լաւ ուրեմն — պատասխանեց հայր Տէնէդ — սրբակրօն քահա-
նայ մ՚եկաւ սուրբ Իտմոնտ լուսարարը տեսնելու, այս այցելուն սե-
սակ մը դաշտարնակ քահանայ էր որ ինք վիճակ անտառին մէջ դող-
ցուած եղջերուներուն կէսը կ՚սպանէր, որ դարձեալ սրտաւին խոխո-
ջումն առելի կ՚սիրէր քան թէ իր մենաստանին նուիրական զանդակը, և
կարծէ թէ երշկի մը կտորն իր աղօթագրքին տասն երեսը կ՚արժէ.
մեկ խօսքով, պատուական, զուարթերես մարդ մ՚է, որ դաւազան մը
շարժել գիտէ, աղեղ լարել, և եօրքի նահանդի որ և է բնիկէ լաւ
Ես կ՚պարէ:

— Այս վերջին խօսքդ, Տընէդ — բսաւ անոր վիպասանը մեղմիկ
— մեկ քանի կողերդ աղատեց:

— Վա՛յ, չեմ վախնար իրմէ, մարդ — բսաւ Տէնէդ — ես փորր

ինչ ծեր և ծանր եմ, բայց երբ խոյին և զանգակին հառաջ ի պայքար ելայ Տօնգատարի մէջ . . . :

— Բայց պատմութիւնը, պատմութիւնն ալ ձեզ, բարեկամ — ըսաւ վերջին վիպասանը :

— Լաւ, աւասիկ այս է պատմութիւնը . Գօնիննկսպըրկի Ամէլտէին ի սուրբ Կտմօնտ կ'ուղղէր . . . :

— Սուտ է այդ, անճառնի սուտ մը — ըսաւ կրօնաւորը — վասն զի ես տեսայ որ գինքն իր Գօնիննկսպըրկի յատուկ գրեակը կ'առնէին :

— Լաւ, եթէ պատմութիւնը դուք գիտէք, դուք ինքնին պատմէ, ահա իմ — ըսաւ Տէնէպ, իր կամակոր դիմախօսին կողմը դառնալով սրտնեղութեամբ . և դեղացին դժուարաւ յանձն առաւ իր պատմութիւնը շարունակելու՝ վիպասանին խնդրոյն համաձայն : — Այս երկու ֆոֆֆ նաև ձգնաւորներն — ըսաւ նա վերջապէս — քանի որ այս վերապատուելի մարդը կ'փափաքի որ այսպէս կոչուին, իրենց աղօր գործերը, գիտեն և օրհշ ըմպելիներ խմելու ետև էին, գրեթէ բոլոր ամառուան օր մը, երբ խորունկ հիմնեծանքի և շրթանեերու ձայն մը գարկաւ իրենց ականջին և միանոզ Ամէլտէյնի գէմքը սեղեակը մնաւ, ըսելով, Դուք թշնամական հոմխներ . . . :

— Սխալ է — գոչեց կրօնաւորը շուտով — նա բնաւ բան մը չըսաւ :

— Հօ, հօ, Գրքը եղբայր — ըսաւ վիպասանը գանի մեկուսի քաշելով — նոր նահապետի մը երևան ելաւ՝ ըստ երևոյթին :

— Կ'հաւատեմ քեզ, Ալան-է-Տէլ — ըսաւ ձգնաւորը — ես Ամէլտէյնը տեսայ ինչպէս որ մարդ կ'տեսնէ մարմնաւոր աչօք կենդանի մարդ մը . պատանքը վրան էր և չորս գին գերեզմանի հոտ կ'բուրէր . տակաւ մը գինի անգամ չպիտի ջնջէ անոր տեսքն իմ յիշողութենէս :

— Վահ — պատասխանեց վիպասանը — դուք ինձի հետ կատակ կ'ընես :

— Գարձեալ մի հաւատար ինձ — ըսաւ կրօնաւորը — բայց այս իրաւ է որ գաւազանի հարուած մը տալ անոր որ բաւական էր կով մը սպանելու, և սակայն գաւազանս վրայէն սահեցաւ որպէս թէ ծխոյ սիւն մը լինէր մարմինը :

— Սուրբ Հիւսլերդ վկայ — պատասխանեց վիպասանը — հրաշալի պատմութիւն մ'է և հին եղանակի մը վրայ ոտանաւորի դարձնելու արժանի է : Տքսմոռնէանք հոմկնց ձեքսանի ծգնաւորը :

— Ծիծաղէ, որչափ կ'ուզես — ըսաւ Գրքը կրօնաւորը — բայց եթէ երբէք այսպիսի նիւթի մը վրայ խօսիլս լսես, թող կրողը պիս հետը տանի : Ո՛չ, ո՛չ, խոկոյն միաբան գրի լաւ գործի մը աջակից գտնուիլ, ինչպէս վհուկի մը այրման, դատաստանական պայքարի մը, կամ ասոր նման բարեպաշտական ձեռնարկութեան մը, և ահա այս պատճառաւ այս տեղ եկայ :

Երբ այսպէս կ'խօսէր, Գէնրլդովի սուրբ Միշէլ եկեղեցւոյն ահագին զանգակը, շինք մ'որ պատկառելի և տաճարատունէն քիչ մը հեռի գեղի մը մէջ շինուած էր, անոնց վիճաբանութեան վերջ տուաւ : Տխուր ձայնը հետզհետէ ականջի կ'զարնէր, բաւական միջոց թողլով որ իւրաքանչիւր հնչիւնն հեռաւոր արձագանգով մը մարի, դեռ ականջն երկրորդ զանգակին հնչումն չլսած : Այս ձայներն որ մօտալուտ արարողութեան նշաններն էին, բոլոր դումարուած ամբոխին սիրտն արհաւրօք կ'ընդունին, որոյ աչքը նոյն պահուն դէպ ի տաճարատունը դարձած էր, ուսկից պիտի ելնէին Մեծ Վարպետը, ախոյեանն ու յանցաւորը :

Ի վերջէ շարժական կամարջն ընկաւ, դռները բացուեցան, և սպետ մը՝ Ուխտին մեծ դրօշակը կրելով, դղրդեն դուրս եկաւ. առջևէն ունէր վեց փողար, և եռևէն տաճարականներ որ զոյգ զոյգ կ'քալէին. ի վերջէ Մեծ վարպետը հասաւ, փառաւոր նժոյգի մը վրայ հեծած, թէև անոր կազմածը շատ սթարզ էր : Առանցքէ եռքը կ'գար Պրայն տը Գուա Պիլպէր. ոտքէն ցգլուխ փայլուն սպառազինութիւն մը հագեր էր, բայց առանց նիզակի, վահանի և սուրի, զոր իր եռևէն եկող երկու զինակիրներ կ'կրէին : Իր դէմքը թէև ծածկուած էր սաղաւարտին վրայ ծածանող փետուրով մը, բուռն յայտնութիւն մը կ'յայտնէր, և կարծես գոռոզութիւնը կ'մաքառէր անհանգստամտութեան հետ : Մեռելատիպ դունատութիւն մը կ'երևէր երեսին վրայ, որպէս թէ դիշերներ անքուն անցուցեր էր, սակայն իր երիվարին ձախը կ'չափաւորէր Տաճարական ուխտին ամենէն ընտիր ասպետի մը սովորական հեշտութեամբ և վայելչութեամբ : Իր ընդհանուր կերպարանքը վէս և հրամայական էր, բայց ուշադրութեամբ նայելով դիւրին էր տեսնել անոր դէմքին վրայ այնպիսի երևոյթ որմէ մարդ իր աչքը դարձընելու կ'սոսկայէր :

Իր երկու կողմը կ'գտնուէին Գօնրատ Մօնֆիչէ և Ալպէրդ Մալվուազէն, որոնք ախոյանին իբրև կնքահայր կ'գործէին : Խաղաղութեան ղեկաւոր հագեր էին, այս է Ուխտին ոսկեհատ հագուստը : Իրենց եռևս

ւէն կ՚գային Տաճարի միւս ասպետները, բազմաթիւ զինակիրներու և սպասաւորներու ընկերակցութեամբ, որ սևեր հագեր էին և օրին մէկին Ուխտին ասպետները դառնալու հետամուտ էին: Այս նորընծա-ներէն եաք՝ հետևակ պահակներու խումբ մը կ՚յառաջանար, որոց մէջ տեղն ամբաստանելոյն դունատ դէմքը կ՚երևէր, որ ծանր այլ անվեհեր քայլով կ՚գիմէր դէպ՚ի այն վայրն ուր իր բաղդը պիտի վճռուէր: Ռեբեկան իր զարդերէն մերկացուցեր էին, վախնալով որ թերևս անոնց մէջ կ՚գտնուի այն հմայեկներէն մին զոր, ինչպէս կ՚կարծէին, Սատանը կ՚ընծայէ իր զոհերուն որպէս զի խոստովանութեան կարողութենէ զանոնք զրկէ՝ նոյն իսկ տանջանաց ժամանակ: Իր արևելեան հագուստներուն տեղ՝ հագուեցուցեր էին զինքը սպիտակ պարեզօտ մը խիստ պարզաձև, այլ զարձեալ իր նայուածքին մէջ այնպիսի արիութեան և համբերութեան անուշ բացատրութիւն մը կար, որ մինչև անգամ իր անզարդ հագուստները, և մի միայն իր երկայն սևաթոյր մազերով ամենուն աչքը կ՚գրաւէր, ամենուն լացը կ՚շարժէր, ամենէն մըլեռանդ խստակրօնը կ՚ողբար այն աղջկան ձակատագիրն որով սիրաստան էակ մը Սատանի մեկ վերաբերող կարգ ու կանոնով կ՚քալէին, թևերը ծալլած և աչքերը գետին սևեռած:

Այս ծանրաքայլ թափօրը գէպ՚ի բլրակը գիմեց որու կատարը շինած էր ցանկը, և կրկէսը մտնելով անոր շրջանն ըրաւ աչ կողմէն գէպ՚ի ձախ կողմը. և երբ այս շրջանն աւարտեց, դադար առաւ: Այն առեն պահ մը վրդովում տեղի ունեցաւ, մինչդեռ մեծ վարպետն և բոլոր իր հետևորդները, զ՚բաց առեալ ախոյեանն ու իր կնքահայրը, վար իջան ձիերէն զորս զինակիրներն՝ որ ներկայ էին, իսկոյն կրկէսէն դուրս առին տարին:

Անբաղդ Ռեբեկան սևազգեստ աղջուկ մը տարին, որ փայտակոյտին մօտ էր: Ռեբեկա առաջին անգամ իր աչքն ածելով այն վայրն ուր պատրաստութիւններ եղեր էին՝ որչափ մռայլ ահարկու նոյնչափ մարմնոյ տաժանելի մահուան մը համար, գող մ՚ըզգաց և աչքը գոցեց, անտարակոյս ներքուստ աղօթելով, վասն զի իր շրթունքը կ՚շարժէին թէև ձայն մը չէր լսուէր: Պահէ մ՚իր աչքը բացաւ, անթարթ դիտեց խարոյկին որպէս թէ իր միտքն այս առարկային հետ ընտելացընէ, և առաջ իր գլուխն անդին դարձուց ծանր և բնական կերպով:

Նոյն միջոցին՝ Մեծ Վարպետն իր աթոռը նստեր էր. և երբ Ուխտին

ասպետները իր շուրջը կեցան՝ իւրաքանչիւրն իր յատուկ կարգին, ձեռքերու բարձրացոյց և երկայն շրխկոց մը ծանոյց որ առեանը բացուած է դատաստանի համար: Այն առեն՝ Մալվուազէն ընդ առաջ քալեց և հրէուհիին ձեռնոցն՝ որ մենամարտին դրաւն էր, Մեծ վարպետին ոտից ներքև դրաւ:

— Արիասիրտ տէր և վերապատուելի հայր — ըսաւ նա — ահա ասիկ Պրայն տը Պուա Կիլբէր քաջ ասպետն՝ որ՝ ձեր ոտից ներքև դրուած պատերազմի դրաւն ընդունելով, իր պարտքը կատարելու խոստացաւ այսօր, հաստատելու համար որ այս հրէայ օրիորդն՝ Ռեբեկա անուն, Սիօնի Տաճարի ուխտին կողմէ արձակուած վճռոյն իրաւամբ արժանի դատուած է, վճիռ մ՚որով դատապարտուած է այս օրիորդն իբրև վհուկ այրելու. ահա ասիկ ըսի Պրայն այս տեղ կազմուած պատրաստ է պատուաւոր կերպով և իբրև քաջ ասպետ մարտը մղելու, եթէ այս է ձեր սուրբ և արդիւնի կամքը:

— Մինչև երեկոյ ըրմբռ — հարցուց Մեծ Վարպետն — որ իր դատն արդար է և պատուաւոր: Ծերբեք Իսաչիայան և Te igitur:

— Վերապատուելի հայր — ըսաւ Մալվուազէն արտորնօք — մեր եղբայրն արդէն երկոմամբ հաստատեց ամբաստանութեան ճշմարտութիւնն Գօնթրատ Մոնֆիշէի առջև, և պարտաւոր չէ ուրիշ երկոմ մը ալ ընել, քանի որ իր հակառակորդն անհաւատ մ՚է, և չկրնար երկոմանն ենթարկիլ իսկ:

Այս բացատրութիւնը դոհացուցիչ երևցաւ Պօմանուարի, ՚ի մեծ տրտմութիւն Ալպէրտի. վասն զի նենդավիպ ասպետը դուշակեր էր մեծ դժուարութիւնը, կամ լաւ եւս՝ Պուա Կիլբէրը նոյն մեծ ժողովին առջև երկմտութեանը անկարելիութիւնը, և այս հնարը մտածեր էր որպէս զի երկոմ առնել տալու հարկը վերցնէ:

Մեծ Վարպետն այն առեն հրամայեց որ քարոզ մ՚առաջնորդի և իր պարտաւորութիւնը կատարէ: Փողերը վերստին հնչեցին, և քարոզ մը յառաջանալով, բարձրաձայն հրատարակեց. — Ահա ասա կ՚կանդնի պատրաստ Պրայն ասպետը՝ որ և է ազատ ասպետի մը հետ մարտելու համար, որ պիտի յանձն առնու Ռեբեկա հրէայ օրիորդին կողմէ ՚ի պայքար գալ, իրբև ախոյեան, և Մեծ վարպետն՝ որ առ ներկայ է, բաց առարկելի մը պիտի թողու անոր, և հաւատար հավ և արև պիտի շնորհէ, և ամէն ինչ որ պինուց հաւատարութիւնը կ՚առաջադրէ: — Փողերու ձայնը նորէն հնչեց, և քանի մը վայրկեան հանդիստ տը լռութիւն մը տիրեց:

— Աղաչաւոր աղջկան համար ախոյեան մը չերեւիր — ըսաւ Մեծ Վարպետը : — Պառաւամաւոր, դնա հարցուր անոր եթէ ի՛սպասէ անձի մ՛որ իրեն համար մենամարտելու պիտի գայ :

Նոյն պահուն՝ պառաւամաւորը սա ոճով խօսեցաւ Ռեբեկային .

— Օրիորդ, պատուարժան և վերապատուելի Մեծ Վարպետը կը հարցընէ քեզ, թէ ունի՞ս պատրաստ ախոյեան մ՛որ այսօր քու կողմդ՝ ի պայքար ելլէ, թէ ոչ անձնատուր կ՛լինիս Ձակատապրիպ, հաւատալով որ արժանապէս մահուան դատապարտուած ես :

— Ըսէ Մեծ Վարպետին — պատասխանեց Ռեբեկա — որ իմ անմեղութեանս վրայ կ՛պնդեմ, և դիս դատապարտող վճիռն արդար չեմ ճանչեր, վախնալով որ իրրև ինքնասպան մեղաւոր չլինիմ : Ըսէ անոր որ օրինաց ներածին չափ պայմանաժամ կ՛խնդրեմ, յուսալով որ թերևս Աստուած, որու օգնութիւնն յետին վայրկենին մեղ կ՛հասնի, պիտի հաճի ազատարար մ՛առաքել ինձ, և երբ այս յետին պայմանաժամը լրանայ, Թող իր սուրբ կամքը կատարուի :

Պառաւամարերն այս պատասխանը Մեծ Վարպետին հաղորդեց :

— Աստուած չընէ — ըսաւ Պօմանուար — որ հրէայ կամ հեթանոս առիթ ունենան մեզ անիրաւութեամբ ամբաստանել : Մինչև որ եւրոկոյեան ասուերներն արևմուտքէն յարևելս դառնան, պիտի սպասենք տեսնելու համար թէ արդեօք այս դժբաղդ աղջկան՝ ի պաշտպանութիւն ախոյեան մը պիտի երևան դայ : Այս պայմանաժամն աւարտելէն ետև Թող մահուան պատրաստուի :

Պառաւամարերը Ռեբեկային կրկնեց Մեծ Վարպետին խօսքը, որ իր դլուխը խոնարհեց հլութեամբ, Թևերը ծալլեց, և դէպ՝ ի երկին նայելով, կարծես թէ վերստ կ՛յուսար օդնութեան մը զոր հպարտ ասլետին կ՛համարձակէր սպասել մարդկան ձեռօք : Այս սոսկալի ահեղութեան միջոցին, Պուա Պիլպէր որ յանկարծ Ռեբեկայի մօտ վազեր էր՝ Մեծ Վարպետին թոյլատուութեամբ, իր ձայնը հնչեցուց օրիորդին ականջին, փախուստ մ՛էր այն, և սակայն այս ձայնն ունէր զորութեան մը զոր քան Թէ պառաւամարուին հրաւէրը :

— Ռեբեկա — ըսաւ տաճարականը — միթէ կ՛լսե՞ս ձայնս :

— Ես քեզնէ ոչ ինչ չեմ սպասեր, անագորոյն և քաղաքրա մարդ — ըսաւ տարաբաղդ օրիորդը :

— Այո՛, բայց միթէ իմ ձայնս չե՞ս լսեր — ըսաւ տաճարականը — վասն զի իմ ձայնիս հնչիւնն իմ յատուկ ականջիս անգամ ահեղ է : Ես ևս հաղիւ ուրուն դիտեմ Թէ ուր կեցած եմ և ինչ պատճառաւ բե-

րած են մեզ այս տեղ : Այս կրկէսը, այս ամփոփը, այս վայրակոյտը . . . դիտեմ Թէ ինչ բանի կ՛գործածեն, այլ սակայն այս ամէնն իրրև երազ կ՛երևի ինձ, իրրև ահեղի աչօք տեսիլ մը, որ իմ զգայարանքս կ՛ահաբեկէ իրենց ահարկու պատկերով, բայց բանականութիւնս չեն համոզեր :

— Իմ զգայարանքս և միտքս հաւատարակէս համոզուած են — պատասխանեց Ռեբեկա : — Կ՛ըսեն ինձ որ այս խարոյկն իմ երկրպագութիւնս առնելու և իմ առջևս վշտալի այլ կարգ համրայ մը բանալու սահմանուած են դէպ՝ ի լաւագոյն աշխարհ մը :

— Առանք ցնորք են, Ռեբեկա, ցնորք — պատասխանեց տաճարականը — սարսափ երարկեր են, զորս նոյն իսկ ձեր խնամատուն Սատանկեցին կ՛մերժեն : Միա դիր ինձ, Ռեբեկա — ըսաւ նա աւելի ևս բորբոքելով — սա անօրէն մարդոց քեզի պատրաստած Ձակատապրէն լաւագոյն Ձակատապիր մը, ազատութիւն և կեանք ունենալու առիթ մը ունիս ձեռքդ, եթէ կամենաս : Հեծիր սա ձիուս գաւակը, այս Զաֆեզ վրայ, ամէնի երկվարսՙ որ երբեք իր տիրոջ չանհաւատեր : Ցրապիզնի Սուլթանին հետ մենամարտելով շահեցայ զայն, հեծիր, կ՛ըսեմ քեզ, և մէկ ժամէն ամէն հալածանքէ ղերծ պիտի մնանք . . . ուրախութեան նոր աշխարհ մը պիտի բացուի առջևդ, և ինձի համար համբաւոյ նոր աստղակ մը : Թող սառնք իմ դաստակիս սրձակէն, կ՛անդոսնեմ զայն, Թող Պուա–Պիլպէրի անունը վանական սարսուիներու ցանկէն սրբեն : Արեամբ պիտի լսամ իմ ղրահիս վրայ ինչ արատ որ ձգելու չունդդնին :

— Քաշուէ դնա, վտրձիչ աստանայ — ըսաւ Ռեբեկա — կորիր . այս ծայրագոյն վիճակիս մէջ մտքի չափ անդամ չես կարող խախտել իմ դիտաւորութիւնս . . . Թէև Թշնամիներէ շրջապատուած եմ, սակայն քեզ իմ ամենէն վատ և անհաշտ Թշնամիս կ՛համարիմ . . . չտեսնուն Աստուծոյ, հեռացիր, դնա :

Մալվուազէն այս բանակցութեան երկարատևութեան վրայ վրդովելով, առաջ անցաւ որ զայն ընդհատէ :

— Միթէ օրիորդն իր չանցանքը խոստովանեցա՞ւ — հարցուց նա Պուա–Պիլպէրի — Թէ ոչ միշտ կ՛ուրանայ :

— Միշտ կ՛ուրանայ — ըսաւ Պուա–Պիլպէր :

— Ուրեմն — ըսաւ Մալվուազէն — պարտաւոր ես, ազնիւ եղբայր, առաջին տեղը երթալ և գործին վախճանին սպասել : Ժամերը կ՛անցնեն, մութը կ՛սկսի . . . արի, քաջդ Պուա–Պիլպէր, եկուր, դու որ մեր ուխտին յոյսն ես և քիչ առնէն անոր գլուխը պիտի գառնաս :

Այս մեղմ ձայնով խօսելու ատեն՝ Մալվուազէն ասպետին ձիուն սանձին երկայուց ձեռքը, որպէս թէ զանի իր տեղն առաջնորդել կ'ուզէր:

— Ա՛պերաս — գոչեց Պուա–Կիլպէր սրամտութեամբ — ինչպէս կ'յանդգնիս ձեռքդ երիվարիս սանձին տանիլ: — Եւ ապա իր ընկերին բունէն ազատելով կրկէսին միւս ծայրն արշաւեց:

— Տակաւին օրհնեան հուր ունի — ըսաւ Մալվուազէն Մօնֆիշէի — եթէ այս եռանդը լաւ ուղղէ . . . բայց յոնական կրակին պէս, ամէն գտած բաները կ'այրէ:

Դատաւորներն արդէն երկու ժամէ վեր կրկէսն էին, ընդ ունայն սպասելով որ ախոյեան մ'երեւի:

— Եւ այս բանիս համար օրինաւոր պատճառներ կան — ըսաւ Գըք կրօնաւորը — վասն զի օրհորդը հրեուհի մ'է. բայց զարձեալ, իմ կարդիս վրայ կ'երդնուիմ, որ մեզք պիտի լինի որ այսպէս նորատի և գեղանի աղջիկ մը կորնչի առանց անոր՝ ի նպաստ հարուած մը տալու: Եթէ տան անգամ վհատ լինէր, փոյթ չէր, հերիք էր որ քիչ մը քրիստոնեայ լինէր, այն ատեն իմ գաւազանս սա գոռոզ ասպետին գլխուն պիտի իջեցընէի:

Նոյն պահուն՝ ասպետ մը՝ սանձարձակ վարելով իր երիվարը՝ դաշտին վրայ երեւցաւ և կրկէսին կողմը դիմեց: Հարիւրաւոր ձայներ դոչեցին. — Ախոյեան մը, ախոյեան մը: — Եւ ժողովուրդն՝ իր նախապաշարմանց չհայելով՝ յանձուէեան աղաղակներով բարեւեց այս ախոյեանն երբ կրկէսը մտաւ: Սակայն երկրորդ անգամ նայելով այս նորեկ ասպետին վրայ՝ ամէնքն այս պատեհ գալստեանէ յղացած յոյսերը կորուսին: Վասն զի նորեկ ախոյենին ձին՝ որ անգուլ արշաւելով շատ մղոններ առեր էր, յողնութենէ կարծես թէ կ'երերար, և ձիավարն որչափ որ կրկէսը մտաւ մեծ յանդգնութեամբ, տակաւին սեպհական յողնութիւն կամ այս երկու պատճառները միասին, հաղիւ ուրեմն թամբին վրայ կենալու կարող կ'երեւէր:

Պատգամաւորին կոչման վրայ, որ նորեկ ախոյենին կարգը, անունն և նպատակը կ'հարցընէր, օտար ասպետը շուտ և համարձակ պատասխանեց: — Ես բարի և ազնիւ ասպետ մ'եմ. աստ եկայ որ նիզակով և սրով այս Ռեբեկա, Եօրքցի Իսահակին աղջիկան գաւազանս պաշտպանեմ, յայտ առնեմ որ անոր դէմ արձակուած վճիռը սուտ է և զրպարտական, և ի մեծամարտ կոչեմ Պրայն տը Պուա–Կիլպէրը, իբրև մատնիչ, մարգասպան և սատիսօս: և այս ամէնը սա գաշտին մէջ պիտի

հաստատեմ անոր հետ դէմ առ դէմ մնքառելով Աստուծոյ, Տիրամօր և սուրբ Գէորգ ընտիր ասպետին օգնութեամբը:

— Ամենէն առաջ հարկ է — ըսաւ Մալվուազէն — որ օտարականը հաստատէ թէ ընտիր և տոհմիկ ասպետ մ'է: Տաճարը չթողուր որ իր ախոյեաններն անանուն մարդոց դէմ կռուին:

— Իմանանս — գոչեց ասպետն իր սաղաւարտին երեսպահը վերցընելով — լաւ ևս ծանօթ է, իմ առհմն քուկինեդ աւելի մաքուր է, Մալվուազէն: Ես Վիլֆրիտ Իվանոէն եմ:

— Ես այս պահուս չպիտի կռուիմ քեզի հետ — ըսաւ տաճարականը՝ ախուր ու այլայլած ձայնով մը — գնա բուժել տուր վէրդ, լաւագոյն երիվար մը գտիր, և թերևս այն ատեն պիտանի քու տղայական մտասպարծութիւդ պատժելու:

— Ա՛հ, գոռոզ տաճարական — ըսաւ Իվանոէ — միթէ մոռցար որ երկու անգամ տապաստ ընկար այս նիզակիս ներքև: Ցիշէ Ազիայի կրկէսները, յիշէ Էշալիի նիզակամարտը, յիշէ Ռօմենվլուաի սրահներուն մէջ քու մեծաբանութիւններդ, և քու ոսկի շղթադ գրաւ դնելդ իմ մանուարանիս (reliquary) դէմ, որպէս թէ Վիլֆրիտ Իվանոէի հետ պիտի մենամարտիս կորուսած պատիւդ դանելու համար: Այս մանուարանիս, և անոր պարունակող մասունքին վրայ կ'երդնուիմ քեզ վատ հռչակելու Եւրոպայի ամէն արքունեաց մէջ, քու Ուխտիդ ամէն ժողովարաններու մէջ եթէ անմիջապէս լինձի դէմ չմենամարտիս:

Դահ Պուա–Կիլպէր իր դէմքը դէպ ի Ռեբեկայի դարձուց վարանոտ կերպով մը, և ապա գոչեց զայրագին նայելով Իվանոէի. — Շուտ ապաքոն, նիզակդ առ և մնհուան պատրաստուէ:

— Արդեօք Մեծ Վարպետը կ'ներէ լինձ պատերազմիլ — հարցուց Իվանոէ:

— Չեմ կրնար մերժել — պատասխանեց Մեծ Վարպետը — եթէ այս աղջիկը քեզ իբրև ախոյեան կ'ընդունի: Սակայն կ'փափաքիմ որ կռուելու վիճակի մէջ գտնուիր: Միշտ մեր Ուխտին թշնամին եղած ես, սակայն քեզի հետ պատուաւոր կերպով վարուելու կ'փափաքիմ:

— Այս, այս վիճակիս մէջ մնքառիլ կ'ուզեմ, և չէ թէ ուրիշկերպով — ըսաւ Իվանոէ: — Այս է Աստուծոյ դատաստանը, անոր պահպանութեան կ'ապաւինիմ: Ռեբեկա — ըսաւ նա դէպ ի մահաբեր աթոռը քշելով ձին — միթէ դիս իբրև ախոյեան կ'ընդունիս:

— Այո, կ'ընդունիմ — ըսաւ նա այլայլութեամբ մը զոր մահուան երիվարը չէր զրգռած անոր վրայ — կ'ընդունիմ քեզ իբրև երկնաստ

ինձ ղրկուած ախոյեան մը։ Բայց, ուչ, ուչ, վերջը բուժուած չեն, մի կուտիր այս անդութ մարդուն հետ, ինչքա՜ն համար պու ևս ինձի հետ մնանիս։

Բայց Իվանօէ արդէն իր որոշեալ տեղն էր, իր երեսպահը պոչեր և նիզակն առեր էր։ Նոյնն ըրաւ և Պուա—Պիլպէր, և իր զինակիրը դի-տեց՝ երեսպահը կապելու առնն որ իր դէմքն, իր ղացած այլայլու-թեանց հակառակ՝ բոլոր առտու մնիրերի պոյն առեր էր, յանկարծ աստղիկ կարմիրներ էր։

Ա՛յն առեն՝ պատգամաւորն ամէն մէկ ախոյեան իր տեղը կեցած տեսնելով, ձայնը բարձրացուց, և երեք անգամ կրկնեց. Քա՛ջ ասպետ-նե՛ր, չե՛ր պոբոփը կոպրկեցէ՛։ Ներորդ անգամ աղաղակելէն ետև՝ կրկե-սէն մէկ կողմը քաշուեցաւ, և վերտին հրատարակեց որ խօսքով, ա-ղաղակով կամ գործով սպյքարին միջամտելու կամ զայն վրդովելու յան-դգնողն մահուան պիտի դատապարտուի։ Մեծ Վարպետն որ իր ձեռ-քը բռնած էր մենամարտին դրաւը, այս է Ռեբեկայի ձեռնոցը, այն պահուն կրկէսին մէջ նետեց և դժնդակ նշանն արտասանեց. Օ՛ն, տղե-ցի՛ք։

Փողերը հնչեցին, և ասպետներն սանձարձակ իրարու դէմ յարձա-կեցան։ Իվանօէի յոդնած ձին և յոդնութենէ ուշնուաղ յոդնած ասպե-տը վար ընկան, ինչպէս որ ամէն հանդիսականները կ՚յուսային, տա-ճարապետին լաւ ուղղուած նիզակին և կորովի երիվարին ուժգնութե-նէ. բայց թէև Իվանօէի նիզակը՝ համեմատաբար, դպաւ միայն Պուա—Պիլպէի վահանին, այս ախոյեանը, զինքը սեմսողներուն զարմանքը պատճառելով, իր թամբին վրայ երերալ, երասանները կորսյս և կրկէսին մէջ ղլորտնալ։

Իվանօէ իսկոյն ոտք ելաւ ընկած երիվարին տակէն ազատելով, իր սրով բազդը նորէն փորձելու, բայց իր հակառակորդն ոտք չելաւ։ Ծառը կուրծքին վրայ դրած և սրին ծայրը կոկորդին վրայ, Վիլֆրիտ հրամայեց անոր որ անձնատուր լինի եթէ չէր կամեր նոյն վայրը մեռ-նիլ։ Բայց Պուա—Պիլպէր պատասխան չտուաւ։

— Մի սպանէք զանի, քանի որ տակաւին խոստովանած և արձա-կուած չէ, իր մարմինն ու միանգամայն հոգին մի սպանէք։ Կը խոստովանինք որ յաղթուեցաւ։

Մեծ Վարպետը կրկէսն ի՛ջաւ և դիմաւաւ ախոյենին սաղաւարտը հանել հրամայեց։ Ասպետին աչերը դոց էին, և արիւնը տակաւին իր երեսին վրայ կ՚վազէր։ Հանդիսատեսներն որ զարմանօք կ՚դիտէին

Պուա—Պիլպէրը, տեսան անոր աչերուն բացուիլը, բայց այս աչերն անշարժ և անշարժ մնացին։ Յանկարծ արիւնը քաշուեցաւ երեսէն և մեռելատիպ դեղնութեան մը տեղի տուաւ։ Պուա—Պիլպէր, թէև Թշնամւոյն նիզակն իրեն չէր դպած, իր բուռն կրկնդ ղոհ եղեր էր։

— Արդարև Աստուծոյ դատաստանն է այս — ըսաւ Մեծ—Վարպե-տը դէպ՚ի երկին նայելով. Fiat voluntas tua։

ԳԼՈՒԽ ԽԴ

Այսպէս, արդ վերջացաւ իբր մի պատառ պատմութիւն։
ՎԻՊՈՒԲՐ

Զարմացման առաջին վայրկեանն անցնելէն ետև՝ Վիլֆրիտ Իվա-նօէ Մեծ Վարպետին հարցուց, իրրև դատաւորի մարտին, եթէ առ-նապէս և ուղղութեամբ կատարած էր իր պարտքը պյքարին մէջ։

— Առնապէս և ուղղութեամբ վարուեցար — ըսաւ անոր Մեծ Վարպետը։ — Ահա ի՚հրատարակեմ որ օրհորդն ազատ է և անմեղ։ Մեռնող ասպետին ձենքն ու մարմինը յաղթողին իշխանութեան ներքև են։

— Ես չեմ ուզեր անոր զենքն ետար առնուլ — ըսաւ Իվանօէ ասպետը — և ոչ իր դիակը վատահամբաւութեան դատապարտել։ Քրիս-տոնէութեան համար կուռեցաւ նա. Աստուծոյ և ոչ իմ՚բազկս այսօր ղանի զարկաւ։ Թող իր յուզարկաւորութիւնն պարզ լինի, ինչպէս որ վայել է անկրաւ դատի մը համար մեռնող մարդու մը։ Իսկ այս նորատի օրհորդին դալով . . . ։

Իր խօսքն ընդմիջեցաւ հեծելազօրաց դափրէն, որոնք այնպէս ա-րագ կ՚վազէին որ գետինը կ՚դղրդէին. յետոյ Սև ասպետը սրարշաւ մնաւ կրկէսը։ Անոր ետևէն մնան բազմաթիւ զինուորներ խառնիխուռն և սպառազէն ասպետներ։

— Շատ ուշ կ՚հասնիմ — ըսաւ նա բոլորտիքը նայելով։ — Պուա—Պիլպէրն իմ բազկիս համար պահեր էի։ Իվանօէ, որչափ անխոհեմ եիր այսպիսի վտանգի մ՚ենթարկելդ, քանի որ ձիուդ վրայ կենալու անդամ անկարող ես։

— Իշխանս, երկին պատժեց այս դատող մարդն — ըսաւ Խմանօէ: Արժանի չէր այն մահուան զոր իրեն վերապահեր էիր:

— Թող՝ի խաղաղութիւն երթայ — պոչեց Բիչարա՝ իր աչքը դիակին վրայ սևեռելով: — Քաջարի ասպետ մ՝էր, և ասպետապէս մեռաւ, իր պողպատիկ զինուքը վառեալ. բայց սուղ է մեր ժամանակը, շտապինք. Պօհուն, պաշտօնդ կատարէ:

Թագաւորին հետևորդ դնդէն մին պատուելով դնաց Ալբերտ Մալվուազէնի ուսին վրայ դրաւ ձեռքը, և անոր ըսաւ. — Քեզ կ՝ձերբակալեմ իբրև մատնիչ պետութեան:

Մեծ Վարպետն որ ցայն կէտ զարմացած կ՝մնար այնքան զինուորներ յանկարծ տեսնելուն, վերջապէս բերանը բացաւ և ըսաւ.

— Ո՞վ կ՝համարձակի Սիօնի տաճարին մէկ ասպետը, նոյն իսկ տաճարատան Մեծ Վարպետին ներկայութեան ձերբակալել: Այս յանդուգն նախատինքն որո՞ւ իշխանութեամբը կ՝կատարեն:

— Ես եմ ձերբակալողը — պատասխանեց ասպետը — ես Հէնրի Պօհուն Էսսէքսի կոմս, Անկլիոյ մեծ սպարապետ:

— Եւ Մալվուազէնը կ՝ձերբակալէ — յարեց Թագաւորը՝ իր երեսպաղը վերցընելով — Բիչարա Բլանդաժինէդի հրամանատ, որ ահա աստ ներկայ է: Գօնթաս Մօնֆիշէ, փառք տուր որ իմ հպատակս ծնած չես: Բայց դու, Մալվուազէն, դու պիտի մնանիս, նոյնպէս Ֆիլիպ եղբայրդ աշխարհս եօթներորդ օրը հոլովելէն առաջ:

— Ես այդ վճռոյն պիտի դիմադրեմ — պոչեց Մեծ Վարպետը:

— Հպատակ տաճարական — ըսաւ Թագաւորը — դու այդ իշխանութիւնը չունիս պատուհաս: Աչքդ վեր վերցուր և նայէ մի անգամ Անկլիոյ արքայական դրօշակին որ կ՝ծածանի քու դղեկիդ վրայ փոխանակ Տաճարի դրօշակին: Խոհեմ եղիր, Պօմանուար, և պարապ տեղը մի դիմադրեր. ձեռքդ տուիր կոկորդին մէջն է:

— Հռոմի պիտի բողբոջեմ՝ քեզի դէմ — պատասխանեց Մեծ Վարպետը — մեր Ուխտին արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները պահելուդ համար:

— Բողբոջէ — վրայ բերաւ Բիչարա — բայց քու օդտիդ համար մի անուաներ դիս յափշտակիչ: Լուծէ ժողովդ և քու ընկերայդ հետ ուրիշ տաճարատուն մը քաշուէ դնա (եթէ կարող ես գտնել տաճարատուն մը) որ Անկլիոյ Թագաւորին դէմ մատնութեան և դաւադրութեան վայր մ՝եղած չլլինի . . . իսկ եթէ կ՝համաձայնիս, իրրև Բիչարտի հիւր աստ կաց և մեր արդարութեան վկայ եղիր:

— Ինչպէս, հիւրընկալութիւն խնդրեմ այնպիսի վայր մ՝ուր հրամայելու իրաւունք ունիմ՝ — ըսաւ տաճարականը: — Երբէք: Մատրաններ, սիակէր երդել quare fremuerunt gentes սաղմոսը: Ասպետներ, զինակիրներ և տուրք Տաճարի հետևորդներ, պատրաստուեցէք Պօա-Սէանի դրօշակին հետևելու:

Մեծ Վարպետն այնպիսի վեհանձնութեամբ մ՝արտասանեց այս խօսքերն որ կարծես թէ նոյն իսկ Անկլիոյ Թագաւորին հատասր իշխանութիւն մը կ՝վարէր և որ ահաբեկ և դողդոջուն ընկերներուն արիութիւն ներշնչեցին: Անոր ջրոս զին դումարուեցան, ինչպէս կ՝դումարուին ոչխարները պահապան շան բողբոջիքն երբ գայլին ոռնալը կը լսեն: Բայց այս անվեհեր մարդիկ շուարած հօտին երկիւղները չկայտնեցին: Իրենց ձակատը կարծես թէ դիմադրաբար կենալու համար կը բարձրացընէին և իրենց դայտ ածքն այնպիսի սպառնալիք կ՝յայտնէին զոր իրենց բերանը չէին կարող արտասանել: Միաորեցան ատենք և նիզակներու մէջ պիծ մը յօրինեցին որոց վրայ ասպետներուն սպիտակ վերարկուներն աչքի կ՝զարնէին, իրենց հետևորդներու դորշ հագուստներուն մէջ, նման ամպի մը լուսաւոր եղերներուն պէս: Ժողովուրդն որ տհասութեան բարձր աղաղակ մը հաներ էր, կայ առաւ և լռեցաւն պիտեց այս փոքր մարտիկներու ահարկու դունդն, որոց դէմ անխոհեմութեամբ բողբոջեր էր, և անոնց առջևէն հեռացաւ: Երբ Էսսէքսի կոմսն այս ռազմական պատրաստութիւնը տեսաւ, իր խթաններուն երկաթներն երիվարին կողերուն մղեց և վեր վար արշաւեց իր զինուորները դումարելու և պաշտպանութեան վիճակի մէջ դնելու: Մինակ Բիչարա, որպէս թէ իր ներկայութեամբը զրդուած վտանգէն կ՝ախորժէր, տաճարականաց ձակատին առջև կ՝ձիավարեր ծանրօրէն բարձրաձայն դոչելով. — Լո՛ւ, պարոններ, մեթէ այսչափ արիասիրտ ասպետաց մէջ չկայ մէկն որ դայ Բիչարտի հետ նիզակ խաղ ընէ: Պարոն տաճարականներ, ձեր սիկիններն արդարև շատ սևերես պիտի լինին՝ եթէ՝ի պատիւ անոնց նիզակի մը չկտարէնք:

— Տաճարի ասպետներն — ըսաւ Մեծ Վարպետն իր գնդին ձակատին առջև աշտանակելով — այդպիսի անուսի և պիղծ գործի մը համար չեն մաքառիր, և ոչ մէկ ասպետ քեզի հետ՝ի վեր պիտի գայ, Անկլիոյ Բիչարտ, իմ ներկայութեան: Պատն ու Եւ բոպիոյ իշխանները մեր դատաստանը պիտի տեսնեն, պիտի վճռեն թէ քրիստոնեայ իշխան մը լաւ գործեց այս օրուան ընթացքը բռնելով, ինչպէս որ դուք բռնեցիք: Եթէ մեր վրայ չյարձակին, առանց յարձակելու պիտի քա-

շուխք : Քու պատուդ կ'յանձնենք Ուխտին ղէն ու զօրդն և ինչքը զոր այս տեղ կ'թողունք , և քու խըճիդ վրայ կ'դնենք քու այսօրուան դրած գայթակղական նախատինքդ բոլոր քրիստոնեայ աշխարհին :

Ա յս խօսքն աւարտելով և առանց պատասխանի սպասելու , Մեծ Վարպետը մեկնելու նշանը տուաւ , և փողերն արևելեան ոճով վայրենի գնացք մը հնչեցին , որ տաճարականաց ուղևորութեան սովորական նշանն էր : Ա յն ատեն ասպետներն իրենց շարքն աւրեցին և ուղևոր սիւն մը գառնալով ծանր ծանր քալեցին , իբր թէ ցոյց տալու համար որ իրենց Մեծ Վարպետին կամքն էր և չէ թէ պերազոյն զօրութեան մ'երկիւղն որ ղիրենք նահանջելու կ'պարտաւորէր :

— Մեր Տիրամօր լուսեղէն ձակատը վկայ — ըսաւ Ռիչարտ Թագաւորն — ցաւալի է արդարև որ այս տաճարականներն որչափ արիասիրտ և քաղաքակիրթ նոյնչափ հաւատարիմ չեն :

Ամբոխը՝ վեհերոտ շան մը պէս՝ որ հաճելու համար իր թշնամւոյն կռնակ դարձընելուն կ'սպասէ , թէթև աղաղակ մը հանեց այն միջոցին որ դումարտակին յետին շարքը դաշտն դուրս կ'ելնէր :

Տաճարականաց աղմկալի նահանջին ժամանակ՝ Ռեբեկա ոչ բան մը տեսաւ և ոչ լսեց : Ծերունւոյն հայրը զանի իր գրկաց մէջ սեղմեր էր , դրեթէ հնչասպառ , այս բաղմապէպ պատահարին ներգործութենէ : Բայց Իսահակին մէկ խօսքը զանի վերջապէս սթափեց :

— Երթանք — ըսաւ նա — իմ սիրելի աղջիկս , իմ նորագիւտ գանձս , երթանք այն քաջ երիտասարդին ոտքն ընկնելու :

— Ա՛խ — ըսաւ Ռեբեկա — ա՛հ , ա՛խ , ա՛խ , ա՛խ : Չեմ իշխեր այս միջոցիս անոր խօսելու : Ափսո , անոր պէտք եղածէն աւելի պիտի խօսիմ . . . : Ա՛խ , հայր իմ , շուտով այս չարաշուք տեղէն հեռանանք :

— Բայց , աղջիկս — ըսաւ Իսահակ — ի՞նչպէս թողուլ երթալ այն ուժեղ մարդն որ իր նիզակով և վահանով դինեալ եկաւ որպէս զի՝ իր մահն աչք առնելով քեզ ազատէ , քեզ որ օտար ժողովրդեան մ'աղջկնիկն ես , թէ իրեն և թէ իւրայնոց համար : Ա յս ծառայութեան փոխարէն մեր անչափ երախտագիտութիւնն պէտք է անոր յայտնել :

— Հայր իմ , այո , երախտագէտ ենք , ընդ միշտ երախտագէտ — պատասխանեց Ռեբեկա — բայց այժմ նոյնը յայտնելու ժամանակը չէր . . . քու ամենասիրելի Ռաքէլիդ սիրոյն համար լինի , հայր իմ , իմ աղաչանքս ըսէ . . . ա՛խ այժմ :

— Բայց — վրայ բերաւ Իսահակ միշտ պնդելով — պիտի ըսուի թէ շուներու չափ անդամ չնորհակալ չենք :

— Բայց տէս մի անդամ , սիրելի հայր իմ , որ Րիչարտ Թագաւորն ոտք ներկայ է , և թէ . . . :

— Ա՛տոյգ է , իմ բարեսիրտ , իմ խոհեմ Ռեբեկա : Երթանք ատեն : Թագաւորը զրաւի պէտք պիտի ունենայ , վասն զի Պալեստինէն նոր կ'դառնայ , և լսածիս նայելով բանտէն նոր ազատած է . ուստի իշխէ ատակ ատհանջելու համար կրնայ դիւրաւ պատրուակ մը գտնել , երբ իր եղբօր ձօհնի հետ դրամական յարաբերութիւն ունենալս իմանայ : Օ՛ն , ծո , երթանք , հեռանանք այս տեղէն : — Եւ իսկոյն աղջիկը քաշելով կրկէսէն դուրս հանեց և արդէն պատրաստած կառքը զանի ուարբի Նաթանէն առնելը փոխադրեց ապահովի :

Թէև այն օրն ամենուն ուշադրութեան առարկայն հրէուհին էր , բայց՝ ըստ որում անոնց քաշուելը գայթ էր , ժողովուրդն իր աչքը Ա և ասպետին վրայ դարձուց . օդը կ'թնդացընէր սա աղաղակներով . «Կեցցէ Րիչարտ Առիւծասիրտ , կորնչին յափշտակիչ տաճարականները :»

— Բոլոր այս արքայասիրութեան չնայելով — ըսաւ Իվանօէ Իսաքս կոմսին — աղէկ որ Թագաւորն զգու շութիւն ըրաւ , ապնիւ կոմս , հետը բերելով այսչափ հաւատարիմ զինուորներ :

Կոմսը ժպտեցաւ և գլուխը ցնցեց :

— Արիականդ Իվանօէ — ըսաւ Իսաքս — դու որ այնչափ լաւ կը կ'ճանչես մեր Թագաւորը , միթէ կարծեմ թէ այս խոհական զգուշութիւնն ինքն առած լինի : Գէպ 'ի Նօրք կ'երթայի , իմանալով որ ձօհն իշխանն այն տեղ կ'ամրանար , երբ Րիչարտ Թագաւորին հանդիպեցայ , որ Ձմարիա Թափառական ասպետի մը պէս , այս կողմը կ'արշաւէր , որպէս զի իր բազկով միայն տաճարականին և հրէուհւոյն մէջ եղած արկածին վերջ տայ : Ես անոր ուղեկից եղայ դնդռւս դրեթէ իր կամայ հակառակ :

— Եւ ի՞նչ լաւ կ'բերես , քաջդ կոմս — հարցուց Իվանօէ — ապստամբներէն պիտի ապահո՞ն մնայ արդեօք այն տեղ :

— Եթէ դեկաեմերի ձիւներն յունիսի արեւուն սպասեն , անոնք ալ մեղ կ'սպասեն — ըսաւ կոմսը — բոլորովին ցիր ու ցան եղած են : Եւ այս լուրը բերողը ինքն ալ կարծես լինի . նոյն ինքն ձօհն :

— Մ՛առնի՛չը . ապաշնորհ , առերես մանո՛ւկը — գոչեց Իվանօէ :

— Միթէ Րիչարտ զանի ձերբակալել չտուա՞ւ :

— Ո՛հ , զանի ընդունեց — պատասխանեց կոմսը — որպէս թէ որ սորդութենէ մ'եաը իրաւու հանդիպած լինելին . և անոր ըսաւ դիս և

իմ վճռակիցներս ցոյց տալով. «Կ'տեսնե՞ս, եղբայր, հետս քանի մը զայրացած մարդիկ ունիմ. լաւ կ'ընես թէ որ մեր մօր մօտ դնաս, իմ սիրաբիծ յարդանքս անոր մատուցանես, և անոր քովէն չհեռանաս մինչև որ յաղթել միաբերը հանդարտին:

— Եւ միթէ ձայնդ միայն ըսաւ — հարցուց Եվանօֆ — միթէ նեռը չէ ըսել որ Թագաւորն իր ներողամտութեամբն մարդիկը մատնութեան կ'հրաւիրէ:

— Ճիշտ նոյնը կրնաւը ըսել — պատասխանեց կոմսն — այն մարդուն համար որ մահը կ'կոչէ երբ ի պայքար կ'ելնէ իր վերքը բուժելն առաջ:

— Այդ կատակիդ կ'ներեմ, կոմս — ըսաւ Եվանօֆ — բայց միտդիդ որ ես միայն իմ կեանքս վտանգի կ'դնեմ, մինչդեռ Բիչարտ իր տերութեան ապահովութիւնը կ'վտանգէր:

— Ընտնք որ իրենց յատուկ պահպանութեան համար անհոգ են, հազիւ ուրեմն այլոց համար ուշադիր կ'լինին: Բայց փութանք դղեակն երթալու, վասն զի Բիչարտ կ'խորհի իրօք պատժել պատգրութեան մէկ քանի անպամներ, թէև անոնց պարագլխին ներկ:

Այս պարագայիս մէջտեղի ունեցած դատաստանական քննութեանց նայելով, որոնք Վարտուրի ձեռագիրը կ'իշատակէ երկարօրէն, կ'երեւի թէ Մօրիս տը Պրէսի ծով անցաւ և Ֆրանսայի Փիլիպ Թագաւորին ծառայութեան մտաւ. մինչդեռ Փիլիպ Մալվուազէն, և իր եղբայրն Ալեքսը գլխատուեցան, թէև Վօլտմար Փիցտրա, պատգրութեան հոգին՝ ազատեցաւ աքսոր դնալով, և ճօֆն իշխանն, որու ի նպաստ այս գատգրութիւնն նիւթեր էին, և ոչ իսկ յանդիմանութիւն մը լսեց իր բարեբարոյ եղբօր կողմէ: Սակայն ոչ օք ցաւեցաւ երկու Մալվուազէններու բաղդին վասյ, որոնք երկոյն արժանի մահը գտան, քանի որ անհատատարմութեան, անպատութեան և բռնասիրութեան գործերով ամենուն ատելի դարձած էին:

Գէնդլսգոմի կուռէն քիչ մ'ետք, Սաքսօն Սէտրիին Բիչարտի արքունիքը հրաւիրուեցաւ, որ իր եղբօրը փատասիրութենէ վրդովեալ գատաւորն անպատրելու համար այն ժամանակ նօրք քաղաքը կը գտնուէր: Սէտրիկ քանի մ'անգամ այս հրաւէրը մերժեց, բայց ի վերջ հնազանդեցաւ: Իրօք՝ Բիչարտի վերագարձը Անգլիոյ մէջ սաքսօնեան արքունի տոհմին վերահաստատութեան յոյսը բոլորովին փարատեր էր, վասն զի, քաղաքական պատերազմի մը դէպքին մէջ սաքսօներն ինչ ձգտունք որ ըմտիէին, ակն յայտնի էր որ ոչ ինչ կարելի չէր

գործել Բիչարտի անվճռելի իշխանութեան օրովը, քանի որ ինք շատ ժողովրդական էր իր անձնական բնաւորութեամբ և վճռորոշ հարատուով, թէև իր կատարեալ թիւնն անհոգ էր, և մերթ չափազանց ներող, մերթ բռնասէր: Ակնիկ զատ՝ Սէտրիկ քանի զգացեր էր որ սաքսօններու մէջ կատարեալ միաբանութիւն հաստատելու խորհուրդը, Րովէնայի և Ալֆէլտէյնի ամուսնութեամբն, այժմ բոլորովին՝ ի դերև եղած էր, երկու կողմն փոխադարձ դժկամակութենէ: Արդարև այս այնպիսի դէպք մ'էր, որ՝ սաքսօնեան գատին համար ունեցած եռանդէն, անկարող եղեր էր դուշակելու, և երբ երկու կողմն դժկամակութիւնն յայտ յանդիման եղաւ, դեռ ևս դժուարաւ կ'հաւատար որ երկու արբայատոհմիկ անձեր, անձնական սառնամանեքով, մերժեն ազգին ամենօգտաւէտ միութիւն մ'ընելու: Սակայն այս այսպէս էր: Րովէնա՝ միշտ Ալֆէլտէյնի դէմ իր հակակրութիւնը յայտներ էր, և այժմ Ալֆէլտէյն բայց ի բաց կ'յայտներ օրիորդ Րովէնայէն հրաժեշտը: Նոյն իսկ Սէտրիկի բնական յամառութիւնն այս խոչընդոտներուն առջև նահուն մնաց: Սակայն Ալֆէլտէյնի դէմ վերջին ուժեղ յարձակում մ'ըրաւ, բայց տեսաւ որ սաքսօնեան տոհմին այս յարատեւ շառաւիղն, մեր օրուան պեղտյի կալուածատէրներուն պէս, կղերին դէմ կատաղի պատերազմ մը բայեր էր:

Կ'երևի թէ Ս. Էմօնտի աբբային դէմ բոլոր այս արիւնալի սպառնալիքն եաք՝ Ալֆէլտէյնի զայրոյթը մեղմեր էր, իր թոյլ և անհոգ բնաւորութեան և իր մօրը՝ Էտիթի աղաչանաց ընդհիւ: Ալֆէլտէյն իր վրէժը կերպով մը հանած եղաւ՝ աբբան և վանականները Գօդինհոպրերի վնգտնին մէջ երեք օր պահել և անոնց չոր հաց տալով: Վանահայրն այս բռնութեան դէմ բողոքեց և սպառնաց գինքը բանադրելու: Իսկ Սէտրիկ տեսնելով որ իր բարեկամն կրօնականաց դէմ հալածանք հանելով գրաղած էր, հասկըցաւ որ անոր մտաց մէջ ուրիշ մտմտուք մը կարելի չէր դրգռել: Ուստի երբ Րովէնայի անունը յիշեց, աղնիւ Ալֆէլտէյն անոր կենդանութեան և վէյֆրլտի հետ արագ միութեան համար մեծ գատաթ մը պարտեց: Հետևապէս յաւտահատական էր խնդիրը. ակն յայտնի էր որ Ալֆէլտէյնը զղաստութեան բերելու հնարը չկար, կամ ինչպէս որ Վամպա կ'ըսէր, այնպիսի ճռռոր սաքսօնեան ժամանակէն մեզի հասած է, աքաղաղ մ'էր որ չէր կանչ կրնար:

Սէտրիկի հատանութիւնը ստանալու համար երկու արգելք միայն կային երկու սիրահարներու միութեան դէմ. իր կամակորութիւնն և

նորման ցեղին դէմ ունեցած առելութիւնը: Այս արդելքներէն մին փոքր առ փոքր վերցաւ իր տանին գղուանքէն և իր որդւոյն առած հռչակին վրայ ակամայ զգացած հպարտութենէն: Ասկէ զատ՝ իր դերդաստանը մեծին Ալֆրէտի տոհմին հետ միաւորելու պատրոյն անզգայ չէր, քանի որ այժմ Էտուարդի խոստովանողին իրաւունքն արքայական պահին վրայ՝ ի սպառ չնչուած էր: Սէտրիկի առելութիւնը նորմանի ցեղին դէմ շատ ակարացեր էր, նախ՝ անոր համար որ անկարելի կ՚ուտեռէր Անգլիան անոնց լծէն ազատել, երկրորդ՝ անոր համար որ Բիչարտ Թագաւորն իր բնաւորութեամբը Սէտրիկի սիրտը շահեր և անոր ազատասէր բնաւորութիւնը սիրեր էր, այնպէս որ Հաղիւ շաբաթ մ՚անցեր էր արքունիքը գալէն վեր, որ արդէն իր հաւանութիւնը տուեր էր իր տանուհի Բովէնայի ամուսնութեան իր որդւոյն Վիլֆրիտ Իվանոէի հետ:

Այսպէս միութիւնը հօրը կողմէն հաւանութիւնը ստանալէն ետև՝ մեր վիշտղենին հարսնիքն նորքի փառաւոր եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ: Նոյն ինք Թագաւորը ներկայ պտնուեցաւ այս հարսանեաց, և Թէ այս Թէ ուրիշ պարագաներու մէջ՝ մինչև այն տեղն ձնշուած խեղճ սաքսոններու ցոյց տուած յարգանքն անոնց աւելի սոյպ յոյսեր տալն ապագային մէջ իրենց իրաւանց սիրանալու, քան ինչ որ կրնային յուսալ քաղաքական պատերազմի մ՚անհաստատ արդիւնքէն:

Կըսըմ՝ որ շքեղօրէն հագուած էր, իրրև վինակիր իր նորատի սիրոջ կ՚ուղեկցէր, որու այնքան հաւատարմութեամբ ծառայեր էր, և վերհանձն վամպան, նոր զգակով և փառաւոր բոժոժներով զարդարուած՝ անոնց քովէն կ՚քալէր: Վիլֆրիտի վտանդներուն և ձախորդութեանց մասնակից դանուեր էին արդէն, և այժմ անոր բարօրութեան մասնակից լինելու իրաւունք ունէին:

Այս երջանիկ ամուսնութեան երկրորդ օրն էր որ Էվկեթա նաժիշտը տիկին Բովէնային գալով իմացուց որ նորատի օրիորդ մը կ՚փափաքէր իր առջևն ելնել և առանձնական խօսիլ: Այս լուրը Բովէնան զարմացուց, կատաղի տարաբնդրութիւնը շարժեց և՝ ի վերջ հրամայեց որ օրիորդը ներս հրաւիրեն և նաժիշտները քաշուին:

Նորեկ օրիորդը ներս մտաւ. ամենաւ և մեծարելի կերպարան մ՚ունէր. երկայն սպիտակ քօղն որով անձը պատեր էր, կ՚ծածկէր քան կը պահէր իր հասակին վայելչութիւնն ու վեհափառութիւնը: Իր դնացքը պատկառազդ էր, որ և է երկիւղէ կամ նուաստութենէ ազատ: Բովէնա միշտ պատրաստ էր աղերսներ ընդունիլ և այլոց վշտակից

դտնուիլ: Ուստի առաջ եկաւ և սիրատուն այցելուն ամուսնի մը պիտի ուրախնորդէր, երբ նա Էվկեթայի նայելով նորէն նշանացի իմացուց որ Բովէնայի հետ մենակ խօսակցիլ կ՚փափաքի: Այն ինչ Էվկեթա քաշուեցաւ ակամայ որ՝ ի զարմացումն Իվանոէի սիրոջ, պեղանի այցելուն մէկ առջը ծունր դրաւ, ձեռքը ձակտին վրայ սեղմեց և դլուխը մինչև գետին ծռելով Բովէնայի ոտներէն պատմուճանին ծայրը համբուրեց, անոր դիմադրութեան չնայելով:

— Ինչ կ՚նշանակէ այս, տիկին — հարցուց զարմանահար հարսը — կամ ինչի՞ համար այսպիսի անսովոր մեծարանք կ՚ընծայես ինձ:

— Վասն դի ձեզի, տիկին Իվանոէ — ըսաւ Ռեբեկա՝ ոտքի ելնելով և իր արժանավայել հանդարտ վարմունքը պահելով — ձեզի պարտաւոր եմ իրաւամբ և առանց չանդիմանութիւն լսելու, իմ երախտապարտութեանս պարտքը վճարել, քանի որ կ՚տածեմ առ Վիլֆրիտ Իվանոէ: Ես (ներեցէք այս իմ հայրենասիրական նուիրատուութեանս ձևին) ես եմ այն ապերջանիկ հրէուհին որու համար իր կեանքը վտանգի դրաւ ամուսնոց այն Գէներլզոզովի սոսկալի մենամարտներու դէմ:

— Օրիորդ — պատասխանեց Բովէնա — այն յիշատակելի օրն, Վիլֆրիտ Իվանոէն՝ իր վէրքին և թշուառութեանց դարման բերելու համար ցոյց տուած ողորմածութեանդ փոխարէնը հատոյց: Խօսէ, մինչև նա կամ ես կարող ենք որ և է բանի համար քեզի ծառայել:

— Ոչ ինչ — ըսաւ Ռեբեկա հանդարտութեամբ — միայն ջնարհ ընդունիլ անոր հաղորդել իմ երախտագիտութեանս նուէրը:

— Ուրեմն Անգլիացին կ՚հեռանա՞ — ըսաւ Բովէնա՝ այս տարօրինակ այցելութենէ զգացած զարմանքն հաղիւ ուրեմն փարատելով:

— Այո, սիրտ հեռանամ, տիկին, այս լուսինն իր շրջանն ընելէն առաջ: Հայրս երդեցաւ մ՚ունի որ Կրանատայի Թագաւոր՝ Մոհամմէտ Պօապտիլի պաշտպանութիւնը կ՚վայելէ, անոր հետ սիրտ երթալիք, խաղաղութիւն և ապահովութիւն պտնելու յուսով, և մահմետականաց մեր ժողովրդէն պահանջած փրկանքը վճարելով:

— Միթե Անգլիոյ մէջ նոյն պաշտպանութիւնը չէք վայելեր — ըսաւ Բովէնա: — Իմ ամուսինս մեծ ազդեցութիւն ունի Թագաւորին մօտ, նոյն ինք Թագաւորը վեհանձն և արդար է:

— Տարակոյս չունիմ, ազնիւ տիկին, բայց Անգլիոյ ժողովուրդը վայրագ ազգ մ՚է, որ իր դրացիներուն հետ կամ՚ինք իր մէջ կ՚կռուի և սուրն իրարու կողը մտնելու պատրաստ կ՚պտնուի: Այսպիսի երկիր մը իմ ժողովրդեանս համար ապահով բնակութիւն մը չէ, Եփրայիմ վե-

հերոտ աղանի մ'է. Իզաբար շատ բնական ծառայ մ'է, որ կրկին բեռ նեբքե կ'ձնշուի: Իսրայէլ չկրնար յուսալ հանդիստ գտնել, մինչդեռ քաղքէ քաղաք կ'թափառի, այնպիսի երկիր մ'ուր միայն ահ ու կատարած կ'պատահին, շուրջ թշնամի զօրքեր կ'երևին և նեբրուստ քաղաքային կռիւներով կ'պատառին:

— Բայց դու, Նորատի օրիորդ — ըսաւ Րովէնա — ասդարև դու բանէ մը վախնալու տեղի չունիս: Ահն որ Իվանօէի հիւանդութիւնը գարմանից — յարեց նա խանդագին — Անկէից մէջ վախնալու բան մը չունի, քանի որ առքսն ու նօրման քեզի պատուելու համար իրարու հետ պիտի մրցին:

— Քու լեզուդ անուշ է, սիկին — բսաւ Ռեբեկա — և խորհուրդ աւելի անուշ. բայց անհնար բան է, մեր մէջ անդունդ մը կայ: Մեր դաստիարակութիւնը, մեր հաւատը կ'արգիլեն մեզ անկից անցնելու: Մնաս բարեաւ: Սակայն՝ մինչեւ ես առաջ շնորհ մ'ըսէ ինձ: Հարսնացեալ քոյրդ դէմքդ կ'ծածկէ. բարեհաճէ զայն բառնալու, և թոյլ տուր ինձ տեսնել այդ կերպարանդ զոր համբաւն այնչափ գովեստներով կ'հռչակէ:

— Ուրիշներուն ակնարկը դրաւելու արժանի չէ — ըսաւ Րովէնա — բայց չպիտի մերժեմ խնդիրդ, քօղը պիտի հանեմ սա պայմանաւ որ դու ալ նոյն շնորհն ընես ինձ:

Նոյն պահուն երկու քոյրն ալ իրենց քօղը հանեցին: Րովէնա՝ ամօթալատութենէ սեպէ, իր դէղեցկութեան ներքին զգացումէն սեպէ, այնչափ սաստիկ կարմրեցաւ, որ այտերը, ճակատը, վիզն և ծոցը ծիրանեգոյն գարձան: Ռեբեկա ևս շիկնեցաւ, բայց վաղամեռիկ էր իր գլեցկութիւնն, զոր բարձրադոյն զգացումներ կ'զսպէին, ուստի այս կարմրութիւնն անցաւ ինչպէս կ'անցնի ծիրանեգոյն ամպն երբ զանի ներկող արևը հորիզոնն 'ի վար կ'իջնէ:

— Տիկին — ըսաւ Ռեբեկա — այդ կերպարանդ զոր ինձ ցոյց տալու համբերեցար, ընդ երկար պիտի մնայ իմ յիշողութեանս մէջ: Դէմքիդ վրայ անուշութիւնն ու բարութիւնը գրոշմուած են, և եթէ աշխարհային մտածութեան կամ հպարտութեան նշոյլ մը այդ սիրասուն կերպարանիդ խաւնուի երբէք, ինչպէս կարելի պիտի լինի գտնել որ ինչ որ երկրային է իր ծագման գոյնը փոքր ինչ կ'պահէ: Երկար, երկար աաեն պիտի յիշեմ այդ կերպարանդ, և պիտի օրհնեմ զԱստուած որ կ'թողում իմ ամբիւ աղատարարս միացած . . . :

Յանկարծ լուեց . . . իր աչքին արտասուքով լցան: Խոհոյն զանոնք

սրբեց, և Րովէնայի մտահոգ հարցումներուն պատասխանեց. — Ազնիւ տիկին, շատ աղէկ եմ, բայց իմ սիրտս կ'ելնէ երբ Դօրգիլզիի և Դէնբլզդովի պայքարներուն վրայ կ'խորհիմ . . . : Մնաս բարեաւ: Բայց իմ պարտաւորութեանս մէկ ամենաթեթև մասը կ'մնար ինձ կատարել. ընդունէ այս արկղիկն, և մի զարմանար անոր պարունակած բաներուն վրայ:

Րովէնա արծաթեակուռ փոքրիկ արկղիկը բացաւ, մանեակ մ'ու օղեր տեսաւ անգամանդեայ, որունք անտարակոյս մեծ արժէք ունէին:

— Անկարելի է — ըսաւ Րովէնա արկղիկն ետ տալով — որ այս մեծագին սպրդևն ընդունիմ:

— Ընդունէ զայն, ազնիւ տիկին — պատասխանեց Ռեբեկա: — դուք իշխանութիւն, աստիճան, զօրութիւն, ազգեցութիւն ունիք. մենք ունինք հարստութիւն, որ մեր զօրութեան ու միանգամայն տկարութեան աղբիւրն է. այս գոհարներուն արժէքը, եթէ տատնապատիկ լինի իսկ, չէ կարող քու ամենէն թեթև փափաքիդ հաւասարիլ: Հետևապէս՝ այս պարգևը քեզի համար թեթև արժողութիւն ունի, իսկ ինձի համար թեթևագոյն: Մի թողուր գիս հաւատալու որ ձեր ազգին պէս Հրեաս գաղափար մ'ունիս մերինին վրայ: Միթէ կարծես թէ այս փայլիլուն գոհարներն աղատութենէս աւելի կ'գնահատեմ, կամ թէ հայրս անոնց աւելի գին կ'տայ քան թէ իր զաւկին պատուոյն և կենաց: Ընդունէ զանոնք, ազնիւ Րովէնա, ինձի համար անօգուտ են, վասն զի այսուհետև գոհարներով չպիտի զարդարուիմ:

— Ուրեմն ապերջանիկ ես — ըսաւ Րովէնան՝ Ռեբեկային այս վերջին խօսքն արտասանելու կերպէն զարմանալով — ահ, մեղի հետ կեցիր. մեր բարեպաշտօն մարդոց խորհրդով քու մոլար հաւատդ պիտի թողուս, և քեզի համար քոյր մը պիտի լինիմ:

— Ո՛չ, տիկին — պատասխանեց Ռեբեկա, որուն անուշ ձայնին և դեղանի կերպարանքին վրայ նոյն հանդարտ արտումութիւնը կ'տեսնուէր — այդ չկրնար լինիլ. չեմ կարող իմ հարցս կրօնը փոխել իբրև հագուստ մ'որ անյարմար է իմ բնական երկրիս, և այսպէս ապերջանիկ չպիտի լինիմ, տիկին: Ահն որու պիտի նուիրեմ իմ կեանքս՝ իմ՝ մխիթարս պիտի լինի, եթէ անոր կամքը կատարեմ:

— Ուրեմն վանքեր ունի՞ք, քանի որ անունդ մկուն մէջ քաշուելու դիտաւորութիւն կ'յայտնես — հարցուց Րովէնա:

— Ո՛չ, տիկին — ըսաւ Հրէուհին — բայց մեր ժողովրդեան մէջ, Աբրահամու ժամանակէն գտնուած են կիներ որ իրենց սիրտն Աստու-

ծոյ նուիրած են, և պեսպեսեան գործերը գործած են, հիւանդները խնամելով, աղքատները կերակրելով և դժբաղդները մխիթարելով։ Ահա ասոնց կարգը պիտի անցնի և Ռեբեկան։ Այս բանս ըսէ ամուսնոյդ, եթէ երբէք դիպուածով կամենայ խնդալ այն անձին ձակատագրին որու կեանքն ազատեց։

Ռեբեկայի ձայնին մէջ ակամայ դող մը կար, և այնպիսի գորովալիր շեշտ մ'որ Թերևս իր ուզածէն աւելի սրտին այլայլութիւնը պիտի մատնէր։ Ուստի փութայ Րովէնային իր հրաժարական բարևը տալու։

— Մնաս բարեաւ — ըսաւ նա։ — Երանի թէ Ա֊ին որ հրէայն և քրիստոնեայն ստեղծեց՝ իր ընտրեալ ազգին օրհնութիւնը թափէ ձեր վրայ։ Նաև որ մեզ պիտի տանի, մեր նահապետը Հաննէլէն առաջ առած խոստումները բացած պիտի լինի։

Սենեկէն դուրս ելաւ Ռեբեկա, թողլով Րովէնան հիացած որպէս թէ իր առջևէն տեսիլ մը նահանջեցաւ։ Վեղարի սաքսօնուհին այս տարօրինակ տեսակցութիւնն ամուսնոյն պատմեց, որու մարդին վրայ խոր տպաւորութիւն մ'ըրաւ։ Րովէնային հետ երկար ժամանակ ու երջանիկ ապրեցաւ Իվանօէ, վասն զի իրարու հետ կապուած էին մանկային վաղեմի կապերով, և այնքան աւելի զիրար կ'սիրէին որքան որ կ'յիշէին իրենց միութեան դէմ կանգնող խոչընդոտները։

Իվանօէ երեւելի հանդիսացաւ Բիչարտ Թագաւորին ծառայութեան ներքև, և արքայական պաշտպանութեան նոր նոր փորձեր վայելեց։ Թերևս աւելի պիտի բարձրանար Իվանօէն եթէ Առիւծասիրտ գիւցազն Բիչարտի վաղահաս մահը չպատահէր, Լիմոժի մօտ, Քէլոսի բերդին առջև։ Այս վերջանէն այլ յանդուգն և աստիճանական թագաւորին կենաց հետ կորան այն ամէն խորհուրդները զոր իր փառասիրութեամբ և մեծանձնութեամբն երևցած էր։ Կարելի է, թեթև փոփոխութեամբ մը, Շուէտի կարոլոս Թագաւորին համար ճօնսընի յօրինած սա քանի մը տողերը Բիչարտի յատկացընել։

Տար երկիր պիտի պանէր նա իր մահ,
Փոքր բերդի մօտ և ձեռօք անպէտ.
Թողուց համբաւ մ'որով դողայ աշխարհ
Որ լինի հրահանգ, կամ զարդ ՄԻ ՎԻՊ։

1102

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0354944